ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԲՈԼՖԱԶԼ ԱՄԵՐԻ ՇԱՀՐԱԲԻ

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԺԲ.00.01- «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

**Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Հ. Ստեփանյան**

ԵՐԵՎԱՆ - 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

ԳԼՈՒԽ 1. ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

§ 1. Իրավունքի և իրավական համակարգի ըմբռնումներն Իրանում 12

§ 2. Մահմեդական իրավական համակարգը և իրանական կրոնապետությունը. պատմական ակունքները և արդի առանձնահատկությունները 17

§ 3. Իրանի Իսլամական Հանրապետության իրավական համակարգի հենասյուները և տեղն աշխարհի իրավական ընտանիքների շարքում 28

§ 4. Պառլամենտական օրենքները՝ որպես իրավունքի աղբյուր Իրանի իրավական համակարգում 34

4.1. Խորհրդարանական օրենքների տեղն ու նշանակությունն Իրանի իրավական համակարգում 34

4.2. Օրենքների հասկացությունը և ըստ իրավաբանական ուժի տեսակներն Իրանի իրավական համակարգում 40

4.3. Իրավունքի աղբյուրների համակարգում օրենքների գործողության հիմնախնդիրները 44

4.4. Օրենքների կայունությունը և բեկանումը (վերացումը) 47

§ 5. Սովորութային և ավանդույթային իրավունքի նորմերն Իրանի իրավական համակարգում. տեղի, տեսակների, առաջացման, գործողության և վերացման հիմնահարցերը 49

5.1. Սովորույթի և իջմայի որպես իրավունքի աղբյուրների հասկացման և տարբերությունների հիմնահարցերը 49

5.2. Սովորույթի օրենսդրական ճանաչման ձևերը և տեսակները Իրանում ... 53

5.3. Սովորույթի առաջացման և վերացման իրավական հիմնահարցերը 58

§ 6. Դատական մեկնաբանողական նախադեպերը Իրանի իրավական համակարգում հասկացման, տեսակների, ստեղծման և դադարեցման իրավական հիմնահարցերը 60

6.1. Դատական նախադեպերի հիմնահարցը իրավունքի մեկնաբանման համատեքստում 60

6.2. Դատական նախադեպերի հարապարակման և ըստ պարտադիրության տեսակների հիմնահարցը 66

6.3. Դատական մեկնաբանողական նախադեպերի ստեղծման և դադարեցման իրավական հիմնահարցերը 71

§ 7. Կրոնական և իրավաբանական դոկտրինաները որպես իրավունքի աղբյուր. համաշխարհային համատեքստը և Իրանի իրավական փորձը 76

ԳԼՈՒԽ 2. ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

§ 1. Իրանի իրավական համակարգի սահմանադրական զարգացման փուլերը և իրանական կրոնապետության իրավական հիմքերի ամրագրումը 87

1.1. Իրանի հիմնադիր իրավական կարգերը իսլամացումից առաջ 88

1.2. Իրանի սահմանադրական զարգացումը 20-րդ դարասկզբի հեղափոխությունից մինչև Փեհլևիների դինաստիայի անկումը 90

1.3. 1979 թ. հեղափոխությունը և իսլամական Սահմանադրության ընդունումը 93

1.4. 1989 թ. սահմանադրական բարեփոխումները 94

§ 2. Իրանի պետաիրավական համակարգը որպես կրոնական և աշխարհիկ սկզբունքների զուգակցում 96

2.1. Պետաիրավական համակարգի իսլամական համոզմունքներով պայմանավորված սկզբունքները: Միաստվածություն 97

2.2. Մարդու կարգավիճակի ժողովրդավարական սկզբունքները՝ շաղախված Շարիաթի սկզբունքներով ու նորմերով 99

2.3. Իրանի պետաիրավական համակարգի սահմանադրական հիմքերի և մարդու իրավունքների միջազգային իրավունքի հիմնական նորմերի համեմատությունը 104

§ 3. Մարդու առանձին իրավունքների համընդհանուր հասկացությունը և սահմանադրական կարգավորման առանձնահատկությունները ԻԻՀ-ում 106

3.1. Քաղաքացիական իրավունքերի էության համընդհանուր ըմբռնումը և ամրագրման վիճակը ԻԻՀ-ում 106

3.2. Անհատական ազատությունների ապահովման համաշխարհային համակարգերը և ԻԻՀ-ի սահմանադրական մոտեցումն այդ հարցում 108

3.3. Քաղաքացիական ու քաղաքական առանձին իրավունքների ու ազատությունների կարգավորման առանձնահատկություններն Իրանում 111

§ 4. Մարդուն իրավունքներից զրկելու և դրանց սահմանափակումների հիմնահարցերը 129

4.1. Մարդու իրավունքների ու ազատության սահմանները 129

4.2. Մարդու իրավունքների սահմանափակման կամ իրավունքներից զրկելու սահմանադրական հիմքերը Իրանում 132

ԳԼՈՒԽ 3. ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 1. Դատական համակարգի վերակառուցումը հեղափոխությունից հետո և դրանում «Վելայաթ Ֆաղիհ»-ի տեսության կիրառումը 136

§ 2. Քաղաքացիական գործեր քննող դատարանները և դրանց գործառույթային առանձնահատկությունները 139

§ 3. Քաղաքական գործեր քննող հատուկ դատարանները և հատուկ վարույթը դրանցում 154

§ 4. Իրանի քրեական դատավարության բնութագիրը, փուլերը, գործառութային սկզբունքները 165

ԵԶԱՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 180

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 187

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Ատենախոսական աշխատանքի արդիականությունն ունի մի քանի կողմեր՝ պայմանավորված թեմայի և ատենախոսի կարգավիճակով: Ատենախոսը լինելով ԻԻՀ քաղաքացի՝ հետազոտությունն իրականաց-րել է Հայաստանի Հանրապետությունում: Այդ պատճառով այն ձեռք է բերում տեսաճանաչողական և գործնական նշանակություն Հայաստանի Հանրապետությու-նում: Ատենախոսական հետազոտությունն այս ուղղությամբ հայալեզու կարևոր աղբյուր է, որից կարելի է քաղել գիտելիք և իմացություն Իրանի Իսլամական Հանրապետության իրավական համակարգի պատմական ակունքների, հիմնարար սկզբունքների և առանձնահատկությունների, իրավունքի աղբյուրների տեսության, իրանական կրոնապետության իրավական հիմքերի, դատական իշխանության կազմակերպման և գործառութային առանձնահատկությունների և այլ հիմնահարցերի վերաբերյալ:

Իրանի Իսլամական Հանրապետության իրավական համակարգի հետազոտությունն ունի ոչ միայն ճանաչողական-տեսական նշանակություն, այլ նաև գործնական, որովհետև այն կարող է օգտագործվել որպես անհրաժեշտ իրավական կողմնորոշիչ երկու երկրների քաղաքացիների ու կազմակերպությունների փոխհարաբերությունների ընթացքում առաջացած իրավական հարցերի (խորհրդատվություն, իրավական վեճերի) լուծման համար:

Ատենախոսական հետազոտության արդիականության երկրորդ ուղղությունը կապված է Իրանի Իսլամական Հանրապետության հետ: Այն հանգամանքը, որ ԻԻՀ իրավական համակարգը կրոնական բնույթ ունի, որոշակիորեն սահմանափակում է բուն Իրանում իրենց իրավական համակարգի հետ կապված խնդիրների ազատ և բաց քննարկման հնարավորությունը: Այնտեղ բոլոր, ներառյալ իրավական հիմնահարցերի քննարկումը ևս պետք է տարվի «մահմեդական ժողովրդավարության» ու իսլամական իրավական տեսության շրջանակներում, դրանց հիմնադրույթներին համահունչ: Այս պարագայում աշխատանքն ունի հրատապություն, որովհետև դրանում բարձրացված և հետազոտված իրավական հիմնահարցերը, իրավական մի շարք ինստիտուտների քննադատությունը և դրանց վերակառուցման առաջարկությունները կարևոր

նշանակություն կարող են ունենալ իրանական սահամանադրական բարեփոխումների նոր շրջափուլի համար:

Մինչ 20-րդ դարը Իրանի իրավական համակարգը հիմնված էր շարիաթական և սովորութային նորմերի վրա: 1906 թ. տեղի ունեցան սահմանադրական, իսկ 1979 թ. իսլամական հեղափոխությունները: Առաջինն իրականացրեց իրավական համակարգի աշխարհիկացում: Այդ հեղափոխության արդյունքը եղավ այն, որ Իրանի իրավական համակարգը շատ սկզբունքներ և նորմեր ընդօրինակեց արևմտյան և եվրոպական երկրների իրավական համակարգերից: Իրանի իրավական համակարգը սկսեց ընդօրինակել ռոմանագերմանական իրավական համակարգի շատ տարրեր: Իրանի իրավական համակարգի շատ ձեռքբերումներ արդյունքն են 1906 թ. հեղափոխության: Այդ հեղափոխության ազդեցությունն առկա է նաև ներկայիս իրավական համակարգում: Երկրորդը հեղափոխության արդյունքում Իրանի իրավական համակարգում տեղի ունեցան արմատական փոփոխություններ՝ բոլոր օրենքների, նորմատիվ այլ ակտերի, իրավակիրառ ակտերի համար ղեկավար և ելակետային են իսլամի սկզբունքները և նորմերը:

Հետազոտության նպատակները և խնդիրները: Ատենախոսական աշխատանքի նպատակն է հետազոտել ԻԻՀ-ի իրավական համակարգն իր նորմատիվային, գաղափարական, կազմակերպական հիմքերով, որոշել այդ համակարգի տեղն աշխարհի իրավական ընտանիքների շարքում, մշակել այդ համակարգի բարեփոխումների գիտականորեն հիմնավարված առաջարկություններ: Այդ նպատակին հասնելու համար ատենախոսության մեջ առաջադրվել են հետազոտական հետևյալ խնդիրները.

1) վեր հանել ԻԻՀ-ի իրավական համակարգի պատմական ակունքները, հիմնարար սկզբունքները և առանձնահատկությունները աշխարհի իրավական համակարգերի շարքում՝ վերլուծելով իրավունքնի աղբյուրների տեսությունը և այդ աղբյուրների ստորակարգությունը,

2) հետազոտել խորհրդարանական օրենքների՝ որպես իրավունքի աղբյուրի տեղը և դերը Իրանի իրավական համակարգում, օրինաստեղծագործության կառուցակարգը և վեր հանել դրա քաղաքական իրավական հիմնախնդիրները, ինչպես նաև դրանց լուծման ուղիները,

3) հետազոտել Իրանի իրավական համակարգի սահմանադրական զարգացման ու իրանական կրոնապետության իրավական հիմքերի ամրագրման պատմությունը և վեր հանել դրա փուլերը, պետաիրավական համակարգի իսլամական գաղափարներով պայմանավորված սկզբունքները,

4) համեմատել մարդու իրավական կարգավիճակի միջազգային իրավական սկզբունքները և Իրանում այդ կարգավիճակի սահմանադրական կարգավորումները, պարզելով Շարիաթի սկզբունքների ու նորմերի ազդեցության մակարդակը այդ կարգավիճակի վրա,

5) համեմատել մարդու առանձին իրավունքների համընդհանուր՝ միջազգային բովանդակությունը և դրանց սահմանադրական կարգավորման առանձնահատկություն-ները ԻԻՀ-ում, հետազոտել մարդուն իրավունքներից զրկելու և դրանց սահմանա-փակումների հիմնահարցերը և դասակարգել դրանց իրավական հիմքերը Իրանում,

6) վեր հանել հեղափոխությունից հետո դատական համակարգի վերակառուցման գործընթացը, դրանում «Վելայաթ Ֆաղիհի» տեսության կիրառումը և ցույց տալ ԻԻՀ-ի իրավական համակարգում դատական իշխանության կազմակերպման և գործա-ռութային առանձնահատկությունները դատական վարույթների տարբեր ոլորտներում:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության շրջանակներում առաջին անգամ մանրամասնությամբ ուսումնասիրվել է Իրանի իրավական համակարգը: Օրենսդիր մի քանի կառույցների առկայությունը և դրանց հակասությունը նախագահի հետ, նախագահի լիազորությունների սահմանափակումը հոգևոր առաջնորդի կողմից, ինչպես նաև Իրանի իրավական համակարգի սկզբունքների (հանրապետական և իսլամական) ուսումնասիրությունը համարվում է հետազոտության նորույթի հիմքը:

Հետազոտության գիտական նորույթի մաս է կազմում Իրանում իշխանական թևերի ոչ հստակ տարանջատման, իշխանական մի թևի՝ մյուս թևի գործունեությանը միջամտության, ինչպես նաև օրենսդիր նախաձեռնությամբ հանդես եկող մի քանի կառույցների գործունեության հիմնահարցերի ուսումնասիրությունը: Դրանք հիմք են տվել եզրակացնելու, որ երկրի իշխանության թևերի միջև խախտվել է

հավասարակշռված տարանջատման սկզբունքը՝ կրոնական սկզբունքների և հրահանգների գերակայության պատճառով, ինչի արդյունքում իշխանությունը կենտրոնացել է մի կառույցի ձեռքին:

Այս հետազոտության գիտական արդյունքներից է եզրակացությունն այն մասին, որ չնայած Իրանի իրավական համակարգը փորձել է կրոնի, իսլամական իրավունքի և հասարակության անդամների իրավունքների միջև ներդաշնակ համամասնություն ապահովել, սակայն դա ընհամենը փորձ է, այլ ոչ թե իրականություն, քանի որ իրավական համակարգի հիմնական աղբյուրն իսլամի հրահանգներն ու հրամաններն են: Իհարկե, Մեջլիսի պատգամավորների և երկրի նախագահի ընտրությունը կատարվում է արևմտյան, այլ ոչ թե իսլամական սկզբունքների հիման վրա: Խորհրդարանի պատգամավորները ընտրվում և գործունեություն են ծավալում եվրոպական երկրների օրինակով: Հենց այստեղ են ընկած հակասության արմատները, որովհետև պաշտոնական գաղափարախոսությունը մշտապես շեշտում է իսլամի, իսլամական սկզբունքների և նորմերի հույժ կարևորությունը, իսկ Սահմանադրության 72-րդ հոդվածը հստակ նշում է, որ Իսլամական խորհրդի մեջլիսը չի կարող կայացնել որոշումներ, որոնք հակասում են պաշտոնական կրոնով սահմանված սկզբունքներին կամ Սահմանադրությանը:

Պաշտպանության հանվող դրույթները:

1. Մանրամասն քննարկելով Իրանի Իսլամական Հանարպետությունում գործող վարչակարգի երկու կարևորագույն հիմքերը՝ հանրապետական կարգերը և իսլամական սկզբունքները, կարելի է եզրակացնել, որ արևմտյան իմաստով ժողովրդավարությունը և հանրապետական կարգերն Իրանում չեն գործում: Պետաիրավական համակարգի մի շարք սկզբունքներ և նորմեր ոչ մի կապ չունեն արևմտյան ժողովրդավարության սկզբունքների հետ: Իրանում առկա հանրապետական կառավարման համակարգը նման չէ աշխարհիկ ու ազատական ժողովրդավարական վարչակարգերին:

2. Իսլամական հեղափոխությունից հետո Իրանում հաստատվեց վարչակարգ՝ կրոնական ժողովրդավարության սկզբունքներով, իսլամի սկզբունքները ու նորմերն ստացան իրավական ամրագրում: Արդյունքում, Իրանի իրավական համակարգում չի

կարող լինել ոչ մի տարր, որ կհակասի իսլամական սկզբունքներին և նորմերին: Այլ կերպ ասած, Սահմանադրությունը գրված է իսլամական սկզբունքների և նորմերի համաձայն, իսկ բոլոր մյուս օրենքները և կանոնները սկիզբ են առնում Սահմանադրությունից և չեն կարող հակասության մեջ լինել իսլամի սկզբունքներին և նորմերին: Միակ բացառությունը Իրանի քրեական իրավունքն է, որի շրջանակում կրոնական հրահանգները և հրամանները չեն կարող ներկայացվել որպես օրենք:

3. Իրանի իրավական համակարգում իրավունքի ոչ մի աղբյուր՝ օրենք, իրավական սովորույթ, դատական նախադեպ, ակադեմիական կամ մահմեդական դոկտրին չպետք է հակասություն ունենա իսլամի նորմերի և սկզբունքների հետ: Դատավորը պարտավոր է յուրաքանչյուր գործի համար գտնել օրենքով կոդավորված լուծումը: Եթե նա չի կարողանում դա անել, ապա պետք է օգտվի իսլամական հեղինակավոր աղբյուրներից կամ ճանաչում գտած ֆեթվաներից: Դատավորը չի կարող հրաժարվել գործի քննումից կամ դատավճռի հրապարակումից՝ տվյալ գործի վերաբերյալ օրենքի բացակայության, օրենքի դրույթների թերի լինելու կամ օրենքի մեջ հակասությունն լինելու պատճառաբանությամբ:

4. Հետևելով ռոմանագերմանական իրավական համակարգին՝ Սահմանադրության մեջ նշվում է իշխանության երեք թևերի (օրենսդիր, գործադիր, դատական) մասին, սակայն բացի նշվածներից կան ևս երկու ուժ՝ հոգևոր առաջնորդը և համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհուրդը, որոնք էլ որոշում են նպատակահարմարությունն այն դեպքում, երբ Սահմանադրության պահպանության խորհուրդը գտնում է, որ Իսլամական խորհրդի մեջլիսի որոշումը չի համապատասխանում շարիաթի նորմերին կամ Սահմանադրությանը: Եթե Մեջլիսը՝ ելնելով նպատակահարմարությունից, համաձայն չէ Սահմանադրության պահպանության խորհրդի որոշման հետ, երկրի առաջնորդը հանձնարարում է անցկացնել խորհրդակցություններ այդ հարցի շուրջ: Այսպիսով՝ հոգևոր առաջնորդը համարվում է երկրի դատական, գործադիր և օրենսդիր ոլորտի բարձագույն պաշտոնյան: Կարծում ենք, որ անհրաժեշտ է մշակել նոր Սահմանադրություն՝ հասարակության կարիքներին համապատասխան, ինչպես նաև դրանով կանխել ուժային կառույցների (հոգևոր առաջնորդ, համակարգի նպատակահարմարությունը

որոշող խորհուրդ) միջամտությունը երկրի կառավարման գործերին: Սահմանադրական նոր լուծումների պարագայում դատարանները պետք է գործեն Մեջլիսի կողմից ընդունված օրենքների հիման վրա, խուսափեն կրոնական նորմերի և սկզբունքների կիրառումից:

5. Իրանի իրավական համակարգում կան նաև չլուծված խնդիրներ: Օրինակ՝ Իրանում կա հոգևոր առաջնորդ. իսլամական դոգմաների համաձայն, նրա որոշումներին ու հրահանգներին ենթարկվելը կրոնական պարտավորություն է: Հոգևոր առաջնորդի կողքին կա նաև խորհրդարան՝ Մեջլիս: Սակայն հաճախ ոչ խորհրդարանական մարմինների օրենսդրական նախաձեռնությունների արդյունքում վարչական, դատական ոլորտների խնդիրներին տրվում են լուծումներ, որոնց հետևանքով առաջանում են հակասություններ մի կողմից կրոնական կառույցների, մյուս կողմից էլ ժողովրդի կողմից ընտրված Մեջլիսի միջև: Ատենախոսական հետազոտության շրջանակներում փորձ է արվել վեր հանել նման հակասությունները և աշխատանքի տարբեր մասերում, ինչպես նաև եզրափակիչ մասում առաջարկել դրանց լուծումներ: Պետք է նկատի ունենալ, որ նման առաջարկների քննարկումը, կրոնապետության հիմքերին քննադատական մոտեցումն այնքան էլ անվտանգ չէ:

Ատենախոսության աղբյուրագիտական հիմքը: Ատենախոսության թեմայի բարդությունը և ուղղվածությունը պայմանավորել է նաև թեկնածուական հետազոտության աղբյուրների շրջանակը, որից հատկապես կարելի է առանձնացնել արևմտյան և իրանական հեղինակների աշխատությունները: Հետազոտությունը գրելիս օգտագործվել է ավելի քան 164 տեսական աղբյուր՝ ներառյալ գիտական հոդվածներ: Աղբյուրների մյուս խումբն իրավական նյութն է, ի դեմս ներպետական նորմատիվ ակտերի և միջազգային պայմանագրերի, որոնք առնչվում են հետազոտության առարկայի հետ, ինչպես նաև դատական պրակտիկայի որոշ նյութեր:

Ատենախոսական հետազոտության մեթոդաբանական հիմքերը: ԻԻՀ-ի իրավական համակարգի հիմնահարցերի հետազոտման և տեսական ու գործնական եզրակացությունների հիմնավորման համար օգտագործվել են դասակարգման, համեմատական-իրավական վերլուծության և այլ մեթոդները:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները փաստում են, որ ատենախոսական աշխատանքի նյութերը կարող են օգտագործվել համեմատական իրավագիտության, պետության և իրավունքի տեսության ու պատմության, համեմատական սահմանադրական իրավունքի դասընթացներում, ինչպես նաև հետագա գիտական հետազոտություններում: Հետազոտության արդյունքները կարող են նպաստել նաև Իրանի օրենսդրության, իրավաստեղծ աշխատանքի հիմունքների իրավական կարգավորման կատարելագործմանը:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսության մեջ քննարկվող հիմնախնդիրներով հեղինակը հրապարակվել է մի շարք հոդվածներ: Մեկ հոդված տպագրվել է Չինաստանում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված աղբյուրների ցանկից:

ԳԼՈՒԽ 1. ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

§ 1. Իրավունքի և իրավական համակարգի ըմբռնումներն Իրանում

Իրավունքի հասկացությունը յուրաքանչյուր իրավական դպրոցում հատուկ սահմանում ունի, սակայն ընդհանուր իմաստով, իրավունքը կարելի է սահմանել որպես՝ «այնպիսի օրինաչափությունների ու կանոնակարգերի ամբողջություն, որը կարգավորում է հասարակության անդամների միջանձնային հարաբերությունները և նրանց կապն իրենց պետության հետ, վերջնարդյունքում ապահովելով հասարակական կարգն ու արդարությունը, ունենալով նաև իրականացման բավարար երաշխիք»: Հետևաբար, իրավունքը նույն ինքը նպատակը չէ, այլ՝ նպատակին հասնելու միջոց: Իրականում իրավունքը փորձ է կարգ ու կանոն և արդարություն հաստատելու, զարգացումն ու քաղաքակիրթ դառնալու ընթացքն ապահովելու համար: Ցանկացած իրավական համակարգ այդ նպատակներին հասնելու համար որդեգրում է հատուկ մեթոդ և ուղի: Իրանի իրավական համակարգում, որը ձևավորվել է կրոնական համոզմունքների հիման վրա, քանի որ իշխանությունը պատկանում է Աստծուն և չարի ու բարու, թույլատրելիի և չթույլատրվածի չափանիշն Աստծո կամքն է ու պատվիրանները, դավանանքն ու իրավունքն ու կրոնը միախառնված են և ցանկացած օրինաչափություն ներկայացվում և իրականցվում է կրոնական ու դավանանքի համոզմունքների շրջանակներում: Իրավունքի ցանկացած սկզբնաղբյուրի դեպքում, այն ազդում է որևէ իրավական համակարգի իրավական կանոնակարգերի ձևավորման հարցում: Իսլամական աշխարհի տեսանկյունից կրոնական պատվիրանները (որոնք սոցիալական ձևակերպումներով օրենքի տեսք են ստանում) աստվածային ծագում ունեն, և հաշվի առնելով Աստծո իմաստնությունը: Իրավունքը ոչ բացարձակ արժեք է և ոչ էլ բացարձակ իրականություն, այլ՝ այդ երկուսի խառնուրդը: Այլ կերպ ասած, իրավունքն արտաքուստ արժեք (վարկանիշ) է թվում, սակայն բխում է սոցիալական ու մարդկային իրողություններից:

Ակնհայտ է, որ ցանկացած իրավական համակարգ ունի իր մեջ ներառած հասկացություններն ու բաժանումները, որոնց օգնությամբ լուսաբանում է իր

օրինաչափությունները և դրանց միջոցով սահմանում ու մշակում իր իրավական կանոնակարգերը: Ընդհանրություններն ու տարբերությունները հանգեցրել են աշխարհում տարբեր համակարգերի ձևավորմանը: Իրավական համակարգերը, անտեսելով նրանց կողմնակի և երկրորդական տարբերությունները, կարելի է՝ հաշվի առնելով նրանց կողմից իրավունքի տարբեր աղբյուրների, դատական գործընթացների, պետական պաշտոնների իշխանության ու լիազորությունների և իշխանական մարմինների համար նախատեսվող իրավաբանական հասկացություններն ու նշանակությունը, բաժանել մի քանի մեծ ընտանիքների, այդ թվում՝ ռոմանոգերմանական, ընդհանուր իրավունքի (Common law /Общее право/), կոմունիստական, իսլամական և այլ հատուկ իրավական համակարգերի, դրանք են՝ Ճապոնիայի և Հնդկաստանի իրավական համակարգերը[1]: Այսօր անհերքելի իրողություն է իրավական համակարգերի դասակարգումները մի քանի մեծ խմբերի, որի արդյունքը ոչ այլ ինչ է, քան՝ աշխարհում իրավական տարբեր համակարգերի ավելի լավ ներկայացումն ու ընկալումը:

«Իրանի իրավական համակարգ» ասելով հասկանում ենք՝ Իրանի պետության իրավական կանոնակարգերի ու օրինաչափությունների ամբողջությունը, որը ներառում է իրավաբանական կազմակերպությունների ու դրանց միմյանց հետ կապող տեխնիկական սկզբունքների մի ամբողջություն, և այդ բարդ կառույցն ընդգրկված է փիլիսոփայական ու սոցիալական իդեալներով (հիմունքներ ու նպատակներ) և իրավաբանական աղբյուրներով, որոնք էլ առաջնորդում են այն[2]: Հետևաբար, իրավական համակարգը զուտ իրավաբանական կանոնակարգեր ու օրինաչափություններ չէ, այլ՝ կանոնների ու օրինաչափությունների մի ամբողջություն, որն՝ ըստ կառուցվածքի, հիմունքների, նպատակների, հասկացությունների ու եզրույթների, միասնական է և որոշակի նպատակ է հետապնդում: Ուստի ցանկացած հասարակության իրավական համակարգ այն օրինաչափությունների ու կանոնակարգերի ամբողջությունն է, որը ձևավորվում է աշխարհագրական ու

[1] Դավիդ Ռ., Սպիսոզի Ք.Ժ., Համեմատական իրավունքի և արդի իրավական երկու մեծ համակարգերի մասին ներածական ակնարկ, թարգմ.՝ Սաֆայի Ս.Հ., 2-րդ տպ., Դադգոսթար, Թեհրան, 1999, 304 էջ 20:

[2] Քաթուզյան Ն., Իրավագիտության փիլիսոփայություն, եռահատորյակի առաջին հատոր, 5-րդ տպ., Էնթեշար ԲԸ հրատ., Թեհրան, 2006, էջ 37:

պատմական պայմաններում՝ տվյալ հասարակության տնտեսական, մշակութային, սոցիալական և քաղաքական պահանջների ու ցանկությունների հիման վրա: Ցանկացած երկիր, հաշվի առնելով նրա պայմաններն ու պահանջները, ունի իրեն հատուկ իրավունքները, և հաճախ է պատահում, որ միասնական իրավական համակարգ ունեցող երկրում առկա են բազմաթիվ իրավաբանական կանոնակարգեր՝ տեղական ընդունված կարգերի և մշակութային ու աշխարհագրական առանձնահատկությունների ազդեցության պատճառով, և հնարավոր է, որ որոշակի զգայունությամբ կարելի է ասել, որ աշխարհում գոյություն ունեցող երկրների քանակով գործ ունենք տարբեր ու որոշակի իրավական համակարգերի հետ:

Ցանկացած երկրի իրավունք ձևավորվում է երկու հետևյալ տարրերի հիման վրա: Առաջինը՝ կայուն ու հաստատուն տարրեր, որ երառում են հիմունքներ, նպատակներ և կառուցվածք, որոնք բխում են հասարակությունում իշխող արժեքներից, հասարակական մտածելակերպից, որևէ երկրի քաղաքակրթությունից ու մշակույթից: Երկրորդը՝ անկայուն ու ոչ հաստատուն տարրեր, որոնք փոփոխվում են՝ ըստ հանգամանքների, հասարակության մոտեցումների ու պահանջների փոփոխության արդյունքում, և երբեմն՝ մեծ արագությամբ: Այս փոփոխական տարրերից են՝ իրավաբանական կանոնակարգերի արտահայտման և մեկնաբանման համար կանոնակարգերն ու օրինաչափությունները, եզրույթներն ու բառերը, և իրավաբանական տեխնիկաները:

Իրավական համակարգերի կայուն տարրերում տարբերությունը հանգեցնում է աշխարհում տարբեր իրավական համակարգերի ստեղծմանը, իսկ անկայուն տարրերում տարբերությունն իրավական բազմաթիվ համակարգերի (systems) առաջացման պատճառ է հանդիսանում: Այն իրավական համալիրները, որոնք միանման կայուն տարրեր ունեն, կազմում են մեկ «իրավական համակարգ» (system), և այն համակարգերը (systems), որոնք ընդհանուր կայուն տարրեր ունեն, կազմում են մեկ «իրավական համակարգ»: Օրինակ, Ամերիկայի և Անգլիայի պես համակարգերը, որոնց իրավաբանական աղբյուրները, նպատակները, դատական ու վարչական կառույցները նման են իրար, դասվում են մեկ իրավական համակարգում, որը կոչվում է ընդհանուր իրավունք (Common law, Общее право), և իսլամական երկրներում երկու

իրավական համակարգ է իշխում անհատների ու հասարակության հարաբերություններում, մեկը՝ կրոնական իրավունք (շարիաթ), մյուսը՝ սահմանվող իրավունք: Սակայն սա չի նշանակում, որ մեկ իրավական համակարգում դասվող բոլոր երկրները միանման կանոններ ունեն բոլոր դեպքերում: Քանի որ հաճախ դրանք միմյանցից տարբերվում են բնույթով: Որովհետև ցանկացած երկիր ունի իրեն հատուկ ազգային իրավունքները: Իրանի իրավական համակարգը ևս չի բացառվում այդ օրինաչափությունից, օրինակ՝ իսլամական իրավական համակարգն ընդգրկում է Իրանը, Սաուդական Արաբիան, Եգիպտոսը և մի շարք այլ իսլամական երկրներ, որոնք համընդհանուր են հիմունքների, նպատակների և աղբյուրների հարցով, սակայն կանոնակարգերում ու օրինաչափություններում տարբերությունների առկայության պատճառով, աղբյուրների ձեռքբերման և իրավաբանական կանոնակարգերի մեկնաբանման եղանակը բաժանվում է շիադավան և սուննիական իրավական համակարգերի: Իսկ Իրանի Իսլամական Հանրապետության իրավական համակարգում շիադավան իրավական համակարգերը համարվում է գլխավորն ու հիմքը, իսկ սուննիական և կրոնական փոքրամասնությունների իրավական համակարգը՝ կողմնակի թեմա:

Նկատելի է, որ կենսական ու պատմական բազմազանության պատճառով, բազմազան ու բազմաթիվ են նաև հասարակությունների իրավական կառուցվածքն ու համակարգը: Այդ իսկ պատճառով, բազմաթիվ են իրավական համակարգերի դասակարգումները: Ըստ այդմ, որոշ իրավագետներ արդի աշխարհի իրավական համակարգերը դասակարգել են՝ ըստ անհատի մտածողության և նրա իսկության փիլիսոփայության, ըստ բնատուր իրավունքի (այդ թվում՝ արևմտյան Եվրոպայի երկրների և ԱՄՆ իրավական համակարգերը), կամ ըստ իրավական հասարակության մտածողության ու իսկության (օրինակ՝ գաղափարախոսական համակարգի վրա հիմնված երկրները), ոմանք էլ իրավական համակարգերը խմբավորել են՝ գրավոր իրավունքի (սահմանված ու մշակված) և ընդհանուր իրավունքի (Common law /Общее право/) (ոչ գրավոր և չմշակված) համակարգերի: Իսկ մյուս իրավական համակարգերը համարել են այս երկուսը միջև կամ այդ երկու համակարգերի խառնուրդն ու համակցությունը: Թվում է, թե, չնայած սոցիալական արդարության ու կարգ ու

կանոնին հասնելու ճանապարհին իրավաբանական մեթոդները տարբերվում են տարբեր իրավական համակարգերում, սակայն նպատակը մեկն է:

Մեկ այլ դիտանկյունից, եթե իրավական համակարգերի դասակարգումներում մեր չափանիշը լինի միաստվածության կրոններից կախվածության աստիճանն ու դրանց միջև կապը, ապա իրավական համակարգերը պետք է բաժանել երկու մեծ իրավական համակարգերի՝ «սկոլար-մարդկային» և «կրոնական-աստվածային»: Սկոլար-մարդկային բոլոր համակարգերի ընդհանուր եզրն այն է, որ նրանք իրավական կանոնակարգերը համարում են մարդու ձեռակերտը, սոցիալական խղճմտանքի կամ ընդունված սովորույթի կամ մարդկային բանականության ու փորձի արդյունք: Չնայած հնարավոր է, որ դրանք ազդեցություն են կրել նաև կրոնական ուսմունքներից՝ որպես հասարակության մեջ ընդունված սովորույթ: Սակայն կրոնական-աստվածային համակարգերի ընդհանուր կողմն այն է, որ իրավաբանական կանոնակարգերն սկզբունքորեն Աստծո կողմից են սահմանվել և Նրա կամքի արդյունքն են: Չնայած հնարավոր է, որ միաստվածության կրոնների շրջանակներում, նաև բանականությունը, ընդունված սովորույթներն ու մարդկային փորձն են դերակատար իրավաբանական կանոնների ձևավորման հարցում: Սկոլար-մարդկային իրավական համակարգերից կարելի է նշել «ռոմանոգերմանական», «ընդհանուր իրավունքի» (Common law, Общее право) և «սոցիալիզմի» իրավական համակարգերը, իսկ կրոնական-աստվածային իրավական համակարգերից են՝ «հրեականությունը», «քրիստոնեական-եկեղեցականը» և «իսլամը»:

Սակայն այն ժամանակ է խնդիր առաջանում, երբ մի իրավական համակարգ, օրինակ՝ Իրանը, փորձում է այս երկու մտածելակերպերը, այսինքն՝ մարդկային կանոնակարգերը միացնել ու գումարել կրոնական-աստվածային սկզբունքներին: Իհարկե, այս երկու տեսակետների միաձուլումն ու հանրագումարը չի կարող հաջողությամբ պսակվել. Իրանի իրավական համակարգի գլխավոր հիմքը հանդիսացող իսլամի գաղափարական սկզբունքների ու կանոնակարգերի իրականացումը՝ ռոմանոգերմանական իրավունքում նախատեսված գործիքների ու մարմինների միջոցով դժվար ու երբեմն անհնար է:

§ 2. Մահմեդական իրավական համակարգը և իրանական կրոնապետու թյունը. պատմական ակունքները և արդի առանձնահատկությունները

Պատմության տարբեր ժամանակներում իրավունքի և կրոնի միջև գոյություն է ունեցել անքակտելի կապ: Միջնադարյան Եվրոպայում իրավունքն ամբողջությամբ գտնվել է քրիստոնեության ազդեցության տակ: Հասարակական հարաբերությունների կարգավորման գործում կրոնական սովորույթներն ու ծեսերն իրենց էական ազդեցությունն են ունեցել Հնդկաստանում, Չինաստանում և Ճապոնիայում: Իրանում, արաբական արշավանքների և Սասանյանների դինաստիայի անկումից հետո, 651 թ. իսլամը հռչակվեց պետական կրոն: Ցանկացած սովորույթ, ծես կամ շահի հրաման չէր իրագործվի, եթե հակասեր իսլամի սկզբունքերին: Անցել է ավելի քան 13 դար, սակայն իսլամական կանոններն ու սովորույթները դեռ կարգավորում են հասարակական հարաբերությունները:

Իսլամական իրավունքը (շարիաթը) կարելի է համարել կրոնական հրամանների և հանձնարարությունների մի ամբողջություն, որն արտահայտում է Աստծո կամքը: Իսլամի ընդհանուր նկարագիրն իր մեջ ներառում է պաշտանմունքի մասին հրամաններ և քաղաքական-իրավական կանոններ[3]: Իսլամն ունի բազմաթիվ ուղղություններ, որոնցից Իրանում առավել տարածվածը շիիզմն է: Այս ուղղությունն առաջին անգամ Սեֆյանների օրոք՝ 1528 թ. -ին հռչակվեց որպես երկրի պետական կրոն: Նույնիսկ Իրանի իրավական համակարգի արդիականացումից, որը հայտնի է «Սահմանադրական հեղափոխություն» անվամբ, և 1906 թ. Իրանի առաջին Սահմանադրության ընդունումից հետո, կրոնն իր կարգավորիչ տեղը պահպանել է իրավական համակարգում[4]:

Շիա բառն ունի երկու իմաստ. համաձայնություն և ներդաշնակություն մի քանիսի միջև ինչ-որ թեմայի շուրջ: Այս բառի երկրորդ իմաստն է անհատի կամ խմբի

---

[3] Շախթ Ժ., Իսլամական իրավունքի ներածություն, թարգմ.՝ Մորադի Բանի Մ. և Խաջեֆարդ Ա., 1-ին տպ., Դադգոսթար, Թեհրան, 2009, էջ 11:

[4] Մուսուլմանների մեծ մասը սուննիներ են, որոնք ընդունում են մարգարեի մահվանից հետո Օմար, Աբու Բաքր, Օսման և Ալի խալիֆներին, իսկ շիաները մարգարեի հաջորդ են ընդունում Ալիին և նրա ընտանիքի անդամներին: Այս մասին ավելի մանրամասն տես՝ Իսլամական իրավունք, Աբոլհասան, Թեհրանի համալսարան, 2004, էջ 46:

հպատակությունը և հնազանդությունը մեկ այլ անհատի կամ խմբի: Արաբերեն լեզվում շիա բառն ավելի շատ երկրորդ իմաստով է գործածվում: Ղուրանում այս բառը մի քանի անգամ գործածվել է երկրորդ իմաստով: Օրինակ՝ Մովսեսի հետևորդները հիշատակվում են որպես մովսեսական շիիզմի հետևորդներ, իսկ Աբրահամ մարգարեն ներկայացվում է որպես շիա և Նոյ մարգարեի հետևորդ: Այսպիսով, Իրանում պետական կրոն է շիիզմը, սակայն Սահմանադրության 13-րդ հոդվածի համաձայն հրեա և քրիստոնյա իրանցիները պաշտոնապես ճանաչված կրոնական փոքրամասնություններ են, որոնք օրենքի սահմաններում ազատորեն կարող են կատարել իրենց կրոնական ծեսերը, ինչպես նաև, համաձայն իրենց կրոնի, զբաղվել նոտարական գործերով և կրոնագիտական աշխատանքներով: Այլ կրոնների ներկայացուցիչների համար նման իրավունքներ նախատեսված չեն:

Այսօրվա դրությամբ մուսուլմանական աշխարհի 16 տոկոսը կազմում են շիաները: Իսլամական աշխարհի միակ պետությունը, որտեղ շիաների թիվն ամենաշատն է՝ ԻԻՀ-ն է: Հենց այս պատճառով էլ Իրանի առաջին Սահմանադրության մեջ հստակ կերպով նշվում էր, որ իսլամի շիա ուղղությունը համարվում է այս պետութան պաշտոնական կրոնը: Նույնիսկ 1979 թ. Իրանի երկրորդ հեղափոխության հաղթանակից հետո իսլամը սահմանադրորեն պահպանեց իր կարգավորիչ դերն ու կարևորությունը: ԻԻՀ Սահմանադրության չորրորդ գլխում ասվում է. «Քաղաքական, քաղաքացիական, վարչական, ռազմական, մշակութային, տնտեսական, ֆինասական, քրեական օրենքները պետք է համապատասխանեն իսլամի սկզբունքներին…»: Այս սկզբունքը հեղափոխության հետևանքն է. ընտրելու իրավունք ունեցող իրանցիների 98 տոկոսը կողմ քվեարկեց իսլամական վարչակարգի ստեղծմանը:

Այստեղից հետևում է, որ պետության իրավական հիմքը պետք է լինեն իսլամական օրենքի սկզբունքները[5]: Իսլամի օրենքներում պետության հիմքը կրոնական համոզմունքն է, որը Աստծո ներշնչանքն է, իսկ իսլամական օրենքը, նույնիսկ

[5] Շատ մուսուլմանական երկրներում նրանց քրեական և քաղաքացիական օրենսգրքերի, ժառանգական իրավունքի հիմքում ընկած է Շարիաթը (տե՛ս Jamal J. Nasir, The Islamic law of personal status, 2nd edn, Graham & Trotman, London, 1990, p. 11; Մոհամմադի Ա., Իսլամական իրավունքի եզրահանգումների հիմունքները, 32-րդ տպ., Թեհրանի համալսարանի հրատ., Թեհրան, 2009, էջ 46):

ամենամանր հարցերում կրոնից չի առանձնանում: Իսլամական օրենքում ամեն ինչ ունի աստվածային բնույթ, և փոփոխման ենթակա չէ որևէ ուժի կողմից, ի հակադրություն եկեղեցական օրենքի, որը հիմնված է քրիստոնեական բարոյագիտության սկզբունքների վրա: Դրանք չունեն աստվածային ներշնչանք, հանդիսանում են մարդկային մտքի արդյունք, ժամանակի ընթացքում ենթարկվել են բազմաթիվ փոփոխությունների: Իսլամական վարչակարգում կրոնի ազդեցությունը ամուսնության, ամուսնալուծության, առևտրի, հագուստի, դիմահարդարման, դատավարության, քրեական, քաղաքացիական օրենքների վրա ակնհայտ է, և ըստ այդ կրոնի հետևորդների ոչինչ անտեղի և անպատեհ ասված չէ: Շարիաթի նպատակը ոչ այլ ինչ է՝ քան բարեփոխումների իրականացումը և մարդու դաստիարակությունը[6]:

Իսլամի և քրիստոնեության համեմատության արդյունքում գալիս ենք այն եզրակացությանը, որ այս կրոնների բարոյագիտական սկզբունքները, միաստվածության երկրպագությունը, մարդկային հոգու անմահության ընդունումը ընդհանուր են, սակայն իսլամի օրենքների համաձայն իրավունքի հիմնական աղբյուրը և պարտականությունները սահմանափակվում են Աստծո կողմից ստեղծված օրենքներով, որոնք մարդկանց համար կատարելագույն և լավագույն բացատրված են իր մարգարեի միջոցով տրված երկնային գրքում՝ «Ղուրանում»[7]: Շիական փիլիսոփայության մեջ աստվածային հրամանների և վճիռների համար կարևոր հիմքեր

---

[6] Քաթոզյան Ն., Քաղաքացիական օրենսդրությունը ներկա իրավական համակարգում, 37-րդ տպ., Միզան, Թեհրան, 2013, էջ 203:

[7] Իսլամի սուրբ գիրքը Ղուրանն է, որը նշանակում է ընթերցել: Ղուրանը գրված է չափածո եղանակով: Այն բաժանվում է 114 բաժինների: Դրանք կոչվում են սուրահներ: Ղուրանը գրվել է Մոհամմադի պատմածների հիմքի վրա, որը նա ժամանակին հաղորդել է իր հավատարիմներին: Համարվում է, որ Ղուրանն ուղարկվել է երկնքից. մարգարեն իր լեզվով և ձևով այն բացատրել է ժողովրդի համար: Մահմեդականները մինչ օրս իրավական խնդիրները և հարցերը պարզելու համար առաջին հերթին դիմում են Ղուրանի օգնությանը: Առաջին սուրահը իսլամի կրեդոն է, և յուրաքանչյուր իսլամադավան պարտադիր կերպով պետք է ընդունի այն: Ղուրանը որպես Մոհամմադի քարոզների ժողովածու՝ պարունակում է կրոնադավանական, ծիսական և կենցաղային պատվիրաններ, առակներ, աղոթքներ: Ղուրանի մեկնությունները և ուսումնասիրությունը սկզբնավորել են մահմեդական աստվածաբանությունը, աշխարհիկ ու կրոնական իրավունքը, նպաստել արաբական մշակույթի զարգացմանը: Ղուրանի մեկնություններում արտացոլվել են մահմեդական աստվածաբանության զարգացման զանազան միտումները, մահմեդական համայնքում սոցիալ-քաղաքական և գաղափարախոսական պայքարը, ինչպես նաև սոցիալ-տնտեսական փոփոխություններին Ղուրանը հարմարացնելու ձգտումը:

են Ղուրանը և հադիսները (սուննա)[8]: Այդպիսով, իսլամի հրամանները և վճիռները բաժանվում են երկու հիմնական խմբի՝

- առաջնային հրամաններ - շարիաթի հրամանները և հրահանգները, որոնք ենթակա չեն փոփոխության, օրինակ՝ գինի խմելը հարամ է և արգելվում է,
- երկրորդական հրամաններ - այս հրամանները համարվում են առաջնային հրամանների լրացումներ, դրանք բացատրում, մեկնաբանում են նախորդներին՝ ընդարձակելով կամ կրճատելով դրանք:

Օրինակ՝ Իրանում, հենվելով իսլամական օրենքների վրա, քաղաքացիական օրենսգրքի 1133 հոդվածը սահմանում է, ամուսինը ցանկացած պահի կարող է իր կնոջից բաժանվել, բայց պետք է սկզբում դատարան դիմի և ներկայացնի համատեղ կյանքի անհնար լինելու մասին տեղեկանք: Պետք է նկատել, որ տղամարդու այս իրավունքը գալիս է առաջնային հրամաններից, սակայն այդ հրամանների համար նախատեսված պայմանները սահմանել է օրենսդիրը: Օրինակ՝ ղալիմը (աղջկա ստացած օժիտը փեսացուից) և օրենքի այլ պահանջներ համարվում են երկրորդական հրամաններ[9]:

Հարկ է նշել, որ կրոնի ազդեցությունն Իրանի իրավական համակարգի և հիմնարար սկզբունքների վրա ակնհայտ է: Որպես օրինակ կարող ենք նշել ԻՀՀ

---

[8] Իսլամի մյուս սուրբ գիրքը «Սուննան» է: Մոհամմադի մահից բավականին հետո պահանջվում էին որոշակի պաշտամունքային փոփոխություններ: Սուննան բաղկացած է հադիսներից: Այս գրքում պատմվում է այն մասին, թե ինչպես էր իրեն դրսևորում Մոհամմադը կոնկրետ իրավիճակներում: Այն բաղկացած է օրենքներից, որոնք վերաբերվում են ընտանեկան, կենցաղային, միջտոհմային, միջցեղային և միջպետական հարաբերություններին: Մարգարեին վերագրված ավանդությունների հետ կապված մուսուլմանների միջև բազմաթիվ հակասություններ ի հայտ եկան. նրանց մի մասը պնդում էր, որ այն իր մեջ պարունակում է միայն մարգարեի խոսքերն ու գործերը, իսկ մի մասն էլ պնդում էր, որ այնտեղ ներառված են նաև իմամների և նրանց օգնականների գործերն ու խոսքերը: Իսլամում չկա ոչ մի հիմք, որպեսզի մարգարեի օգնականների կյանքն ու գործերը ընդգրկվեն սովորույթի մեջ: Այս հարցում սուննների և շիաների միջև կա համաձայնություն: Իսլամի մարգարեին վերագրված ավանդույթների հետ կապված տարաձայնությունը կայանում է հետևյալում, թե՞ արդյոք միայն մարգարեի խոսքերն ու գործերն են կարևոր, թե՞ իմամների և նրանց օգնականների: Սուննիները ընդունում են միայն մարգարեի գործերն ու խոսքերը, սակայն շիաները այս առիթով մեջբերում են մարգարեի խոսքերից՝ ուղղված մուսուլմաններին. «Երկու կարևոր բան եմ թողնում Ձեզ՝ Աստծո գիրքը և իմ ընտանիքը»: Մարգարեն իր այս խոսքերում իմամներին համարել է իր ընտանիքը և նրանց գործերն ու խոսքերը նույնպես կարևոր համարել:

[9] Դավիդ Ռ., Ժամանակակից իրավական խոշոր համակարգերը, թարգմ.՝ Սաֆայի Հ., 4-րդ տպ., Բուհական հրատարակության կենտրոն, Թեհրան, 2000, 584 էջ 453:

Սահմանադրության 2, 4, 28, 61, 72 հոդվածները: Իսլամական հեղափոխությունից հետո կրոնի ազդեցությունն Իրանի իրավական համակարգի վրա ուժեղացավ. համաձայն Սահմանադրության 72-րդ հոդվածի՝ Իսլամական խորհրդի մեջլիսը չի կարող ընդունել այնպիսի օրենքներ, որոնք հակասում են երկրի պաշտոնական կրոնով սահմանված սկզբունքներին[10]: Իրանի իրավական համակարգի վրա կրոնական վարչակարգի ազդե-ցության արդյունքն այն է, որ յուրաքանչյուր նորմատիվ և անհատական իրավական ակտ պետք է համապատասխանի իսլամի սկզբունքներին, հակառակ դեպքում՝ դրանք չեն հաստատվի Պահապանների խորհրդի կողմից և իրավական ուժ չեն ունենա[11]:

1979 թ. մարտի 30-31-ին երկրում անցկացվեց հանրաքվե. քվեարկության իրավունք ունեցողների 98.2 տոկոսը «այո» ասաց «իսլամական հանրապետության» ստեղծմանը: Ապրիլի 1-ին Իրանը հայտարարվեց իսլամական հանրապետություն: Այսպիսով, Իրա-նում իշխող շահական վարչակարգը իր տեղը զիջեց հանրապետական վարչակարգին[12]:

Իսլամական հանրապետության հռչակումից հետո, օրակարգի կարևորագույն խնդիրներից էր Սահմանադրության մշակումը: Մի խումբ մտավորականներ ցանկանում էին հիմք ընդունել 1906-1907 թթ. Սահմանադրությունը՝ կատարելով իսլամական հանրապետությանը բնորոշ փոփոխություններ3: Սակայն 1979 թ. դեկտեմբերի 2-3-ին տեղի ունեցած հանրաքվեի ընթացքում հաստատվեց իրանական նոր Սահմանադրությունը: ԻԻՀ Սահմանադրությունը կազմված է 12 գլուխներից և 175 հոդվածներից (1989 թ. կատարված փոփոխություններից հետո գլուխների թիվը հասավ 14-ի, իսկ հոդվածներինը՝ 177): Ղուրանի պատվիրանների և շարիաթի օրենքների հիման վրա ստեղծված Սահմանադրության համաձայն ԻԻՀ իրավական

[10] Մադանի Ս.Ջ., Իրանի ժամանակակից քաղաքական պատմություն, Իսլամական հրատարակությունների գրասենյակ, Թեհրան, 2015, էջ 213:
[11] Այս մասին ավելի մանրամասն տես՝ Le dogme et la loi de l'islam սեմինարների քննարկումները՝ օրենսդրության փիլիսոփայությունը իսլամում թեմայով, 2008, էջ 60:
[12] Մադանի Ս.Ջ., Իրանի հիմնարար իրավունքները և քաղաքական կառույցները, 15-րդ տպ., Թաբաթաբայի, Թեհրան, 2010, էջ 145:

համակարգն ամբողջովին հիմնված է կրոնական գաղափարների վրա. բոլոր օրենքներն ու որոշումները բխում են իսլամի սկզբունքներից:

Սահմանադրությունը նաև իսլամի հիմնական սկզբունքներին հավատարիմ մնալու և դրանցից չշեղվելու երաշխավորն է: ԻԻՀ պետաիրավական կարգերի տեսական հիմքը «Վելայաթե Ֆաղիհի» տեսությունն է, իսկ իրավական հիմքը՝ Սահմանադրությունը, որն այդ տեսության կիրառական արդյունքն է ու ամբողջովին հենված է դրա վրա[13]:

Անդրադառնալով ԻԻՀ իրավական նորմերի համակարգին՝ պետք է նշել, որ իսլամական վարչակարգը առաջնորդվում է Շարիաթի օրենքներով և նորմերով, որն իր մեջ ներառում է նաև այս երկրի հիմնական օրենքը: Այսինքն՝ Շարիաթի օրենքների, նորմերի և Սահմանադրության միջև առկա է կատարյալ ներդաշնակություն:

Ելնելով ԻԻՀ Սահմանադրության առաջին գլխում ամրագրված սկզբունքներից, որոնք այս պետության իրավական հենասյուներն են, կարող ենք նշել, որ այն համաշխարհային պատմության մեջ իր նախադեպը չունեցող և բոլորվին նոր երևույթ է: Համաձայն ԻԻՀ Սահմանադրության 1-ին գլխի 4-րդ հոդվածի՝ քաղաքացիական, քրեական, ֆինանսական, տնտեսական, վարչական, մշակութային, ռազմական և քաղաքական ոլորտներում բոլոր օրենքները պետք է հիմնված լինեն իսլամական նորմերի վրա: Այդ սկզբունքը տարածվում է Սահմանադրության բոլոր հոդվածների, ինչպես նաև բոլոր այլ օրենքների և նորմատիվ ակտերի վրա:

Այսպիսով, ԻԻՀ աստվածապետական հանրապետություն է. այստեղ իշխանությունը իրականացվում է աստվածային օրենքների համաձայն՝ հոգևոր առաջնորդի ղեկավարությամբ: Սահմանադրությամբ ամրագրված բոլոր նորմերը իրականացվում են հոգևոր առաջնորդի վերահսկողության ներքո: Սահմանադրության մեջ ամրագրված ԻԻՀ կրոնական սկզբունքների համաձայն ֆաղիհը միակն է, որ կարող է Վալիե Ասրի բացակայության ժամանակ քննարկել Շարիաթին վերաբերող հարցեր: Վալիե Ասրի բացակայության ժամանակ ԻԻՀ առաջնորդությունը և ժողովրդի հովվապետությունը իրականացնում է արդար և հավատացյալ, ժամանակի

[13] Ամիդ-Զանջանի Ա., Քաղաքական ֆեղհ, առաջին հատոր, 2-րդ տպ., Ամիր-Քաբիր, Թեհրան, 2012, 600 էջ 43:

խնդրիներին լավատեղյակ, համարձակ, նախաձեռնող և կազմակերպիչը՝ ֆաղիհը: Այսինքն, ցանկացած ժամանակ, երբ իշխանությունը անցնի ոչ ֆաղիհի ձեռքը, կնշանակի, որ իշխանությունը զուրկ է աստվածային օրինականությունից[14]: Դրանով իսկ իշխանության երեք ճյուղերի գործունեությունը դրվում է հոգևոր առաջնորդի վերահսկողության ներքո:

Հոգևոր առաջնորդը երկրի ղեկավարի պաշտոնում նոր երևույթ է և ոչ մի երկրի ղեկավարի հետ իր դերի, նշանակության, պարտականությունների տեսանկյունից նմանություն չունի: Իշխանության երեք թևերը պետք է կառավարվեն աստվածային օրենքի շրջանակներում՝ աստվածային առաջնորդի կողմից: Այս պաշտոնը հոգևոր առաջնորդի համար արտոնություն չէ: Այն սոսկ պարտականություն և պատասխանատվություն է, որի նպատակն է հասարակության շահերի պահպանումն ու աստվածային օրենքների կիրառումը: Ահա թե ինչու նրա վերահսկողությունը իշխանու-թյան երեք ճյուղերի նկատմամբ չպետք է դիտել որպես բռնատիրության սպառնալիք: Հոգևոր առաջնորդն իր իրավասությամբ և լիազորություններով բարձր է իշխանության երեք թևերից: Սահմանադրությունը հստակ կերպով նշվում է մի իշխանական ուժի մասին, որ վեր է կանգնած նախագահից և ստանձնել է գործադիր իշխանության որոշ գործառույթներ: Միայն այդպես է հնարավոր չեզոքացնել գործադիր թևի արտակարգ ուժն ու իշխանությունը՝ դարձնելով իշխանության մյուս ճյուղերին համարժեք[15]:

ԻԻՀ-ում օրենսդիր իշխանությունն իրականացնում են ժողովրդի կողմից ընտրված Իսլամական խորհրդի մեջլիսի պատգամավորները, այսինքն՝ խորհրդարանը: Իսլամի մեջ ընդունված է համարել, որ աստվածային օրենքին զուգահեռ ոչ ոք ի զորու չէ օրենք սահմանել: Իսլամական խորհրդի մեջլիսը չի կարող ընդունել այնպիսի օրենքներ, որոնք հակասում են երկրի պաշտոնական կրոնով սահմանված սկզբունքներին կամ Սահմանադրությանը: Մեջլիսի ընդունած բոլոր որոշումները պետք հանձնվեն Սահմանադրության պահապան խորհրդի քննարկմանը:

---

[14] Գոլեսթանի Է., Օրենսդրության փիլիսոփայությունն իսլամում, 1-ին տպ., Անդիշեհ, Թեհրան, 2007, էջ 58:

[15] Նույն տեղում:

Պահապանների խորհրդի միջոցով իրականացվում է հոգևոր առաջնորդի պարտականությունների մի մասը: Պահապանների խորհրդի կազմը, նրա անդամների ընտրությունն ապահովում է առաջնորդի կողմից կատարյալ վերահսկողությունը իշխանության երեք ճյուղերի նկատմամբ: Այսպես, Պահապան խորհրդի վեց անդամ կրոնագետները (ֆաղիհները) ուղղակիորեն նշանակվում են երկրի հոգևոր առաջնորդի կողմից, իսկ մյուս վեցը՝ հայտնի իրավաբան անդամները, Մեջլիս են ներկայացվում դատական իշխանության նախագահի կողմից (ընդ որում վերջինին անմիջականորեն նշանակում է հոգևոր առաջնորդը) ու հաստատվում Մեջլիսում: Փաստորեն հոգևոր առաջնորդն անուղղակիորեն մասնակցում է նաև իրավաբանների նշանակմանը:

Պահապանների խորհրդի վեց ֆաղիհների ընտրությունն առաջնորդի կողմից ապահովում է նրա ակտիվ ներկայությունն ու վերահսկողությունը օրենսդրության ոլորտում, քանի որ վարչակարգի պահպանումը և օրենքների՝ իսլամական նորմերի հա-մապատասխանելիության ապահովումը ևս առաջնորդի պարտականություններից են[16]:

Պահապանների խորհուրդը համարվում է օրենքների՝ իսլամական նորմերի և Սահմանադրության հետ համատեղելիության պատասխանատուն: Խորհրդի կազմը և նրա անկախությունն իշխանության երեք ճյուղերից հնարավորություն է տալիս առանց իշխանության երեք ճյուղերի հավասարակշռության խախտման, ապահովել հոգևոր առաջնորդի ներկայությունն օրենսդիր, գործադիր և դատական ոլորտներում: Դրանով Պահապանների խորհուրդը հոգևոր առաջնորդի հենարանն է:

Պահապանների խորհուրդը վերահսկում է նաև իսլամական խորհրդի մեջլիսի պատգամավորների ընտրություններ՝ ընդունելով և քննելով մինչև վերջնական արդյունքների հրապարակումը ներկայացված դիմում բողոքները: Ընտրությունների նկատմամբ նման վերահսկողություն սահմանելը նպատակ ունի կանխելու ընտրական գործընթացների վրա իշխանության ճյուղերի ազդեցությանը: Այսպիսով, մեջլիսի ընտրությունների ընթացքում առաջնորդի անուղղակի ներկայությունը նույնպես ապահովված է:

[16] Տե՛ս Մոհամմադի Ա., նշվ. աշխ., էջ 145:

ԻԻՀ-ում գործող կարևոր խորհուրդներից է Համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհրդը, որի անդամները դարձյալ նշանակվում են հոգևոր առաջնորդի կողմից: Այս խորհրդի նպատակն է հարթել Իսլամական խորհրդի մեջլիսի և Պահապանների խորհրդի միջև ծագած հակասություններն ու վեճերը:

Իշխանության գործադիր թևը նույնպես գտնվում է հոգևոր առաջնորդի վերահսկողության ներքո: Երկրում իրենց նշանակությամբ կարևոր են համապատասխանաբար հոգևոր առաջնորդի պաշտոնը, այնուհետև նախագահը և նախարարների կաբինետը[17]:

Դատական համակարգը հասարակական և անձնական իրավունքների պաշտպանության երաշխավորն է, որ պատասխանատու է արդարադատության իրականացման համար, ուստի նրա համապատասխանությունը իսլամական նորմերին պարտադիր է: Երկրի հոգևոր առաջնորդը դատական իշխանության մարմինների պարտականություններն ի կատար ածելու, բոլոր դատական, վարչական և գործադիր մարմինների գործունեությունը համակարգելու նպատակով 5 տարի ժամկետով նշանակում է դատական ոլորտին քաջածանոթ մոջթահեդ՝ դատական իշխանության արդարացի և գործունյա ղեկավար[18]: Փաստորեն, երկրի հոգևոր առաջնորդի անուղղակի վերահսկողությունը դատական ոլորտի նկատմամբ իրականացվում է դատական իշխանության ղեկավարի միջոցով: Իհարկե, այս վերահսկողությունը չպետք է դիտել որպես միջամտություն դատական իշխանության գործերին: Դրա նպատակն է վարչակարգի աստվածային էության պահպանումը և իսլամական նորմերից հնարավոր շեղումների կանխումը:

Հարկ է նշել, որ դատական իշխանությունն իրականացվում է արդարադատության մարմինների՝ դատարանների միջոցով, որոնք ստեղծվում են իսլամի նորմերին համապատասխան: Նրա գործառույթներն են իրավական վեճերի լուծումը, հասարակական իրավունքների պաշտպանությունը, արդարադատության կատարելագործումը, ինչպես

[17] Մադանի Ս.Ջ., Իրանի հիմնարար իրավունքները և քաղաքական կառույցները, 15-րդ տպ., Թաբաթաբայի, Թեհրան, 2010, էջ 20:
[18] Գոլեսթանի Է., նշվ. աշխ., էջ 203:

նաև կրոնական պատիժների իրագործումը: Անարդարությունների, չարաշահումների, բողոքների, վեճերի և անհամաձայնությունների, թշնամանքի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների կազմակերպումը, ինչպես նաև իրավական ակտերով սահմանված իսլամական քրեական պատիժների իրականացումը նույնպես գտնվում է երկրի հոգևոր առաջնորդի իրավասության շրջանակում: Վերջինիս կողմից նշանակված դատական իշխանության նախագահն ունի մի շարք պարտականություններ. իսլամա-կան հանրապետության նորմերին համապատասխան դատական որոշումների նախա-գծերի պատրաստում, դատավորների նշանակում ու աշխատանքից ազատում և այլն[19]:

Արդարադատության նախարարը ընտրվում է դատական իշխանության ղեկավարի կողմից՝ երկրի նախագահի ներկայացված թեկնածուներից: Նա պատասխանատու է դատական իշխանության և իշխանության մյուս ճյուղերի միջև ստեղծված հարաբերությունների համար: Գերագույն դատարանի նախագահը և գլխավոր դատախազը նշանակվում են դատական իշխանության ղեկավարի կողմից[20]:

Փաստորեն, դատական իշխանությունն ամբողջությամբ գտնվում է իր նախագահի իրավասության շրջանակում, և քանի որ նա էլ նշանակված է հոգևոր առաջնորդի կողմից, ապա վերջինիս վերահսկողությունը իշխանության այս թևի նկատմամբ նույն-պես լիովին ակնհայտ է: Դատական իշխանությունն անուղղակի կերպով վերահսկում է իշխանության գործադիր թևի գործունեությունը: Դատավորները պարտավոր են ձեռնպահ մնալ կառավարության այն որոշումների և այն իրավական ակտերի կատարումից, որոնք հակասում են օրենքներին և իսլամական սահմանումներին կամ գործադիր մարմնի կողմից ընդունվել են լիազորության վերազանցումով[21]:

Քաղաքացիների իրավունքները վերականգնելու համար դատական իշխանության ղեկավարի վերահսկողությամբ ստեղծվում է վարչական արդարադատության

---

[19] Մադանի Ս.Ջ., Իրանի հիմնարար իրավունքները և քաղաքական կառույցները, 15-րդ տպ., Թաբաթաբայի, Թեհրան, 2010, էջ 25-30:

[20] Ալիդուսթ Ա., Ֆեղհն ու բանականությունը, 1-ին տպ., Արդի գիտության ու մտածողության մշակութային կազմակերպություն, Թեհրան, 2002, էջ 26:

[21] Ալիզադե Ա., Իրավունքի նկատմամբ հասարակական մոտեցման հիմունքները, 1-ին տպ., Սամթ, Թեհրան, 2008, էջ 239:

դատարան: Վարչական մարմիններում օրինականության վերահսկման և գործերի ճիշտ վարույթի նպատակով դատական իշխանության ղեկավարին կից ստեղծվում է գլխավոր տեսչություն: Սրանով իշխանության դատական թևն իրականացնում իր վերահսկողությունը գործադիրի նկատմամբ:

Պահապանների խորհուրդը, որն իշխանության օրենսդիր և գործադիր թևերում վերահսկողություն իրականացնելու համար հոգևոր առաջնորդի գործիքն է, նույնպես կապված է դատական իշխանության հետ[22]: Պահապանների խորհրդի վեց մահմեդական իրավագետները Մեջլիս են ներկայացվում դատական իշխանության նախագահի կողմից: Մինչ նրանց ներկայացնելը Մեջլիսն իրավունք չունի իրավաբան ընտրելու: Փաստորեն, Պահապանների խորհուրդը երկրի հոգևոր առաջնորդի համար միջոց է իշ-խանության թևերի միջև հավասարակշռությունը պահպանելու և իսլամական նորմերին՝ Սահմանադրության և օրենքների համապատասխանությունն ապահովելու համար:

Ի մի բերելով երկրի հոգևոր առաջնորդի ուղղակի և անուղղակի վերահսկողության գործառույթներն իշխանության երեք թևերի նկատմամբ, կարելի է եզրակացնել, որ այս կերպ ԻԻՀ-ում ապահովվում է վարչակարգի աստվածային օրինականությունը[23]: Սահմանադրության 167 հոդվածի համաձայն՝ դատավորը պարտավոր է յուրաքանչյուր գործի համար գտնել օրենքով կոդավորված դատավճիռ, իսկ եթե նա չի կարողանում դա անել, ապա պետք է օգտվի իսլամական հեղինակավոր աղբյուրներից կամ ճանաչում գտած ֆեթվաներից[24]: Դատավորը չի կարող հրաժարվել գործի քննումից կամ դատավճռի հրապարակումից՝ տվյալ գործի վերաբերյալ օրենքի բացակայության, օրենքի դրույթների թերի լինելու կամ օրենքի մեջ հակասություններ լինելու պատճառաբանությամբ[25]: Հետևաբար, օրենքը այն հիմնական սկզբունքն է, որով որոշվում է արդարությունը, վերջ դրվում թշնամությանը, կարգավորման բացի

[22] Ղազի Շարիաթ Փանահի Ա., Հիմնարար իրավունքներն ու քաղաքական մարմինները, 14-րդ տպ., Միզան, Թեհրան, 2016, էջ 517:
[23] Barker D. and Padfield C., Law made simple, 10th edition, London. 1998, p. 26.
[24] Wilman J., Brown: GCSE Law, 9th Edition, Sweet and Maxwell, London, 2005, p. 24:
[25] Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրություն, 1994, էջ 13:

պայմաններում թույլ է տալիս դիմել կրոնական իրավագիտության հիմնարար սկզբունքներին՝ դուրս գալով անելանելի իրավիճակներից:

§ 3. Իրանի Իսլամական Հանրապետության իրավական համակարգի հենասյուները և տեղն աշխարհի իրավական ընտանիքների շարքում

Ակնհայտ է, որ յուրաքանչյուր երկրի իրավական համակարգի գնահատման համար անհրաժեշտ է նախ պարզել այդ երկրի իրավական համակարգի կառուցվածքը, բովանդակությունը, ինչն էլ կօգնի զետեղել տվյալ երկիրը գործող որևէ իրավական համակարգի շրջանակներում: Փորձենք այս ենթագլխում ուսումնասիրել և դասակարգել իրավական համակարգերը, դրանց կառուցվածքը և պարզել, թե Իրանի իրավական համակարգն ավելի շատ որ իրավական համակարգի հետ ունի ընդհանրություններ: Արդի իրավական համակարգերն են՝ ռոմանագերմանական, անգլասաքսոնական, սոցիալիստական, արևելյան (հնդկաչինաճապոնական) և իսլամական իրավական համակարգեր[26]: Իսլամալան իրավական համակարգի վառ օրինակը Իրանն է, որտեղ իրավական համակարգը հիմնված է կրոնի, Աստծո կողմից մարգարեի միջոցով տրված գաղափարների և կանոնների վրա: Իրավական այս համակարգի հիմնական նպատակը Աստծո գոհունակությանն արժանանալն է: Շիաների 4-րդ իմամը այս կապակցությամբ հադիսներից մեկում ասել է. «Բոլոր օրենքների հիմքը «Աստծո օրենքն է» և մնացյալ օրենքները սկիզբ են առնում հենց այս կարևոր օրենքից»: Իրավական այս համակարգում իշխանությունը կենտրոնացված է իսլամական հասարակության կրոնական առաջնորդի ձեռքին[27]:

1906 թ. Իրանում տեղի ունեցած սահմանադրական հեղափոխության հետևանքով երկրի իրավական համակարգը մոդեռնիզացիայի ենթարկվեց և մեծամասամբ ընկավ ռոմանագերմանական իրավական համակարգի ազդեցության տակ: Մյուս կողմից, 1979 թ. իսլամական հեղափոխությունից հետո, ամեն ինչ արվեց, որ Իրանի իրավական համակարգը համապատասխան լինի իսլամի սկզբունքներին և նորմերին:

[26] Ripert G. et Boulanger J., Traite de droit civil d'apres de le traité de Planiol, Tome II, Librairie générale de droit et de jurisprudence, Paris, 1957, p. 375.
[27] Մաջլեսի Մ., Լույսի օվկիանոս (հադիսների հավաքածու), 74-րդ հատոր, 10-րդ տպ., Ալվաֆա, Բեյրութ, 1983, էջ 310:

Իսլամական հեղափոխության հաղթանակից հետո երկրի ղեկավարությունը ոչ մի ջանք չխնայեց Իրանի իրավական համակարգը իսլամականացնելու գործում և մասամբ հաջողության հասավ: Սակայն պետք է նշել, որ Իրանի իրավական համակարգի բովանդակությունը, ներքին կառուցվածքը, ինչպես իսլամական հեղափոխությունից առաջ, այնպես էլ հիմա ընդհանուրություններ ունի ռոմանագերմանական իրավական համակարգի հետ: Այս փաստն Իրանի իրավական համակարգի շրջանակներում դարձել է հակասությունների պատճառ, ինչն էլ իր հերթին բարդացնում է այդ համակարգի ուսումնասիրությունը: Բոլոր դեպքերում չպետք է մոռանալ նաև այն փաստը, որ Իրանի ժողովուրդը՝ ինքը 1980 թ. կայացած հանրաքվեի արդյունքում քվեարկեց իսլամական հանրապետության օգտին: Իրանում ստեղծվեց կրոնական վարչակարգ. բոլոր օրենքների համապատասխանեցումը իսլամի նորմերին և սկզբունքներին պարտադիր է: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ այս երկրում կարևորվում է նաև քաղաքացիների կարծիքը, որ ժողովուրդն է իր ճակատագիրը կերտողը: ԻԻՀ Սահմանադրությունից բխում է, որ հասարակությունն ունի երկու կարևոր հենասյուն՝ իսլամական օրենքներ և հանրապետություն, այսինքն՝ հանրապետություն, որտեղ գործում են իսլամական կանոնները, իսկ նոր ընդունված օրենքները պետք է համապատասխանեն իսլամական նորմերին:

Հանրապետություն եզրույթը սերտ կապված է Հունաստանում ձևավորված մեկ այլ հասկացության ժողովրդավարության (դեմոկրատիայի) հետ[28]: Ժողովրդավարության գաղափարների մուտքը և տարածումը Իրան պետք է համարել 19-րդ դարը: Իրանում իշխող ղաջարները եվրոպական երկրների հետ սերտ հարաբերություններ հաստատեցին: Իրանում գործունեություն ծավալեցին օտարերկրյա մասնագետները, եվրոպայում ուսում ստացած իրանցիները վերադարձան հայրենիք, ինչն էլ մեծապես նպաստեց ժողովրդավարության գաղափարների տարածմանը: Իրանցի

[28] Այս եզրույթների իմաստը և նշանակությունը հասկանալու համար պետք է ուսումնասիրել դրանց պատմական անցյալը: Հին Հունաստանում յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ուներ մասնակցելու պոլիսի կառավարմանը, այդ իսկ պատճառով տիրող վարչակարգը դեմոկրատական կամ հանրապետական անուն ստացավ: Դեմոկրատիա բառը հունարեն ծագում ունի. դեմո նշանակում է ժողովուրդ, իսկ քրասի՝ իշխանություն, այսինքն՝ այս բառի իմաստը կայանում է հետևյալում. պետությունը պետք է հիմնվի մարդկանց, ժողովրդի միջոցով (տե՛ս Timasheff N.S., The soviet concept of Democracy, Review of politics, 12(4), Los Angeles, 1950, pp. 506-518):

լուսավորիչները, ոգևորված անգլիական և ֆրանսիական հեղափոխություններից, մարդկանց քարոզում էին հավասարություն, ազատություն, ինչի արդյունքում 1906 թ. տեղի ունեցավ 20-րդ դ. Իրանի առաջին հեղափոխությունը[29]: Այդ սահմանադրական հեղափոխության հետևանքով Իրանում տապալվեց շահական, բռնապետական վարչակարգը և ստեղծվեց ընտրովի օրենսդիր մարմին: Այս իրադարձություններին հետևեց Ռեզա խանի՝ Փեհլևիների առաջին շահի կողմից Իրանում կատարված հեղաշրջումը և Ահմադ Ղաջարի մեկուսացումը, որում մեծ դեր ունեին անգլիացիները: Անգլիական քաղաքականությամբ էր առաջնորդվում նաև քեմալական Թուրքիան: Որոշված էր, որ խորհրդարանի անդամների միջոցով պետք է հաստատվեր հանրապետություն, սակայն Ռեզա խանի ձգտումները Իրանում դրական արդյունքներ չգրանցեցին, քանզի հոգևորականությունը չէր ընդունում հանրապետական վարչակարգ հիմնելու գաղափարը՝ դրա իսլամական չինելու պատճառով: Այս ամենով հանդերձ, տեղի ունեցած բոլոր գործընթացները նպաստեցին այն ժամանակվա Իրանի իրավական համակարգի բարելավմանը[30]:

1979 թ. իսլամական հեղափոխությունից հետո Սահմանադրության մեջ հստակորեն նշվեց պետության կառավարման գործերին ժողովրդի մասնակցության մասին: Բացի այդ հասարակության մեջ տիրում է հավասարության սկզբունքը: Երկրի ղեկավարները սովորական քաղաքացիների պես հավասար են օրենքի առջև: Սակայն Իրանում ժողովրդավարության մասին խոսելիս պետք է ուշադրություն դարձնենք դրա կիրառման մեթոդներին: Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ դեմոկրատիան կիրառվում է երեք եղանակով՝ ա) ուղղակի կամ անմիջական ժողովրդավարություն, բ) անուղղակի կամ ներկայացուցչական ժողովրդավարություն, գ) կիսաուղղակի կամ խառը ժողովրդավարություն: Այս դեպքում կիրառվում են և՛ առաջին, և՛ երկրորդ մեթոդները: Օրինակ, քաղաքական իշխանությունը միաժամանակ գտնվում է երկուսի՝ ընտրված ներկայացուցիչների և հենց իր ժողովրդի ձեռքին:

---

[29] Հաերի Ա., Շիիզմն ու սահմանադրական կարգերն Իրանում և Իրաքաբնակ իրանցիների դերը, 5-րդ տպ., Ամիր-Քաբիր, Թեհրան, 2013, էջ 12:

[30] Այդ մասին մանրամասն տե՛ս Մաքի Հ., Իրանի քսանամյա պատմությունը, երկրորդ հատոր, 6-րդ տպ., Նաշեր, Թեհրան, 2001, 640 էջ:

Կարելի է ասել, որ Իրանի պարագայում գործում է այս տարբերակը. առկա են օրենսդիր մեջլիսներ, սակայն ժողովուրդը հանրաքվեների միջոցով կարող է ուղղակիորեն մասնակցել պետական գործընթացներին[31]: Չնայած որ այս սկզբունքը ամրագրված է ԻԻՀ Սահմանադրության մեջ, սակայն միշտ չէ, որ այն կիրառվում է: Բայց բոլոր դեպքերում պետք է նշել, որ Իրանում շահական և բռնապետական վարչակարգ չէ, որի դեպքում շահը միանձնյա որոշումներ է կայացնում: Իրանում առկա է ժողովրդավարական սկզբունքներին համապատասխանող վարչակարգ, որի դեպքում էապես կարևորվում է ժողովրդի ձայնը և կարծիքը[32]: Շատ հնարավոր է կարծել, որ Իրանում հոգևոր առաջնորդը նման է շահական կամ բռնապետական վարչակարգի մենիշխան անձին[33]: Սակայն պետք է նշել, որ նրանց միջև կան էական տարբերություններ: Իրանում հոգևոր առաջնորդը չի կարող միանձնյա կերպով ղեկավարել երկիրը, ինչպես դա արվում էր շահական կամ բռնապետական վարչակարգի դեպքում[34]: Չնայած որ Իրանի հոգևոր առաջնորդն ունի շատ լիազորություններ, սակայն պետք է նշել, որ Բանիմացների խորհրդի հոգևորականները, որոնք մասնակցում են հոգևոր առաջնորդի ընտրություններին, հսկում են վերջինիս գործունեությունը և նրա գործունեության ընթացքում հակաիսլամական կամ իսլամի նորմերը խախտող ամենփոքր սխալի դեպքում կարող են Սահմանադրության 111-րդ հոդվածի համաձայն հոգևոր առաջնորդին հեռացնել այդ պաշտոնից և մեկուսացնել: Ակնհայտ է, որ «ժողովրդի ինքնիշխանություն» հասկացությունն Իրանում և ոչ մահմեդական երկրներում միմյանցից տարբերվում են, քանզի զանազան երկրներում ժողովրդի ինքնիշխանություն ասելով տարբեր նպատակներ և քաղաքականություն են հասկանում: Օրինակ, մարքսիստական տեսանկյունից դա նշանակում է պրոլետարիատի դիկտատուրա: Իրանում ժողովրդի ինքնիշխանությունը նշանակում է բռնապետության, մտավոր և հասարակական

[31] Մաք Այվեր Ռ.Մ., Հասարակությունն ու պետությունը, թարգմ.՝ Ալիքանի Է., Գրքի թարգմանության ու հրատարակման ինստիտուտ, Թեհրան, 1970, 224 էջ 186:
[32] Նույն տեղում:
[33] Իմամ Խոմեյնի Ռ., Վելայաթե ֆաղիհ, 22-րդ տպ., Իմամ Խոմեյնիի աշխատությունների մշակման ու հրատարակման կենտրոն, Թեհրան, 2010, էջ 43:
[34] Մադանի Ս.Ջ., Իրանի հիմնարար իրավունքները և քաղաքական կառույցները, 15-րդ տպ., Թաբաթաբայի, Թեհրան, 2010, էջ 147:

ճնշումների բացառում և ժխտում: Իսլամական վարչակարգի հիմնական նպատակը իշխանության հասնելը չէ, այլ Աստծուն գոհացնելը[35]:

Իրանում փորձ է արվել մի կողմից կրոնի, իսլամական իրավունքի և մյուս կողմից քաղաքական իշխանության միջև ստեղծել հավասարակշռություն, խաղաղ գոյակցություն, որը միշտ չէ, որ հաջողվում է: Չպետք է մոռանալ, որ Իրանի իրավական հիմքը կազմում են իսլամական սկզբունքները, իսկ երկրի նախագահը, նախարարները, պատգամավորները պաշտոնների են անցնում ոչ իսլամական, այլ արևմտյան սկզբունքներով: Իրանում օրենքները համապատասխանում են Շարիաթի սկզբունքներին, սակայն դրանք կիրառում են պաշտոնյաներ, որոնք իրենց պաշտոնը ստանձնում են արևմտյան կարգերի նմանությամբ: Իրանի Սահմանադրության մեջ կան հստակ դրույթներ, որոնք գերակա և առավել կարևոր են համարում կրոնը: Օրինակ, ԻԻՀ Սահմանադրության համաձայն պատգամավորները չեն կարող օրենք ընդունել, եթե դրա բովանդակությունը հակասում է իսլամի սկզբունքներին և նորմերին[36]: Կարելի է եզրակացնել, որ շատ հաճախ կրոնը, իսլամի սկզբունքները, սովորույթները և ծեսերը խոչընդոտում են ժողովրդավարության տարածմանը[37]:

Իրանի հասարակությունը իսլամական է, հետևաբար նրա երկրորդ կարևոր հենասյունն իսլամական օրենքներն են: Իրանի բնակչության մեծամասնությունը մահմեդականներ են, հետևաբար, խիստ արտահայտված են իսլամի դերն ու ազդեցությունը քաղաքական, տնտեսական և հասարակական ոլորտներում: Ընդհանրապես յուրաքանչյուր պետություն պետք է իր իրավական համակարգը ձևավորի սեփական ժողովրդի ցանկություններն ու նպատակները հաշվի առնելով, իսկ այդ իրավական համակարգում գործող օրենքների կիրառման մեթոդները պետք է արտացոլվեն Սահմանադրության մեջ: Բնականաբար, Իրանի իրավական համակարգում էլ են արտահայտված իրանցիների կամքն ու ցանկությունները:

---

[35] Բուշեհրի Ջ., Հիմնարար իրավունքներ. սկզբունքեր և կանոնակարգեր, առաջին հատոր, 1-ին տպ, Էնթեշար ԲԸ հրատ., Թեհրան, 2005, էջ 46:

[36] ԻԻՀ Սահմանադրության մեջ հստակորեն նշվում է, որ ընդունված բոլոր օրենքները պետք է համապատասխան լինեն իսլամի սկզբունքներին և նորմերին, և նույնիսկ գործում է Պահապանների խորհուրդ, որի հիմնական պարտականությունն է հսկել Մեջլիսի կողմից ընդունված օրենքների համապատասխանությանն իսլամական նորմերին: Այս և մի քանի այլ հոդվածներ հստակ ցույց են տալիս կրոնի գերակայությունը օրենքի նկատմամբ:

[37] Քաթոզյան Ն., Քայլ դեպի արդարություն, առաջին հատոր, 1-ին տպ., Միզան, Թեհրան, 2008, էջ 233:

Սահմանադրությունների և կրոնի միջև առկա կապերի տեսանկյունից զանազան երկրների քաղաքական-իրավական համակարգերը կարելի է բաժանել երեք խմբի[38]. ա) աշխարհիկ (ոչ կրոնական) քաղաքական համակարգեր[39], բ) պաշտոնական կրոնի վրա հիմնված քաղաքական համակարգեր[40], գ) քաղաքական համակարգեր, որտեղ կրոնի ներկայությունը բոլոր ոլորտներում պարտադիր է: Վերջինիս դեպքում կրոնի և քաղաքական ու հասարակական կառույցների միջև առկա է սերտ կապ: Այս համակար-գի լավագույն օրինակն Իրանն է, որտեղ կրոնը պետության և կառավարության գործունեության հիմքն է հանդիսանում: Նմանատիպ երկրներում կարևոր պետական պաշտոնները զբաղեցնում են հոգևորականները: Երկրի բոլոր օրենքները պետք է համապատասխանեն Շարիաթի սկզբունքներին[41]: Իսլամական հասարակության անդամներն իրար հավասար են, նրանց միջև չկա որևէ տարբերություն և նրանցից որևէ մեկը մյուսի նկատմամբ առավելություն չունի[42]: Մյուս կարևոր տարրը, որն առկա է կրոնական իրավական համակարգերում այն է, որ բարոյագիտությունը շաղախված է իսլամական կրոնական համակարգի հետ և ապարդյուն են դրանք միմյանցից բաժանելու փորձերը[43]:

Իսլամական գաղափարախոսության համաձայն, Աստված ոչ միայն ստեղծել է աշխարհն ու մարդկությունը, այլ միայն ինքն է իրավասու օրենք սահմանելու գործում և մարդիկ պետք է ենթարկվեն միայն նրա հրամաններին: Չնայած որ Իրանի Սահմանադրության 4-րդ և 72-րդ հոդվածներում հստակ կերպով նշվում է, որ բոլոր օրենքները պետք է համապատասխանեն իսլամի սկզբունքներին, սակայն մի շարք օրենքներ, ինչպիսիք են առևտրի, քաղաքացիական, վարչարարության ոլորտների

---

[38] Սաեդ Վաքիլ Ա. և Ասքարի Փ., Սահմանադրությունը ներկայիս իրավունքի համակարգում, 5-րդ տպ., Մաջդ, Թեհրան, 2014, էջ 97:

[39] Այս վարչակարգի դեպքում կրոնը ոչ մի դեր և նշանակություն չունի քաղաքական վարչակարգի, երկրի կառավարման համար նախատեսված ուժային լծակների ձևավորման գործում: Քաղաքական այս համակարգի հիմքը Թոմաս Դաքենի՝ քաղաքականությունը կրոնից բաժանելու մասին տեսությունն է: Այն սկիզբ է առել միջին դարերում և տարածված է արդի աշխարհի շատ երկրներում:

[40] Այս դեպքում քաղաքական և իրավական համակարգը հիմնված է կրոնական սկզբունքների և նորմերի վրա, սակայն հնարավոր է, որ երկրի ղեկավարն ինքը հակված չլինի կրոնական օրենքներ կիրառելուն կամ ժողովրդի համար կրոնական բոլոր նորմերի կատարումը պարտադիր չլինի: Բայց բոլոր դեպքերում այս տիպի երկրներում Սահմանադրությունն ունի կրոնական կողմնորոշում:

[41] Բուշեհրի Ջ., Հիմնարար իրավունքներ. սկզբունքեր և կանոնակարգեր, առաջին հատոր, 1-ին տպ, Էնթեշար ԲԸ հրատ., Թեհրան, 2005, էջ 313:

[42] Նույն տեղում:

[43] Քաթոզյան Ն., Քայլ դեպի արդարություն, առաջին հատոր, 1-ին տպ., Միզան, Թեհրան, 2008, էջ 547:

օրենքները, ինչպես իսլամական հեղափոխությունից առաջ, այնպես էլ այժմ հենվում են ռոմանագերմանական իրավական համակարգի երկրների իրավական կարգերի վրա:

Իսլամական երկներում օրենքների կիրառման մեթոդների վերաբերյալ կարելի է երեք դասակարգում ներկայացնել.

1) Երկրներ, որտեղ բնակչության մեծ մասը մահմեդականներ էին, սակայն գործում էր սոցիալիստական հանարապետության տարբերակը (Ուզբեկստան, Տաջիկստան, Թուրքմենստան և այլն): Այստեղ իսլամական սկզբունքներն այնքան էլ շատ չէին կարևորվում, իսկ իրավական համակարգերը հիմնված էին մարքսիզմի գաղափարախո-սության վրա և ոչ մի դատարանում, նույնիսկ ամենամասնավոր, անձնական դեպքերում, իսլամական նորմեր չէին կիրառվում:

2) Երկրներ, որտեղ թվում է, թե պետք է իսլամական նորմերն ու սկզբունքները գերակա լինեն, սակայն նրանց փոխարինում է սովորույթային իրավունքը (օրինակ՝ Եմեն, Սաուդյան Արաբիա, Կատար):

3) Երկրներ, որտեղ իսլամական և սովորույթային իրավունքը շատ կարևորվում են, սակայն շատ ինստիտուտներ փոխառված են Common law և ռոմանագերմանական իրավական համակարգերից, ինչպես օրինակ՝ Պակիստանը, Մալայզիան, Սուդանը և այլն[44]:

Արևմտյան մի շարք հեղինակներ կարծում են, որ Իրանի իրավական համակարգը զուտ իսլամական է: Սակայն իրականում Իրանի առևտրային, քաղաքացիական իրավունքը, դատական նախադեպերը նմանակում են Ֆրանսիայի իրավական համակարգին: Պետական իշխանությունը բաժանված է դատական, օրենսդիր, գործադիր թևերի. սկզբունք, որը չի համապատասխանում իսլամական իրավական հայեցակարգին: Հետևաբար, ռոմանագերմանական իրավական համակարգի ազդեցու-թյունն Իրանի իրավական համակարգի վրա ակնհայտ է:

§ 4. Պառլամենտական օրենքները՝ որպես իրավունքի աղբյուր Իրանի իրավական համակարգում

4.1. Խորհրդարանական օրենքների տեղն ու նշանակությունն Իրանի իրավական համակարգում: Իրանի Սահմանադրության համաձայն պետությունը

[44] Վահեդի Ղ., Իրավագիտության ներածություն, 12-րդ տպ., Միզան, Թեհրան, 2008, էջ 68 և 69:

հիմնված է երկու հենասյուների՝ իսլամի ու հանրապետականության վրա, իսկ պետության գլուխը վերահսկողություն է իրականացնում օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունների նկատմամբ: Նշված իշխանություններից Իսլամական խորհրդարանն է, որ երկու փուլերի ընթացքում ընդունում է օրենքները: Օրենքն ընդունելվուց հետո պետք է հաստատվի Պահապան խորհրդի կողմից, որպեսզի ձեռք բերի իրավական ուժ և գործի[45]: Կախված օրենքի ձևից, այն կարելի համարել ընդհանուր կամ երբեմն մասնավոր գծերով հրահանգներ, որոնք շարադրվել են իրավասու մարմնի կողմից, ընդունվել են խորհրդարանի կողմից, ապա հաստատվել համապատասխան իրավասու մարմնում[46]: Օրենսդրական կարգավորումների գերակշռող մասը սկզբում եղել են ժողովրդի կողմից ընդունված սովորույթներ, որոնք հետագայում օրենսդիրների կողմից վերածվել են գրված օրենքների: Իհարկե, դրանց մի մասն էլ մշակովի են, այսինքն՝ սահմանվել են օրենսդիրների կամքով: Օրենսդրական իրավունքը Իրանում ձևավորվել է Թուրքիայից ու եվրոպական պետություններից հետո: Առաջին օրենքների ժողովածուները ընդունվել են 1926-1938 թթ.[47]:

Իրանում օրենսդրությունն ու իսլամական իրավունքը արմատապես տարբերվել են: Իսլամում օրենքի սուրբ լինելու պատճառով օրենսդրության ուժն ու իրավունքը պատկանում է միայն Աստծուն և շարիաթի (իսլամի) կարգադրություններից ու պատվիրաններից բացի, ոչ ոքի կարիծքը և ոչ մի օրենք կատարման ենթակա չէ: Օրենքը նույնն է, ինչ Աստծո պատվիրանը, իսկ Աստծո պատվիրանը հանդիսացող իսլամական օրենքը լիովին գերիշխում է բոլոր վրա, այդ թվում՝ իսլամական կառավարության: Նույնիսկ Մոհամմադ մարգարեի կարիծիքն ու որոշումը որևէ կերպ

---

[45] Պարսկերենում «օրենք» բառի փոխարեն օգտագործվում է «կանոն» տերմինը, որ առաջացել է հունարեն «Kanon» բառից: Կանոնն ունի տարբեր իմաստներ, ինչպիսիք են՝ մեթոդը, ավանդույթը, կարգը, հրամանը, ցանկացած բանի օրիգինալը (տես՝ Շաաբանի Ղ., Իրանի Իսլամական Հանրապետության հիմնարար իրավունքներն ու պետության կառուցվածքը, 34-րդ տպ., Էթելաաթ, Թեհրան, 2009, էջ 26): Բայց իրավաբանության մեջ այն նշանակում է «մարդկանց վարքագծի վերաբերյալ կարգերի ու կանոնների հստակ և պաշտոնական ամրագրում, որին հետագայում մարդիկ պարտավոր են ենթարկվել, և այդ օրենքը ուղղակի կամ անուղղակի կիրառելի է նրանց նկատմամբ» (տես՝ Barker D. and Padfield C., Law made simple, 10th edition, London. 1998, p. 26):

[46] Ջաաֆարի Լանգարուդի Ջ., Իրավաբանական տերմինաբանություն, 12-րդ տպ., Գանջե Դանեշ, Թեհրան, 2002, էջ 517:

[47] Շախթ Ժ., նշվ. աշխ., էջ 138:

չեն միջամտում իսլամական օրենքներին[48]: Ուստի, այդ առումով իսլամական իրավունքը տարբերվում է նոր օրենքներից ու արևմտյան իրավունքից, որոնք պարզապես բխում են տվյալ կառավարության կամքից: Որովհետև մյուս համակարգերում օրենքի սահմանման իրավունքը տրված է օրենսդիր իշխանությանը որպես ժողովրդի ներկայացուցիչներից կամ թագավորի ընտրյալներից կազմված մարմին: Ինչևէ, պայմանագրային տեսության համաձայն, օրենքը համարվում է կամքի դրսևորում կամ մարմնավորում և իր լեգիտիմությունը ձեռք է բերում ժողովրդավարական գործընթացներից: Ժողովրդավարական սկզբունքներին համապատասխանող ազատ պետություններում ժողովրդի կամ ազգաբնակչության մենաշնորհային ու մշտական գերիշխանությունը հանձնվել է խորհրդարանին՝ օրենսդրման ձևով: Իրավական օրենքներն ու կանոնները ձևավորվել են ժողովրդի կամքի հիման վրա և նույնիսկ երբեմն ժողովրդի կամքի բացահայտումը կատարվում է հասարկության մեջ ընդունված սովորույթներին դիմելով[49]:

Իսլամական հայեցակարգում օրենսդիրը պետք է օրենքը սահմանի և մշակի իսլամի կրոնի շրջանակներում, օրենքների մշակման և ընդունման գործում նկատի առնի իսլամի պայմաններն ու նախադեպերը և չի կարող ժողովրդին պարտադրել ինչ-որ օրենք կամ կանոն, որը չի առաջնորդվում իսլամի պատվիրաններով:

Այսպիսով իրավունքի հիմնական աղբյուրը սահմանվող օրենքներն են, որոնք ձևավորվում և մշակվում են մարդու բանականության միջոցով: Կրոնական մտածելակերպում օրենքը չի կարող ունենալ կրոնի ու իսլամի ամրությունն ու կայունությունը, որովհետև կրոնականների համոզմունքների ու մտածելակերպի համաձայն, Աստվածն է գերիշխում ամեն ինչի ու ամենքի վրա, ուստի միայն նա կարող է սահմանել լավագույն և ամենակատարյալ պատվիրանները, իսկ մյուս կողմից ոչ մի օրենսդիր չի կարող սահմանել այդպիսի կատարյալ ու համապարփակ օրենքներ, քանի որ նա ի զորու չէ միաժամանակ տիրապետել բոլոր իրադարձություններին ու կյանքի բոլոր կողմերին: Մարդկանց կողմից օրենքին ենթարկվելու և այն կատարելու

[48] Իմամ Խոմեյնի Ռ., Վելայաթե ֆաղիհ, 22-րդ տպ., Իմամ Խոմեյնիի աշխատությունների մշակման ու հրատարակման կենտրոն, Թեհրան, 2010, էջ, էջ 47-48:

[49] Քաթուզյան Ն., Ներածություն իրավագիտության մասին և Իրանի իրավական համակարգի ուսումնասիրումը, 66-րդ տպ., Էնթեշար ԲԸ հրատ., Թեհրան, 2008, էջ 119:

գլխավոր պատճառն այն է, որ օրենքը հենց մարդկանց կամքի ու համաձայնության արդյունքն է, որը ձեռք է բերվել կա՛մ ուղղակի և համընդհանուր քվեարկության միջոցով, կա՛մ էլ օրենսդիր խորհրդարաններում նրանց ներկայացուցիչների կողմից: Կարգուկանոնով հասարակության մեջ ապրելու համար, բնականաբար, հարկավոր է մշակել այնպիսի ընթացակարգեր, որոնք ներառում են ժողովրդի համընդհանուր շահերը: Այդ հանգամանքը հստակորեն ամրագրված է Ֆրանսիայի մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների հռչակագրի 6-րդ հոդվածում, որը մեծ ազդեցություն է ունեցել տարբեր երկրների իրավական համակարգերի վրա[50]:

Թեև Իրանի Սահմանադրության համաձայն, երկրի պետական կրոնն իսլամն է, այնուամենայնիվ Սահմանադրության 58-րդ հոդվածով հատուկ իշխանություն է նախատեսվել օրենսդրման համար:

Կրոնական օրենքների և սահմանվող օրենքների միջև համապատասխանության ու փոխգործակցության ասպարեզում առկա են երեք գլխավոր գաղափար.

1) ոմանք այն համոզմանն են, որ օրենքն ու օրենսդիր խորհրդարանը մերժման ենթակա չեն, բայց նրանք օրենքը լեգիտիմ ու կատարման ենթակա են համարում այն ժամանակ, երբ այն սահմանված ու ընդունված կլինի Աստծո կամքին համապատասխան: Նրանք գտնում են, որ չի կարելի սահմանել այնպիսի կանոններ, որոնք դեմ կլինեն Աստծո դրվածքին և նույնիսկ բռնարար ու անբարոյական են համարվում այդպիսի օրենքներ ու հրամաններ ընդունողներին,

2) ոմանք այդ նույն հիմնավորմամբ գտնում են, որ իսլամական վարչակարգում օրենսդիր խորհրդարանը պետք չէ, նույնիսկ եթե դրա ընդունած օրենքներն ու որոշումները չեն հակասում Իսլամի կրոնին, որովհետև շարիաթը կատարյալ, համապարփակ ու կանխարգելող է,

3) ոմանք էլ պնդում են, որ իսլամական վարչակարգում օրենսդիր խորհրդարանի պարտականությունն ու գործառույթը չունի այն հատուկ և տարածված իմաստը, որը առկա է մյուս պետություններում: Խորհրդարանը օրենք ընդունելու կամ լուծելու իրավունք չունի, այլ այն կարող է միայն հավաքագրել ու կարգի բերել շարիաթի

[50] Տե՛ս http://rc.majlis.ir/fa/law/show/132280

նախկինում եղած նախադեպերը: Այս տեսակ մտածելակերպի համաձայն, խորհրդարանը միայն օրենքի ուժ է հաղորդում շարիաթի սկզբունքներին:

Երրորդ գաղափարում խորհրդարանի կարծիքն ու ընդունած որոշումները օրենսդրության գլխավոր հիմնասյուներն են, իսկ ժողովրդի ներկայացուցիչների որոշումը յուրաքանչյուր հարցին պարտադրանք է հաղորդում, հակառակ դեպքում եթե նույնիսկ այդ հարցը ժողովրդի տեսանկյունից վավերական ու շարիաթին համապատասխան է, ապա դրանով հարդերձ այն օրենքի ուժ չունի, քանի դեռ չի հաստատվել խորհրդարանի կողմից: Իհարկե, նման օրենսդրության մեջ խորհրդարանը անսահմանափակ կերպով ազատ չէ և պարտավոր է պահպանել որոշակի պայմաններ: Եթե նրա ընդունած որոշումները հակասության մեջ լինեն շարիաթի կամ Սահմանադրության հետ, ապա կբախվեն Պահապանների խորհրդի առարկությանը և օրենքի ուժ չեն ստանա: Թվում է, թե Իրանի Սահմանադրությունը առաջնորդվել է հենց այս գաղափարով, այսինքն՝ Իրանի իսլամական խորհրդարանը ընունում է օրենքներ ու ընթացակարգեր՝ պահպանելով շարիաթի իսլամական չափանիշներն ու սկզբունքները, և չունի մշակողի կամ առաջարկողի դերակատարություն[51]: Իրանի իրավական համակարգում մեկ հիմնարար տարբերությամբ մի տեսակ օրենսդրական իրավասություն է նախատեսվել գործադիր իշխանության համար՝ կանոնակարգերի և որոշումների հաստատման տեսքով և խորհրդարանը դա ընդունում է: Թվում է, թե այդ երկու իշխանությունները գործընկերներ են իրավական դաշտում և նույնիսկ դրա մեծացող ուժի պատճառով 20-րդ դարն անվանել են գործադիր իշխանության դարաշրջան[52]:

Թեև ըստ Իրանի Սահմանադրության և նույնիսկ արևմտյան իրավաբանների գերկշռող մասի կարծիքով, Իրանի իրավական համակարգը սահմանված է իսլամական համակարգի տեսքով, այդուհանդերձ կարելի է նկատել, որ Իրանի իրավական ու արդարադատության համակարգն այնպիսին է, որ իրանական իրավունքը բավականին նմանվել է եվրոպական, և հատկապես, ռոմանագերմանական

[51] Մեհրփուր Հ., Հակիրճ ակնարկ Իրանի հիմնարար ազատությունների մասին, 1-ին տպ., Դադգոսթար, Թեհրան, 2008, էջ 146:
[52] Մադանի Ս.Ջ., Իրանի հիմնարար իրավունքները և քաղաքական կառույցները, 15-րդ տպ., Թաբաթաբայի, Թեհրան, 2010, էջ 36-37:

իրավունքին: Թեև օրենսդիր իշխանությունը չի կարող ընդունել Շարիաթին հակասող ընթացակարգեր, կամ այն, որ Իրանի Սահմանադրության 167-րդ հոդվածի համաձայն, օրենքի անհստակության, թերության, բացակայության կամ լռության դեպքերում դատավորները պարտավոր են օգտվել իսլամական հավաստի աղբյուրներից ու իսլամական իրավագետ հոգևորականների հրովարտակներից, այնուամենայնիվ դրանք պատճառ չեն հանդիսանում, որ նոր խնդիրների առաջացման, տեխնոլոգիայի ու գիտության զարգացման և օրենքների անհրաժեշտության պայմաններում Իրանի օրինական իրավական մարմիններն ու կառույցները պետք է սահմանափակված լինեն միայն Շարիաթով: Ուստի ինչպես մյուս երկրների, անխուսափելիորեն Իրանի համար ևս առաջանում է պահանջ համագործակցել այլ իրավական համակարգերի, այդ թվում եվրոպական իրավական համակարգի հետ, նրանցից ազդեցություն կրելու համար: Օրինակ՝ Իրանում առևտրի մասին իրավունքի կամ դատարաններում ու արդարադատության կառույցներում դատավարության մի շարք դրույթներ, ինչպես նաև իշխանության բաժանումը օրենսդիր, գործադիր և դատական երեք իշխանությունների, նույնությամբ ընդօրինակվել են Ֆրանսիայի իրավական համակարգից, որովհետև նման հարցերում իսլամական իրավաբանությունը չունի օգտակար ու արդյունավետ նախապատմություն: Մեկ այլ օրինակ է քաղաքացիական օրենսգիրքը, որի երկրորդ գլուխը էական ազդեցություն է կրել Շվեյցարիայի իրավական համակարգից: Իհարկե, չպետք է մոռանալ, որ իսլամում իրավական սկզբունքներից ու կանոններից շատերը համապատասխանում կամ մոտ են արևմտյան իրավունքի սկզբունքներին, դրանց վառ օրինակներն են՝ «Մասնավոր սեփականության և այն հարգելու մասին», «Արյունակից մարդկանց հետ ամուսնության արգելման մասին» կամ «Ամուսնու նկատմամբ կնոջ ֆինանսական անկախության մասին» օրենքները[53]:

Ցավոք սրտի, ի հեճուկս Իրանի Սահմանադրության 167-րդ հոդավածի, որոշ դեպքերում երբեմն դատավորներն ու դատարանները, իրավական աղբյուրների կարգը պահպանելու փոխարեն, գերակայությունն ու առաջնահերթությունը տալիս են

[53] Քաթուզյան Ն., Իրավունքի ընդհանուր դրույթները: Ընդհանուր տեսություն, 1-ին տպ., Էնթեշար ԲԸ հրատ., Թեհրան, 2008, էջ 292:

իսլամական իրավագիտության փաստարկներին ու հիմնավորումներին, քան օրենքին: Օրինակ՝ անշարժ գույքի գրանցման մասին օրենքի 22-րդ հոդվածի համաձայն, պետությունը հաշվառված հողատարածքի սեփականատեր է ճանաչում նրան, ում անունը ամրագրված է նոտարների գրանցամատյանում, մինչդեռ ներկայումս դատարաններում մոտեցումը այնպես է, որ եթե ինչ-որ մեկը պնդում է, որ սովորական փաստաթղթով գնել է անշարժ գույք, ապա դատարանը հայցը ընդունում է՝ պատճառաբանելով, որ իսլամական իրավագիտության համաձայն, գործարքի կնքումը իրականացվում է վաճառքի առաջարկով և ընդունումով, և նույնիսկ շատ դեպքերում վճիռը կայացվում է հենց հայցվորի օգտին: Այսպիսով նրանք անտեսում են ամրագրված օրենքը՝ հղում կատարելով իսլամական իրավագիտության ու շարիաթի աղբյուրներին, և դա այլ բան չէ, քան օրենքի անտեսումը: Դատավորները պետք է հավաստի իսլամական իրավագիտության աղբյուրներին դիմեն միայն օրենքի անհստակության կամ թերության դեպքերում, այլ ոչ թե ցանկացած հարցում, որի վերաբերյալ առկա է ամրագրված օրենք: Ուստի, եթե իրավացիությունը պարզելու համար դատավորն օրենքներում գտնում է դատավճռին անհրաժեշտ բովանդակությունը, ապա նա պետք է վկայակոչի դրան և իրավունք չունի դիմելու իսլամական իրավագիտական աղբյուրներին:

4.2. Օրենքների հասկացությունը և ըստ իրավաբանական ուժի տեսակներն Իրանի իրավական համակարգում: Օրենքը կարելի է դիտարկել երկու տեսակետից, այսպես կոչված ընդհանուր և հատուկ: Ընդհանուր իմաստով օրենքը գտնվում է ճանաչված սովորույթի հակառակ կողմում, այսինքն՝ այն ներառում է խորհրդարանի, կառավարության, պետական իրավասու կազմակերպությունների, գործադիր իշխանության անդամների, նախարարների ու նախագահի կողմից ընդունված որոշումներն ու ընթացակարգերը: Փաստորեն այս իմաստով օրենք եզրույթը ընդգրկում է խորհրդարանի ընդունած որոշումները, բոլոր վարչական կանոնակարգերը, շրջաբերականներն ու որոշումները: Այս դեպքում այն հոմանիշ է օրենսդրություն հասկացությանը: Հատուկ իմաստով օրենք են կոչվում միայն այն կանոնները, որոնք խորհրդարանում ընդունվում են ժողովրդի ներկայացուցիչների

կողմից՝ Սահմանադրությամբ նախատեսված որոշակի արարողակարգերի ու պայմանների կատարմամբ: Օրենքի հենց այս իմաստն է, որ համարվում է իրավունքի աղբյուր ԻԻՀ-ում[54] և քննարկվում է այս հետազոտության մեջ:

Իրանում օրենքները հավասարազոր չեն իրենց ուժի (վարկանիշի) ու ազդեցության առումով, և կարելի է դրանց բաժանել հինգ տեսակի[55]: Դրանք են՝ **ա) Սահմանադրությունը, բ) Վարչակարգի նպատակահարմարությունը որոշող խորհրդի ընդունած որոշումները, գ) սովորական օրենքները, դ) խորհրդարանի մասնագիտացված հանձնաժողովների ընդունած որոշումները, ե) գործադիր իշխանության որոշումները:**

Սահմանադրությունը պարունակում է մի շարք կանոներ ու սկզբունքներ, որոնք հանդիսանում են պետականության հիմքը, և որոշում է երկրի երեք իշխանությունների գործունեության ու իրավասությունների շրջանակները, անհատական ազատություններն ու իրավունքները: Սահմանադրությունը պետք է համարել մյուս օրենքների նկատմամբ գերակա դիրք ունեցող օրենք, որը սահմանվել է իշխանավորների համար՝ հասարակության, մարդկանց իրավունքները պահպանելու և պաշտպանելու նպատակով: Ընդհանրապես տարբեր երկրներում առկա են բավականին դժվար պայմաններ սահմանադրության փոփոխության համար: Սահմանադրությունը փոփոխվում է նաև հեղափոխությունների կամ պետությունների անկախացման հետևանքով: Հնարավոր է, որ սահմանադրության փոփոխության համար նախատեսված լինի հատուկ խորհրդի կամ ավելի մեծ թվով մեծամասնության հաստատման պահանջը: Իրանում այդ գործընթացը յուրահատուկ է: Սահմանադրության փոփոխությունը կամ վերանայումը պետք է կատարվի Գերագույն առաջնորդի հայեցողությամբ Վարչակարգի նպատակահարմարությունը որոշող խորհրդի հետ խորհրդակցելուց հետո՝ նախագահին ուղղված հրամանագրով: Դրանում պետք է նշված լինեն բարեփոխման ու լրացումների կետերը: Այսպիսով, **Վարչակարգի**

---

[54] Տե՛ս Քարբուիեի, Քաղաքացիական իրավունք, հատոր 1-ին, էջ 82. մեջբերումն արված է Քաթուզյան Ն., Իրավունքի ընդհանուր դրույթները: Ընդհանուր տեսություն, 1-ին տպ., Էնթեշար ԲԸ հրատ., Թեհրան, 2008, էջ 305:

[55] Ղիասի Ջ., Դեհղան Հ., Խոսրոշահի Ղ., Ընդհանուր քրեական իրավունքի համեմատական ուսումնասիրություն (Իսլամը և խնդրո առարկա իրավունքը), առաջին հատոր, 2-րդ տպ., Հոգևոր ճեմարանի և համալսարանի հետազոտական կենտրոնի հրատ., Ղոմ, 2006, էջ 30:

նպատակահարմարությունը որոշող խորհրդի ընդունած որոշումները վարկանիշային ավելի մեծ ուժ ունեն, քան սովորական օրենքները, որոնք ընդունվում են Իրանի Իսլամական խորհրդարանի կողմից:

Սովորական օրենքների բնորոշումը Իրանի Սահմանադրությունում և սովորական օրենքներում հստակ կերպով ձևակերպված չէ, սակայն թվում է, թե սովորական օրենքը կամ օրենքը հատուկ իմաստով նշանակում է որոշակի կարգադրագիր, որն ընդունվում է օրենսդիր իշխանության՝ ժողովրդի կողմից ընտրված պատգամավորների կողմից՝ հաշվի առնելով այն պայմանները, որոնք սահմանված են Սահմանադրության մեջ[56]: Ընդհանուր սկզբունքը կայանում է նրանում, որ օրենքի ընդունումը խորհրդարանի մենաշնորհային գործառույթներից է և կատարվում է հատուկ արարարողակարգի պահպանմամբ:

Խորհրդարանի մասնագիտացված հանձնաժողովների ընդունած որոշումներն իրենց իրավաբանական ուժով հավասար են օրենքներին: Իրանի Սահմանադրության 85-րդ հոդվածի համաձայն, խորհրդարանի պատգամավորության պաշտոնը հանձնման կամ փոխանցման ենթակա չէ, բայց անհրաժեշտ դեպքերում պատգամավորները կարող են Սահմանադրության 72-րդ հոդվածի պահպանմամբ մի շարք օրենքների սահմանման ու ընդունման գործառույթը հանձնել խորհրդարանի ներքին հանձնաժողովներին:

Գործադիր իշխանության որոշումներն ունեն օրենքները կենսագործող և լրացնող իրավաբանական նշանակություն: Օրենքների ընդունման ժամանակ խորհրդարանի պատգամավորները սովորաբար երկար ու բուռն քննարկումներ են ծավալում միմյանց համոզելու համար, այդ պատճառով այն դեպքերում, երբ անհրաժեշտ է արագացված կարգով ընդունել ինչ-որ օրենք, ժամանակ չկորցնելու և միջոցները խնայելու նպատակով խորհրդարանը թույլատրում է կառավարությանը կամ հատուկ հանձնաժողովներին, որպեսզի վերջիններս մշակեն և իրականացնեն որոշակի

[56] Իրանի Պահապան խորհրդի 1983 թ. ընդունված թիվ 1361/1/17 կարծիքի համաձայն, վարչակարգը պահպանելու, օրինախախտումները կանխելու, ժողովրդի իրավունքները իրացնելու նպատակով ժամանակավորապես չի արգելվում Իսլամական Հեղափոխության հաղթանակից առաջ գործող օրենքների կատարումը, քանի դեռ չի հայտարարվել նրանց հակասությունը իսլամական նորմերի հետ:

ընթացակարգեր խորհրդարանի ընդունած օրենքը օպտիմալ կերպով կատարելու և լրացնելու համար[57]:

Գործադիր իշխանության որոշումներից ամենակարևորը կանոնակարգերն են: Կանոնակարգը «գործադիր իշխանության որոշումների տեսակ է, որը պարունակում է պարտադիր բնույթ ունեցող ընդհանուր կանոններ և հրամաններ, որոնք ընդունվում են բարձր ատյանների ու իշխանությունների, այդ թվում նախագահի ու նախարարների կողմից՝ երկրի գործնական հարցերի իրականացումը դյուրացնելու նպատակով»[58]: Մյուս կողմից, եթե խորհրդարանի պատգամավորները ցանկանան, ապա նրանք կարող են զբաղվել ցանկացած օրենքի մանրամասնությունների որոշմամբ և ընդունմամբ, բայց դա անկասկած պատճառ կդառնա, որ նրանք չհասցնեն պատշաճ կերպով կատարել իրենց առավել կարևոր պարտականությունները: Իհարկե չպետք է մոռանալ այն հանգամանքը, որ գործադիր իշխանության ընդունած որոշումները երբեք չպետք է հակասեն ընդունված օրենքներին և պատգամավորներն ունեն լիազորություն. Սահմանադրության շրջանակներում փոփոխության ենթարկել գործադիր իշխանության հաստատած որոշումները՝ հաշվի առնելով նպատակահարմարությունը:

Միգուցե առաջին հայացքից թվում է, թե խորհրդարանի կողմից օրենսդրական լիազորությունների հանձնումը գործադիր իշխանությանը հակասում է իշխանությունների տարանջատման սկզբունքին, որովհետև գործադիր իշխանության և խորհրդարանի իրավազորություններն ու պարտականությունները առանձնացված են միմյանցից, իսկ մյուս կողմից ժողովուրդն իր ընտրած պատգամավորներին ձայն է տվել, որպեսզի նրանք զբաղվեն ընթացակարգերի ընդունմամբ և նրանց այդ պարտականությունը այլոց հանձնման կամ վերալիազորման ենթակա չէ: Ուստի գործադիր իշխանության ներկայացուցիչների կողմից օրենքի սահմանումը հակասում է ժողովրդի այդ ընտրությանը: Սակայն խորհրդարանում ժամանակի սղության, որոշ հարցերի հրատապության, կանոնակարգերի ու շրջաբերականների արագացման ու

[57] Իրանի Սահմանադրության 138-րդ հոդվածի համաձայն «...կառավարությունը կարող է իր պարտականություններին վերաբերող մի շարք հարցերում որոշումների ընդունումը հանձնել մի քանի նախարարներից կազմված հանձնաժողովներին: Այդ հանձնաժողովների՝ օրենքների սահմաններում ընդունած որոշումները նախագահի կողմից հաստատվելուց հետո ենթակա են կատարման...»:

[58] Հաշեմի Ս.Մ., Հիմնարար իրավունքներ, առաջին և երկրորդ հատոր, 2-րդ տպ., Ղոմի բարձրագույն համալիր, Ղոմ, 1996, էջ 264:

ճկունության, որոշ հարցերի տեխնիկական բնույթի և օրենքի ընդունումից հետո առաջացած մի շարք անհրաժեշտությունների պատճառով երբեմն ականատեսն ենք լինում օրենսդրական լիազորությունների հանձնման դեպքերի ավելացման[59]:

Խորհրդարանի ներքին հանձնաժողովների կողմից օրենքների ընդունումից բացի, մեկ այլ դեպքում ևս Իրանի Սահմանադրության 138-րդ հոդվածով օրենք ընդունելու թույլտվություն է տրված գործադիր իշխանությանը: Կանոնակարգերի, շրջաբերականների ու գործնական որոշումների ընդունումը Նախարարների խորհրդի կամ նախարարներից յուրաքանչյուրի կողմից տեղի է ունենում օրենքի կատարման ժամանակ դրա թերությունները և բացերը լրացնելու և վարչական պարտականությունների կատարումը դյուրացնելու նպատակով: Այդուհանդերձ հասարակության կարիքներին համահունչ օրենքների ամբողջական ու ճիշտ կատարումը պահանջում է, որ գործադիր իշխանությունը ևս օրենքներ ընդունի, որոնք իհարկե չպետք է հակասեն երկրի ընդհանուր ընթացակարգերի ու օրենքների հետ[60]: Թվում է, թե պետության տարբեր գործերի կառավարան համար գործադիր իշխանությունը ստիպված է սահմանափակ կերպով սահմանել որոշակի օրենքներ, իսկ կանոնակարգերի ու որոշումների ընդունումը էությամբ դասվում է վարչական հարցերի շարքում և տարբերվում է օրենսդրական գործունեությունից: Այդ իսկ պատճառով խորհրդարանի ընդունած օրենքների կատարումը կատարման ենթակա են բոլորի համար, իսկ կանոնակարգերը օրենքին դեմ լինելու դեպքում ենթակա են բեկանման Իրանի Վարչական Արդարության Դատարանի կողմից: Վարչական լինելու այդ սահմանումը պատճառ է դարձել, որ կանոնակարգերն ու շրջաբերականները բեկանման ենթակա լինեն այն իշխանավորների կողմից, ովքեր ընդունել են դրանք, իսկ փոխարենը ոչ մի վարչական պաշտոնյա իրավունք չունի խախտել օրենքը կամ հրաժարվել այն կատարելուց:

4.3. Իրավունքի աղբյուրների համակարգում օրենքների գործողության հիմնախնդիրները: Օրենքն այն ուղղին է, որով պետությունը որոշում է հասարակության և մարդկանց զարգացումը: Երբ ընդունվում է որևէ օրենք, օգտակար

[59] Barker D. and Padfield C., Law made simple, 10th edition, London. 1998, p. 31.
[60] Թիլա Փ., Օրենքի և կանոնակարգի սահմանազատման և օրինաչափությունների սահմանման համեմատական սկզբունքները, Խորսանդի, Թեհրան, 2008, էջ 44:

լինելու դեպքում այն դուր է գալու մարդկանց, ժողովրդի մեծ մասն այն կատարելու է հաճույքով, ոստիկանության կողմից այն կիրառելու և պարտադրանքի անհրաժեշտություն չի լինելու կամ գոնե հազվադեպ դեպքերում է զգացվելու հարկադրանք կիրառելու անհրաժեշտությունը: Բայց եթե օրենքը լինի անտեղի ու անօգտակար, ապա մարդիկ այն չեն կատարելու նույնիսկ պարտադրանքի դեպքում և հրաժարվելու են դրան ենթարկվելուց, հետևաբար օրենսդիրն օրենքների սահմանման և ընդունման ժամանակ պետք է համեմատական կերպով հաշվի առնի հասարակության իրավունքի վրա ներգործող միջավայրի բոլոր գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են՝ քաղաքական, մշակութային, հասարակական, բարոյական, կրոնական, պատմաաշխարհագրական իրավիճակը, ինչը ցավոք սրտի, որոշ դեպքերում ուշադրության չի արժանացել Իրանի օրենսդիրի կողմից: Օրինակ՝ Իրանում օրենքով չափահասության տարիքը, առանց հաշվի առնելու իրանցիների ֆիզիկական, միջավայրային ու աշխարհագրական պայմանները, ուղղակի հետևելով իսլամական իրավունքին, սահմանվել է տղաների համար 15-ը լրացած լուսնային տարին, իսկ աղջիկների համար՝ 9-ը լրացած լուսնային տարին, ընդ որում չափահասության այդպիսի տարիքի որոշումը, իհարկե, բնորոշ է Սաուդիան Արաբիայի պես տաք և չորային կլիմա ունեցող երկրին և չի համապատասխանում Իրանի ներկայիս իրավունքի արտաքին պայմաններին[61]:

Իրանում օրենքի դիրքն ու ազդեցությունը հստակորեն երևում է Սահմանադրության 167-րդ հոդվածում, որտեղ ասվում է. «Դատավորը պարտավոր է ջանքեր գործադրել գտնելու համար ցանկացած հարցի դատական որոշումը՝ ամրագրված օրենքներում, իսկ չգտնելու դեպքում պետք է այդ հարցի վերաբերյալ վճիռ կայացնի՝ հղում կատարելով իսլամական հավաստի աղբյուրներին կամ մահմեդական բարձրաստիճան հոգևորականների հավաստի հրովարտակներին...»: Փաստորեն օրենքը հիմնական աղբյուրն է իրավացիությունը որոշելու և թշնամանքը փարատելու համար, իսկ դրա բացակայության դեպքում նոր միայն դատավորին թույլատրվում է դիմել իսլամական իրավագիտական աղբյուրներին կամ իսլամական իրավագետ հոգևորականների

[61] Իրանի քաղաքացիական օրենսգրքի 1210 հոդվածի առաջին ենթակետի համաձայն «Չափահասության տարիքն է տղաների համար 15-ը լրացած լուսնային տարին, իսկ աղջիկների համար՝ 9-ը լրացած լուսնային տարին»:

տեսակետին: Այլ խոսքով քանի դեռ կոնկրետ հարցի վերաբերյալ օրենքը գոյություն ունի, դատավորը չի կարող դիմել և հղում կատարել այլ իրավական աղբյուրներին՝ նույնիսկ վերը նշված այն իսլամական աղբյուրներին, որոնց մասին նշված է Սահմանադրության այդ հոդվածում:

Հարց է առաջանում, թե Իրանի Սահմանադրության այս հոդվածով արդյո՞ք օրենքը ավելի գերակա և ազդեցիկ է իսլամական իրավագետ հոգևորականների հրովարտակների, շարիաթի կանոնների ու այլ իսլամական աղբյուրների նկատմամբ: Այս հարցի պատասխանը բացասական է, որովհետև Իրանի Սահմանադրության 4-րդ հոդվածի համաձայն, Իրանի Իսլամական Հանրապետության բոլոր օրենքները սահմանվում և ընդունվում են Շարիաթի հիման վրա: Այդ դեպքում ինչու՞ է դատավորը սկզբում դիմում օրենքին, այլ ոչ թե իսլամական իրավագետ հոգևորականների կարծիքին, և փաստորեն դիմում է մի օրենքի, որը բխել է Շարիաթից և համապատասխանում է դրան, կարճ ասած, ամբողջությամբ նույնն է, ինչ՝ Շարիաթը: Իսլամական իրավագետ հոգևորականների տեսակետների և իսլամական իրավագիտության այլ աղբյուրների կապն օրենքի հետ երկայնական կապ է և այդ երկուսը միմյանց նկատմամբ լայնական դիրքով չեն դասավորված: Ցավոք սրտի Իրանի իրավական համակարգում այս հարցում և օրենքի թերության կամ անհստակության դեպքերում դատական մոտեցումներում առկա է երկակիություն: Նման դեպքերում դատավորների այն մասը, ովքեր կրթություն են ստացել կրոնական ճեմարաններում, դիմում են մահմեդական հոգևորականների տեսակետներին ու իսլամական իրավագետ հոգևորականների հրովարտակներին, իսկ դատավորների այն մասը, ովքեր կրթություն են ստացել համալսարաններում, դիմում են օրենքի տառին ու ոգուն և նախադեպային դատական միասնական մոտեցմամբ վճիռներին: Իհարկե մի խումբն էլ որդեգրել են չափավորության ուղղին և օրենքը կիրառում են իսլամական իրավագիտության աղբյուրների կողքին և շրջանակում: Նույն իրավիճակն է տիրում իրավագիտական գրականության և գրքերի ասպարեզում, այսինքն՝ ոմանք օրենքի ու իրավական հարցերն ու նյութերը մեկնաբանում են իսլամական կրոնական իրավագիտական աղբյուրների ուսումնասիրմամբ և գտնում են, որ օրենքի

կենսունակությունը կախված է Շարիաթից, իսկ մյուս խումբը, ապավինելով օրենքներին, ազգային ու պետական կարգ ու կանոնի ներքո ուշադրություն չեն դարձնում Շարիաթի պատվիրաններին որպես օրենքը լրացնող աղբյուր[62]: Այս քննարկման վերջում օրենսդիրներին առաջարկվում է, որ սկզբում տարբեր օրենքների մշակումն ու նախապատրաստումը իրականացվի իրավաբանական համալսարաններում՝ կոորդինացնելով դատական իշխանության և արդարադատության համակարգի հետ, համադրելով տարբեր կարծիքներն ու նախագծերը, համեմատելով իրավաբանության ոլորտում այլ առաջադեմ պետությունների իրավական համակարգերի հետ, որպեսզի ականատեսը չլինենք հասարակության, մարդկանց և դատարանների շրջանում անորոշություն և ձախողում առաջացնող օրենքների ընդունմանը[63]:

4.4. Օրենքների կայունությունը և բեկանումը (վերացումը): Ինչպես արդեն նշվեց, օրենքը ստեղծվում է հասարակական կարիքների պատճառով և արդյունքում: Ցանկացած օրենք ընդունվում է հատուկ պայմանների առաջացման հետևանքով և այդ պայմանները վերանալուն պես տվյալ օրենքը գնում է դեպի բեկանում: Օրենքի բեկանումը մի երևույթ է, որը դեմ է սկզբունքներին, և դա պետք է ընդունել այն ժամանակ, երբ լիովին համոզված ենք օրենքը վերացնելու հարցում օրենսդիրի կամքի նկատմամբ: Ինչպես ասվեց, այսօր Իրանում նմանատիպ հարցերի շուրջ տարբեր, բազմաթիվ ու երբեմն միմյանց հակասող օրենքների առկայությունը դարձել է դատարանների խնդիրներից մեկը և հենց դրա մասին է վկայում երկրի Գերագույն դատարանում բազմաթիվ նախադեպային միասնական դատական մոտեցմամբ վճիռների կայացումը: Հետևաբար կարիք կա հատուկ քննարկման առարկա դարձնել օրենքների բեկանման հիմքերը:

Առաջին հիմքը օրենքի հստակ բեկանումն է: Այդպես է կոչվում օրենսդիրի կողմից հին օրենքը բեկանելու և ուժը կորցնելու մասին հայտարարությունը՝ նոր օրենքի

---

[62] Քաթուզյան Ն., Իրավունքի ընդհանուր դրույթները: Ընդհանուր տեսություն, 1-ին տպ., Էնթեշար ԲԸ հրատ., Թեհրան, 2008, էջ 498-499:

[63] Օրինակ՝ 2002 թ. ընդունված, Ընդհանուր Իրավասության և Հեղափոխության դատարաններում քրեական դատավարության օրենսգրքի բարեփոխման օրենքը, որտեղ նույնիսկ օրենքի անվանման առումով չեն պահպանվել շարադրական ու համառոտագրության սկզբունքները, ինչպես օրենքի վերտառության, այնպես էլ հոդվածների մեջ:

ընդուն-մամբ: Օրինակ՝ 1981 թ. ընդունված Վարչական Արդարության Դատարանի մասին օրենքի բեկանումը 2007 թ. Վարչական Արդարության Դատարանի մասին նոր օրենքի ընդունմամբ, որի 49-րդ հոդվածում հայտարարվում է հին օրենքի բեկանման մասին:

Երկրորդ հիմքը օրենքի ենթատեքստային բեկանումն է: Դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ մի օրենքից հետո ընդունվում է մեկ այլ օրենք, որը համատեղելի չէ նախորդ օրենքի հետ: Քանի որ նման դեպքերում այդ երկու հակասական օրենքների համատեղումը տրամաբանորեն հնարավոր չէ, ուստի ստիպված կատարման ենթակա է համարվում վերջին, այսինքն՝ նոր օրենքը, որովհետև եթե այդ նոր օրենքի անհրաժեշտությունը չլիներ, ապա օրենսդիրը դա չէր ընդունի[64]: Նմանատիպ խնդրում երկու օրենքների անհամատեղելիությունից բացի, օրենքի ենթատեքստային բեկանման դեպքում պետք է նաև այդ երկու հակասական օրենքների միջև լինի ժամանակային տարածություն, որովհետև ժամանակային տարբերության առկայությամբ ավելի անհրաժեշտ է թվում հին օրենքի բեկանումը: Ցավոք սրտի, Իրանի օրենսդրության մեջ նկատելի են անթիվ հակասություններ և երբեմն մեկ հանցավոր արարքի կամ մեկ քաղաքացիական հարցի վերաբերյալ առկա են երկու կամ նույնիսկ մի քանի օրենքներ: Օրինակ՝ ա) «իսլամական պատժամիջոցների մասին» օրենսգրքի 690-րդ հոդվածում հողատարածքների ապականման ու բռնազավթման կապակցությամբ, այդ արարքը համարվել է հանցանք և դրա համար պատիժ է նախատեսված: Նույնը առկա է «Ափամերձ և ջրի մակարդակի իջեցման հետևանքով առաջացած հողատարածքների մասին» օրենքում, բ) «Հողատարածքների ու կալվածքների նկատմամբ ոտնձգությունը, բռնազավթումը և յուրացումը կանխելու մասին» օրենքը, գ) «Հողագործական և այգեգործական նշանակություն ունեցող հողատարածքների օգտագործման նշանակության պահպանման մասին» օրենքը, որոնցով օրենսդիրը պատժամիջոցներ է սահմանել օրինախախտների համար, սակայն նա կարող էր այդ բոլոր օրենքները մշակել և ամրագրել մեկ գլխում կամ էլ օրենքի մեկ ժողովածուի մեջ:

[64] Տե՛ս Իրանի Գերագույն դատարանի 1940 թ. թիվ 916-2969 դատական միասնական մոտեցման մասին դատավճիռը:

Այժմ դատավորները որոշում են կայացնում օրենքի՝ իրենց մեկնաբանությամբ, ասենք ոմանք համարում են, որ ազգային հողատարածքների յուրացման արարքը ենթարկվում է դրան վերաբերող նախկին հատուկ (մասնավոր) օրենքին և գտնում են, որ ընդհանուր գծերով նոր օրենքը չի մերժում և չի վերացնում դրա մասնավոր օրենքին, իսկ մյուս կողմից ոմանք էլ արդյունավետ են համարում օրենսդրի նոր կամքը և դիմում են «իսլամական պատժամիջոցների մասին» օրենսգրքին, որն ընդհանուր գծերով է:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ Իրանի իրավական համակարգում գործող կարևոր և կիրառվող օրենքների մեծ մասն ունեն երկար անցյալի վաղեմություն և դրանց վերանայումն անհրաժեշտ է: Այդ կապակցությամբ կարելի է մատնանշել քաղաքացիական օրենսգիրքը կամ առևտրի մասին օրենքը: Ինչպես նշվեց, այդ օրենքների ցանկացած հոդվածի բեկանումը կախված է օրենսդիրի կամքից և միայն օրենքի հին լինելու կամ տնտեսական զարգացումների կամ հասարակության կարիքների ու պահանջների պատճառաբանությամբ չի թույլատրվում օրենքի բեկանումը: Հարկավոր է նշել նաև, որ այդ օրինակների հետազոտմամբ է, որ Իրանում օրենքների բեկանումը կամ փոփոխությունը տեղի են ունենում բավականին հեշտ, մինչդեռ, օրինակ՝ ԱՄՆ-ում, Սահմանադրությունը բավականին խիստ է օրենքների փոփոխման հարցում և երբեմն դրանք անփոփոխելի են, իսկ ԱՄՆ-ի Գերագույն դատարանը կարող է խախտել այն օրենքը, որը Սահմանադրությանը կամ օրենքներին հակառակ ընդունվել է Սենատի կողմից[65]:

§ 5. Սովորութային և ավանդույթային իրավունքի նորմերն Իրանի իրավական համակարգում. տեղի, տեսակների, առաջացման, գործողության և վերացման հիմնահարցերը

5.1. Սովորույթի և իջմայի որպես իրավունքի աղբյուրների հասկացման և տարբերությունների հիմնահարցերը: ԻԻՀ-ում իրավական աղբյուր են համարվում նաև սովորույթներն ու ավանդույթները: Հարկ է նշել, որ իսլամական իրավագիտության մեջ հստակորեն չի նշվում սովորույթային իրավունքի մասին, այս իրավունքի վերաբերյալ առանձին գլուխներ և քննարկումներ չկան, այլ կրոնագետները

[65] Wilman J., Brown: GCSE Law, 9th Edition, Sweet and Maxwell, London, 2005, p. 24.

այդ թեման քննարկում են շարիաթի և իսլամական օրենսդրության այլ թեմաների համատեքստում: Անկասկած շիա կրոնագետների և սունիների կարծիքը սովորությային իրավունքի և դրա իրավական ուժի վերաբերյալ միանշանակ նույնը չէ, նրանց միջև առկա են բազմաթիվ տարաձայնություններ: Շիա իսլամական իրավագիտության մեջ սովորույթը, սովորութային իրավունքը կիրառվում է մարդկանց կամքի և շարիաթի պահանջների ու վճիռների կատարման համար: Կրոնագետները սովորույթը չեն կիրառում որևէ պարտականություն սահմանելու համար, բացի այն դեպքերից, երբ հենց այդ նույն սովորույթը ընդունվել և կատարվել նաև իմամ Մասումի ժամանակաշրջանում:

Նախորդ գլուխներում արդեն խոսել ենք իսլամական իրավունքի հիմանական աղբյուրների (Ղուրանի, համաձայնության (իջմայի), բանականության) մասին, որոնց կողքին կան նաև իրավունքի երկրորդական աղբյուրներ, օրինակ՝ սովորութային իրավունքը, որոնք հաստատվել են իսլամի կողմից[66]: Չնայած որ իսլամագետները և կրոնագետները իջման՝ խելամիտ և խոհեմ մարդկանցից բաղկացած մի խմբի գործունեությունն իսլամական իրավագիտության մեջ ներկայացրել են որպես կենդանի օրինակ և իր ձևով շատ մոտ սովորույթին, սակայն, բոլոր դեպքերում, առկա են էական տարբերություններ: Այսպես, այս խոհեմ և խելամիտ մարդկանց վարվելակերպը նման է հասարակության խելացի և հավասարակշռված անդամների գործելակերպին, և նրանց վարքը պետք է մշտապես բարի և գոհացուցիչ լինի հասարակության անդամների համար և համապատասխանի նրանց կարծիքին: Սակայն սովորույթի համաձայն կատարված ամեն գոծողություն չէ որ միշտ բարի է, և հնարավոր է հասարակության որոշ խավերի համար նաև անհաճո թվալ: Չմոռանանք նաև այն փաստը, որ սովորույթի դեպքում գործողությունը, արարքը կատարվում է կամովին, այն դեպքում, երբ խմբի գործունեության համար սա պարտադիր պայման չէ[67]: Նաև չպետք է նույնացնել սովորույթի՝ արևմտյան իրավունքում առկա սահմանումը և կոնսենսուսի (իջմայի) սահմանումը իսլամական օրենսդրության մեջ: Դրանց միջև առկա են բազմաթիվ տարբերություններ: Առկա տարբերություններից են.

---

[66] Հաքիմ Մ., իսլամական օրենսդրության ընդհանուր հիմունքներ, Ղոմ, 1970, էջ 85:

[67] Ջաաֆարի Լանգարուդի Ջ., Իսլամական իրավունքի իրավագիտական դպրոցները, Գանջե Դանեշ, Թեհրան, 2001, էջ 91:

1. Իջմայի դեպքում (կոնսենսուս) իսլամական կրոնագետների համակարծիք և, ներդաշնակ լինելը ակնհայտ է, այսինքն՝ առկա է կրոնագետների և գիտնականների միասնական որոշում, որի կատարման համար հասարակության անդամների մեծամաս-նությունը լիովին բավարար է, ի տարբերություն սովորույթի, որի կատարման համար հասարակության բոլոր անդամները՝ իսլամական բարձրաստիճան աստվածաբան-օրենսգետ հոգևորականից մինչև սովորական մարդիկ պետք է մասնակից լինեն[68]:

2. Սովորույթը իրականացնելու դեպքում թեման կարող է լինել գործ կամ զրույց, ասելիք հասարակության որևէ անդամի կամ հատուկ խմբի կողմից, սակայն իջմայի դեպքում բոլոր բարձրաստիճան հոգևորականների միասնական և նմանատիպ կարծիքը պարտադիր է:

3. Սովորույթները հաճախ բարի և հաճելի, երբեմն էլ անհաճո, անընդունելի և ամոթալի են գնահատվում, սակայն իսլամական իրավունքում ձեռք բերված ներդաշնակությունը, համաձայնությունը կրոնագետների ջանքերի արդյունքն է, որը երբեք պախարակելի և անհաճո չի լինում: Կրոնագետների վճիռները մշտապես ներդաշնակ են հասարակության սկզբունքներին և նորմերին:

4. Սովորույթները հաճախ ունենում են գործունեության հատուկ կամ սահմանափակ ոլորտ՝ կապված հասարակական հատուկ շերտերի և խավերի բնակության վայրի հետ և հնարավոր է դրանց ընդգրկվածությունը սահմանափակ լինի, սակայն իսլամական օրենսդրության մեջ կրոնագետների և բարձրաստիճան հոգևորականների կողմից ընդունված բոլոր որոշումներին ենթարկվելը և դրանք կատարելը բոլոր մուսուլմանների համար պարտադիր է[69]:

Ամփոփ կերպով կարելի է նշել, որ սովորույթը մի երևույթ է, որ առաջացել է հասարակության անդամների կարիքները հոգալու նպատակով և հասարակության անդամները այն կատարում են հարատև և շարունակաբար, կամովին, առանց նողկանքի և ատելության զգացումի: Հասարակական այս երևույթը պարտադիր ուժ ունի, որը ժամանակի ընթացքում արտահայտվում և դրսևորվում է իրավական կանոնի

[68] Վահեդի Ղ., նշվ. աշխ., էջ 211:
[69] Քաթուզյան Ն., Իրավունքի ընդհանուր դրույթները: Ընդհանուր տեսություն, 1-ին տպ., Էնթեշար ԲԸ հրատ., Թեհրան, 2008, էջ 392:

միջոցով: Այն իսլամական օրենսդրության մեջ ունի իր տերմինները և դասակարգումները, որը կիրառվում է և ներկայացված է տարբեր մեթոդներով: Սովորույթի ծագման ակունքը, ինչպես և օրենքի դեպքում, հասարակության կամքը և ցանկությունն է՝ այն տարբերությամբ, որ սովորույթը առաջացել է աստիճանաբար, ժամանակի ընթացքում: Սովորույթը և ավանդույթները կարելի է համարել օրենքի նախապատրաստման հիմք, իսկ օրենքը՝ սովորույթին փոխարինող:

Բոլոր հասարակություններում էլ մինչև օրենքների երևան գալը և հաստատումը գոյություն են ունեցել սովորույթային կանոններ: Դրանք առաջացել են մարդկային կարիքները բավարարելու համար՝ հատուկ պայամաններում և շարունակ ենթարկվում են նորանոր փոփոխությունների[70]: Սովորույթը և ավանդույթը գործիք են հանդիսանում օրենքի մեկնաբանման և հաստատման համար, սակայն սովորույթը և օրենքը տարբեր հասկացություններ են, քանզի սովորույթն ի տարբերություն օրենքի, իր մեջ չի պարունակում անցյալում տեղի ունեցած իրադարձությունները, և հիմնվելով տվյալ պահի կարիքների և պահանջների վրա, անընդհատ փոփոխվում է. նոր սովորույթները գալիս են փոխարինելու հին սովորույթներին: Իրավական բոլոր հարցերի համար օրենքների ժողովածու գտնելը շատ դժվար և անիմաստ գործ է, և հենց այստեղ սովորույթը կարող է առկա քննարկումների և վեճերի հանգուցալուծումը հանդիսանալ: Բոլոր դեպքերում, հաշվի առնելով բարձրաստիճան հոգևորականների և իրավաբանների միջև առկա տարաձայնությունները, սովորույթի համար մեկ միասնական և ամբողջական սահմանում ներկայացնելը, այնպես որ իրավագիտության բոլոր ոլորտների համար այն ընդունելի լինի հետևյալն է. սովորույթը պետք է դիտել որպես իրավական կանոնների մի համակցություն, որն առաջանում է առանց Մեջլիսի միջամտության՝ պահպանելով արարողակարգի բոլոր նորմերը[71]:

Իրանի իրավական համակարգում սովորույթը բնութագրվում է որպես անընդհատ կրկնվող մի արարք, որը մարդը կատարում է առանց որևէ ճնշման: Այն իր մեջ ներառում է այն բոլոր ավանդույթները, որ ժամանակի ընթացքում ձևավորվել է հասարակության մեջ և այդ հասարակության անդամների մեծամասնությունը

[70] Նույնը, էջ 182:
[71] Քաթուզյան Ն., Իրավունքի ընդհանուր դրույթները: Ընդհանուր տեսություն, 1-ին տպ., Էնթեշար ԲԸ հրատ., Թեհրան, 2008, էջ 410:

ընդունում է դրանց պատադիր կատարման սկզբունքը: Իրանի շատ օրենքներում, հատկապես քաղաքացիական օրենսգրքում, սովորույթը համարվում է իրավական աղբյուր, որ կարող է փոխարինել օրենքին: Նույնիսկ եղել են դեպքեր, երբ իրավական և սովորույթային կանոնների հիման վրա օրենքներ են սահմանել և կամ էլ օրենքի հաստատման համար օգտվել են սովորութային կանոններից: Լավագույն օրինակը ծառն է, որը, ըստ օրենքի, ներկայացվում է որպես սահման երկու հողատարածքների միջև պատի փոխարեն, ինչպես սովորույթի համաձայն ժայռը, ապառաժը կամ մեծ քարը սահմանվել է որպես սսհման երկու հողակտորների միջև և այլն[72]:

Իրանական հասարակության մեջ մեծամասնություն են կազմում մուսուլմանները, որոնք կատարում են շարիաթի օրենքները և վճիռները: Երբեմն շարիաթի հրամանները սովորույթային կանոնների տեսքով են ծագել և այն դեպքերում, երբ որևէ թեմայի վերաբերյալ հստակ օրենք չի եղել, ապա առկա սովորույթային տեսքով կրոնական հրամանները և կանոնները հստակեցրել են դատավորների և դատական պաշտոնյաների պարտականությունները:

5.2. Սովորույթի օրենսդրական ճանաչման ձևերը և տեսակները Իրանում: Պետական այրերի և պաշտոնյաների շրջաններում մշտապես տարածված է եղել այն տեսակետը, ըստ որի օրենքը բավարարում է հասարակության բոլոր անդամների բոլոր պահանջները և կարիքները: Այս կարծիքի հիման վրա էլ շատ իրավաբաններ կարծում են, որ օրենքը առաջին և միակ իրավական աղբյուրն է: Սակայն այս տեսակետը սկսվեց քննադատությունների ենթարկվել 19-դ դարից սկսված, երբ մի շարք գիտնականներ իրենց աշխատություններում ժխտելով այս տեսակետը՝ հիմնավորված կերպով ապացուցեցին, որ սովորույթը իրավական ազդեցիկ աղբյուր է համարվում[73]: Ակներև է, որ հասարակական բոլոր հարաբերությունների կարգավորումը օրենքի շրջանակներում և օրենքի միջոցով անհնար է, այդ հարաբերությունների մի մասը կարգավորվում են սովորույթային, կրոնական կամ շարիաթի կանոնների համաձայն[74]: Ինչպես նշեցինք, սովորույթը օրենքի նման հասարակության անդամների կամքի և ցանկության հիման վրա է առաջանում, այն տարբերությամբ, որ օրենքը հաստատվում

[72] Տե՛ս Իրանի քաղաքացիական օրենսգիրք, 135-րդ հոդված:
[73] Քաթուզյան Ն., Իրավունքի ընդհանուր դրույթները: Ընդհանուր տեսություն, 1-ին տպ., Էնթեշար ԲԸ հրատ., Թեհրան, 2008, էջ 303:
[74] Էմամի Ս.Հ., Քաղաքացիական իրավունք, 4-րդ հատոր, 19-րդ տպ., Էսլամիեհ, Թեհրան, 2007, էջ 73:

է Մեջլիսում և մինչև չեղյալ հայտարարվելը իրավական ուժ ունի, իսկ սովորույթը օրենքի նման ուժ և պաշտոնական բնույթ չունի և ամեն անգամ սովորույթին դիմելու համար պետք է դրա ուժն ու հեղինակությոնը մեզ համար հաստատենք[75]: Սովորույթները և ավանդույթներն իրենց վայրէջքներով և վերելքներով հարկավոր են հասարակության զարգացման և բարեկեցության համար: Նրանք համարվում են նաև կրոնական օրենքների և օրենսդրության սկզբունքների բաղկացուցիչ մասը: Չնայած որ սովորույթը և ավանդույթը օրենքների զարգացման և կատարյալ լինելու համար էական դեր են խաղում, սակայն անհրաժեշտ է, որպեսզի մշտապես օրենքի ազդեցությունը տարածվի սովորույթի վրա՝ վնասակար և անհաճո ավանդույթներից խուսափելու նպատակով: Հարկ է նշել, որ սովորույթի դերի նվազման կամ ավելացման պատճառները տարբեր հասարակություններում տարբեր են եղել[76]: Օրինակ, Ֆրանսիայում 1789 թ. հեղափոխությունից, իսկ Իրանում 1906 թ. սահամանադրական հեղափոխությունից հետո մեծացավ օրենսդիր իշխանության՝ խորհրդարանի դերն ու նշանակությունը՝ հանգեցնելով խնդիրների և վեճերի կարգավորման ժամանակ սովորույթային կանոնների և օրենքների դերի նվազմանը[77]: Հաշվի առնելով սովորույթների անուրանալի դերն ու նշանակությունը տարբեր հասարակությունների մեջ, պետք է նշենք, որ դրանց ազդեցությունները տարբեր երկրներում տարբեր են: Օրինակ, Անգլիայում փաստաբանները ընդդեմ դատավորների իրավական հարցեր քննարկելիս իրենց պաշտպանելու համար կարող են օգտվել իրավական տարբեր աղբյուրներից՝ այդ թվում սովորութային իրավունքից: Սակայն Իրանի իրավական համակարգում, Ֆրանսիայի իրավական համակարգի նման, իրավական պաշտոնական աղբյուրներից, դատական նախադեպերից օգտվելու կարևորությունը առաջնակարգ տեղ է զբաղեցնում, իսկ սովորույթը և սովորութային իրավունքը երկրորդական դեր և նշանակություն ունեն[78]: Սակայն ասվածը չի նշանակում, որ Իրանի իրավական համակարգում սովորույթը ոչ մի կարևորություն և նշանակություն չունի: Որպես օրինակ կարող ենք նշել այն փաստը, որ 1940 թ. հաստատված Իրանի

[75] Սալջուղի Մ., Օրֆի (Սովորույթի) դերը, 1-ին տպ., Միզան, Թեհրան, 2010, էջ 63:
[76] Էլիոթ Ք. և Վերնոն Ք., Ֆրանսիայի իրավական համակարգը, թարգմ.՝ Բեյգզադեհ Ս., 1-ին տպ., Սամթ, Թեհրան, 2009, էջ 82:
[77] Ամին Ս.Հ., Իրանի իրավունքի պատմությունը, 2-րդ տպ., Իրանագիտության հանրագիտարան հրատ., Թեհրան, 2007, էջ 527:
[78] Bell J., Boyron S. and Whittaker S., Principles of French law, Oxford, 1998, pp. 6-14.

քաղաքացիական օրենսգրքի նախաբանի մեջ սովորութային իրավունքը նշվում է որպես իրավական աղբյուր, սակայն 2001 թ. քաղաքացիական նոր օրենսգիրք ընդունվեց, որի նախաբանում սովորույթ բառի փոխարեն կիրառվում է «իսլամական հեղինակավոր աղբյուրներ կամ կրոնական հեղինակավոր հրամաններ, որ չեն հակասում շարիաթի սկզբունքներին» ձևակերպումները[79]: Չպետք է կարծել, որ այս փոփոխություններից հետո սովորույթային իրավունքը հեռացվել է Իրանի իրավական համակարգից. այն նախատեսված է մասնավոր օրենքների և պայմանագրերի համար: Օրինակ, Իրանի քաղաքացիական օրենսգրքի 356 հոդվածում հստակորեն նշվում է սովորույթի և ավանդական օրենքների կարևորության մասին: Հետևաբար, կարելի է նշել, որ սովորույթային իրավունքը Իրանի իրավական այլ աղբյուրների կողքին ունի իր էական նշանակությունը և կարևորությունը, և չնայած որ սովորույթ տերմինը բացակայում է քաղաքացիական օրենսգրքից, սակայն այն համարվում է Իրանի իրավական աղբյուրներից մեկը[80]: Իրանում սովորույթային իրավունքին ենթարկվելը և այն կիրառելը սկիզբ է առել դեռ վաղնջական ժամանակներից: Իսլամում, որ ինչպես նշվեց Իրանի իրավական համակարգի հիմնական և կարևորագույն աղբյուրն է համարվում, սովորույթի մասին առկա են մի շարք տեղեկություններ: Ղուրանում նշվում է, որ սովորույթները և ավանդույթները անհրաժեշտ էին հասարակական հարաբերությունները կանոնավորելու համար և քանի որ չէին հակասում իսլամական նորմերին և սկզբունքներին, ապա մարգարեն իր իսկ լռությամբ հայտնեց իր համաձայնությունը դրանք կիրառելու վերաբերյալ: Սովորույթների մի մասն էլ ենթարկվեցին փոփոխությունների այնուհետև սկսվեցին կիրառվել հասարակության մեջ: Այդպիսի սովորույթներից կարող ենք նշել ժառանգության վերաբերյալ առկա ավանդույթը: Առկա են նաև սովորույթների մի խումբ, որ համահունչ չէր իսլամի ոգուն, այդ իսկ պատճառով էլ ժխտվել և համարվել են գործածության համար ոչ պիտանի[81]: Ղուրանում իսլամական բոլոր երկրների համար որպես իրավական առաջին աղբյուր նշվել է սովորույթը[82]: Տարբեր գիտնականների և հոգևորականների մոտ սովորույթը

[79] Սալջուղի Մ., Օրֆի (Սովորույթի) դերը, 1-ին տպ., Միզան, Թեհրան, 2010, էջ 9:
[80] Քաթուզյան Ն., Իրավունքի ընդհանուր դրույթները: Ընդհանուր տեսություն, 1-ին տպ., Էնթեշար ԲԸ հրատ., Թեհրան, 2008, էջ 423:
[81] Սալջուղի Մ., Օրֆի (Սովորույթի) դերը, 1-ին տպ., Միզան, Թեհրան, 2010, էջ 30:
[82] Ղուրան, «Աարաֆ» սուրայի 199-րդ այաթ:

որպես իրավական աղբյուր ներկայացնելը և դրա դասակարգումը իրավական այլ աղբյուրների շարքում կատարվել է տարբեր կերպ[83]: Վերը նշվածից պարզ է դառնում, որ սովորույթը որպես իրավական աղբյուր համարելը չի մերժվում և ժխտվում իսլամի կողմից: Հարկ է նշել, որ սովորույթային կանոնների ազդեցությունը շատ է Իրանի առևտրի մասին օրենքում և քաղաքացիական օրենսգրքում (տե՛ս համապատասխանաբար՝ 349 և 1002 հոդվածները): Սովորույթը և ավանդույթը Իրանի իրավական համակարգում ավելի շատ ազդեցություններ կրեցին ռոմանոգերմանական իրավական ընտանիքից, որտեղ այն ներկայացված է որպես պարտադիր կատարման կանոն, որ առաջանում է հասարակության կողմից անընդհատ կատարվելու արդյունքում: Սովորույ-թը, եթե օրենքից անկախ լինի, երկրորդական և թույլ նշանակություն կունենա, հետևա-բար փորձ է արվում բոլոր սովորույթները ներկայացնել օրենքի շրջանակներում[84]: **Սովորույթը պետք է ունենա երեք առանձնահատկություն՝ ընդհանրականություն, վաղեմություն և կայունություն, քանզի ինչքան հին են այդ սովորույթները, այնքան դրանց ազդեցիկությունը հասարակության լայն խավերի շրջանակներում շատ է:**

Բարձրաստիճան հոգևորականների մեծ մասը տարբերում են ծեսը սովորույթից, նշելով դրանց միջև առկա բազմաթիվ տարբերություններ: Մի շարք հայտնի իրավաբաններ նշել են, որ այս երկու տերմիններն ամբողջովին տարբեր բովանդակություն ունեն. սովորույթը մշտապես և շարունակ կատարվում է մարդկանց կողմից և պարտադիր կատարման բնույթ է կրում, իսկ ծեսը և ավանդույթը վարքագիծ է, որ հակված է սովորույթ դառնալու, ինչի համար ժամանակ է հարկավոր[85]: Պետք է ուշադրություն դարձնել այն կարևոր փաստին, որ իրավական համակարգում ծեսը պարտադիր բնույթ չի կրում և այն չանելու դեպքում մարդիկ չեն ենթարկվում հարկադրանքի: Օրինակ, հասարակության որոշակի խումբ հիմնվելով ծեսի վրա նախաճաշի համար հատուկ ճաշատեսակ է նախատեսել, սակայն պարտադիր չէ, որ հասարակության բոլոր անդամները նախաճաշին այն ճաշակեն:

---

[83] Ամիդ-Զանջանի Ա., Համեմատական իսլամական իրավունքի մասին ներածական ակնարկ, առաջին տպ., Միզան, Թեհրան, 2003, էջ 54:

[84] Դավիդ Ռ., Ժամանակակից իրավական խոշոր համակարգերը, թարգմ.՝ Սաֆայի Հ., 4-րդ տպ., Բուհական հրատարակության կենտրոն, Թեհրան, 2000, էջ 124:

[85] Վահեդի Ղ., նշվ. աշխ., էջ 209:

Սովորույթները բաժանվում են երկու խմբի: **Հատուկ սովորույթներ,** որոնք վերաբերում են հասարակության մեջ հատուկ խմբերին կամ ցեղերին[86]: Այսինքն, հասարակության հատուկ խմբերը կամ ցեղերի ներկայացուցիչներն ունեն իրենց հատուկ սովորույթները: Օրինակ՝ Իրանի որոշ շրջաններում աղջկան օժիտ տալը, ամուսնական արարողությունը և այլն[87]: Հատուկ սովորույթները անվանում են նաև առանձնահատուկ, յուրահատուկ սովորույթներ (Particular custom):

Ընդհանուր սովորույթները սկիզբ են առնում հասարակական իրադարձություններից[88]: Հարկ է նշել, որ Իրանի իրավական համակարգում սովորույթը կիրառվում է այն ժամանակ, երբ օրենքում առկա են ինչ-որ անհասկանալի կետեր: Պատմական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հաճախ խորհրդարանի շատ օրենքներ չեն ընդունվում հասարակական սովորույթի կողմից և այդ իսկ պատճառով էլ այդ օրենքները կրկին քննարկվում են խորհրդարանում՝ կատարելով սովորույթից համապատասխան լրացումներ[89]: Շատ իրավաբանների և գիտնականների կարծիքով, սովորույթը ոչ միայն Իրանի իրավական համակարգում, այլ նաև իրավական բոլոր համակարգերում օրենքից էլ կարևոր տեղ է զբաղեցնում և համարվում է իրավունքի թիվ մեկ աղբյուրը[90]: Իրավաբանների մեկ այլ խումբ կարծում է, որ չնայած սովորույթը իրավունքի հիմնական և կարևոր աղբյուրներից է, սակայն երբեք օրենքի նման իրավական ուժ չունի, իսկ օրենսդիրն էլ, նույնիսկ դատավորը, կարող է սովորույթին դիմել իր խնդիրը լուծելու համար, եթե առկա է ըստ օրենքի թույլտվություն:

Իտալիայում և Ավստրիայում սովորույթը կարելի է կիրառել, երբ օրենսդիրն այն ընդունում է, իսկ Գերմանիայում, Շվեյցարիայում և Հունաստանում օրենքը և սովորույթը իրավական երկու աստիճանակից աղբյուր են համարվում: Այդ մասին հստակորեն նշվում է 19-րդ դարի Գերմանիայի իրավական պատմագրության մեջ[91]: Իհարկե, ներկա պայմաններում հնարավոր չէ սովորույթը և ծեսը համարել իրավական

---

[86] Ալմադանի Ա., Իսլամական օրենսդրություն, Թեհրան, 2004, էջ 562:
[87] Վահեդի Ղ., նշվ. աշխ., էջ 208:
[88] Ամիդ-Զանջանի Ա., Համեմատական իսլամական իրավունքի մասին ներածական ակնարկ, առաջին տպ., Միզան, Թեհրան, 2003, էջ 306:
[89] Էմամի Ս.Հ., նշվ. աշխ., էջ 143:
[90] Շայգան Ա., Քաղաքացիական իրավունք, 1-ին տպ., Թահ, Թեհրան, 1996, էջ 27:
[91] Վահեդի Ղ., նշվ. աշխ., էջ 208:

համակարգի առաջին և հիմնական աղբյուր, սակայն չպետք է անտեսել դրա էական ազդեցությունն օրենքի և դատական ընթացակարգերի վրա: Իրանում օրենքի և սովորույթի միջև ընտրություն կատարելու և այս հարցը լուծելու համար ընտրվել է միջին տարբերակ. շատ դեպքերում օրենքին օգնության են հասնում նաև սովորույթային կանոնները (ասվածի լավագույն օրինակը Իրանի քաղաքացիական օրենսգրի 448-րդ հոդվածն է առևտրի վերաբերյալ)[92]: Իրանի քրեական օրենսգրքի 645-րդ հոդվածի համաձայն, եթե տղամարդը չգրանցի իր կնոջ հետ ամուսնությունը, ապա նրա համար պատիժ կսահմանվի, բայց որևէ սովորույթի համաձայն հնարավոր է Իրանի ինչ-որ տարածքում մարդու և կնոջ միջև ժամանակավոր ամուսնությունը (սիղե) բավական լինի, այս դեպքում ակնհայտ է սովորույթի և օրենքի միջև հակասությունը, ինչի պատճառով էլ սովորույթ չի ընդունվում[93]:

5.3. Սովորույթի առաջացման և վերացման իրավական հիմնահարցերը: Սովորույթի առաջացման կարևոր պայմաններից է համարվում այն, որ հասարակության անդամները հաստատուն, կայուն կերպով ինչ-որ մի գործողություն, ծես են կատարում: Այդ գործողությունը կամ ծեսը պետք է ընդունելի, հարգված լինի և անընդհատ կատարվի հասարակության, եթե ոչ բոլոր, ապա որևէ խմբի կամ խավի ներկայացուցիչների կողմից: Ծեսերի մեծ մասը, որ մի որոշ ժամանակ անընդհատ կրկնվել են, սակայն ոմանց կարծիքով պարտադիր կատարման սկզբունք չեն, ապա որպես սովորույթ և իրավական կանոն չեն ընդունվում: Օրինակ՝ Իրանում տոների կամ սգո արարողությունների ժամանակ կատարվող ծեսերը սովորույթ կամ իրավական կանոն դառնալու համար հատուկ պայմաններ նախատեսված չեն[94]: Եվ, իհարկե, հասարակության մեջ բացակայում է այն միտքը, որ պետք է ենթարկվել այդ ծեսին որպես իրավական կանոնի[95]: Իսլամական օրենսդրության մեջ սովորույթի առաջացման և պահպանման համար էական գործոններից է դրա տարածված լինելը:

---

[92] Քաթուզյան Ն., Իրավագիտության փիլիսոփայություն, եռահատորյակի առաջին հատոր, 5-րդ տպ., Էնթեշար ԲԸ հրատ., Թեհրան, 2006, էջ 119:

[93] Քաթուզյան Ն., Իրավագիտության փիլիսոփայություն, եռահատորյակի առաջին հատոր, 5-րդ տպ., Էնթեշար ԲԸ հրատ., Թեհրան, 2006, էջ 448:

[94] Քաթուզյան Ն., Իրավունքի ընդհանուր դրույթները: Ընդհանուր տեսություն, 1-ին տպ., Էնթեշար ԲԸ հրատ., Թեհրան, 2008, էջ 448:

[95] Այս տեսակետը առավել տարածված է ֆրանսիացի իրավաբանների շրջանում:

Այս գործոնը կապված չէ սովորույթի հատուկ կամ հասարակ լինելու հետ: Բոլոր սովորույթներն էլ պետք որոշ չափով տարածված լինեն[96]: Մյուս կարևոր գործոններից է սովորույթի հստակ և պարզ լինելը: Բոլոր սովորույթները պետք է լինեն պարզ և հստակ: Հետևաբար, եթե սովորույթի մեջ առկա են անհասկանալի կետեր, ապա այն օրինական համարվել չի կարող: Մյուս կարևոր գործոնը այն է, որ սովորույթի և տրամաբանության, բանականության միջև հակասություն չպետք է լինի: Սովորույթը պետք է ընդունելի լինի հասարակության կողմից: Մյուս գործոնը՝ համապատասխանելիությունն է իսլամական կանոններին և օրենքներին: Սովորույթը պետք է համապատասխան լինի իսլամի իրավական աղբյուրներին: Հետևաբար, կարող ենք նշել, որ սովորույթը չի կարող գործել իսլամի կանոններին և սկզբունքներին հակառակ: Իսլամի ծագումից և պետական կրոն հռչակվելուց հետո, կրոնի ազդեցությունը սովորույթների վրա ակնհայտ էր, այնպես, որ իսլամի համար շատ անընդունելի երևույթներ դատապարտվեցին նաև սովորույթների կողմից: Հետևաբար, իսլամը ընդունելի է համարում այն սովորույթը, որը կրոնագետների, իրավաբանների կողմից հաստատված է, խելացի և բանական:

Ինչպես վերևում նշվեց սովորույթները առաջանում են հասարակության որոշ կարիքներ բավարարելու համար, և բնականաբար այդ կարիքների բավարարվելուց հետո այդ սովորույթները մեխանիկորեն կամ օրենսդիր իշխանության միջամտությամբ վերանում են: Հարկ է նշել, որ յուրաքանչյուր սովորույթի վերացման համար կարող են հիմք հանդիսանալ հետևյալ չափանիշները. ա) շարիաթի սկզբունքներին հակասելը, բ) բանականությունից զուրկ և հասարակության անդամների համար անհաճո լինելը, գ) ժամանակի ընթացքում հասարակական կարևորության կորուստը, դ) նոր սովորույթների առաջացումը, որոնք դուրս են մղում հին սովորույթներին[97]:

Իրավական հարցերում սովորույթային իրավունքից օգտվելը միայն օգտակար է արդարության և անաչառության հաստատման համար, սակայն քրեական հարցերում այն կիրառելու դեպքում հնարավոր են ոչ հաճելի հետևանքներ[98]: Իրանի իսլամական

[96] Քաթուզյան Ն., Քաղաքացիական օրենսդրությունը ներկա իրավական համակարգում, 37-րդ տպ., Միզան, Թեհրան, 2013, էջ 43:
[97] Էմամի Ս.Հ., նշվ. աշխ., էջ 142-143:
[98] Տե՛ս Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ կետը:

համակարգում, եթե սովորույթը չի հակասում իսլամի կանոններին և սկզբունքներին մեծ հարգանք է վայելում[99]: Բոլոր երկրներում օրենսդիր իշխանությունը ջանում է ապահովել կարգուկանոնը, ինչի համար բավականին շատ օրենքներ է հաստատում, սակայն հաճախ այդ օրենքներից անկախ հասարակության մեջ կան սովորույթներ, որոնք արժեքային համակարգում նորմալ իրավիճակ պահպանելու համար պետք է վերացվեն: Սովորույթների վերացման մյուս պատճառն էլ նոր սովորույթների առաջացումն է[100]:

Բոլոր դեպքերում, քանի որ Իրանում աստվածապետական համակարգ է, իշխանության գլուխ կանգնած են հոգևորականները, հետևաբար սովորույթները պետք է նախևառաջ հակասություններ չունենան իսլամական նորմերի հետ, միաժամանակ չհակասեն ընդունված օրենքներին:

§ 6. Դատական մեկնաբանողական նախադեպերը Իրանի իրավական համակարգում հասկացման, տեսակների, ստեղծման և դադարեցման իրավական հիմնահարցերը

6.1. Դատական նախադեպերի հիմնահարցը իրավունքի մեկնաբանման համատեքստում: Դատական նախադեպը, որը դատավորների մտքի արգասիքն է, սահմանադրական հեղափոխությունից, ինչպես նաև հիմնական և արմատական փոփոխությունների ենթարկվելուց հետո էլ պահպանել է իր կարևորությունը Իրանի իրավական համակարգում: Այն այսօր համարվում է դրա հիմնական աղբյուրներից մեկը: Դատական նախադեպը բնութագրելիս կարելի է նշել, որ այն բաղկացած է իրավական հարցերի լուծման համար նախատեսված իրավական և դատական միանման մեթոդներից: Իրավական նույն հարցերի հաճախ կրկնվելու դեպքում բոլոր դատարանները կիրառում և կայացնում են միանման մեթոդ և որոշում[101]: Ընդհանուր առմամբ, դատական նախադեպը դատական որոշումների ամբողջությունն է որևէ խնդրի շուրջ, և այն չպետք է նույնացնել հենց դատարանի որոշման հետ, որը

---

[99] Քաթուզյան Ն., Պայմանագրերի ընդհանուր կանոնները, երրորդ հատոր, 5-րդ տպ., Էնթեշար ԲԸ հրատ., Թեհրան, 2008, էջ 54:

[100] Քաթուզյան Ն., Իրավունքի ընդհանուր դրույթները: Ընդհանուր տեսություն, 1-ին տպ., Էնթեշար ԲԸ հրատ., Թեհրան, 2008, էջ 445:

[101] Քաթուզյան Ն., Իրավագիտության փիլիսոփայություն, եռահատորյակի առաջին հատոր, 5-րդ տպ., Էնթեշար ԲԸ հրատ., Թեհրան, 2006, էջ 317:

դատական նախադեպի բաղկացուցիչ մասն է կազմում: Որպեսզի դատական ընթակարգը սովորույթային իրավունքի նման կատարյալ լինի, կարիք ունի կիրառվելու դատական պրակտիկայում, հետևաբար կարելի է ասել, որ դատական նախադեպը սովորույթային իրավունքի մի հատուկ տեսակ է: Սովորույթային իրավունքը լայնորեն կիրառվում է դատարանների և դատավորների կողմից և իր մեջ ներառում է հասարակության ծեսերն ու ավանդույթները: Քանի որ դատավորներն ավելի շատ են շփվում հասարակության անդամների հետ և տեղյակ են հասարակությունում տիրող բարքերից, քան խորհրդարանի պատգամավորները, կարելի է ասել, որ դատական նախադեպի շրջանակներում ցանկացած խնդրի լուծման համար նրանց առաջարկած որոշումները ավելի արդարացի են: Ի տաբերություն օրենքի, որն օրենսդիրների կամարտահայտության արդյունքն է, դատական նախադեպը դատավորների տեսական և պրակտիկ գործունեության արդյունքն է: Դատավորներն իրենց գործունեության ընթացքում իրենց իսկ աշխատանքը հեշտացնելու նպատակով հակված են օգտվել նմանատիպ գործերով նախկին դատական որոշումներից: Դա բացատրվում է նաև նրանով, որ նախկին սովորույթային իրավունքի փոխարեն նոր սովորութային նորմեր ստեղծելը դատավորներից կպահանջեր որոշակի ջանք և հանդգնություն գիտական նոր ուսումնասիրություններ կատարելու համար: Իհարկե պետք է նշել, որ դատական որոշումներ կայացնելու համար կարևոր պայման է հանդիսանում դատավորի անձի հեղինակությունը, քանզի մեծ հեղինակություն վայելող դատավորի որոշմանը կամ վճռին կարող են հետևել ցածր հեղինակություն ունեցող և նոր հիմնված դատարանները: Ասվածի լավագույն օրինակը Իրանի իրավական համակարգն է, որտեղ Գերագույն դատարանի միասնական որոշման մեթոդը նույնիսկ կարող է լիովին ձևափոխել դատական ընդունված կարգը[102]: Ցավոք, Իրանում դատական նախադեպերը բավականաչափ վարկ և հեղինակություն չունեն և դատավորները, սովորաբար, դատական գործերի մեծաքանակ լինելու պատճառով, հիմնավորված ապացույցներ և փաստեր ներկայացնելու փոխարեն, բավարարվում են հարցի լուծման համար մի քանի տող վճիռ կայացնելով: Այդ իսկ պատճառով իրավագետները հազվադեպ են ուսումնասիրություններ անցկացնում դատական որոշումների և նախադեպերի վերաբերյալ, ինչն էլ հանգեցնում է դատական

[102] Տե՛ս Իրանի Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 476:

նախադեպերի և առկա տեսությունների միջև տարակարծությունների և հակասությունների առաջացմանը: Երբեմն էլ հեղինակները իրենց աշխատություններում փորձում են իրավական նյութերի վերաբերյալ մեկնաբանություններ անել՝ միասնական որոշումներ կայացնելու մեթոդները կցելով իրենց գրվածքներին: Սակայն, իրականում, աշխարհի մի շարք երկրներում նկատելի է, որ իրավական համակարգերում (օրինակ Ֆրանսիայում) օգտագործվում են տվյալ երկրների գիտնականների և մտավորականների կողմից հրապարակված գիտական նորույթները: Այս տիպի երկրների մտավորականները և գիտնականները մի կողմ են թողել մինչև 19-րդ դարը առկա դատական նախադեպերի և ուսմունքի նկատմամբ ժխտողական վերաբերմունքը՝ դրանք դիտելով մեկը մյուսին լրացնող կարևորագույն տարրեր[103]:

Աշխարհի շատ երկրներում, այդ թվում Իրանում, խորհրդանը իրավասու է Սահմանադրության շրջանակներում քննարկումներ անցկացնել և ցանկացած հարցի վերաբերյալ օրենքներ ընդունել: Բայց եթե խորհրդարանը ցանկանա բոլոր ոլորտներում նույնիսկ չնչին հարցեր լուծելու համար օրենք մշակել, ապա կարգուկանոնի գործընթացի հաստատման համար երկար ժամանակ կպահանջվի, և այս դեպքում օրենսդիր իշխանությունը անկարող կլինի կատարել իր պարտականությունները[104]: Բոլոր այն երկրներում, որտեղ դատաիրավական խնդիրներ լուծելու համար առկա, ամրագրված (Codified law), պոզիտիվ օրենքներ (Positive law) են կիրառվում, անհրաժեշտ է, որ բոլոր պարտականությունները ճիշտ կատարելու և արդարացի վճիռներ կայացնելու համար դատավորները այդ օրենքները ամենայն մանրամասնությամբ մեկնաբանեն, ինչն էլ կավարտվի դատական նախադեպերի ձևավորումով[105]: Հետևաբար, դատական նախադեպերի հիմնումը և հասանելիությունն օրենքի շրջանակներում անժխտելի է: Իհարկե, դատական նախադեպերի կիրառումը իրավական բոլոր համակարգերում նույնը չէ: Որոշ երկրների իրավական համակարգերում, ինչպես օրինակ՝ Անգլիայում (այս երկրի

[103] Քաթուզյան Ն., Իրավունքի ընդհանուր դրույթները: Ընդհանուր տեսություն, 1-ին տպ., Էնթեշար ԲԸ հրատ., Թեհրան, 2008, էջ 493:
[104] Մուսազադեհ Ռ., Վարչական իրավունք (1, 2): Ընդհանուր հիմունքներ և Իրան, 13-րդ տպ., Միզան, Թեհրան, 2010, էջ 151:
[105] Debbasch Ch., Bourdon J., Pontier J.M., Ricci J.Cl., Droit constitutionnel et institutions politiques, 4e édition, Paris, p. 293:

իրավական համակարգը հիմնված է common low և դատական նախադեպերի վրա): Այստեղ եթե նույնիսկ բոլոր օրենքները չեղյալ հայտարարվեն, դարձյալ մի իրավական համակարգ գոյություն ունի տարբեր խնդիրներին վերաբերող դատական նախադեպերով, որին հենվելով կարելի է մարդկանց միջև առաջացած խնդիրները լուծել: Իրանում դատավորը պարտավոր է վճիռներ և որոշումներ կայացնել հիմնվելով օրենքի և իրավական ակտերի վրա: Իրանի քրեական և քաղաքացիական օրենսգրքերի համաձայն, դատավորը չի կարող օրենքի կրճատ կամ ընդհանուր լինելու պատճառով քննությունից և արդարացի որոշում կայացնելուց խուսափել[106]: Մյուս կողմից, հասարակական հարաբերությունների ծավալուն և խճճված լինելու, ինչպես նաև մարդկանց միջև փոխհարաբերությունները և նրանց գործողությունները կարգավորելու համար օրենսդիրի կողմից բոլոր կանոնները և օրենքներն ընդունելն անհնար է և այստեղ է, որ հարցի օրինական լուծման համար պետք է հինվել ԻԻՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի վրա: Համաձայն այդ հոդվածի Իսլամական խորհրդի մեջլիսն իրավունք ունի բացատրել և մեկնաբանել սովորական իրավունքը: Այս հոդվածի բնույթը չի արգելում օրենքների մեկնաբանությունն արդարադատության համակարգի շրջանակներում՝ մեղավորներին և անմեղին որոշելու համար: Եվ շատ կարևոր է, որպեսզի դատական նոր նախադեպերը հիմնելուց հաշվի առնվեն նաև ամրագրված օրենքները: Այսպիսով, կարելի է ասել, որ Իրանի իրավական համակարգում դատական մեկնաբանությունը գործիք է՝ նախատեսված Սահմանադրության հոդվածների արդար և ճշմարիտ կատարելու համար: Եվ հենց դատավորներն էլ, հիմք ընդունելով այն, ամեն մի դեպքի և իրադարձության համար համապատասխան եզրակացություն են սահմանում[107]: Հենց այստեղ է, որ կարող է հարց առաջանալ, թե արդյոք դատական նախադեպի միջոցով նոր իրավակարգավորման հիմնումը (ինչը Իրանում օրենսդիր մարմնի

[106] Քրեական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդված. «… դատարանը պարտավոր է յուրաքանչյուր խնդրի լուծում փնտրել ամրագրված օրենքների մեջ, և եթե տվյալ խնդրի կապակցությամբ բացակայում են համապատասխան օրենքներ, պետք է հենվել կրոնական օրենսգետների կամ կրոնական հրամանների վրա և որոշումներ կայացնել. դատարանները չեն կարող օրենքի կրճատ կամ ամփոփ լինելու պատճառով հետաքննությունից և արդարացի որոշում կայացնելուց խուսափել»:

[107] Մոհսենի Հ., Դատավարության սկզբունքների իմաստը և դրանց մեկնաբանական դերը և դատավարական արարողակարվից այդ սկզբունքները տարբերելու ձևը // Կենտրոն դատարանի Փաստաբանների պալատի ամսագիր, հ.՝ 23 և 24, Թեհրան, գարուն-ամառ, 2006, էջ 99-131:

պարտականությունը և լիազորությունն է) երկրի Գերագույն դատարանի դատավորների կողմից և բոլոր որոշումների պարտադիր կատարումը չի նշանակում, որ դատավորները և դատական իշխանությունը միջամտում են օրենսդիր իշխանության գործունեությանը, և գործում են իշխանության թևերի տարանջատման (Division of power) սկզբունքին դեմ:

Պետք է նշել, որ ԻԻՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի համաձայն պատգամավորական պաշտոնը պատկանում է կոնկրետ պատգամավորին և չի կարող տրվել մեկ ուրիշին: Մեջլիսը չի կարող օրինաստեղծ լիազորություններ տալ այլ մարդու, կամ մարդկանց խմբի: ԻԻՀ Սահմանադրության 161-րդ հոդվածի համաձայն, Գերագույն դատարանը կազմավորվում է դատական իշխանության ղեկավարի ներկայացրած կանոնակարգով, դատավորների կողմից օրենքների կատարման և դատական իշխանության կողմից միասնական գործունեության և օրենքով սահմանված պարտականությունների իրականացման համար: Սահմանադրությունը գործադիր իշխանության համար նույնպես, որի պարտականությունն է խորհրդարանի օրենքները ի կատար ածելը, սահմանել է նաև շրջաբերականներ և կանոնագրեր հաստատելու իրավունք, և բացարձակ չի խանգարում այն հանգամանքը, որ օրենդիր իշխանության համար նույնպես այսպիսի լիազորություններ է սահմանել: Կարևոր է նաև, որ դատավորի կողմից օրենքի մեկնաբանության և օրենքի հաստատման միջև էական տարբերություն լինի: Պետք է նշել, որ յուրաքանչյուր օրենքի մեկնաբանություն տրամաբանական անհրաժեշտություն է, քանզի դրական իրավունքն ունի բազմաթիվ թույլ կողմեր և պետք է լրացվի դատական նախադեպերի միջոցով: Այսպիսով, օրենքի մեկնաբանումը պետք է դիտել որպես օրենքի մի մաս, որը լրացնում և ավելի կատարյալ է դարձնում այն: Իհարկե դատավորը պարտավոր է օրենքն այնպես մեկնաբանել, որ այն չհակասի իսլամական նորմերին և սկզբունքներին, այսինքն՝ այդ մեկնաբանման ժամանակ անօրինականը չդառնա օրինական և հակառակը՝ օրինականը՝ անօրինական: Օրենքի մեկնաբանումը պետք է ավարտվի արդարության հաստատումով՝ որպես արդարադատության վերջնական նպատակ:

Սկզբունքորեն կարող ենք ասել, որ դատական նախադեպերը օրենքների մեկնաբանության արդյունք են: Օրենքների անուղղակի մեկնաբանությունները

իրավաբանների և գիտնականների աշխատություններում հիմնականում խորհրդատվական և ուղեցույցային նշանակություն ունեն, իսկ պարտադիր կատարման համար երաշխիք չկա: Բոլոր դեպքերում չի կարելի մերժել և ժխտել այս կարգի մեկնաբանությունների դերն ու նշանակությունը յուրաքանչյուր երկրի իրավական համակարգի համար: Օրենքների ուղղակի և պաշտոնական մեկնաբանությունների դեպքում այն կատարելը դառնում է պարտադիր: Իրանի դատական համակարգում օրենքի լուսաբանումը և մեկնաբանումը տեղի է ունենում երկու ճանապարհով:

1. Օրենսդրի մեկնաբանություն: Օրենքի այս կարգի մեկնաբանությունը տեղի է ունենում իշխանության թևերի տարանջատման սկզբունքին համապատասխան: Իրականում օրենքի այս կարգի մեկնաբանությունը մի գործընթաց է, որի ընթացքում օրենսդիրների նպատակն է պարզել օրենքի էությունը, այն կիրառելու սահմանները, այսինքն՝ օրենքի ոչ պարզ և համառոտ լինելու դեպքում դատավորների մեկնաբանության փոխարեն կարելի է հենվել խորհրդարանի կողմից մշակված և մեկնված օրինագծերի վրա, որը կարող է դառնալ հարցի լուծման լավագույն եղանակը, քանզի պատգամավորները մյուս բոլոր պաշտոնյաներից ավելի շատ են տեղյակ իրենց իսկ կողմից հաստատված օրենքների նպատակին: Չպետք է մոռանալ, որ ԻԻՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի համաձայն իսլամական խորհրդի մեջլիսն իրավունք ունի բացատրել և մեկնաբանել սովորական իրավունքը: Այս հոդվածի դրույթը չի արգելում օրենքների մեկնաբանությունն արդարադատության համակարգի շրջանակներում մեղավորներին և անմեղին որոշելու համար: Եվ հաշվի առնելով ժամանակի սղությունը և ծախսատար լինելու, ինչպես նաև համապաստասխան մասնագետների բացակայության փաստը, այս տարբերակի օգտագործումը բավականին քիչ է հանդիպում:

2. Դատական մեկնաբանություն: Ներկայումս դատական նախադեպերի օգտագործումը իրավաբանների, հատկապես փաստաբանների կողմից՝ դատավորներին համոզելու, որպեսզի դատավճիռը կայացնեն նախկին որոշումների հիման վրա բավականին տարածված է: Մյուս կողմից էլ նախկին որոշումներին դիմելը և այն օգտագործելը մտավոր և բարոյական տեսանկյունից, բավականին արդյունավետ և օգտակար է: Հաճախ օրենսդիրը օրենքի մեջ մի քանի նշանակություն

ունեցող բառ կամ արտահայտություն է օգտագործում կամ պատգամավորներն անուշադրության կամ իրավաբանական տերմինին չտիրապետելու հետևանքով նախագծեր են հաստատում, ինչի արդյունքում առաջանում են անցանկալի թյուրիմացություններ, որոնց վերացումը դառնում է անհրաժեշտ և պարտադիր: Ինչպես նաև դատավճիռները պետք է հիմնավորված լինեն օրենքի սկզբունքներով[108] և մյուս կողմից շատ դեպքերում օրենքի վավերացման և այն կիրառելու միջև ընկած ժամանակահատվածն այնքան մեծ է լինում, որ իրավաբանները պարտավոր են հիմնվել դատական նախադեպերի և օրենքների վերաբերյալ կատարած իրենց մեկնաբանությունների վրա, որպեսզի նոր օրենք հաստատվի: Նույնիսկ այսպիսի պայմաններում հնարավոր է, որ իրավաբանները և փաստաբանները միևնույն օրենքը մեկնաբանելու շուրջ տարաձայնություններ ունենան և դատավորը պարտավոր է հիմք ընդունելով իրավական նորմերը կատարել օրենքի մեկնաբանություն: Այսպիսի դեպքերում դատավորները օրենսդիրի կարծիքն իրենց մեկնաբանությունների հետ համատեղելի են դարձնում: Իհարկե այս մեթոդը միայն Իրանում չի գործում: Ծավալուն կերպով օգտագործվում է Common low իրավունքում՝ անվանվելով դատավորների կողմից հաստատված իրավունք[109]: Հետևաբար, այն ինչ ասվեց, դիտվում է որպես իշխանության թևերի տարանջատման սկզբունք, որի հեղինակն է ֆրանսիացի հայտնի իրավաբան Մոնտեսքյուն: Մի շարք իրավաբանների կարծիքով այն ճկուն է[110]:

6.2. Դատական նախադեպերի հարապարակման և ըստ պարտադիրության տեսակների հիմնահարցը: Ինչպես նշվեց, դատարանները կատարում են օրենքները և կանոնները, իրավասու չեն նոր օրենքներ և որոշումներ հաստատել, սակայն միատեսակ դատական նախադեպերի հաստատումը տրամաբանական և հույժ կարևոր է: Հենվելով այս նախադեպերի վրա՝ իբրև դատական սովորույթներ՝ կարելի է հեշտությամբ և շատ դեպքերում հարթել տարաձայնությունները և անհամապատասխանությունները: Նախկինում բարձրագույն դատարանների և ատյանների բոլոր որոշումները և վերանայումները տպագրվում էին, սակայն

[108] Տե՛ս Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրություն, հոդված 166:
[109] Jude – made – law:
[110] Marise Cremona, Legal method, 4th Edition, J.W. Arrowsmith Ltd, London, 2002, p. 62.

ներկայումս այն քիչ է պահպանվել, ինչն էլ կարելի է համարել մեր երկրի իրավական համակարգի թերությունը, քանզի հնարավոր է այս որոշումները շատ կարևոր լինեն, գիտական կարևոր նշանակություն ունենան, սակայն ոչ մի ժողովածում զետեղված չեն և մատնվել են մոռացության: Մեր օրերում դատական գործերն Իրանում բավականին մեծ թիվ են կազմում: Տարեկան ութ միլիոն դատական գործ է ներկայացվում դատարան, և դատավորներն էլ դատական գործընթացներն արագացնելու և ժամանակ շահելու նպատակով այն ինչպես պետք է չեն քննում և վերջնական որոշում կայացնելու համար չեն ջանում: Բոլոր դեպքերում, դատավորների և իրավաբանների համար երկրի Գերագույն դատարանի, բարձրագույն ատյանների կողմից հաստատված որոշումների անհասանելի լինելու պատճառով դատական նախադեպերը չունեն բավարար կայունություն և կիրառություն երկրի դատական համակարգում:

Ի տարբերություն Իրանի, մի շարք զարգացած երկրներում Գերագույն ատյանների կողմից հրապարակված որոշումները իրավաբանների կողմից քննարկվում է և ստեղծվում է մի հավաքածու, որտեղ հստակորեն նշվում է նախկին որոշումների ուժեղ և թույլ կողմերը: Ցավոք, պետք է նշել, որ Իրանում դատական համակարգի հաստատումից հետո 100 տարի է անցել և նախկին որոշումների զետեղումը և տպագրման բացակայությունը աչքի է զարնում: Այդ իսկ պատճառով այդ որոշումները ոչ մի պաշտոնյայի կողմից գիտական վերլուծության չեն ենթարկվում, ինչն էլ պատճառ է նախկին դատական նախադեպերի հեղինակության անկման և պիտանելիության նվազման համար: Բարեբախտաբար, որոշ չափով այս ոչ բարեհամբույր վերաբերմունքն իր մեջ չի ներառում որոշ դատական որոշումներ, որոնցից են երկրի Գերագույն դատարանի միասնական որոշումները: Չպետք է մոռնալ, որ այդ որոշումների կատարումը պարտադիր է: Այս որոշումները հրատարակվում են երկրի պաշտոնական օրաթերթում:

Իրանում դատական նախադեպերը կարելի է բաժանել երկու խմբի[111]: Բաժանման չափանիշը նախադեպի պարտադիրությունն է կամ իրավաբանական ուժը:

[111] Մոհսենի Հ., Դատավարության սկզբունքների իմաստը և դրանց մեկնաբանական դերը և դատավարական արարողակարվից այդ սկզբունքները տարբերելու ձևը // Կենտրոն դատարանի Փաստաբանների պալատի ամսագիր, հ.՝ 23 և 24, Թեհրան, գարուն-ամառ, 2006, էջ 99-131:

Նախադեպերի առաջին խումբը **պարտադիր կատարման դատական նախադեպերն** են: Եթե երկրի Գերագույն դատարանի կողմից որևէ հարցի վերաբերյալ դատական որոշում կայացվի և այն որպես միասնական որոշում ներառնվի դատական նախադեպերի մեջ, ապա դրա կատարումը դառնում է պարտադիր երկրի արդարադատության և դատական համակարգի ներկայացուցիչների, ինչպես նաև բոլոր բնակիչների՝ այդ թվում նաև արտասահմանցիների համար: Այս որոշումները կայացնելիս նախորդ որոշումները չեն վերանայվում, քանի որ դրանք հետազոտվել են նախկինում և համարվում են փակված՝ կորցնելով իրենց նշանակությունը: Սակայն, եթե երկրի Գերագույն դատարանը կարծիք հայտնի դրանց մասին և, եթե որևէ դատավոր չհետևի այդ որոշմանը պատճառաբանելով, որ տեղեկացված չի եղել կամ տվյալ որոշումը չի համընկել իր կարծիքի հետ, այդ ժամանակ պատճառաբանությունները չեն ընդունվի: Դա նշանակում է, որ դատավորները ոչ թե ընդունում են որ Գերագույն դատարանի որոշումները որպես բավարարող և գոհացուցիչ, այլ նրա համար, որ իրենք ուղղակի պարտավոր են և հարկադրված հետևել և կատարել այդ որոշումները: Ուրեմն պարտադիր կատարման դատական մեթոդները կարելի է համարել նույնը, ինչ երկրի Գերագույն դատարանի կողմից ընդունված որոշումերն են, որոնք կայացվում են Գերագույն դատարանի դատավորների կողմից: Այդպես նրանք վերջ են դնում դատարանների և Գերագույն դատարանի մասնաճյուղերի միջև առաջացած անհամաձայնություններին: Համաձայն միասնական մեթոդի օրենքի (հաստատված 1949 թ.), երբ միանման խնդրի վերաբերյալ Գերագույն դատարանի մասնաճյուղերից յուրաքանչյուրը տարբեր որոշում են կայացնում, արդարադատության նախարարը կամ Գերագույն դատարանի նախագահը կամ գլխավոր դատախազը հանձնաժողով է կազմում: Այդ հանձնաժողովի նիստին պետք է ներկա գտնվեն Գերագույն դատարանի անդամների 3/4-ը: Նիստի ընթացքում նրանք քննարկում և իրենց կարծիքն են հայտնում տվյալ խնդրի վերաբերյալ: Հանձնաժողովի մեծամասնության կարծիքը ընդունվում է որպես որոշում, որը պետք է պարտադիր կատարվի Գերագույն դատարանի և այլ դատարանների կողմից: Այն կարող է չիրականացվել միայն այն դեպքում, երբ օրենքը կամ Գերագույն դատարանի հանձնաժողովը չթույլատրի: Հայտնի է, որ Իրանի պարտադիր

կատարման ենթակա դատական նախադեպերը շատ դեպքերում սահմանվում են մեկ ժողովի ընթացքում՝ երկրի Գերագույն դատարանի դատավորների կողմից, այն դեպքում, երբ եվրոպական մի շարք երկրներում դատական նախադեպերը սահմանվում են տվյալ ոլորտի գիտնականների և իրավաբանների միջև երկարատև քննարկումների արդյունքում: Սա ևս մի թույլ կետ է Իրանի դատական համակարգում[112]: Իրանում դատավորը պարտավոր է հետևել և կատարել դատական նախադեպերը, որոնք ստեղծվել են երկրի Գերագույն դատարանի կողմից, բայց ամեն անգամ common low իրավական համակարգ ունեցող երկրների նման, դատարանի որոշումն այնքան ազդեցիկ է, որ ուրիշ դատարանների դատավորներին ստիպում է հետևել դրան, այս դեպքում կարելի է պնդել, որ դատական նախադեպն իրավունքում գործածվող աղբյուր է: Կարելի է ասել, որ դատական այդ մեթոդը գործածվող աղբյուր է իրավունքի ոլորտում, բայց եթե Իրանի դատարանները պարտավոր լինեն հետևել և ի կատար ածել այն որոշումները, որոնք ավելի բարձր պաշտոն ունեցողներն ընդունեն, ապա թվում է թե դատական նախադեպն իր առաքելությունը չի կատարել և հնարավոր է, որ երբեմն Գերագույն դատարանի որոշումները և ապացույցները նրանց համար ընդունելի և գոհացնող չլինեն: Ասվածի լավագույն օրինակը երկրի Գերագույն դատարանի կողմից 2005 թ. ընդունված թիվ 676 միասնական որոշումն է՝ ի հակակշիռ ընդհանուր և հեղափոխության դատարանների ստեղծման մասին օրենքի 5-րդ կետի, ըստ որի մաքսանենգության և թմրադեղերի հետ կապված խնդիրների քննումը և ուսումնասիրումը հանցագործության վայրում գտնվող հեղափոխության դատարանների իրավասություններից է: Ցավոք, նշված որոշման համաձայն, այն վայրերում, որ այս դատարանները չեն հիմնվել, այս կարգի հանցագործությունների քննումը և լուծումը հանձնված է ընդհանուր և քրեական դատարաններին: Սակայն ճիշտ կլիներ, որ այդպիսի խնդիրները քննվեին հանցագործության կատարման վայրին ամենամոտ հեղափոխության դատարանում, որպեսզի դատարանների իրավասությունների, ամրագրված օրենքների ու կանոնադրությունների միջև հակասություններ չառաջանային: Իրականում իրավաբանները և դատարանների

[112] Քաթուզյան Ն., Իրավունքի ընդհանուր դրույթները: Ընդհանուր տեսություն, 1-ին տպ., Էնթեշար ԲԸ հրատ., Թեհրան, 2008, էջ 485:

դատավորներն ամենատարբեր հիմնավորումներով ու ապացույցներով դեմ են դատական այս նախադեպերին, չնայած որ հարկադրված են հետևել և ամենայն ուշադրությամբ կատարել դրանք:

Նախադեպերի երկրորդ տեսակը **կատարման համար ոչ պարտադիր նախադեպերն** են: Դատական որոշումների մեկ այլ տեսակ էլ գոյություն ունի, որին հետևելը և այն կատարելը պարտադիր չէ: Պետք է նշել, որ այս կարգի դատական նախադեպերը հստակ, որոշված սահմանափակումներ չունեն: Այստեղ չկա երկրի Գերագույն դատարանի կողմից սահմանված որոշումների կատարման պարտադիր կարգը: Դատավորները ցանկանում են ոչ միայն տեղյակ լինել երկրի Գերագույն դատարանի միասնական որոշումներից, այլև սովորական դատարանների որոշումներից, որոնք այլ դատավորներն են կայացնում նմանատիպ խնդիրների լուծման ժամանակ: Այդ պատճառով ամեն մի դատական գործում դատավորն իր դատական որոշումը համեմատում է այլ դատավորների մեթոդների հետ: Երբ իր կարծիքին և որոշմանը լիովին չի վստահում, օգտվում է իր գործընկերների կայացրած որոշումներից: Գուցե հնարավոր լինի այս կարգի դատական նախադեպերը բնութագրել որպես ոչ պարտադիր մի սովորույթ, որ շատ տարածված է դատավորների և դատարանների շրջանում: Այս կարգի դատական նախադեպերը հանդես չեն գալիս իբրև օրենք և այդ նախադեպերի օրինական ուժը, դատավորների կարծիքով, կապված է երկրի իրավիճակի և հաստատված օրենքների հետ և հնարավոր է դատական որևէ մի համալիրում կամ որևէ գավառի, քաղաքի կամ շրջանի դատարանների մասնաճյուղերում առանց իրավական պահանջի որևէ հարցի շուրջ ընթացակարգ սկսվի[113]: Ոչ պարտադիր կատարման դատական մեթոդների ժամանակ հարկ չկա օգտվել այլ դատավորների որոշումներից: Օրինակ այն հայցը, որը պահանջատիրոջ կողմից առանց ստորագրման հանձնվել է դատարանին, ապա այս դեպքում սահմանված օրենք գոյություն չունի և երկրի Գերագույն դատարանի կողմից միասնական որոշում չի ընդունվել: Դատավորները դատարանում օգտվում են սովորություններից, հաշվի առնելով պահանջի ձևը: Օգտվում են նաև քաղաքացիական դատավարության կարգերի երկրորդ կետից: Եվ քանի որ հայցը

[113] Մադանի Ս.Ջ., Դատական ընթացակարգ, 10-րդ տպ., Փայդար, Թեհրան, 2008, էջ 33:

օրինական ձևով չի ներկայացվել, հայցը անվավեր են ճանաչում: Այս ամենը համարվում է ոչ պարտադիր դատական նախադեպ: Բայց եթե դատավորը այս տիպի հարցերում հակառակ ընդունված դատական մեթոդի պահանջատիրոջը զգուշացնում է, որ վերջինս ներկայանա դատարան և ուղղի սխալը, քանի որ նա օգտագործել է ոչ պարտադիր դատական մեթոդ, ապա նրան պետք չէ քննադատել կամ փնովել, և նա ոչ մի խախտում չի կատարել: Այն դեպքում, երբ պահանջատերը կարևոր կառույց է և իր պահանջը ներկայացնելիս նամականիշ չի օգտագործել, և դատավորը հաշվի չի առել միասնական որոշման ընթացակարգի 652–րդ կետը (ընդունված 2001 թ.), համաձայն, որի, պետական կառույցները պետք է օգտագործեն նամականիշ և հոգան կապված ծախսերը, և, եթե տվյալ պետական կառույցի հայցը դատավորն ընդունի և դրան ընթացք տա և այդ պետական կառույցից ծախս չպահանջի, ապա նա խախտում կկատարի: Քանի որ նա պիտի հետևի պարտադիր կատարման դատական նախադեպին և դատավարության ծախսը պահանջի պահանջատիրոջից:

6.3. Դատական մեկնաբանողական նախադեպերի ստեղծման և դադարեցման իրավական հիմնահարցերը: Սահմանադրության 161-րդ հոդվածի համաձայն Գերագույն դատարանը կազմավորվում է դատական իշխանության ղեկավարի ներկայացրած կանոնակարգով, դատարանների կողմից օրենքների կատարման և դատական իշխանության կողմից միասնական գործունեության և օրենքով սահմանված պարտականությունների իրականացման համար: Ինչպես նշվեց, պարտադիր կատարման դատական նախադեպերը ստեղծվում են Գերագույն դատարանի կողմից և վերաքննիչ դատարանները չեղյալ են հայտարարում օրենքին հակասող որոշումները և իրենց որոշումները կայացնում են օրենքի հիման վրա: Իրականում նրանք հաստատում են իրենց վերահսկողությունը օրենքների կատարման վրա, չնայած որ այս կարգի դատական նախադեպերը հասկանալի և ըմբռնելի չեն, սակայն երկրի Գերագույն դատարանը և այլ բարձր ատյաններն իրենց այս օրինական պարտականության կատարումով փորձում են համապատասխանեցնել դատարանի ցրիվ եկած և հակասող որոշումները օրենքի հետ, ինչպես նաև երկրի ներսում ստեղծել միանման և միատեսակ նախադեպային համակարգ: Այսպիսով, դատարանների միջև աստիճանակարգի առկայությունը դրական է ազդում դատական նախադեպերի

ստեղծման համար: Դատավարության կարևոր հիմունքներից մեկն այն է, որ քրեական և քաղաքացիական դատաքննությունները ընթանում են երկու փուլով: Այն իմաստով, որ եթե որևէ մեկը դատարանում դատապարտվի, իրավունք ունի առնվազն մեկ անգամ այլ դատարանում, ավելի բարձր քան վճիռը կայացրած դատարանը, բողոքարկի դատավճիռը: Իրանում վերաքննիչ դատարանները հիմնականում նույն մարզում են գտնվում: Սակայն կարևոր խնդիրների առկայության դեպքում երկրի Գերագույն դատարանը հադես է գալիս իբրև վերանայող դատարան: Իրանում սկզբնական և նախնական դատավճիռները հիմնականում վերաքննիչ մարմինները քննում են յուրաքանչյուր մարզի վերաքննիչ դատարանում, իսկ որոշ՝ կարևոր դեպքերում Գերագույն դատարանը դառնում է բողոքարկված դատավճռի քննարկման մարմին: Իրականում մարզերի վերաքննիչ դատարանները քննում են բոլոր դատական կարևոր գործերը: Օրենքի շրջանակներից դուրս լինելու դեպքում դրանք չեղյալ են հայտարարվում: Իսկ երկրի Գերագույն դատարաններն էլ հաստատում են վերահսկողություն՝ ընդունված որոշումները առկա օրենքներին համապատասխանեցնելու նպատակով: Եվ այս դեպքում վերոնշյալ մարմինները կողմերից և ոչ մեկից նոր պահաջներ և պատճառաբանություններ չեն ընդունում[114]: Եվ եթե հրապարակված որոշումը համապատասխան եղավ դատավարության սկզբունքներին, այն հաստատում են, եթե ոչ՝ դատական որոշումը հետ են ուղարկում նույն դատարան՝ նորից ուսումնասիրելու նպատակով կամ էլ դիմում են այլ ատյաններ: Հետևաբար, պահպանելով աստիճանակարգի սկզբունքը, նախնական դատարանները հետևում են ավելի բարձր և Գերագույն դատարանների կարծիքներին՝ չեղյալ հայտարարելով սխալ և օրենքին հակառակ որոշումները: Հարկ է նշել, որ որոշ հարցերի և իրադարձությունների հետ կապված օրենքը թույլ է կամ մաքսիմում հասարակական փոփոխություններ է առաջարկում: Կարևոր է իմանալ, թե ինչ անելիքներ և պարտականություններ ունի այս դեպքում դատարանը, եթե Իրանի Սահմանադրության համաձայն չի կարող խուսափել վճիռ կայացնելուց: Թվում է, թե այս բարդ և հակասական խնդրի լուծումը ոչ այլ ինչ է, քան օրենքների մեկնաբանում դատավորների կողմից և նույնիսկ հարկ եղած դեպում, ԻԻՀ Սահմանադրության 167-

[114] Տե՛ս Իրանի Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, 362-րդ հոդված:

րդ հոդվածի համաձայն, դատավորը պարտավոր է յուրաքանչյուր գործի համար գտնել օրենքով կոդավորված դատավճիռ, եթե նա չի կարողանում դա անել, ապա նա պետք է օգտվի իսլամական հեղինակավոր աղբյուրներից կամ ճանաչում գտած ֆետվաներից: Դատավորը չի կարող հրաժարվել գործի քննարկումից կամ դատավճռի հրապարակումից՝ տվյալ գործի վերաբերյալ օրենքի բացակայության, օրենքի դրույթների թերի լինելու կամ օրենքի մեջ հակասություններ լինելու պատճառաբանությամբ: Օրինակ, Իրանի քաղաքացիական օրենսգրքի 333 և 334-րդ հոդվածների համաձայն, եթե շենքի սեփականատերը իր շենքի, օրինակ, պատը քանդելիս որևէ մեկին վնաս հասցնի, ապա մեղավոր ճանաչվելու դեպքում պետք է փոխհատուցի պատճառած վնասները: Առաջին հայացքից այս հոդվածը հատուկ է անշարժ գույքին: Սակայն դատավորներն իրենց այս մեկնաբանությունները կարող են այն օգտագործել նաև շարժական գույքի համար: Պարզ է, որ դատական այս մեկնաբանությունները կամ դատավորների իսլամական հեղինակավոր աղբյուրին դիմելն ու օգտագործելը կարող է ստեղծել հակասություններ: Օրինակ, ընկերության՝ իրավաբանական անձանց հետ կապված, եթե դատավորը դիմի իսլամական հեղինակավոր աղբյուրների և դրա հիման վրա որոշում կայացնի սխալ կլինի, քանի որ իսլամի ծագման ժամանակաշրջանում իրավաբանական անձ գոյություն չի ունեցել: Հետևաբար, եթե կա օրենք, ուրեմն դատական որոշումներ կայացնելու համար հարկավոր չէ դիմել իսլամական հեղինակավոր աղբյուրներին:

Իրանում դատական նախադեպերն իրավական աղբյուրներ են համարվում, որոնք կարող են հատուկ ազդեցությունների և պայմանների հետևանքով վերանալ: Եթե դասակարգելու լինենք Իրանի իրավական աղբյուրները, ապա կնկատենք, որ դատական նախադեպերն իրենց կարևորության տեսակետից զիջում են օրենքին: Նույնիսկ Մեծ Բրիտանիայի իրավական համակարգում, երբ խորհրդարանի հաստատած օրենքները common low և դատական նախադեպերի հետ հակասություններ ունենան, ընդունված օրենքներն ավելի ընդունելի և նախընտրելի են: Հարկ է նշել, որ երկու երկրներում էլ այս կապակցությամբ խորհրդարանի լիազորությունների համար ոչ մի սահմանափակում չկա և ոչ մի դատավոր չի կարող հրաժարվել խորհրդարանի

ընդունած օրենքները կատարելուց: Մեծ Բրիտանիայի իրավական համակարգում ընդունված օրենքները փոխարինում են մի շարք դատական նախադեպերի:

Իրանում դատական նախադեպերի վերացումը տեղի է ունենում երկու եղանակով. **ա) նախադեպի վերացում օրենքի միջոցով, բ) նախադեպի վերացում երկրի Գերագույն դատարանի միասնական որոշումների միջոցով:**

Ինչպես նշվեց, դատական նախադեպերն օրենքների լրացուցիչ մասն են կազմում և գտնվում դրանց ազդեցության տակ: Աշխարհի շատ երկրների նման Իրանում նույնպես օրենքները անընդհատ փոփոխվում կամ առնվազն բարեփոխման են ենթարկվում, որի հետևանքով դատական նախադեպերը նույնպես, որ օրենքների բաղկացուցիչ մասն են կազմում, պետք է փոփոխվեն և դատական իշխանությունը համապատասխանեցնեն հասարակության և օրենքների փոփոխություններին[115]: Դատական նախադեպերի վերացման ամենատարծված պատճառը կապված է դատական նախադեպի մասին օրենքի վերացման կամ չեղյալ հայտարարման հետ, քանզի որևէ օրենքի վերացումով բնականաբար տվյալ օրենքի հետ կապված նախադեպերը դառնում են աննպատակ և անօգտակար և ինքնըստյան կորցնում են իրենց կարևորությունը: Այլևս հարկ և անհրաժեշտություն չկա յուրաքանչյուր նոր օրենքի հաստատման ժամանակ հայտարարել տվյալ օրենքի հետ կապված դատական նախադեպի ոչնչացման մասին: Բոլոր դեպքերում պետք է նշել, որ դատական նախադեպերի թուլացումը և ոչնչացումը այդքան էլ հեշտ տեղի չի ունենում, քանզի դատավորները և ոլորտի պատասխանատուները հիմնականում դժվարանում են հրաժարվել իրենց հին նախադեպերից, իսկ նոր նախադեպերի համար էլ անհրաժեշտ է բավականին երկար ժամանակ: Երբ երկրի գործերը կազմակերպելու համար ստեղծվում են դատական նախադեպեր, հիմնականում քիչ է պատահում, որ հենց դատավորները նախաձեռնեն նախադեպերի վերացումը, նույնիսկ դրանց սխալ և անհարմար լինելու պայմաններում, քանզի դրանք հասարակական մտքի համար դառնում են անվիճելի և կատարման ենթակա: Ակներև է, որ ամեն անգամ, երբ նոր օրենքը հաստատվում է խորհրդարանի կողմից, նախկին հակասող օրենքները և այդ

[115] Մադանի Ս.Ջ., Դատական ընթացակարգ, 10-րդ տպ., Փայդար, Թեհրան, 2008, էջ 82:

օրենքներին ենթակա նախկին նախադեպերի միասնական որոշումները վերացվում են:

Դատարանները հաճախ օրենքները մեկնաբանում են հասարակության ամենօրյա կարիքները հոգալու համար և հնարավոր է ժամանակի պահանջների և օրենքների փոփոխման հիման վրա դատական նախադեպերը դառնան անօգուտ և ոչ կիրառելի, այդ իսկ էլ պատճառով էլ Գերագույն դատարանը որպես դատական նախադեպ ստեղծող մարմին համարվում է դատական նախադեպի փոփոխման և բարեփոխման իրավասու մարմին: Հիմնական տարբերությունը դատական նախադեպում փոփոխություն անելու վերաբերյալ Գերագույն դատարանի կողմից և օրենքի միջոցով կայանում է նրանում, որ օրենքի միջոցով դատական նախադեպը փոփոխելու կամ վերացնելու իրավասու մարմինը խորհրդարանն է՝ իր հատուկ արարողակարգով, սակայն նախադեպային միասնական որոշումները փոփոխությունների ենթարկելու կամ վերացնելու դեպքում երկրի Գերագույն դատարանի կողմից, իրավասու մարմիններ են համարվում երկրի Գերագույն դատարանի դատավորները: Ի տարբերություն խորհրդարանի գործառույթների, իրականում երկրի Գերագույն դատարանը չի կարող հեշտությամբ փոփոխել կամ վերացնել իր նախկին որոշումները, քանզի դատավորների գործառույթը, որ հիմնականում փորձառու և նշանավոր դատավորներ են, իրավական սկզբունքների հիման վրա ավելի ուժեղ է, ավելի քիչ է նկատվում, որ դրանից շեղվեն: Չնայած որ պետք է բոլորը տեղեկացված լինեն նոր օրենքների հաստատման մասին երկրի պաշտոնական օրաթերթերում, սակայն առայժմ բացակայում են իրավական լուծումները՝ Իրանի օրենքներում դատական նախադեպի միասնական որոշումները հրապարակելու մասին: Ինչպես նշվեց, Իրանում, երբ երկրի Գերագույն դատարանի կողմից ստեղծվում է դատական նախադեպի միասնական որոշում, անմիջապես առանց որևէ վերասկողության և հաստատման պետք է հետևել այդ որոշմանը և կարքի է զգացվում ինչ-որ ժողովի կամ ավելի բարձր մարմնի, որ կհաստատի դատական նախադեպերի միասնական որոշումները: ԻԻՀ Սահմանադրության 91-րդ հոդվածի համաձայն Իսլամական խորհրդի մեջլիսում ընդունված որոշումների համապատասխանելիությունն իսլամի նորմերի և Սահմանադրության հետ ապահովելու նպատակով ստեղծվում է

Սահմանադրության պահապան խորհուրդը: Թվում է, թե այս նույն խորհուրդը կարող է իր վրա վերցնել նաև դատական նախադեպերի միասնական որոշումների համապատասխանելիությունը իսլամի նորմերի և Սահմանադրության հետ: Սակայն դա անընդունելի է, քանի որ երբ նայում ենք Սահմանադրության համապատասխան հոդվածներին, տեսնում ենք, որ բոլոր տեղերում օրենսդիրի հիմնական նպատակը խորհրդարանի կողմից հաստատված օրենքների հաստատման հասնելն է Պահապան-ների խորհրդի կողմից և ոչ մի խոսք չկա նախադեպերի միասնական որոշումների և դատարանների վճիռների՝ այդ խորհրդի կողմից հաստատվելու մասին[116]: Ակնհայտ է, որ Իրանում դատական նախադեպերի միասնական որոշումները հսկելու համար ոչ մի իրավասու մարմին գոյություն չունի: Պահապանների խորհրդի իրավասությունները սահմանափակվում են միայն խորհրդարանի ընդունած օրենքների և ոչ թե դատարանների որոշումների հսկմամբ: Այս մասին հստակ կերպով նշված է ԻԻՀ Սահմանադրության 72, 91, 93, 95, 96, 97 հոդվածներում: Եվ հենց այս խորհրդի ներկայացուցիչները 1993 թ. հայտարարեցին. քանի որ խորհրդարանի կողմից հաստատված օրենքները պետք է հաստատվեն Պահապանների խորհրդի կողմից, ապա այդ օրենքների մեկնաբանությունների հաստատումը տվյալ խորհրդի կողմից նույնպես անհրաժեշտ է: Իհարկե, խորհրդի անդամների այս հայտարարությունն իրականում չի կիրառվում և դատավորների մեկնաբանությունները դատական նախադեպերի շրջանակներում միասնական որոշում կայացնելու վերաբերյալ երբեք չի ներկայացվել այս խորհրդի հաստատմանը:

§ 7. Կրոնական և իրավաբանական դոկտրինաները որպես իրավունքի աղբյուր. համաշխարհային համատեքստը և Իրանի իրավական փորձը

Այն հարցի շուրջ, թե արդյոք հնարավոր է, որ ուսմունքներն իրավական աղբյուր համարվեն առաջացել են երկու տեսակետներ[117]: Գիտնականների մի խումբ կարծում է, որ իրավաբանների տեսությունները ընդամենը կարծիք են և ոչ մի պարտադիր կանոն և օրենք չեն ստեղծում, ուստի դատավորները այն չեն կարող իրենց դատավճռի հիմք

[116] Մադանի Ս.Ջ., Դատական ընթացակարգ, 10-րդ տպ., Փայդար, Թեհրան, 2008, էջ 62:
[117] Տե՛ս Niboyet J.p., Cours de droit international prive francais, 2nd Ed., 10, Paris, 1949, 694 p., հղումն՝ ըստ Քաթուզյան Ն., Իրավագիտության փիլիսոփայություն, եռահատորյակի առաջին հատոր, 5-րդ տպ., Էնթեշար ԲԸ հրատ., Թեհրան, 2006, էջ 34:

համարել և պետք է ուսմունքները ներառել իրավական գրականության մեջ և համարել իրավունքի երկրորդական աղբյուր:

Իրավաբանների մեկ այլ խումբ կարծում է, որ ուսմունքները որպես իրավական աղբյուր օրենսդրության և դատավորների գործունեության համար կարևոր նշանակություն ունեն: Հետաքրքիր է պարզել, թե այս երկու տեսակետներից որն է գործում Իրանի իրավական համակարգում: Հարկ է նշել, որ առաջին հայցքից թվում է, թե գիտնականների առաջին խմբի տեսակետն է Իրանում գործում և ուսմունքները կամ իրավական ոլորտի գիտնականների աշխատությունները որպես աղբյուր ավելի շատ երկրորդական նշանակություն ունեն: Ուսմունքները բնութագրելիս պետք նշել, որ դրանք իրավաբանների նույն կարծիքներն են, որոնք ներկայացվում են օրենքները, կանոնները մեկնելու, բացատրելու նպատակով: Իրականում ուսմունքները օրենսդրական դաշտում մեծ ազդեցություն են ունեցել, մեծապես ազդել դատական պաշտոնյաների գործառույթների և օրենքների հաստատման եղանակի վրա: Եվ հենց ուսմունքների նպատակն էլ այն է, որ իրավաբանները կանոնները, օրենքները, իրավական նյութերը վերլուծելով և մեկնաբանելով կարողանան այն ներկայացնել իրենց հաջորդներին: Ուսմունքների ներկայացմամբ առաջարկվում է դատական կայուն և արդար ընթացակարգի հիմնում, ինչպես նաև արդար ու տրամաբանական օրենքների հաստատման լավագույն և ամենակարճ ճանապարհը: Իրավաբանների ուսմունքների և տեսակետների ազդեցությունը որպես իրավական աղբյուր, որ իր ազդեցության տակ է առնում իրավական այլ աղբյուրները, իրավական գիտության բոլոր ճյուղերում և իրավական համակարգերում անխուսափելի է: Նշանավոր գիտնականների, ինչպես, օրինակ՝ Մոնտեսքյու, Ժան Ժակ Ռուսո և Բեքարյա, ուսմունքները պատճառ դարձան, որ ֆրանսիական մեծ հեղափոխությունից հետո ներկայիս տարածված պատժամիջոցները փոխարինելու գային այնպիսի պատժամիջոցների, ինչպիսիք էին խարանելը, շղթայելն ու ողջակիզելը[118]: Իրոք, կարելի է նշել, որ իրավական դաշտի զարգացումը առանց գիտնականների ուսմունքների և տեսությունների անհնար կլիներ: Օրինակ, աշխարհի իրավական համակարգերում հանցանքի և դատապատժի օրինական լինելու սկզբունքը, որ

[118] Գոլդուզյան Ի., Ընդհանուր քրեական իրավունք, 6-րդ տպ., Միզան, Թեհրան, 2011, էջ 49:

ներառված է ԻԻՀ Սահմանադրության 36-րդ և Քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածներում, իտալացի հանրահայտ իրավաբան Բեքարիայի անդադար ջանքերի և նրա կողմից ներկայացված ուսմունքի արդյունքն է, որը արտահայտվել է նրա բացառիկ գրքում՝ «Հանցանքներ և պատիժներ» անվամբ:

Ակնհայտ է, որ օրենքը և դատական ընթացակարգը որպես իրավագիտության երկու հիմնական աղբյուր չեն կարող հասարակության համար հիմնել իրավական համակարգ, քանզի օրենքը բոլոր մանրամասների կանխատեսման ունակությունը չունի և դատական ընթացակարգերն էլ հիմնականում ցրված են և վերաբերվում են մասնակի դեպքերի, հետևաբար անհրաժեշտ է ապավինել իրավական նույնիսկ երկրորդական նշանակություն ունեցող աղբյուրների օգնությանը: Երբ Ազգային Ժողովը նոր օրենք է ընդունում կամ որևէ օրինագիծ է տրվում խորհրդարանին, որպեսզի այն ընդունվի որպես օրենք, նախքան դատարանում հայտնվելն ու օգտագործելը և հատկապես մի օրենքի ընդունելուց հետո թույլ կողմերի ի հայտ գալը, իրավաբաններն ուսմունքի շրջանակներում մեկնաբանում և բացատրում են այդ օրենքը: Ինչպես նշվեց ուսմունքները համարվում են ռոմանագերմանական իրավական համակարգի աղբյուր: Նախկինում, կրթական հաստատություններում հատկապես ռոմանոգերմանական իրավունքը դասավանդելիս ուսմունքները երկար ժամանակ համարվում էին ռոմանոգերմանական իրավունքի հիմնական աղբյուր, որը գնալով իր արժեքը կորցնելով հասավ նրան, որ 19-րդ դարի վերջերին օրենքները եկան փոխարինելու ուսմունքներին[119]: Նույնիսկ այսօր մի շարք իրավաբանների կարծիքով ուսմունքները համարվում են իրավական համակարգի հիմնական աղբյուր[120]: Ուսմունքները օրենսդիրների ուղեցույցներն են և համարվում են անհրաժեշտ և անկախ իրավական աղբյուրներ: Ուսմունքների հեղինակությունը և ազդեցությունը կապված է դրանց գիտական տեղի և դերի, ինչպես նաև որակի ընկալման հետ: Իրականում օրենսդիրը, հենվելով և օգնություն հայցելով իրավաբանների ուսմունքներից, հասարակության սոցիալական և հոգեբանական մի շարք սկզբունքների հիման վրա հաստատում է օրենքներ, և ընդհանուր առմամբ այն բոլոր արդյունքները, որ պետք է

[119] Տե՛ս Դավիդ Ռ., նշվ. աշխ.:
[120] Patterson E., Jurisprudence: Men and ideas of the law, The foundation press Inc., 1953, p. 217.

սպասել օրենքից, գնահատվում է ուսմունքի միջոցով: Գործադիր իշխանության դեպքում նույնպես, պետական այրերը հաշվի առնելով գիտնականների և լուսավորիչների վերլուծությունները և տեսակետները փորձում են լուծել կառավարման համակարգում առկա բոլոր խնդիրները: Դատական իշխանության դեպքում նույնպես դատավորները նկատի ունենալով աշխատանքի ծավալը և չունենալով բոլոր հարմարավետ պայմանները դրանք քննելու համար, կարող են ուսումնասիրել ուսմունքներն ու այլ դատավորների որոշումները, մեկնաբանել և քննադատել՝ ցույց տալով հատուկ ուշադրություն տվյալ խնդիրներին:

Իհարկե, իրավական համակարգերի ազդեցությունը և կախվածությունը ուսմունքներից՝ որպես իրավական աղբյուր տարբեր են: Օրինակ, Անգլիայի common low դատական համակարգը համեմատած ռոմանոգերմանական իրավունքի հետ, ավելի քիչ է պարտական իրավական համալսարանների դասախոսներին, և իր իրավական համակարգի առաջադիմության ու զարգացման գործում մեծ է դատավորների դերն ու նշանակությունը: Ուստի ուսմունքն այս իրավական համակարգում ավելի քիչ կարևորություն ունի, քան եվրոպական երկրներում: Սակայ սա չպետք է հասկանալ այն իմաստով, որ ուսմունքն Անգլիայի դատական համակարգում դեր և նշանակություն չունի: Օրինակ, Անգլիայում իրավաբան գիտնականների որոշ աշխատություններ, ինպես օրինակ՝ Գլնոքլ, Բրաքթոնի, Լիթլոնի, Քուքի աշխատությունները, գնահատվում են որպես հեղինակավոր ուսմունքներ: Իհարկե, Անգլիայի իրավական համակարգում տեղի ունեցած վերջին իրադարձությունները, հատկապես արարողակարգի համակարգի վերացումը, և ավելի շատ ուշադրության հատկացնելը օրենքին և իրավաբանական ֆակուլտետներին, ուսմունքի դերն ու նշանակությունն այս երկրի իրավական համակարգում ավելացրեց: Չնայած որ Իրանի նման այս երկրի իրավական համակարգում ուսմունքն իրավական աղբյուրների մեջ իր նշանակությամբ վերջին տեղն է զբաղեցնում:

Իրանում իրավագետները, այն պատճառով, որ այս երկրի իրավական համակարգը համապատասխանում է իսլամի նորմերին, իրավունքի նորմերի հետ ծանոթանում են համապատասխան համալսարաններում և կրոնական դպրոցներում, որոնց հիմքը իսլամական սկզբունքներն են: Բոլոր դեպքերում Իրանի իրավագետները՝

համալսարանների շրջանավարտները և կրոնագետները պարտավոր են փնտրել արդարությունը և փորձել այդ ճանապարհին իրենց իսկ սեփական մտքերից և տեսակետներից օգտվել: Հրաժարվելով ակադեմիական իրավաբանների մտքերի և ուսմունքների ազդեցությունից՝ ԻԻՀ Սահմանադրության համաձայն, գիտնականների և կրոնագետների տեսակետները, կարիծիքները և ֆետվաներն իրավական աղբյուրների և ուսմունքների շարքին են դասվում: Հետևաբար, ընդհանուր դասակարգում կատարելիս կարելի է Իրանի իրավական ուսսմունքները և տեսությունները երկու մասի բաժանել՝ **ա) համալսարանական և ակադեմիական դասախոսների իրավական ուսմունքները, բ) իսլամագետների և կրոնագետների հրամանները (ֆետվաներ):**

Համալսարանական դասախոսները և ակադեմիական գիտնականները չեն սահմանափակվում միայն օրենքների բացատրությամբ և մեկնաբանմամբ, նրանք արդարություն փնտրելու ճանապարհին յուրաքանչյուր դատավճռի ուժեղ և թույլ կողմերը գիտականորեն կշռում են և այն ինչ ավելի արդար է, գրում են իրենց աշխատությունների մեջ, և իհարկե, այս կարգի իրավաբանները գտնում են, որ պետք է իսլամական իրավունքի սկզբունքների և նորմերի հետ միասին, որ Իրանի իրավական համակարգի հիմքն են կազմում, պետք է կատարել այլ երկրների իրավական համա-կարգերի համեմատական ուսումնասիրություններ: Այս տիպի կարծիքների և գրվածք-ների հեղինակները, ի տարբերություն կրոնական գիտնականների և դատավորների, ավելի ազատ են և ոչ սահմանափակ: Հիմնականում իրավական նախագծերն իրավա-կան ուսմունքների միջոցով և օրենքի շրջանակում ու պետական քաղաքականության հիման վրա են պատրաստվում: Եթե մի ուսմունք կարողանա մի խումբ իրավաբանների և գիտնականների ուշադրությունն իր կողմը հրավիրի և հասարակական ընդհանուր հավանություն ստանա, այն կարող է համարվել արդարության հասնելու տարբերակ:

Կրոնագետների տեսակետները և նրանց հրամաններն Իրանում իրավական սկզբունքների հիմնական մասն են կազմում: Շիա իրավաբանությունն իր հազարամյա պատմությամբ Իրանի իրավական համակարգի, իրավաբանների և դատավորների գրվածքների համար կարևոր հիմք է: Շատ դեպքերում շիա իրավագիտությունը համարվում է ուղեցույց օրենքը մեկնաբանելու կամ դատական ընթացակարգեր

հիմնելու համար: Այն համարվում է նաև կարևոր ուղեցույց արդարադատության փաստաբանության և խորհրդականների համար: Իրականում իսլամական կրոնագետների հրամանների օրինականությունն ակադեմիական իրավագետ դասախոսների ուսմունքների նման, կապված է օրինական ուժի և գիտնականների հեղինակության հետ: Ասվածի լավագույն օրինակն է այն, որ կրոնագետների որոշումները և հրամանները միախառնված են իսլամական քրեական օրենսգրքի 255 հոդվածում: Համաձայն այս հոդվածի, երբ մեկն ամբոխի պատճառով սպանվում է կամ սպանված մարդու դին հայտնվում է փողոցում, իսկ դատավորն էլ չունի փաստեր խմբին հանցագործ համարելու համար, ապա սպանվածի հարազատներին սպանվածի արյան գինը (բեյթ օլմալ) պետք է կառավարությունը վճարի: Այս հոդվածը վերաբերվում է դիտավորյալ սպանություններին, ոչ դիտավորյալ սպանություններին, ինչպես նաև վնասվածքներ հասցնելուն, որ տեղի է ունենում անհայտ անձի կողմից: Այս դեպքում դատավորները հիմք են ընդունում Սահմանադրության 167-րդ հոդվածը, ըստ որի օրենքի բացակայության պայմաններում, պետք է հենվեն կրոնագետների հրամանների վրա, կայացնեն համապատասխան որոշում՝ ստիպելով, որ կառավարությունը վճարի արյան գինը:

Կրոնագետների և իսլամագետների հրամանները և որոշումները կիրառելու դեպքում պետք է հաշվի առնել մի քանի պայման.

- դատավորները իրավունք չունեն սահմանված կարգից դուրս զբաղվել օրենքների մեկնաբանություններով, նրանք չպետք է հրաժարվեն սահմանված օրենքների կատարումից և իսլամագետի որոշումները կամ հրամանները փոխարինեն օրենքով,
- դատավորները պարտավոր են յուրաքանչյուր հրաման և որոշում մանրամասն քննարկման ենթարկել: Ֆաղիհները միմյանց հետ բազմաթիվ խնդիրներ ունեն, օրինակ տղաների և աղջիկների հասունության տարիքի սահմանման շուրջ: Այս դեպքերում անհրաժեշտ է, որ կրոնագետների և իսլամագետների այն որոշումները կիրառվեն, որոնք ավելի համապատասխան կլինեն իսլամական նորմերին և սկզբունքներին,
- հաշվի չառնելով այն մեծ ազդեցությունը, որը իսլամական իրավունքն ունի Իրանի դատական համակարգի վրա, դատավորները իսլամագետների հրամանները

լուսաբանելիս և դրանց վրա հիմնվելիս պետք է հաշվի առնեն դրա պատմական նշանակությունը, ստեղծման ժամանակաշրջանի պայմանները[121]:

Իրավական ուսմունքների և տեսությունների ազդեցությունների չափը: Իրավաբանների կարծիքները և տեսակետները երբևէ համարվել են իրավական աղբյուրներ, որոնց կատարումը հասարակության անդամների համար եղել է պարտադիր: Ռոմանոգերմանական իրավունքի ընտանիքի երկրների համար երկար ժամանակ ուսմունքը համարվել է իրավական աղբյուր: Չնայած որ 13-19-րդ դարերում իրավական որոշումների և օրենքների հիմքը համալսարաններում հանդիսանում էին տեսությունները և ուսմունքները, սակայն ժողովրդավարական մտածելակերպի հիման վրա տարբերի ազգերի մոտ օրենքը եկավ փոխարինելու ուսմունքներին[122]:

Ուսմունքները որպես յուրաքանչյուր երկրի իրավական լեզուներ, կազմվում են տվյալ երկրների գիտնականների և իրավաբանների կողմից և մեկանաբանում են օրենսդիրի օգտագործած բոլոր արտահայտությունները և տերմինները: Օրինակ, հռոմեական հայտնի օրենքը, որը ընդունվեց մ.թ. 426 թ-ին, 5 հանրահայտ իրավաբանների (Փափի Նին, Ուլփին Փոլ, Մոդեսթոն, Գայուս)[123] կարծիքների և ուսմունքների արդյունքն էր: Հարկ է նշել, որ իրավական ուսմունքները դատավորների, փաստաբանների, մեղադրյալների կողմից մեկնվել են տարբեր ձևերով՝ դրանով իսկ փոխելով օրենքի զարգացման ուղին[124]: Իրավական ուսմունքների և տեսությունների արժեքը կախված չէ նրանց հետևորդների քանակից: Այն կախված է տվյալ կրոնական գիտնականի կամ իսլամագետի մտածելակերպից, գիտական աստիճանից և գրաված դիրքից: Իրանի իրավունքում իրավագիտական համալսարանների, ակադեմիաների գիտնականների և կրոնական առաջնորդների տեսություններն ու ուսմունքները համարվում են իրավունքի երկրորդական աղբյուր: Կրոնական գիտնականների և առաջնորդների տեսությունները, ունենալով օրինական ուղղվածություն, գլխավորում են բոլոր իրավական տեսությունները և հիմք են հանդիսանում երկրում շատ օրենքներ

---

[121] Քաթուզյան Ն., Իրավունքի ընդհանուր դրույթները: Ընդհանուր տեսություն, 1-ին տպ., Էնթեշար ԲԸ հրատ., Թեհրան, 2008, էջ 496:

[122] Տե՛ս Դավիդ Ռ., նշվ. աշխ., էջ 139:

[123] Քաթուզյան Ն., Իրավագիտության փիլիսոփայություն, եռահատորյակի առաջին հատոր, 5-րդ տպ., Էնթեշար ԲԸ հրատ., Թեհրան, 2006, էջ 607:

[124] Քաթուզյան Ն., Իրավագիտության փիլիսոփայություն, եռահատորյակի առաջին հատոր, 5-րդ տպ., Էնթեշար ԲԸ հրատ., Թեհրան, 2006, էջ 355:

ընդունելու համար: Իրանի իրավական համակարգը հիմնված է իսլամական աշխարհայացքի և ուսմունքների վրա (Շիա իսլամագետ): Գիտնականների և իսլամագետների կարծիք-ներին ուշադրություն դարձնելը շատ կարևոր է: Պետք է նշել, որ սուրբ գրվածքները (Սուրբ գիրքը և սովորույթները) մեծ ազդեցություն ունեն գիտնականների կարծիքների և մտածելակերպի, ըմբռնման ու օրենքների կանոնների մեկնաբանման վրա:

Ամեն մի խնդիր ճիշտ ընկալելու և օրինական որոշում ընդունելու համար պետք է դիմել նախորդ որոշումներին, ուսումնասիրել ու քննադատել դրանք: Նույնիսկ որոշ իսլամագետների կարծիքով տարբեր տեսությունների ուսումնասիրությունը պարտադիր չէ: Այն կետերը, որոնք չունեն որոշակի պարզություն, համառոտ են, ունեն թերություն-ներ պետք է վարացվեն մեկնաբանությունների միջոցով: Իրանի իրավական դաշտում դա կատարվում է ակադեմիական գիտնականների և իսլամագետների կողմից: Իհարկե չպետք է մոռանալ, որ գիտնականի անձը և անհատական ու հասարակական առանձնահատկությունները մեծապես ազդում են իրավական ուսմունքների և տեսությունների վրա[125]: Իրավունքի գիտնականների տեսություններից և որոշումներից օգտվելն իրավունքի դաշտում իրավական փաստարկների անբաժանելի մասն է կազմում: Եվ այս ձևը ընդունված է շատ երկրներում: Դատական գրքերը լի են նմանա-տիպ նմուշներով: Իրավական ուսմունքներն ու մտքերը երբեք չեն կարող առանձին կանոններ հաստատել, սակայն կարող են անուղղակի ազդել դատական մեթոդների սովորույթների և նույնիսկ օրենքների վրա և փաստ է, որ դրանք մերժելն անհնար է:

Իսլամական իրավունքի մեջ այն ամենը, ինչը կրոնագետների (Ֆաղիհ) հետազոտության և ջանքերի արդյունք է, կոչվում է հրաման (ֆեթվա): Ոչ կրոնական իրավունքի մեջ համալսարանի դասախոսների և մտավորականների ու իրավաբանների կարծիքները կոչվում են ուսմունք: Ինչքան էլ, որ մի կարծիք ճշմարիտ լինի, մինչև դրա վերաբերյալ քննադատություններ չլինեն, այդ կարծիքի ճշմարտացիությունն ի հայտ չի գա: Քննադատման մշակույթը ստեղծում է ինքնազարգացման մի ուղի և պատճառ է, որ հասարակության հոգևոր և նյութական

[125] Նույնը,, էջ 224:

մակարդակը զարգանա: Տեսությունների քննադատությունը մի ձև է, որի օգնությամբ կարողանում են ճիշտ ուղղությամբ մտածել, և այդ ամենը մտածողության համար աճելու ճիշտ ձև է հանդիսանում: Եթե իրավական խնդիրներն ու հարցերը ուշադրությամբ քննարկվի մի գիտական միջավայրում, որի ընթացքում իրավաբանների մտքերի փոխանակում տեղի կունենա, ապա իրավագիտությունը կզարգանա: Օրենսդիր և իրավական մարմինները կարող են օգտվել միմյանց կարծիքներից: Դա կարելի է տեսնել այն որոշումների մեջ, որոնք կայացվում են դատարաններում և օրենքներ ընդունելիս:

Սա է այն պատճառը, որ յուրաքանչյուր երկրի իրավական համակարգի աղբյուր է հանդիսանում տվյալ երկրի ուսմունքներն ու տեսությունները: Իրանի իրավական համակարգը բացառություն չի կազմում: Իրավաբանները ճանաչում և ներառում են սոցիալական, ֆինանսական, քաղաքական փոփոխությունները, երբ դրանք բախվում են թերություններին և բացթողումներին: Իրավաբանները ուսմունքների տեսքով ազդանշաններ են ուղարկում, որպեսզի մարդիկ իմանան, որ կան խնդիրներ և արգելքներ: Գիտնականների և իրավաբանների տեսություններն իրենց մեջ ներառում են զգուշացումներ և ճիշտ ուղղություններ, որոնք տեսականորեն պատճառ են հանդիսանում, որ իրավական օրենքները փոփոխության ենթարկվեն: Սա կարող է նպաստել նրան, որ երկրի իրավական համակարգը ավելի ակտիվ և գործունյա դառնա: Դժբախտաբար, դատական նախագծերի կազմելու և օրենքների ընդունելու ժամանակ մեր երկրում ավելի քիչ են ուշադրություն դարձնում դասախոսների և իրավաբանների տեսություններին: Եթե ուշադիր նայենք Իրանի դատական համակարգին և դա համեմատենք այլ երկրների իրավական համակարգերի հետ, հենվելով բարձրակարգ գիտնականների և իրավաբանների ուսմունքների վրա, ապա կարող ենք Իրանի դատական համակարգի թույլ կողմերը ճանաչել և դրանք ուժեղացնել: Այլ կերպ ասած, եթե մենք փոխենք մեր տեսանկյունը իրավական ուսմունքների վերաբերյալ, և իրավաբանների մեկնաբանությունները օգտագործենք մեր դատական համակարգի մեջ, կարող ենք նաև երկրի դատական գրականությունը հարստացնել: Դատավորների աշխարհայացքը ավելի պետք է խորացնենք և օրենսդիր մարմիններին ուղղորդենք օրենքների վերանայմանն ու ուղղմանը: Ակնհայտ է այն, որ

բոլոր իրավական համակարգերում իսկական և նախնական հիմք է հանդիսանում խիղճն ու ընդհանուր կարծիքները: Ուրմեն տարբերություն չկա սովորույթների, օրենքների, դատական ընթացակարգերի և ուսմունքների միջև: Քանի որ դրանք բոլորը հասարակության անդամների կարծիքին ու խղճին են վերաբերվում և յուրաքանչյուրն իր ձևով է ի հայտ եկել: Նրանց տարբերությունը կայանում է դրանց ներկայացնելու մեջ:

Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակից հետո այս երկրի իրավական համակարգում որոշ փոփոխություններ տեղի ունեցան. ա) քրեական իրավունքի մեջ իսլամական օրենքները դրվեցին նախկինում գոյություն ունեցած դատական պատիժների փոխարեն, բ) որոշ քաղաքացիկան և իրավաբանական խնդիրներում, երբ օրենքի հետ կապված թերացում է նկատվում, պետք է դիմել իսլամական իրավունքի վստահելի աղբյուրին, որովհետև օրենքն իսլամի տեսանկյունից կրոնի հետ համընկնում է և կազմում է դրա մասնիկը:

Ուրեմն չի կարելի կրոնի և օրենքների իսկական հիմունքներց շեղվել կամ փոփոխել դրանք: Եթե Իրանի իրավական համակարգը պատկերացնենք իբրև բուրգ, որի գագաթին Իրանի Սահմանադրությունն է, վերցված իսլամական օրենքներց, ապա այլ օրենքներն ու կանոնակարգերը, դատարանի որոշումները ավելի ցածր մակարդակում են գտնվում: Քանի որ այս օրենքների ճշմարտությունը և ազդեցությունն այն ժամանակ առաջ կգան, երբ այդ օրենքները չհակասեն Իրանի Սահմանադրության և իսլամի օրենքների հետ: Տարբերություն չկա, թե այդ որոշումներն ում վրա են ազդում, մեկ անձի, թե՞ ողջ հասարակության: Ուրեմն Իրանի դատավորները իրավական և քաղաքացիական հարցերում կատարում են Սահմանադրության 167–րդ հոդվածը, հարգելով և հիմնվելով այն օրենքներին, որոնք հաստատվել են խորհրդարանի կողմից:

Պետք է ընդունել որ քրեական հանցանքների ժամանակ ուսմունքները, հրամաններն ու տեսությունները միայն այլընտրանքային ճանապարհ են: Դրանք հանդիսանում են լուսաբանման աղբյուր: Ամեն ինչ պետք է սահմանափակվի օրենքով:

Այս դեպքում կարելի է ասել, որ դատավորներն ունենալով օրենքների լուսաբանման իրավունքն իրենց սահմանների մեջ են աշխատում: Միևնույն ժամանակ քաղաքակրթությանը հետևելուց չեն շեղվում:

Կարելի է այլ աղբյուրներ գտնել Իրանի իրավունքում: Սակայն դրանց քիչ ուշադրություն են դարձնում: Դրա վառ օրինակ է համարվում, իրավական ընդհանուր օրենքները և մտադրությունները: Հարկ է նշել, որ Իրանի իրավական այլ աղբյուներ էլ կան, որոնք կիրառելի չեն և դուրս են եկել գործածությունից, չնայա որ էական դեր են խաղում իրավական հարաբերություններում: Օրինակ, քաղաքացիական օրենքների 277-րդ կետի համաձայն, օրենսդիր մարմնի խղճին հետևելը տրվել է դատավորին, որը պահանջատիրոջ ցանկությունը հաշվի չառնելով պարտապանին ժամանակ է հատկացնում պարտքը վճարելու համար[126]: Դատական ընդհանուր հիմունքները, որոնք քաղաքացիական դատավարության կարգի 3-րդ կետն են կազմում (ընդունված 2001 թ.-ին), ըստ որի դատարանները իրավական ընդհանուր հիմունքների կարիքը չեն զգում, չնայած Իրանի տարբեր օրենքներում դատական հիմունքները նշվել են որպես օրենքի կետ: Օրինակ՝ քաղաքացիական օրենսգրքի 4-րդ կետը և իսլամական դատապատիժների օրենքի 61-րդ կետը ցույց են տալիս, որ դատական ընդհանուր հիմունքները օգտագործվում են օրենքի մեջ:

[126] Տե՛ս Քաղաքացիական օրենսգրքի 277-րդ կետ, ըստ որի պարտատերը չի կարող պարտապանին պարտադրել, որ կատարի պարտականությունների մի մասը: Բայց դատավորը նկատի ունենալով պարտապանի վիճակը կարող է նրան ժամանակ տրամադրել:

ԳԼՈՒԽ 2. ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

§ 1. Իրանի իրավական համակարգի սահմանադրական զարգացման փուլերը և իրանական կրոնապետության իրավական հիմքերի ամրագրումը

Սահմանադրությունը սահմանում է հասարակական և պետական կառուցվածքի ձևերը, քաղաքացիների ժողովրդավարական ազատությունները, նրանց հիմնական իրավունքներն ու պարտականությունները, այդ իրավունքների ու ազատությունների նյութական, իրավական երաշխիքները այլն: Սահմանադրությունը պատմական երևույթ է: Պետությունը և իրավունքը գոյություն ունեն մոտ հինգ հազար տարի, իսկ Սահմանադրությունը՝ երկու հարյուր տարուց քիչ ավելի: «Սահմանադրություն» հասկացությունը լատիներեն բառի թարգմանություն է, որը նշանակում է «հիմնադրել», «սահմանել», «կառուցվածք»: Այդ հասկացությունը հայտնի է եղել ստրկատիրական և ավատատիրական հասարակարգերին: Հին Հռոմում այդպես էին անվանում կայսերական իշխանության առանձին ակտերը, իսկ ավատական որոշ պետություններում՝ խարտիաները, որոնք արտացոլում էին թագավորական իշխանության և ավատատերերի միջև կայացված փոխադարձ զիջումներով համաձայնությունները: Սակայն, Սահմանադրությունը որպես պետության հիմնական օրենք, բուրժուական հեղափոխությունների ժամանակաշրջանի արդյունք է: Պատմության մեջ առաջին սահմանադրությունը ընդունվել է ԱՄՆ-ում: Եվրոպայում առաջին սահմանադրություններն են եղել Լեհաստանի և Ֆրանսիայի Սահմանադրությունները:

18-րդ դարում մարդկությունը գիտակցեց պետական իշխանության լիազորությունները սահմանափակելու անհրաժեշտությունը: Բուրժուական հեղափոխություններն ուղղված էին հենց բացարձակ միապետության դեմ: Այս դեպքում Սահմանադրության ընդունումը պետական իշխանությունը սահմանափակելու եղանակներից էր[127]: ԻԻՀ-ում նույնպես հիմնական օրենքների առկայությունը պետության և ժողովրդի համար երկարատև պատմություն ունի, սակայն

[127] Մադանի Ս.Ջ., Իրանի ժամանակակից քաղաքական պատմություն, Իսլամական հրատարակությունների գրասենյակ, Թեհրան, 2015, էջ 27-28:

համակարգված և գրավոր ձևով ներկայացված Սահմանադրություն այս երկրում ի հայտ է եկել մեկ դար առաջ[128]: Իհարկե ասվածը չի նշանակում, որ թագավորական և միապետական կարգերի պատճառով Իրանում օրենք գոյություն չի ունեցել: Չնայած որ մինչև իսլամական հեղափոխությունը երկիրն անընդհատ գտնվել է թագավորների վերահսկողության տակ, սակայն գոյություն են ունեցել սովորույթային իրավունք, օրենքներ և թագավորները իրենք եղել են այդ օրենքների պահապանները: Հատկապես իսլամի Իրան ներթափանցելուց հետո իրանական շահերը փորձել են իսլամական նորմերը և սկզբունքները հայտարարել պարտադիր կատարման ենթակա, այդ կերպ փորձելով ավելի հեշտ սահմանել իրենց հսկողությունը հասարակության անդամների վրա: Բոլոր դեպքերում Իրանի սահմանադրական պատմությունը կարելի է բաժանել մի քանի փուլերի:

1.1. Իրանի հիմնադիր իրավական կարգերը իսլամացումից առաջ: Մինչև Սահմանադրական հեղափոխության տեղի ունենալը, Իրանի իրավական համակարգի հիմնական սկզբունքը և առանձնահատկությունը երկրում տիրող միապետական կարգերն էին, երբ գահը հորից անցնում էր որդուն: Այս դեպքում երկրում տիրում էր բացարձակ միապետական կարգեր և ոչ մի օրենք չկար, որ կսահմանափակեր շահի իրավասությունը կամ կհաստատեր ժողովրդի ազատությունները: Ոչ մի քաղաքական ուժ կամ անձ չէր կարող դեմ դուրս գալ շահական իշխանության դեմ[129]: Իրանական բոլոր դինաստիաների մեջ Աքեմենյան արքայատոհմը առաջինը և ամենահզորն էր, որ կարողացավ մ.թ.ա. 645-321 թթ. Նեղոս գետից մինչև Հնդկաստան ընկած տարածքները գրավել և ընդգրկել իր տերության մեջ: Այս ժամանակաշրջանում բոլոր իրավունքները՝ այդ թվում մարդկանց հիմնական իրավունքները, հանցագործներին համաներում շնորհելը, օրենքներ հաստատելը եղել է արքաների իրավասության շրջանակներում: Այլ կերպ ասած՝ շահը եղել է երկրի գործադիր, դատական և օրենսդիր իշխանությունների բարձրագույն պաշտոնյան[130]: Ակներև է, որ տվյալ ժամանակահատվածում մարդկանց իրավունքների շրջանակները նույնպես որոշվում

[128] Մալեքմոհամմադի Հ., Երեք վարչակարգը մեկ հայացքով, 1-ին տպ., Իսլամական Հեղափոխության փաստաթղթերի կենտրոն, Թեհրան, 2005, էջ 29:
[129] Bury J.B. et al, The Cambridge Ancient History, Cambridge University Press, 1926, Vol. IV, pp. 185-186:
[130] Ալի-Փաշա Ս., Դատական և օրենսդիր իշխանությունները, երկրորդ հատոր, 1-ին տպ., Իրանշահր, 1964, էջ 142:

էին թագավորների կողմից, սակայն չպետք է կարծել, որ ժողովրդի համար ոչ մի հիմնական օրենքներ նախատեսված չէին: Այստեղ հարկ է նշել Աքեմենյան արքայատոհմի նշանավոր ներկայացուցիչ Կյուրոսի՝ մարդու իրավունքների մասին գրված կանոնադրությունը, որը համարվում է աշխարհի հնագույն փաստաթուղթը մարդու իրավունքների մասին: Այն վկայում է, որ դեռևս մ.թ.ա. 538 թ. իրանական Կյուրոս Մեծ արքան գրել է մարդու իրավունքների և դրանք պահպանելու մասին առաջին հռչակագիրը: Հարկ է նշել, որ այս գործընթացը զարգացավ նաև պարթևների իշանության գլուխ գալուց հետո: Շահի լիազորությունները սկսեցին սահմանափակվել, իսկ վեջինս երկրի համար կարևորագույն խնդիրները լուծելու համար ստիպված էր լինում հաշվի նստել շահական ընտանիքի (արքայի ընտանիքի արական սեռի ներակայցուցիչները, ովքեր չափահաս էին) և պարթև բարձագույն հոգևորականների որոշումների հետ[131]: Պարթևներից հետո 226 թ. Իրանում իշանության գլուխ եկան Սասանյանները, ովքեր մինչև իսլամի երևան գալը համարվում էին վերջին շահական վարչակարգը: Այս ժամանակ Իրանի պետական կրոնն էր զրադաշտականությունը, իսկ Իրանի հիմնական օրենքերի վրա մեծ էր Հռոմի Հուստինիանոս 1-ի կողմից կազմված օրենքների ժողովածուի ազդեցությունը: Իրանական հասարակությունն այդ ժամանակ բաժանվում էր հետևյալ խավերի՝ ա) հոգևորականներ, որոնց անվանում էին քուրմեր, մոգպետներ, բ) զինվորներ, հետևակ, հեծելազոր, որոնց անվանում էին զորք, զորաբանակ, գ) քարտուղարներ, գրողներ, բանաստեղծներ, բժիշկներ, աստղագետներ, դ) առևտրականներ, արհեստավորներ:

Յուրաքանչյուր խավի համար նախատեսված էին հատուկ օրենքներ: Օրինակ՝ յուրաքանչյուր խավի ներկայացուցիչ պետք է ամուսնանար իր խավի մեկ այլ ներկայացուցչի հետ՝ հակառակ դեպքում պիտի զրկվեր ժառանգությունից[132]: Սասանյանների արքայատոհմի ժամանակ աչքի ընկնող օրենքներից մեկը այն էր, որ երեխաները, կանայք, անդամալույծ մարդիկ, անգործունակները, ինչպես նաև պալատականները և հոգևորականները ազատված էին հարկեր վճարելուց: Թագավորը կամ վերջինիս ցուցումով վեզիրներից մեկը հատուկ թերթիկների միջոցով

[131] Ամին Ս.Հ., Իրանի իրավունքի պատմությունը, 2-րդ տպ., Իրանագիտության հանրագիտարան հրատ., Թեհրան, 2007, էջ 140:
[132] Նույն տեղում:

լրացնում էր նրանց անձնական տվյալները և նշում նրանց հարկից ազատված լինելու մասին[133]: Մյուս ուշագրավ փաստը այն է, որ մինչև իսլամի ի հայտ գալը Իրանում գոյություն ունեին հատուկ գրքեր, որտեղ մանրամասն կերպով նշվում էր մարդու հիմնական ազատությունների, բարոյական նորմերի, կանոնադրության մասին և այն օգտագործվում էր որպես մայր օրենք[134]: Չպետք է մոռանալ, որ Սասանյանների օրոք Արտաշիր Պապականը միասնական դարձրեց երկրի կրոնը և պետությունը, ինչի հետևանքով իրավական համակարգը կրոնական բնույթ ստացավ: Քանի որ այդ ժամանակ երկրի պետական կրոնը զրադաշտականությունն էր, ուստի Իրանում գերիշխող էին կրոնի հետ կապված սկզբունքները և նորմերը: Հիմնական օրենքները գտնվում էին հասարակության բարձր խավի, բարեկեցիկ կյանքով ապրող խավի ձեռքին, ովքեր ծանր հարկային քաղաքականություն էին վարում ցածր խավի ներկայացուցիչների նկատմամբ: Այդ իսկ պատճառով էլ հասարակության բոլոր անդամները չէին կարողանում հավասարապես օգտվել սահմանված օրենքներից: Հավանաբար այս փաստը պետք է համարել Սասանյանների արքայատոհմի թույլ պահը, ինչի պատճառով էլ սասանյան զինվորները չդիմադրեցին իսլամական զորքի դեմ: Այդ ժամանակ իսլամը երևան եկավ արդարության և հավասարության քարոզներով, ինչն էլ պատճառ դարձավ, որ մարդկանց մեծ մասը հետաքրքրություն ցուցաբերի նոր կրոնի՝ իսլամի նկատմամբ[135]: Իսլամի հաղթանակից հետո Իրանում սկսեցին կիրառել նոր կրոնից բխող բոլոր սկզբունքները և նորմերը: Նոր կրոնը քարոզում էր հավասարություն, ազատություն, արդարություն:

1.2. Իրանի սահմանադրական զարգացումը 20-րդ դարասկզբի հեղափոխությունից մինչև Փեհլևիների դինաստիայի անկումը: Իրանում առաջին անգամ սահմանադրություն մասին խոսվել է Նասր ադ-դին ղաջար շահի օրոք, երբ սահմանադրական հեղափոխության հետևանքով մայր օրենք նախապատրաստելու աշխատանքներ սկսվեցին և Մոզթաֆեր ադ-դինի օրոք էլ ավարտվեցին: Սահմանադրական հեղափոխության առանձնահատկությունն այն է, որ տվյալ

[133] Ջահեզ Ա., Թագն՝ արքաների բարոյագիտության մեջ, թարգմ.՝ Նոբախտ Հ., 1-ին տպ., Աշիանե Քեթաբ, Թեհրան, 2007, էջ 183:
[134] Նույնը, էջ 196:
[135] Տե՛ս Ղուրանի «Սադ» սուրայի 26-րդ այաթ:

ժամանակահատվածում քաղաքական գործիչները, կրոնական առաջնորդները և Իրանի բնակչությունն առաջին անգամ մոտիկից ծանոթացան արևմտյան պետաքաղաքական զարգացած մտքին, իսկ այնուհետև հավանության արաժանացրեցին երկրի կառավարման քաղաքական նոր համակարգին: Իրանի քաղաքական կյանքում Սահմանադրական շարժումը համարվում է պատմական շրջադարձային մի պահ, երբ առերեսման կանգնեցին հասարակության ավանդական ու ժամանակակից, նոր մտածելակերպերը: Մինչև Սահմանադրական հեղափոխությունն Իրանում գործադիր, դատական և օրենսդիր իշխանությունների տարանջատման սկզբունքը չէր գործում[136]: Այսպես, նահանգներից յուրաքանչյուրի առաջնորդն ինքն էր զբաղվում ծագած խնդիրը լուծելով: Նրանք կարող էին նույնիսկ խնդրին անտեղյակ լինելով հրաման արձակել հանցագործին ազատելու կամ անմեղ մարդուն մահապատժի ենթարկելու մասին: Ի վերջո հասարակության անդամների միջև հավասար իրավունքների բացակայության հետևանքով երկրում դժգոհության մեծ ալիք բարձրացավ: Ժողովուրդը պահանջում էր՝ արդարություն, վերջ տալ մարդու իրավունքների ոտնահարմանը: Ի վերջո ժողովրդի բողոքի ձայնը շահին ստիպեց 1906 թ. հիմնել Մեջլիս, նույն թ. դեկտեմբերին հաստատել Սահմանադրությունը՝ հիմնական օրենքը, իսկ 1907 թ. նոյեմբերին՝ լրացուցիչը:

Հիմնական օրենքը բաղկացած էր հինգ գլուխներից՝ 51 հոդվածով: Հիմնական օրենքին կից լրացուցիչ օրենքը Իրանի Սահմանադրության կարևոր մասն էր կազմում, որ ընդգրկում էր տասը գլուխներ՝ 108 հոդվածներով[137]: Դրանք են՝ ընդհանուր որոշումները, ժողովրդի, խորհրդարանի և ծերակույտի անդամների, միապետության ինստիտուտի, նախարարների, դատական իշխանության, գավառական և մարզային խորհուրդների իրավունքները, ինչպես նաև հոդվածներ ֆինանսների, բանկի վերաբերյալ[138]: Այս Սահմանադրության երկու հիմնական սկզբունքներն էին երկրի կառավարման նորմերի ամբողջությունը և մարդու իրավունքները՝ քաղաքական,

[136] Մալեքմոհամմադի Հ., Երեք վարչակարգը մեկ հայացքով, 1-ին տպ., Իսլամական Հեղափոխության փաստաթղթերի կենտրոն, Թեհրան, 2005, էջ 29:
[137] Բահար Մ., Իրանի քաղաքական կուսակցությունների համառոտ պատմություն, առաջին հատոր, 9-րդ տպ., Ամիր-Քաբիր, Թեհրան, 2013, էջ 123:
[138] Քասրավի Ա., Իրանի Սահմանադրական պատմությունը, Նեգահ, Թեհրան, 2015, էջ 466:

տնտեսական և մշակութային ոլորտներում[139]: Բոլոր դեպքերում մի ակնթարթն էլ բավական է, որպեսզի հասկանանք, որ տվյալ ժամանակաշրջանի իրանական սահմանադրության մեջ էական են եղել հետևյալ երեք սկզբունքները[140]:

1. Ժողովրդական ինքնիշխանություն: Սահմանադրական հեղափոխության արդյունքում ծնված Սահմանդրության հիմնական խնդիրը կայանում էր հետևյալում, որ ժողովուրդը կարողանար մասնակից լինել իր ճակատագրի կերտման գործընթացին: Ենթադրվում էր, որ Մեջլիսի ներկայացուցիչների մի մասը պետք է նշանակվեին շահի կողմից, իսկ մյուս մասին էլ պիտի ընտրեր ժողովուրդը:

2. Միապետի իրավունքները: Այս շրջանի Սահմանդրությունը շահի միանձնյա կառավարումը համարում էր Աստծո բարիք, սակայն շահը իրավունք ուներ միայն զինովրական կոչումներ շնորհել, պատերազմ և խաղաղություն հայտարարել, նախարար նշանակել և պաշտոնից ազատել, Մեջլիսը ցրել և այլն:

3. Ժողովրդի իրավունքները: Այդ Սահմանադրության երկրորդ գլխում նշվում էր այն մասին, որ բոլոր մարդիկ օրենքի առջև հավասար են, ունեն անձի ապահովություն, սովորելու, հասարակական և մշակութային գործունեություն ծավալելու իրավունք, իսկ հարկային քաղաքականության վերաբերյալ սկզբունքները պետք է հաստատվեին Մեջլիսի կողմից[141]:

Սակայն պետք է նշել, որ տվյալ ժամանակահատվածում իսլամից բխող նորմերի և սկզբունքների կիրառումը՝ այդ թվում կանանց ընտրելու կամ ընտրվելու իրավունքից զրկելը, ամուսնալուծության իրավունքը միայն տղամարդուն պատկանելը կամ այն, որ միայն տղամարդը կարող է մի քանի կին ունենալ, գերխնդիր չէր, այլ ավելի կարևոր էր մարդկանց բողոքի ձայնը լսելը և նրանց ապրելու համար արդար և հավասար պայմաններ ստեղծելը: Չնայած այն փաստին, որ Սահմանադրական հեղափոխությունը բավականին լուրջ ձեռքբերումներ ունեցավ մարդու իրավունքների պահպանման ուղղությամբ, սակայն այն երկար կյանք չունեցավ: 1949 թ. Սահմանադրական ժողովի կողմից մտցված փոփոխությունները ընդլայնեցին շահի

---

[139] Սադր Մ., Սադրոլաշրաֆի հուշերը, 1-ին տպ., Վահիդ, Թեհրան, 1985, էջ 212:

[140] Cadoux Ch., Droit constitutionnel et institutions politiques, Theorie generale des institution politique, Edition Cujas, Paris, 1973, p. 109.

[141] Հաշեմի Ս.Մ., Հիմնարար իրավունքներ, առաջին և երկրորդ հատոր, 2-րդ տպ., Ղոմի բարձրագույն համալիր, Ղոմ, 1996, էջ 45:

լիազորությունները, իսկ 1957 թ. նրան տրվեց վետոյի իրավունք: 1967 թ. նա ստացավ բացառիկ լիազորություններ՝ դառնալով երկրի լիակատար միապետը, ով կարող էր որոշել անգամ իր ժառանգորդին[142]: Սահմանադրությամբ Իրանում պետական իշխանությունը բաժանվեց օրենսդիրի, դատականի և գործադիրի:

1907 թ. լրացուցիչ օրենքի 2-րդ հոդվածում նախատեսված էր Սահմանադիր խորհրդում ունենալ հինգ բարձրաստիճան հոգևորական, որոնք պետք է հսկեին հիմնական օրենքի այս կամ այն հոդվածի, ինչպես նաև նրա սկզբունքներին համապատասխանող օրենքների ընդունումը՝ վետո դնելու իրավունքով, սակայն դա չկիրառվեց և կորցրեց իր ուժը, չնայած կարող էր միապետության և շիա հոգևորականության միջև դառնալ փոխհամաձայնության միջոց: Չիրականացվեցին նաև քաղաքական ազատության սկզբունքները: Սահմանադրական միապետության ստեղծելու ձգտումը մնաց չիրականացված: Նախահեղափոխական Իրանը գտնվում էր շահի միահեծան իշխանության ներքո, իսկ Սահմանադրության նորմերը երկրում չէին գործում[143]:

1.3. 1979 թ. հեղափոխությունը և իսլամական Սահմանադրության ընդունումը: ԻԻՀ-ի հռչակումից հետո՝ 1979 թ. մարտին, նոր Սահմանադրության և պետականության ձևավորման խնդիրը դարձավ օրվա հրատապ հարցը: Այդ կապակցությամբ մամուլում իրենց նախագծերով և առաջարկություններով հանդես եկան երկրի քաղաքական տար-բեր ուղղությունների ներկայացուցիչները: Նույն թվականի հունիսին հրապարակվեց իրանական իրավագետների մասնակցությամբ կազմված Սահմանադրության նախա-գիծը, որը քննարկվեց մամուլում[144]: Իմամ Խոմեյնու հրահանգով բարձրագույն հոգևորականությունը սահմանադրական օրենքների վերջնական քնարկման համար ստեղծեց «Փորձագետների խորհուրդ» (Մաջլես-է խոբրեգան)[145]: Դեկտեմբերին հրատա-րակվեց ԻԻՀ-ի Սահմանադրությունը՝ կազմված 12 գլուխներից և 175 հոդվածներից: Ղուրանի պատվիրանների և շարիաթի օրենքների վրա հիմնված Սահմանադրության համաձայն՝ ԻԻՀ-ն իրենից

---

[142] Տե՛ս Ամին Ս.Հ., նշվ. աշխ., էջ 465 և 527:
[143] Նույնը, էջ 613 և 614:
[144] Տե՛ս Սահմանադրության ընդունման համար ընթացող բանակցությունների արձանագրությունների ժողովածու, 4-րդ հատոր, էջ 7:
[145] Իմամ Խոմեյնի Ռ., Սահիֆեյե Նուր (Լույս օրաթերթ), 5-րդ հատոր, 5-րդ տպ., Իմամ Խոմեյնիի աշխատությունների մշակման ու հրատարակման կենտրոն, Թեհրան, 2010, էջ 27:

ներկայացնում է մի համակարգ, որն ամբողջովին հիմնված է կրոնական գաղափարախոսության վրա. բոլոր հոդվածները, օրենքներն ու որոշումները բխում են իսլամի սկզբունքներից[146]: Երկրի մայր օրենքում ընդգրկվեց հոգևոր առաջնոր-դի՝ ռահբարի ինստիտուտը, որը վեր է կանգնած պետական բոլոր կառույցներից: Հարկ է նշել, որ հոգևոր առաջնորդը (ռահբարը) ուղղակի և անուղղակի կերպով մասնակցում է երկրի կառավարման գործերին: Իմամ Խոմեյնու «Վելայաթե Ֆաղիհ» տեսությունը սահմանում է առաջնորդի լիազորություններ և պատականություններ, որոնք շատ նմա-նություն ունեն իմամների հաջորդականության (իմամաթ) համակարգի հետ: Իրակա-նում, Սահմանադրությունն այս նույն տեսության կառուցվածքային և իրավական արտա-հայտիչն է և համարվում է իսլամի հիմնական սկզբունքներից չշեղվելու երաշխավորը: Հետևաբար, կարելի է ասել, որ ԻԻՀ պետական կառուցվածքի տեսական հիմքը «Վելա-յաթե Ֆաղիհ» տեսությունն է, իսկ իրավական հիմքը՝ Սահմանադրությունը, որ համար-վում է այդ տեսության վերլուծության արդյունք ու ամբողջովին հենված է նրա վրա:

1.4. 1989 թ. սահմանադրական բարեփոխումները: Ակնհայտ էր, որ իսլամական հեղափոխությունից հետո հաստատված նոր վարչակարգը, ինչպես նաև այդ վարչակարգի կողմից ընդունված Սահմանդրությունը մի քանի տարի անց պետք է վերանայման կարիք ունենար, քանի որ երկրում ստեղծվել էր մի կողմից հանրապետական և մյուս կողմից իսլամական վարչակարգ: Սահմանադրության վերանայումն այնքան էլ հեշտ գործընթաց չէ, իսկ Իրանն այս առումով բացառություն չէ: Չնայած որ ժողովրդի կողմից ընտրված Սահմանադրական ժողովի փորձագետները առավելագույն ջանքեր գործադրեցին, որպեսզի ընդունվի մի հիմնարար և համապարփակ օրենք, դրանով հանդերձ տաս տարի անց խիստ անհրաժեշտություն առաջացավ վերանայել նրա որոշ հոդվածների դրույթները[147]: Այդ նպատակի համար ԻԻՀ-ի հիմնադիր մեծ այաթոլլահ իմամ Խոմեյնին հրամանագիր արձակեց ԻԻՀ-ի Սահմանադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու

[146] Մալեքմոհամմադի Հ., Երեք վարչակարգը մեկ հայացքով, 1-ին տպ., Իսլամական Հեղափոխության փաստաթղթերի կենտրոն, Թեհրան, 2005, էջ 67:
[147] Նույնը, էջ 44:

մասին: Այս իսկ հրամանագրով այդ աշխատանքը հանձնարարվեց քսան փորձագետների և Մեջլիսի ընտրված հինգ պատգամավորի: Վերջինս Համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհրդի հետ խորհրդակցելուց հետո իր հրամանագրով Նախագահին հանձնարարեց Սահմանադրության վերանայման խորհրդին առաջարկել Սահմանադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարել[148]:

Այս խորհրդի կազմում ընդգրկված են հետևյալ անձիք՝ Սահմանադրության պահպանության խորհրդի անդամները, իշխանության երեք թևերի ղեկավարները, համակարգի նպատակահարմարությունը որոշող հանձնաժողովի մշտական անդամները, հինգ հոգի Բանիմացների խորհրդի կազմից, տաս հոգի երկրի առաջնորդի ընտրությամբ, երեք հոգի նախարարների կաբինետից, երեք հոգի դատական իշխանությունից, տաս մարդ իսլամական խորհրդի մեջլիսի պատգամավորներից, երեք հոգի էլ համալսարանների դասախոսական կազմից: Խորհրդի կազմի ընտրությունը, աշխատանքային ծրագիրը և նրանց ներկայացվող պահանջները կանոնակարգվում էին օրենքով: Խորհրդի որոշումը երկրի առաջնորդի հավանությունից և ստորագրումից հետո պետք է ներկայացվեր հանրաքվեի: Դրանք օրենքի ուժ են ստանում հանրաքվեին մասնակցածների ձայների բացարձակ մեծամասնությունն ստանալուց հետո: Հարկ է նշել, որ փոփոխության չեն կարող ենթարկվել միայն այն հոդվածները, որոնք առնչվում են համակարգի իսլամական և կառավարության հանրապետական բնույթին, այն հոդվածները, որոնցում հայտարարվում է, որ բոլոր օրենքները և իրավական ակտերը հիմնված են իսլամական նորմերի, հավատքի հիմքերի և Իրանի Իսլամական Հանրապետության նպատակների վրա, այն հոդվածները, որոնք առնչվում են «վելայաթ-է ամր»-ի և ումմայի ղեկավարմանը, ինչպես նաև Իրանի պաշտոնական կրոնի և հասարակական կարծիքի վրա հիմնված երկրի կառավարմանը: Այսպիսով, 1989 թ. կատարված ուղղումներից հետո գլուխների թիվը հասավ 14-ի, իսկ հոդվածներինը՝ 177-ի:

---

[148] Մեհրփուր Հ., Հանրապետության նախագահը և Սահմանադրություն իրագործման պարտականությունը, առաջին հատոր, 2-րդ տպ., Էթելաաթ, Թեհրան, 2006, էջ 16:

§ 2. Իրանի պետաիրավական համակարգը որպես կրոնական և աշխարհիկ սկզբունքների զուգակցում

ԻԻՀ պետական կրոնն իսլամն է, այդ իսկ պատճառով էլ այս երկրի իրավական համակարգը հիմնված է իսլամի նորմերի և սկզբունքների վրա: Իսլամի հիմնական սկզբունքներն ամփոփված են հինգ հիմնական կետերում՝ միաստվածություն, մարգարեություն, հարություն, արդարություն, իմամաթ (առաջնորդություն): Այս սկզբունքները իսլամի, միաժամանակ Իրանի իրավական համակարգի և Սահմանադրության հիմքն են կազմում: Պետք է նշել նաև, որ արդարությունը, հավասարությունը, ազատությունը, մարդու արժանապատվությունը, պարտականության զգացումը նույնպես այս կրոնի սկզբունքների կարևոր մասն են կազմում: Թվում է, թե Իրանի օրենսդիրները ջանացել են իսլամի սկզբունքները և նորմերը ներառել երկրի մայր օրենքում՝ այդ կերպ մեկ անգամ ևս հաստատելով վարչակարգի իսլամական լինելու փաստը:

Իսլամում «կրոնի հիմունքներ» ասելով նախ և առաջ պետք նկատի ունենալ այն փաստը, որ իսլամական օրենքների համաձայն յուրաքանչյուր մուսուլման պետք է հավատք ունենա կրոնի սկզբունքների նկատմամբ, դրանք ընդունի և այնուհետև կատարի տվյալ կրոնից բխող սովորույթները և ծեսերը[149]: Այլ կերպ ասած՝ կրոնական սկզբունքները կարելի է համարել յուրաքանչյուր մուսուլմանի հիմնական համոզմունքները, սակայն այդ սկզբունքների կիրառումը և կատարումը, դրանց կիրառման ձևն իսլամի հրամաններից և օրենքներից է: Սուննիների համար ընդունելի է միայն իսլամի երեք սկզբունքները՝ միաստվածություն, մարգարեություն, հարություն: Սակայն շիա ուղղության հետևորդները նշված սկզբունքներին ավելացնում են նաև արդարություն և առաջնորդություն (իմամաթ) սկզբունքները: Եթե ինչ-որ մեկը իսլամի սկզբունքներից որևէ մեկը չի ընդունում, ապա համարվում է իսլամից շեղված և նրան մահամեդական չի կարելի համարել: Իհարկե պետք է նշել, որ այս բոլոր սկզբունքների իմացությունը մուսուլմանների կողմից պարտադիր չէ, այլ յուրաքանչյուր անձ իր կարողությունների հանաձայն պետք է իսլամի սկզբունքների գիտակ լինի և

[149] Կրոնական սովորույթներ՝ նամազ, պահք, ուխտագնացություն, ջիհադ, բարեկամություն իմամների կողմնակիցների հետ, թշնամություն իմամների թշնամիների հետ, հարկերի վճարում:

կարողանա պաշտպանել կրոնական այդ սկզբունքները: Այնուհանդերձ դիտարկելով Սահմանադրության սկզբնական հատվածում զետեղված սկզբունքները, կարող ենք Իրանի իրավական համակարգի հիմքերը բաժանել հետևյալ խմբերի՝ ա) կրոնական համոզմունքների, բ) մարդու կարգավիճակի ժողովրդավարական սկզբունքներ՝ շաղախված Շարիաթի սկզբունքներով ու նորմերով:

2.1. Պետաիրավական համակարգի իսլամական համոզմունքներով պայմանավորված սկզբունքները: Միաստվածություն: Իսլամը միաստվածություն քարոզող կրոն է: Սահմանադրության մեջ, ինչպես նաև Իրանի մի շարք իրավական փաստաթղթերում նշվում է միաստվածության և մեկ կառավարման համակարգ ունենալու կարևորության ու անհրաժեշտության մասին: Միաստվածությունը և մեկ Աստծուն պաշտելը ներկայացվում է որպես իսլամի առաջին և ամենակարևոր սկզբունքը: Այն նշվում է նաև այս երկրի մայր օրենքում՝ միաժամանակ ընդգծելով մուսուլմանների միասնականության, ազատության և հավասարության մասին: Ղուրանում նույնպես բազմաթիվ անգամներ նշվել է միաստվածության կարևորության և անհրաժեշտության մասին[150]: Ղուրանում մանրամասն խոսվում է աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների և երևույթների մասին և նշվում մի առաջնորդի, միաստվածության մասին[151]: Իրականում պետք է նշել, որ միաստվածության սկզբունքը և մեկ Աստծուն պաշտելը համարվում է իսլամական վարչակարգ հիմնելու կարևորագույն պայմաններից մեկը: Այս կապակցության ԻԻՀ Սահմանադրության մեջ նշվում է այն մասին, որ Իրանի վարչակարգը հիմնված է միաստվածության սկզբունքի վրա և բոլորը պետք է հավասար լինեն օրենքի և Աստծո հրամանների առջև:

Մարգարեություն: Մոհամմադի հայտնության և մարգարեության ընդունումը իսլամի մյուս կարևորագույն սկզբունքներից է: Այսինքն, յուրաքանչյուր ոք պետք է հավատա մարգարեին, ով ուղիղ կապ ունի Աստծո հետ: Իսլամական կրոնի համաձայն, մարգարեներին աշխարհ է ուղարկում Աստված, որպեսզի իր հրամանները և խոսքը մարդկանց փոխանցի նրանց միջոցով: Այլ կերպ ասած, մարգարեն համարվում է Աստծո և մարդու միջև կանգնած անձ, միջնորդ, ով կառավարում և

[150] Տե՛ս Ղուրանի «Բաղարա» սուրայի 159-րդ այաթ:
[151] Տե՛ս Ղուրանի «Անբիա» սուրայի 21-րդ այաթ:

առաջնորդում է մարդկանց[152]: Իրականում, Աստված ընտրելով մարգարեներին, տալով նրանց աստվածային ուժ, մեծ ազդեցություն է ունենում մարդ արարածի զարգացման գործընթացի վրա: Յուրաքանչյուր մարգարե, ով ընտրվում է Աստծո կողմից արտակարգ ուժ է ստանում: Մարգարեն համարվում է Աստծո պատվիրանները մարդկանց հաղորդող անձ, այդպիսով կապ հաստատելով մարդկանց և Աստծո միջև: Այս մասին հստակորեն նշվում է ԻԻՀ Սահմանադրության մեջ:

Հարություն: Մահից հետո շարունակվող կյանքին հավատալը նույնպես իսլամի կարևորագույն սկզբունքներից մեկն է, որի մասին նշվում է Իրանի իրավական համակարգում և Սահմանադրության երկրորդ գլխում: Այս սկզբունքի համաձայն մուսուլմանը հավատում է մահվանից հետո գոյություն ունեցող կյանքին: Այս մասին բազմաթիվ անգամներ նշել, ինչպես նաև ապացուցել են մարգարեն և շիա իմամները: Հարկ է նշել, որ մահվանից հետո շարունակվող կյանքի մասին խոսվում է ոչ միայն իսլամում, այլ նաև ուրիշ միաստվածություն դավանող կրոններում[153]:

Իմամի առաջնորդություն: Շիիզմը համարվում է իսլամի հիմնական և ամենամեծ ուղղություններից մեկը, որը հայտարարված է պետական կրոն ԻԻՀ-ում: Այս մասին հստակորեն նշվում է Սահմանադրության 12-րդ հոդվածում: Շիիզմի տեսության համաձայն, իմամները համարվում են մարգարեի իրավահաջորդները և այս փաստը նույնպես համարվում է կրոնի հիմնական սկզբունքներից մեկը: Իսլամական համայնքի, հասարակության առաջնորդը նույնպես եղել է մարգարեն, որին հաջորդել են իմամները, որոնք նույնպես համարվում են Աստծո կողմից ընտրյալներ: Իմամները իրենց առաջնորդությամբ իրականանում շարունակում են մարգարեի ծրագրերը: Շիա ուղղության հետևորդները հատկապես մարգարեից հետո մեծ նշանակություն են տալիս իմամների գործունեությանը: Մարգարեի մահից հետո հավատքը և հնազանդությունը իմամներին համարվում է սունիների և շիաների միջև հիմնական տարբերությունը: Շիաների համոզմաբ Ղուրանը պատվիրում է Աստծուց հետո

[152] Մոթահարի Մ., Իսլամական աշխարհայացքի մասին ներածական ակնարկ, 22-րդ տպ., Սադրա, Ղոմ, 2003, էջ 9:

[153] Շաաբանի Ղ., Իրանի Իսլամական Հանրապետության հիմնարար իրավունքներն ու պետության կառուցվածքը, 34-րդ տպ., Էթելաաթ, Թեհրան, 2009, էջ 80:

ենթարկվել մարգարեին, այնուհետև իմամներին[154]: Նույնիսկ իմամների բացակայության ընթացքում երկրի և իսլամական համայնքի առաջնորդությունը և ղեկավարումը կատարում է հոգևորականը, ով արդարամիտ է, քաջ, իսլամական նորմերի գիտակ և փորձառու: ԻԻՀ Սահմանադրության 5-րդ գլխում նշվում է իմամի դերի և կարևորության մասին՝ որպես իսլամական վարչակարգի մյուս կարևորագույն հիմքերից մեկը:

2.2. Մարդու կարգավիճակի ժողովրդավարական սկզբունքները՝ շաղախված Շարիաթի սկզբունքներով ու նորմերով: Հարկ է նշել, որ իսլամի հինգ սկզբունքները միաժամանակ զետեղված են Սահմանադրության առաջին և երկրորդ գլուխներում, իսկ մի քանի գլուխներն էլ նվիրված են մարդու ազատություններին՝ շաղախված Շարիաթի սկզբունքներով և ժողովրդավարական նորմերով:

Արդարություն և հավասարություն: «Արդարություն» բառի մոտավոր իմաստը կայանում է հետևյալում, որ յուրաքանչյուր անձի տրվի իրեն հասանելիք իրավունքը՝ ոչ շատ, ոչ քիչ[155]: Պլատոնը արդարությունը հասարակական և անհատական առումով դիտարկում էր պարտականությունների կատարման համակարգում[156]: Իրականում արդարությունն այն է, երբ ինչ-որ մեկը ձեռք բերի այն, ինչի իրավունքը ունի և գործի այնպես, ինչպես իրեն է արժանի[157]: Բոլոր կրոններում շեշտվում է արդարության մասին՝ այն համարելով տվյալ կրոնի կարևորագույն սկզբունք[158]: Արդարության կարևորությունը իսլամում այնքան ցայտուն է, որ Ղուրանի զգալի հատված ուղղակի կամ անուղղակի կերպով անդրադարձ է կատարում այս թեմային: Բոլոր դեպքերում արդարությունն իսլամի կարևորագույն սկզբունքներից է և այդ մասին նշվում է Սահմանադրության մեջ: Սահմանադրության 19 և 20-րդ հոդվածներում հստակորեն նշվում է, որ բոլոր մարդիկ՝ կին և տղամարդ հավասար են օրենքի առջև: Ինչպես նաև մարդու գույնը և էթնիկական ծագումը չի կարող առավելության պատճառ

---

[154] Տե՛ս Ղուրանի «Նեսա» սուրայի 58-րդ այաթ:
[155] Մոթահարի Մ., Իսլամական աշխարհայացքի մասին ներածական ակնարկ, 22-րդ տպ., Սադրա, Ղոմ, 2003, էջ 47:
[156] Պլատոնի ստեղծագործությունների շրջանը, թարգմ.՝ Լոթֆի Հ., երկրորդ հատոր, 2-րդ տպ., Խառազմի, Թեհրան, 2011, էջ 374:
[157] Նույնը, էջ 874:
[158] Մոթահարի Մ., Քսան զրույց, 38-րդ տպ., Սադրա, Ղոմ, 2010, էջ 40:

հանդիսանալ մյուս մարդկանց նկատմամբ[159]: Իսլամում արդարության հասնելու համար տարբեր ճանապարհներ է առաջարկվում: Ղուրանում 29 այաթ և 290 սուրահ նվիրված է արդարությանը: Այս առումով Սահմանադրության 107-րդ հոդվածում հստակորեն նշվում է, որ ռահբարը (երկրի հոգևոր առաջնորդը) համարվում է երկրի բարձրագույն անձը, սակայն նա նույնպես օրենքի առջև հավասար է, ինչպես մյուս մարդիկ: Իհարկե այս օրենքում խոսվում է հավասարության մասին և պետք է ուշադրություն դարձնել, որ արդարությունը և հավասարությունը միմյանցից տարբերվում են, իսկ մենք չենք կարող դրանք որպես հոմանիշ և նույն իմաստ արտահայտող բառեր օգտագործել: Հավասարություն նշանակում է որևէ բան հավասարաչափ բաժանել երկու մարդու միջև, սակայն մարդիկ իրենց ընդունակություններով և կարողություններով տարբեր են[160]: Հետևաբար, եթե ինչ-որ մեկն իր ընդունակությունների և կարողությունների հաշվին ավելի լայն գործունեություն ծավալի, և նրան մենք նույնացնենք մեկ այլ անձի հետ, որ ավելի քիչ կարողություն ունի, հավասար դասենք, ապա դա կորակվի անհավասարու-թյուն[161]: Հետևաբար տարբերություն դնելն անձանց միջև, ովքեր ունեն տարբեր ընդունակություններ արդար և ողջամիտ է[162]: Սահմանադրության 3-րդ հոդվածի 12-րդ կետի համաձայն պետությունը պարտավոր է ստեղծել արդար պայմաններ հասարակության յուրաքանչյուր անդամի համար, որպեսզի նրանք կարողանան զբաղվել իրենց նյութական և հոգևոր կյանքի բարգավաճմամբ[163]: Հարկ է նշել, որ հասարակության մեջ հավասարության սկզբունքի արմատավորումը և պահպանումը ոչ միայն Իրանում, այլ նաև միջազգային ասպարեզում բավականին կարևոր է: Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն աշխատատեղերով մարդկանց ապահովելը շատ կարևոր է երկրում աղքատության ծավալների նվազեցման և հասարակական արդարության ապահովման համար և այն համարվում է պետության

---

[159] Տե՛ս Մեհրփուր Հ., նշվ. աշխ., էջ 48:
[160] Մոթահարի Մ., Իսլամն ու ժամանակի պահանջները, առաջին հատոր, 16-րդ տպ., Սադրա, Ղոմ, 2000, էջ 312:
[161] Միրմոեզի Ս.Հ., Իսլամի տնտեսական համակարգը: Հիմունքներ, նպատակներ, ռազմավարական սկզբունքներ և բարոյականություն, 2-րդ տպ., Իսլամական մշակույթի և մտածողության հետազոտական կենտրոնի հրատ., Թեհրան, 2012, էջ 58:
[162] Մոթահարի Մ., Աստվածային արդարություն, 34-րդ տպ., Սադրա, Ղոմ, 2010, էջ 114:
[163] Տե՛ս ԻՀՀ Սահմանադրության 29, 43, 49 հոդվածները:

պարտականություններից մեկը[164]: Իսկ Սահմանադրության 45-րդ հոդվածում հստակորեն նշվում է, որ բոլոր անտառները, ծովերը, հանքավայրերը, հողատարածքները, որոնք չունեն տեր գտնվում են ռահբարի տնօրինության տակ, որոնք պետք է օգտագործվեն մարդկանց բարեկեցության ապահովման համար, այն բաժանեն հավասար և արդար կերպով[165]: Արդարության հաստատման համար նաև այն գույքը, որը ապօրինաբար բռնագրավել են տիրոջից, արդարադատության համապատասխան մարմինների կարգադրություններից հետո, վերադարձվում է իրական տիրոջը: Ուշադրությամբ հետևելով Սահմանադրությանը և Իրանի իրավական համակարգին, կարող ենք գալ այն եզրակացության, որ իսլամական վարչակարգն ինքն է ժողովրդի մեջ քարոզում արդարությունը՝ միաժամանակ մատնացույց անելով անարդարությունը: Այս տեսության համաձայն, պետության միջամտությունը տնտեսության ոլորտում հանդիսանում է արդարության պահպանման երաշխավորը հասարակության մեջ: Այս կերպ իսլամական վարչակարգը կանխում է արդարությունից շեղումը[166]: Այս տեսությանը հակառակ է կապիտալիստական երկրներում առկա տեսությանը, ըստ որի մարդկանց միջև արդարությունը ձեռք է բերվում ինքնաբերաբար, առանց պետության միջամտության[167]: Հետևաբար, կարելի է նշել, որ իսլամի հիմնական նպատակը, որպես Իրանի իրավական համակարգի հիմնական աղբյուր, մարդկանց միջև արդարության հաստատումն է[168]: Սահմանադրության 3-րդ հոդ. 9-րդ կետում նշվում է, որ նյութական և հոգևոր բոլոր ոլորտներում անարդարություններին վերջ տալը համարվում է պետության պարտականությունը:

Մայր օրենքի 3-րդ հոդ. 14-րդ կետում նշվում է նաև, որ մարդկանց՝ կին և տղամարդ իրավունքները պաշտպանելը, նրանց օրենքի առաջ հավասար լինելը, դատական անվտանգության ապահովումը նույնպես պետության

[164] Միրմոեզի Ս.Հ., Իսլամի տնտեսական համակարգը: Հիմունքներ, նպատակներ, ռազմավարական սկզբունքներ և բարոյականություն, 2-րդ տպ., Իսլամական մշակույթի և մտածողության հետազոտական կենտրոնի հրատ., Թեհրան, 2012, էջ 129:

[165] Մոթահարի Մ., Աստվածային արդարություն, 34-րդ տպ., Սադրա, Ղոմ, 2010, էջ 114:

[166] Սադր Մ., Մեր տնտեսությունը, երկրորդ հատոր, թարգմ.՝ Էսփահբոդի, Ղոմի հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի հրատ., Ղոմ, 2001, էջ 272:

[167] Քաթուզյան Ն., Ներածություն իրավագիտության մասին և Իրանի իրավական համակարգի ուսումնասիրումը, 66-րդ տպ., Էնթեշար ԲԸ հրատ., Թեհրան, 2008, էջ 43:

[168] Մոթահարի Մ., Աստվածային արդարություն, 34-րդ տպ., Սադրա, Ղոմ, 2010, էջ 34:

պարտականություններից է: Իհարկե պետք է նշել, որ արդարության և դրա կիրառման վերաբերյալ իսլամական և արևմտյան տեսություններում կան տարբերություններ: Օրինակ իսլամական իրավունքը կնոջ և տղամարդու հավասարությունն անարդար է համարում[169]:

Ազատություն և մարդկային արժանապատվություն: Ազատություն բառը մշտապես եղել է իրավաբանների քննարկման առարկան և նրանցից յուրաքանչյուրը այս տերմինը մեկնաբանել է յուրովի: Բոլոր դեպքերում ազատություն նշանակում է այն, որ երբ մարդը ցանկանում է ինչ-որ գործ կատարել, ոչ մեկ նրան չպետք է ետ պահի այն կատարելուց կամ եթե չի ցանկանում որևէ բան անել ոչ ոք չպետք է ստիպի նրան դա անել: Այս դեպքում պետք է օգտագործենք բացարձակ ազատություն տերմինը: Ազատության համար պետք է նկատի ունենալ երկու կարևոր առանձնահատկություն՝ արգելքի և սահմանափակման բացակայություն և ինչ-որ գործ անելու կամ չանելու ցանկություն: Ակնհայտ է, որ ազատությունը, ինչպես էլ որ մեկնաբանենք նրա հիմքը, մարդու իրավունքների պահապնումն է, անվտանգության ապահովումը, հասարակական համերաշխության ձգտումը, ազգի բարգավաճումը և դավաճանության բացառումը[170]:

ԻԻՀ Սահմանադրությունն ամրագրում է նաև «արժանապատվություն» հասկացությունը: Իսլամական կրոնի համաձայն մարդը ունի շատ բարձր արժանապատվություն: Այս տեսանկյունից մարդու իրավունքների հռչակագրի և ԻԻՀ Սահմանադրության մեջ շատ նմանություններ կան, քանի որ այդ հռչակագրի առաջին կետի համաձայն բոլոր մարդիկ միմյանց հավասար են[171]: Սահմանադրության 32 և 33-րդ հոդվածների համաձայն ոչ մեկի չի կարելի իր բնակության վայրից վտարել կամ ձերբակալել, եթե չկա համապատասխան օրենքով հաստատված փաստաթուղթ[172]: Երկրի մայր օրենքում հստակորեն նշվում է, որ անձի ազատությունների պահպանումը պետության պարտականություններից է, իսկ այս բոլորը ապացուցում է այն փաստը, որ

---

[169] Rawls J., A Kantain conception of equality, Equality; reading in social and political philosophy, edit by Robert M. stewart, Oxford university press, 1996, p. 213.

[170] Ղարավի Ս.Մ., Իրավունքի հիմունքներն իսլամում, 1-ին տպ., Ջահադ-Դանեշգահի, Թեհրան, 1993, էջ 324-325:

[171] Խոսրավի Հ., Ժողովրդավարական ընտրությունների իրավունք, Մաջդ, Թեհրան, 2016, էջ 42:

[172] Ղարավի Ս.Մ., նշվ. աշխ., նույն տեղում:

ազատությունը և մարդու արժանապատվությունը Իրանի իրավական համակարգում կարևորագույն արժեքներ են համարվում: Չնայած որ նշվեց մարդու իրավունքների հռչակագրի և Իրանի Սահմանադրության մեջ զտեղված մարդկային արժանապատվության վերաբերյալ կանոնների միջև նմանության մասին, պետք նշել հետևյալը. ինչքան էլ որ մարդ ազատ է իր ծնված օրվանից և իրավունք ունի անել այն ինչ ուզում է, յուրաքանչյուր մուսուլման պարտավոր է հիշել Աստծո առջև ունեցած իր պարտականությունների կատարման մասին[173]: Չնայած որ Ղուրանում խոսվում է մարդու ազատությունների մասին[174], սակայն Իրանի օրենքներում առկա են այդ ազատությունը սահմանափակող դրույթներ[175]:

Պատասխանատվություն (responsibility): Բարոյական գործոնները համարվում են իսլամի հիմնական և առանցքային սկզբունքներից և փորձ է արվում կարևորել մարդկանց կարծիքը՝ միաժամանակ պահպանելով ժողովրդավարական արժեքները[176]: Հետևաբար, պատասխանատվությունը իսլամական վարչակարգերում բացի ժողովրդավարական, բյուրոկրատական և քաղաքական բնույթ ունենալուց, ինչ-որ առումով մի գործառույթ է, որով պիտի իրականացվի պատասխանատվություն Աստծո առջև: Այդ իսկ պատճառով ԻԻՀ Սասհմանադրությունը նույնպես հետևել է իսլամական նորմերին և սկզբունքներին և երկրորդ հոդվածի 6-րդ կետում նշվում է, որ Իրանում հաստատված վարչակարգը արդար, ազատ և մարդկային արժանապատվությունը գիտակցող վարչակարգ է՝ միաժամանակ «պատասխանատու Աստծո առջև»: Իսլամում նշվում է նաև այն մասին, որ մարդ արարածին ստեղծողը Աստված է, և Աստված է բոլոր իրերի և երևույթների ստեղծողը, հետևաբար ամեն ինչ պատկանում է Աստծուն և ոչ ոք ոչ մի իրավունք չունի, միայն այն դեպքում, երբ ինքը Աստված տա: Հետևաբար Աստված է աշխարհի տերը և ոչ ոք իրավունք չունի իշխելու Աստծո վրա:

Կարող ենք եզրակացնել, որ ինչքան էլ որ մարդը որևէ պայմանագրի կամ փաստաթղթի հիման վրա մեկ այլ անձի դիմաց պարտավորություն է ստանձնում, սակայն նրա իրական պարտավորությունը և պատասխանատվությունը պետք է լինի

[173] Տե՛ս Մեհրփուր Հ., նշվ. աշխ., էջ 48:
[174] Տե՛ս Ղուրանի «Դահր» սուրայի 3-րդ այաթ:
[175] Տե՛ս ԻԻՀ Սահմանադրության 6-րդ հոդվածը:
[176] Քաթուզյան Ն., Իրավունքի ընդհանուր դրույթները: Ընդհանուր տեսություն, 1-ին տպ., Էնթեշար ԲԸ հրատ., Թեհրան, 2008, էջ 95:

Աստծո առջև[177]: ԻԻՀ Սահմանադրության մեջ նշվում է որոշ պաշտոնյաների պատասխանատվության մասին: Օրինակ՝ Մեջլիսի ներկայացուցիչները պատասխանատու են ժողովրդի առջև, երկրի նախագահը՝ ժողովրդի, ռահբարի (հոգևոր առաջնորդի) և Մեջլիսի ներկայացուցիչների առջև: Ցավոք, ոչ մի ակնարկ չկա օրինակ Պահապանների խորհրդի անդամների պատասխանատվության մասին և անհրաժեշտ է, որպեսզի օրենսդիրը մի հոդվածի շրջանակում ամրագրի ժողովրդի և Աստծո առջև գործադիր և դատական իշխանությունն իրականացնողների պատասխանատվության մասին:

2.3. Իրանի պետահրավական համակարգի սահմանադրական հիմքերի և մարդու իրավունքների միջազգային իրավունքի հիմնական նորմերի համեմատությունը: Իրանի իրավական համակարգում, բացի իսլամի հինգ հիմնական սկզբունքներից ներառված են ազատության, պատասխանատվության և արժանապատվության վերա-բերյալ նորմեր, որոնք հանդիսանում են նաև Սահմանադրության հիմնական դրույթները: Հարկ է նշել, որ մի շարք դրույթներ, ինչպիսիք են օրինակ ընտրությունների կամ հանրաքվեների կազմակերպումը, ընդօրինակված է արևմտյան երկրների իրավական համակարգից, սակայն չպետք է կարծել, որ իսլամական իրավունքը նման դրույթներից և հասկացություններից անտեղյակ է եղել: Այսպես օրինակ, մարդու ազատությունը Ղուրանի և իսլամական տեքստերի մեջ բազմաթիվ անգամներ քննարկվել և կարևորվել է: Ըստ այդմ, մարդու արարումը համարվում է Աստծո ամենակարևոր նպատակներից մեկը:

Սակայն պետք է նշել, որ իսլամում ազատությունը հարաբերական հասկացություն է, օրինակ՝ ըստ այս կրոնի անձը կրոն փոխելու իրավունք չունի, իսկ փոխելու դեպքում սպասվում է մահապատիժ[178]: Իհարկե պետք է նշել, որ իսլամի այս սկզբունքները այսօր այս նույն դաժանությամբ չեն գործում: Կամ Սահմանադրության 24-րդ հոդվածում նշվում է, որ մամուլը ազատ է յուրաքանչյուր թեմա քննարկելու հարցում՝ պայմանով, որ պահպանվեն իսլամական նորմերը կամ սկզբունքները: Սահմանադրության 26-րդ հոդվածում նշվում է, որ քաղաքական կամ հասարակական կարգմակերպություններն անկախ և ազատ են, եթե չեն խախտում իսլամական

[177] Նույնը, էջ 114:
[178] Քաթուզյան Ն., Իրավունքի ընդհանուր դրույթները: Ընդհանուր տեսություն, 1-ին տպ., Էնթեշար ԲԸ հրատ., Թեհրան, 2008, էջ 252:

վարչակարգի սկզբունքները և նորմերը: Հստակորեն երևում է, որ ինչպես բոլոր վարչակարգերի դեպքում, այնպես էլ Իրանի վարչակարգի դեպքում քաղաքացու ազատությունը անսահման և անվերջ չէ և այդ մասին հստակորեն նշվում է Սահմանադրության մեջ[179]:

Միաժամանակ պետք է նշել, որ Իրանի իրավական համակարգը ազատությունների և մարդու իրավունքների հռչակագրի հետ դեռևս ունի հակասություններ: Այսպես, օրինակ տղամարդու և կնոջ հավասար չլինելը կամ ապահարզանը որպես տղամադրու մենաշնորհ դիտելը, տղամարդու ժառանգության չափի ավել լինելը և այլն[180]: Այս դրույթ-ները առկա են Ղուրանում, որոնք ընդօրինակվել են Իրանի իրավական համակարգում: Չնայած որ իսլամական հեղափոխությունից հետո այս ոլորտում որոշ բարեփոխումներ են կատարվել, սակայն մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթե-րի և Իրանի իրավական համակարգի միջև դեռևս առկա են հակասություններ[181]:

Հստակորեն երևում է, որ իսլամական մի շարք նորմեր և դրույթներ, որոնք իսլամական վարչակարգի հիմքն են կազմել, այսօր կորցրել են իրենց կարևորությունը: Իսլամական վարչակարգերը հատկապես Իրանի դեպքում չեն կարող դեռևս իսլամի առաջացման ժամանակ ընդունված բոլոր դրույթները կիրառել ներկա պահին[182]: Օրինակ՝ ստրուկ պահելու դրույթը: Չնայած որ այս դրույթը իսլամական երկրներում կորցրեց իր նշանակությունը արևմտյան տերությունների, հատկապես՝ Անգլիայի և Ֆրանսիայի ճնշումների արդյունքնում՝ 19-րդ դարում, սակայն մի շարք աֆրիկյան երկներում այս երևույթը տարածված է: Մավրիտանիայում դեռևս 1960 թ. այն արգելված էր, սակայն միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները 1990 թ. ականատես են եղել այս երևույթին[183]: Հարցաքննությունների ընթացքում պարզ է դարձել, որ վաճառված ստրուկը նշված երկրում չի իմացել, որ այդ երևույթը այժմ արգելված է, իսկ այն կիրառելու դեպքում օրենքով նախատեսված է պատիժ: Այս

[179] Օրինակ՝ ֆրանսիայի Սենատի կողմից ընդունված որոշումը՝ մուսուլմանական հագուստ կրողներին տուգանելու մասին:
[180] Տե՛ս Մեհրփուր Հ., նշվ. աշխ.:
[181] Նույն տեղում:
[182] Տե՛ս Ղարավի Ս.Մ., նշվ. աշխ.:
[183] Քադիվար Մ., Ստրկության հարցը ժամանակակից իսլամում, 1-ին տպ., Թեհրան Քավիր, Թեհրան, 2008, էջ 344-348:

երկրում քարոզում են այն դրույթը, որ հնազանդությունը տերերին նրանց կրոնական պարտականություններից է[184]: Բոլոր դեպքերում Իրանի իրավական համակարգը և Սահմանադրությունը ուսումնասիրելուց հետո գալիս ենք այն եզրակացության, որ այս երկրում վերջին անգամ Սահմանադրությունը վերանայվել է 24 տարի առաջ և ներկայումս անհարժեշտ է, որպեսզի մեկ անգամ ևս երկրի մայր օրենքը վերանայվի, այն համապատասխանեցվի ժողովրդի և հասարակության կարիքներին, որպեսզի հնարավոր լինի ամբողջովին ապահովել մարդու իրավունքները:

§ 3. Մարդու առանձին իրավունքների համընդհանուր հասկացությունը և սահմանադրական կարգավորման առանձնահատկությունները ԻԻՀ-ում

3.1. Քաղաքացիական իրավունքերի էության համընդհանուր ըմբռնումը և ամրագրման վիճակը ԻԻՀ-ում: Ցանկացած քաղաքական և քաղաքացիական իրավունքի էությունն ու արմատները պետք է փնտրել տվյալ երկրում անհատական ազատությունների առկայության մեջ, քանի որ ազատությունը այն հասկացությունն ու իրավիճակն է, որը հնարավորինս նվազագույնի է հասցնում պետության, ժողովրդի և մարդկանց հարկադրանքն անձի նկատմամբ: Ազատությունը նշանակում է հանրային անվտանգության ապահովումն ու հաստատումն օրենքի շրջանակնում: Մի խոսքով ազատությունը այլ բան չէ, քան ցանկալի և կանոնավոր կերպով ունենալ քաղաքացիական և քաղաքացու իրավունքները[185]: «Անհատական ազատություն» կամ «անձնական ազատություն» է կոչվում այն իրավիճակը, որտեղ մարդը չի ենթարկվում ուրիշների միակողմանի և կամայական որոշումներին[186]: Փաստորեն քաղաքացիական իրավունքները և քաղաքական ազատություններն այն իրավունքներն են, որոնք կարգավորում են անհատների ու պետության քաղաքական ուժի միջև հարաբերությունը: Սովորաբար ցանկացած երկրի մարդկանց քաղաքական և քաղաքացիական իրավունքների համալիրն արտահայտվում է տվյալ երկրի սահմանադրության մեջ և դրա միջոցով անհատական ազատությունների որոշմամբ և հստակեցմամբ ինչ-որ կերպ վերահսկվում է այդ պետության իշխանության ուժը:

---

[184] Fleischman J., Human Rights Watch/Africa, Human Rights Watch, 1994, pp. 83-87.
[185] Քաթուզյան Ն., Մտածողության և խոսքի ազատություն, 1-ին տպ., Թեհրանի համալսարանի հրատ., 2003, էջ 16:
[186] Տե՛ս Բուշեհրի Ջ., նշվ. աշխ., էջ 125:

Ընդհանուր առմամբ, ցանկացած երկրի սահմանադրություն պետք է ճանաչի և իր պաշտպանության տակ առնի երեք սկզբունք. ժողովրդի գերիշխանությունը, օրենքի գերիշխանությունը և հասարակության մեջ մարդկանց իրավունքներն ու ազատությունները: Իրանի Սահմանադրությունը ևս ճանաչել է անհատի իրավունքների ու ազատությունների բազմաթիվ տեսակներ և նույնիսկ իսլամի կրոնում ընդունվել է ազատությունների առկայությունը «Էսալաթ-Ալբահա» անվան տակ: Որոշ սովորական օրենքներում, այդ թվում՝ քրեական դատավարության օրենսգրքում, քաղաքացիական օրենսգրքում, իսլամական պատժամիջոցների օրենսգրքում և այլն, ևս կան հոդվածներ, որոնք ամրագրվել են Իրանում բնակվող, քաղաքացիություն կամ կացության կարգավիճակ ունեցող բոլոր մարդկանց և մեղադրյալների իրավունքները պահպանելու համար: Բացի այդ, 2005 թ. Իրանի օրենսդիր մարմինը ընդունեց «Լեգիտիմ ազատությունների հարգումը և քաղաքացու իրավունքների պահպանումը» խորագրով, մեկ հոդվածից բաղկացած օրենքը, որն ունի 15 կետ և ընդգրկում է այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են՝ պարտադրել դատավորներին պահպանելու մեղադրյալի մարդկային իրավունքները կալանավորման ժամանակ, փաստաբան ունենալու իրավունքը, մարդկանց բնակարանների զննումը հատուկ պայմաններում և դատավորի թույլտվությամբ, խոստովանություններ և տեղեկատվություն կորզելու նպատակով մեղադրյալի նկատմամբ հարկադրանքի ու սպառնալիքի կիրառման բացառումը, մեղադրյալի գույքի չարաշահման բացառումը, մեղադրյալի փաստաթղթերում, փաստարկներում և անձնական հարցերում անհարգի միջամտման և ոտնձգության բացառումը և այլն: Ընդգծված է այդ օրենքը խախտողների քրեական հետապնդումը: Նույնիսկ «իսլամական պատժամիջոցների» մասին օրենսգրքի 570-րդ հոդվածում, թեկուզ ընդհանուր և անորոշ կերպով, նախատեսված են պատժամիջոցներ այն պետական ծառայողների նկատմամբ, ովքեր ոտնձգություն են գործել այլոց իրավունքների նկատմամբ կամ ինչ-որ կերպ խախտել են այն[187]:

[187] «Իսլամական պատժամիջոցների» մասին օրենսգրքի 570-րդ հոդվածը. «Ցանկացած պաշտոնյա կամ պետական ծառայող, ով օրենքին հակառակ կխախտի մարդկանց անձնական ազատությունները կամ նրանց կզրկի Սահմանադրության մեջ նախատեսված իրավունքներից, ծառայությունից ազատվելուց և 3-5 տարի ժամկետով պետական պաշտոններ զբաղեցնելուց զրկվելուց բացի, դատապարտվելու է ազատազրկման 6 ամսից մինչև 3 տարի ժամկետով»:

Քրեական դատավարության օրենսգրքում ևս փորձ է արվել պաշտպանել և պահպանել մարդկանց ազատությունն ու անհատական իրավունքները՝ ամրագրելով այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են՝ մեղադրյալի կալանավորման կամ դրա երկարաձգման անհրաժեշտության դեպքերում դատարանի որոշման բողոքարկման իրավունքը, ինչպես նաև դատարանների որոշումների հիմնավորված և փաստարկված լինելու հանգամանքի բողոքարկման իրավունքը[188]: Համենայն դեպս, իրանական օրենսդիրը համեմատաբար լավ աջակցություն է ցուցաբերել մարդու ազատությունների նկատմամբ, սակայն քանի որ գործնականում ոստիկանությունն ու իրավապահ մարմինների աշխատակիցներն են ամենավերջինը զեկուցում դատավորին, ուստի շատ դեպքերում դժվար է ապացուցել իրավապահ մարմինների օրինախախտումները: Բացի այդ, Իրանի օրենքներից ոչ մեկում սահմանված չեն քաղաքական ու քաղաքացիական իրավունքներն ու անհատական ազատությունները:

3.2. Անհատական ազատությունների ապահովման համաշխարհային համակարգերը և ԻԻՀ-ի սահմանադրական մոտեցումն այդ հարցում: Քաղաքական ու քաղաքացիական իրավունքները մարդու իրավունքների լայն հասկացությունից և քրիստոնեաեվրոպական ու մշակութային ավանդույթներից կազմված մի համադրություն է: Վերածննդի դարաշրջանում հումանիստական (մարդկային անհատի գերակայության) գաղափարախոսության առաջացումից հետո ներկայացվել է ազատ մարդու և ինքնակառավարման գաղափարը, ըստ որի, պետք է հարգված լինեն մարդու բնածին արժանապատվությունն ու անհատական առանձնահատկությունները և դա պետք է լինի հասարակության բոլոր սկզբունքների ու ընթացակարգերի հիմքը[189]: Ժամանակակից տեսքով քաղաքական ու քաղաքացիական իրավունքների գաղափարը, առաջացումն ու ձևավորումը սերում է 17-18 դարերում Ամերիկայում, Անգլիայում և Ֆրանսիայում տեղի ունեցած հեղափոխություններում գերիշխող տեսություններից, որտեղ մի շարք փիլիսոփաներ, ինչպիսիք են՝ Գրոցիուսը, Թ. Հոբսը, Ջ. Լոքը, Ժ.Ժ. Ռուսոն, Մոնտեսքիոն և այլոք, նոր տեսակետներ ներկայացրին պետություններում իշխանությունների ու մարդկանց հարաբերությունների,

[188] Տե՛ս «Քրեական դատավարության» մասին օրենսգրքի 33-37-րդ հոդվածները:
[189] Մասայելի Մ., Մարդու իրավունքների նոր սերունդ // Արտաքին քաղաքականություն, 6(10), Թեհրան, 1992, էջ 163-165:

քաղաքական ու անհատական ազատությունների և մարդու իրավունքների մասին: Իրանում ևս մի շարք գիտնականներ, ինչպիսիք են՝ Խաջե Նասիրեդին Թուսին, Մոհամմադ Ղազալին, Սաադին, Նիզամի Գյանջևին (Գանձակեցին) և այլոք, իրենց աշխատություններում անդրադարձել են մարդկանց քաղաքական ու քաղաքացիական անհատական ազատությունների և իրավունքների պահպանման ու դրանց նկատմամբ կառավարությունների պարտականությունների հարցին[190]:

Ցանկացած իրավական համակարգում մարդու ազատությունները կարելի է դասակարգել երկու գլխավոր խմբերի՝ անհատական ազատությունների և հավաքական ազատությունների: Անհատական կամ անձին պատկանող ազատություններն ու իրավունքները բխում են այն պարզ մտքից ու գաղափարից, որ մարդը պետք է լինի ազատ անհատ, պաշտպանված իր մարմնի, հոգու և անձնական կյանքի նկատմամբ անօրինական ու կամայական ոտնձգություններից: Ամեն դեպքում, անհատական ազատությունների կիրառման ու իրագործման համար աշխարհում կա երկու ընդհանուր մոտեցում:

Առաջին մոտեցման դեպքում իրավական կարգավորումն իրականացվում է այնպես, որ քաղաքացիները, առանց ճանաչված ազատությունների նկատմամբ որևէ սահմանափակության, իրացնում են համապատասխան ամրագրված իրավունքները և գործում են դրանց շրջանակներում, ընդ որում անհրաժեշտ չէ պետության որևէ գործադիր կամ վարչական իշխանություններից ստանալ թույլտվություն կամ արտոնագիր և այս կապակցությամբ մարդկանց ու քաղաքացիների համար միակ սահմանափակումն օրենքն է, որի դրույթները պետք է պահպանվեն ամեն դեպքում[191]:

Երկրորդ համակարգի վրա հիմնված իրավաբանական մոտեցման մեջ մարդը չունի ամբողջական լիազորություն իրացնելու և կիրառելու իր իրավունքներն ու վարքագիծը, քանի որ ազատություններն իրագործելուց և կիրառելուց առաջ պետք է կանխավ ստանա թույլտվություն: Այս թույլտվությունը սովորաբար ձեռք է բերվում պետության համապատասխան գործադիր կամ վարչական իշխանություններից: Թեև

[190] Աբբասի Բ., Մարդու իրավունքներե և հիմնարար իրավունքները, 1-ին տպ., Դադգոսթար, Թեհրան, 2011, էջ 47:

[191] Morange J., La protection constitutionnelle et civile de la liberte d'expression, Revue internationale de droit comparé, 42(2), Paris, 1990, pp. 771-787.

վարչական իշխանությունները պարտականություն ունեն դիմողներին տրամադրել այդ արտոնագիրը, սակայն փաստը ցույց է տվել, որ համապատասխան մարմինները հաճախ տարբեր պատրվակներով, ինչպիսիք են՝ բարոյական իրավասություն չունենալը, անհատի կոռումպացված լինելը կամ հասարակական կարգի հետ հակասելը և այլն, հրաժարվել են դիմորդներին տրամադրել այդ արտոնագիրը: Այս մոտեցումն ինչ-որ չափով հակասում է մարդու ազատատենչ հոգեբանությանը, քանի որ ազատությունների իրագործումն ու կիրառումը պայմանավորում է իշխանություններից թույլտվության ձեռքբերմամբ: Ցավոք սրտի, Իրանի իրավական համակարգում երբեմն ղեկավարվում են այս մոտեցմամբ: Օրինակ՝ ցույցերի և հանրահավաքների կազմակերպման համար անհրաժեշտ է իշխանություններից ու պետական մարմիններից ստանալ արտոնագիր[192]:

Ինչևէ, ակնհայտ և բնական է, որ իրավական համակարգերը ձգտում և ցանկանում են, որ գոնե ձևականորեն ինչ-որ կերպ պաշտպանեն անհատական ազատությունները ղեկավարվելով առաջին խմբի տեսակետով և այդ ազատությունների պահպանման հարցում իրենց համարել պարտավորված: Սակայն երբեմն այդ աջակցությունը թերի և անբավարար է որոշ սահմանափակումների պատճառով: Օրինակ՝ Իրանի Սահմանադրության 20-րդ հոդվածում նշված է. «Ազգի բոլոր մարդիկ, կին թե տղամարդ, հավասարապես գտնվում են օրենքի պաշտպանության տակ և իսլամական նորմերի պահպանմամբ ունեն մարդկային, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային բոլոր իրավունքները»: Թեև առաջին հայացքից թվում է, որ Սահմանադրությունը նկատի է ունեցել բոլոր իրանցի մարդկանց, բայց գործնականում իսլամական կրոնական սահմանփակումների առումով Իրանի իրավական համակարգում հավասար իրավունքներ չունեն մուսուլմանները՝ ոչ մուսուլմանների համեմատ, իսկ կանայք տղամարդկանց համեմատ: Իհարկե, Սահմանադրության մյուս հոդվածներում կրոնական փոքրամասնություններին ճանաչելով, թվում է, թե նշված հոդվածում «իսլամական նորմերի պահպանմամբ» արտահայտության ամրագրումը

[192] Քաթուզյան Ն., Մտածողության և խոսքի ազատություն, 1-ին տպ., Թեհրանի համալսարանի հրատ., 2003, էջ 121:

անհրաժեշտ չէր, որովհետև ակնհայտ է, որ այդ արտահայտությունը չի նշանակում, որ բոլորը պետք է մահմեդական լինեն, որպեսզի ունենան հավասար քաղաքական ու քաղաքացիական իրավունքներ, և լավ կլիներ, որ օրենսդիրը «իսլամական նորմերի պահպանման» արտահայտության փոխարեն օգտագործեր «օրենքի, ընթացակարգերի և համապատասխան իրավական սկզբունքների պահպանման» արտահայտությունը, որպեսզի հարցը ընդգրկեր նաև հասարակության բոլոր փոքրամասնություններին:

3.3. Քաղաքացիական ու քաղաքական առանձին իրավունքների ու ազատությունների կարգավորման առանձնահատկություններն Իրանում: Իրանի Սահմանադրության 22-րդ հոդվածում նշված է. «Անձանց հեղինակությունը, կյանքը, գույքը, իրավունքները, բնակարանն ու աշխատանքը պաշտպանված են ոտնձգությունից, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերում»: Այս հոդվածի իմաստը կայանում է նրանում, որ լեգիտիմ և օրինական ազատություններից օգտվելու համար մարդկանց հարկավոր չէ ստանալ որևէ թույլտվություն, քանի որ ազատությունը մարդկանց բնատուր իրավունքներից է:

Ամեն դեպքում իսլամում ազատությունը պայմանական հարց չի համարվում, այլ այն բնատուր երևույթներից մեկն է, որը մարդուն շնորհվել է Աստծո կողմից[193] և հենց այդ իսլամական մոտեցման հիման վրա էլ Իրանի իրավական համակարգում Սահմանադրության բազմաթիվ հոդվածներից բացի, այլ օրենքներում ևս օրենսդիրի կողմից նախատեսված են հոդվածներ մարդու քաղաքացիական ազատությունները պաշտպանելու ուղղությամբ: Դրանցից կարելի է նշել իրավաբանական բնութագրի նախատեսումը մարդու համար, ինչպես նաև ստրկության և ճորտության արգելքը, որը հստակորեն նախատեսված է 2005 թ. ընդունված «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի» մասին օրենքում, իսկ օրինախախտների համար սահմանված են պատժամիջոցներ: Ի հեճուկս իսլամական գաղափարների, Իրանի իրավական համակարգում այդ օրենքի ընդունմամբ մերժվում է այն տեսակետը, որ գոյություն ունենան ինչ-որ մարդիկ որպես ստրուկ առանց անձի բնութագրի, ովքեր կարող են ունենալ միայն պարտականություններ: Այս կապակցությամբ կարելի է մատնանշել նաև արգելքը խոշտանգումների նկատմամբ, որը անձի նկատմամբ ֆիզիկական և

[193] Տե՛ս Շաաբանի Ղ., նշվ. աշխ., էջ 112:

հոգեբանական սաստիկ տանջանքների դիտավորյալ կիրառումն է: Ի պաշտպանություն այս տեսակետի իրանական խորհրդարանը վավերացրել է 1984 թ. ընդունված «Խոշտանգումների արգելման մասին» կոնվենցիան: Նշված հատուկ օրեքներից բացի, մի շարք այլ ընդհանուր օրենքների հոդվածներ, ինչպիսիք են Սահմանադրության 38-րդ հոդվածը, 2000 թ. ընդունված Իրանի քրեական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածը և 2005 թ. ընդունված քաղաքացու իրավունքների պահպանման մասին օրենքի 9-րդ կետը, ևս արգելել են խոշտանգման ցանկացած տեսակը[194]: Խոշտանգումների արգելումից բացի, Իրանի իրավական համակարգում արգելված են նաև ոչ մարդկային, նվաստացուցիչ ու բռնակալական վերաբերմունքները: Այս կապակցությամբ դատական իշխանության ղեկավարի ընդգծմամբ և ավելի մանրամասն հանգամանքների նշմամբ, մարդու իրավունքներին դեմ հանդիսացող նման արարքները արգելվեցին 1994 թ. ընդունված քրեակատարողական հիմնարկների և ուղղիչ ու վերադաստիարակման միջոցառումների կատարողական կանոնակարգի 176-րդ հոդվածի միջոցով և մինչև անգամ բացարձակապես արգելվեցին հայհոյանքը, վիրավորանքն ու բռնի արարքների կիրառումը:

Կյանքի և ապրելու իրավունքը: Ցանկացած մարդու բնածին և հիմնարար իրավունքներից է ապրելու և կյանքը շարունակելու իրավունքը: Այս իրավունքը համարվում է մարդկանց ամենասկզբնական իրավունքներից մեկը, որովհետև մարդու բոլոր իրավունքներն ու դրանց իրացումը կախված է նրա կենդանությունից ու ողջ լինելու հանգամանքից և մարդու կենդանի չլինելով, անիմաստ է դառնում նրա համար ցանկացած իրավունքի առկայությունը: Այս իրավունքի արմատները բխում են այն մտքից, որ կյանքը Աստծո կողմից մարդուն շնորհված պարգև ու բարիք է և որևէ մեկը կամ ոչ մի խումբ կամ պետություն չի կարող մարդուց խլել այդ իրավունքը և միայն սահմանափակ դեպքերում է, որ օրենքը կարող է թույլ տալ ոտնձգություն գործել

[194] «Իսլամական պատժամիջոցների մասին» օրենսգրքի 578-րդ և 587-րդ հոդվածների համաձայն, նման արարքներ կատարողների համար նախատեսված է ազատազրկման պատիժ 6 ամսից 3 տարի ժամկետով:

մարդու կյանքի նկատմամբ և ինչ-որ մեկին զրկել կյանքից[195]: Իհարկե, իրենց քաղաքացիների ու մարդկանց ապրելու իրավունքը պաշտպանելու հարցում կառավարությունների պարտականությունները այսօր չեն սահմանափակվում միայն նրանց կյանքը պաշտպանելու, հանցագործության իրականացումը կանխելու և հասարակական կարգը ապահովելու հարցերով, այլև այս իրավունքը ներառում է նաև այլ իրավունքներ, ինչպիսիք են՝ սնվելու իրավունքը, հագուստ ունենալու իրավունքը, աշխատելու իրավունքը, բնակարան ունենալու իրավունքը, առողջության պահպանման իրավունքը, կրթության իրավունքը և այլն, որովհետև առանց այդ իրավունքների առկայության, խոցելի կլինեն մարդու ապրելու իրավունքն ու այլ անհատական ազատությունները: Սոված, հիվանդ, գործազուրկ, ապրելու համար առողջ ու բարենպաստ միջավայր չունեցող, նվազագույն մակարդակի գրագիտությունից ու գիտելիքներից զուրկ մարդու համար հնարավոր չէ ունենալ այդ ազատությունները[196]:

Խոսքի ազատությունը. համընդհանոր հասկացությունը և իրանական սահմանադրական կարգավորումը: Այս անհատական ազատությունը Իրանի օրենսդրության՝ Սահմանադրության մեջ հիշատակվում է որպես «խոսքի ազատություն»: Այս ազատությունը, որը համընդհանուր ազատություններից է, բխում է մարդու բնական իրավունքներից: Խոսքի ազատությունը բազմաթիվ այլ ազատությունների իրացման և կիրառման միջոցն է: Օրինակ՝ մտքի ազատությունը անիմաստ է առանց խոսքի ազատության, միայնակ չի կարող ապահովել մարդու բոլոր կարիքները և անօգուտ ու անարժեք է դառնում առանց խոսքի ազատության: Խոսքի ազատությունը նշանակում է, որ մարդիկ ազատ են գրքեր և հոդվածներ գրելու, օրաթերթեր ու պարբերականներ հրատարակելու և ելույթներ ու դասախոսություններ ունենալու հարցերում: Բացի այդ, ցանկացած պետության մեջ խոսքի ազատությունը մարդու իրավունքների սկզբունքների պահպանման նշաններից է: Գաղափարի ազատությունը, հատուկ տեսակետին ու գաղափարին հետևելու մարդկանց չստիպելը կամ կոնկրետ կարծիք ունենալու համար մարդկանց նկատմամբ պատիժների ու ոտնձգությունների բացառումը մարդու իրավունքների բնագավառի կարևոր հարցերից

[195] Թաբաթաբայի Մոթմենի Մ., Մարդու իրավունքներն ու ընդհանուր ազատությունները, 5-րդ տպ., Թեհրանի համալսարանի հրատ., Թեհրան, 2012, էջ 40:
[196] Տե՛ս Աբբասի Բ., նշվ. աշխ., էջ 74:

են, որոնք նախատեսվել ու ընդգծվել են բոլոր միջազգային փաստաթղթերում: Մտքի ու գաղափարի ազատությունը, խոսքի ու գրելու ազատությունը և գործելու ազատությունը ոչ միայն մարդու անվիճելի իրավունքներից են, այլև մարդու էության գլխավոր հատկանիշներից են, որոնցից կախված է մարդու գոյությունը: Ի հեճուկս քաղաքական ազատության, որը բնորոշ է միայն տվյալ պետության քաղաքացիներին, խոսքի ազատությունը ցանկացած երկրի բնակչության բոլոր մարդկանց համար է, նույնիսկ եթե չլինեն այդ երկրի քաղաքացին: Սովորաբար ոչ մեկ չի կարող խլել այդ իրավունքը, քանի որ այն միաձուլված է մարդու էության, կյանքի ու գոյության հետ և քաղաքացիական օրենսգրքի 960-րդ հոդվածն էլ ընդգծում է այդ հանգամանքը[197]:

Խոսքի ազատությունը խիստ ուշադրության է արժանացել նաև իսլամում: Ս. Ղուրանում կա մոտ 300 այաթ մտածելու և մտածմունքն արտահայտելու մասին: Մարդկանց ճնշելն ու բռնանալը որոշակի գաղափար ունենալու կամ ինչ-որ հատուկ տեսակետ չընդունելու համար, ինչպես նաև մարդկանց պատժումն ու ժողովրդի հավատաքննումը կրոնական իշխանությունների կողմից, մասնավորապես միջնադարյան Եվրոպայում, երևույթներ են, որոնք ունեն պատմական անցյալ: Իհարկե, ժամանակակից իրավաբանական աշխարհը մերժել է այդ մտածելակերպը, պետությունների ներքին օրենքներում և միջազգային փաստաթղթերում ընդունվել են մարդկանց ու քաղաքացիների անվիճելի իրավունքները՝ գաղափարի ու խոսքի ազատության հարցում: Ցավոք սրտի, Իրանի Սահմանադրության մեջ որևէ հոդված ընդհանուր կերպով չի հատկացվել խոսքի ազատությանը, ինչպիսին նախատեսված է բազմաթիվ պետությունների սահմանադրությունների մեջ, մինչդեռ քաղաքական ու քաղաքացիական ազատությունների թեմայի նշանակությունն ու զգայունությունը առաջացնում է այն անհրաժեշտությունը, որ օրենսդիրը գոնե մեկ առանձին ու ամբողջական հոդված հատկացնի միայն խոսքի ազատությանը և զբաղվի դրա պարզաբանմամբ ու բնութագրմամբ: Ներկայումս Սահմանադրության որոշ հոդվածնե-րում, որպես անուղղակի աղբյուր, ցաք ու ցրիվ կերպով խոսվում է խոսքի ազատության մասին: Օրինակ՝ Իրանի Սահմանադրության 175-րդ հոդվածը փաստում է. «Իրանի

[197] Քաթուզյան Ն., Մտածողության և խոսքի ազատություն, 1-ին տպ., Թեհրանի համալսարանի հրատ., 2003, էջ 103:

Իսլամական Հանրապետության ռադիոյում և հեռուսատատեսությունում պետք է ապահոված լինեն խոսքի ազատությունն ու մտքերի տարածումը՝ պահպանելով իսլամական նորմերն ու Հանրապետության նպատակահարմարությունը և ...», կամ էլ այն, որ խորհրդարանի պատգամավորները ունեն խոսքի ազատություն խորհրդարանում իրենց մտքերը արտահայտելու համար: Սակայն այդպիսի հոդվածները ներառում են միայն կոնկրետ դեպքեր, ընդ որում այդ հոդվածներում էլ, ցավոք սրտի, խոսքի ազատությունը ներկայացվել է պայմանական կերպով: «Պահպանելով իսլամական նորմերն ու Հանրապետության նպատակահարմարությունը» ընդհանուր արտահայտությունից պարզ չէ, թե կոնկրետ ո՞ր իսլամական նորմերն են նկատի առնվում, իսկ Հանրապետության նպատակահարմարությունը որոշող մարմնի կամ չափանիշի չհստակեցումը խախտում է մի շարք հոդվածներ, ինչպիսին է՝ Սահմանադրության «հանցագործության ու պատժամիջոցի օրինականության» մասին հոդվածը: Այդպիսի ընդհանուր կերպով օրենքի կազմումը խնդրահարույց է և բնականաբար ճիշտ էլ չէ:

Աշխատանքի և գործունեության ընտրության ազատության հիմնահարցը: Մարդու անհատական ազատության տեսակներից է նաև բնակարանի և աշխատանքի ընտրության ազատությունը: Իսլամի նորմերի և սկզբունքների համաձայն, «հարամ» (ապօրինի) չհամարվող ցանկացած գործով կամ աշխատանքով զբաղվելը թույլատրելի և անարգելք է և իսլամական իրավաբանության գրքերի մեծ մասում Շիա դավանող հոգևորականներն ու իրավաբանները որոշակի հատվածներ են հատկացրել այդ հարցին՝ «ձեռնարկատիրություն» կամ «առևտուր» անվան տակ: Իրանի Սահմանադրության 28-րդ հոդվածում նշված է. «Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի ընտրելու այն աշխատանքը, որը նա ցանկանում է և չի հակասում իսլամին, հանրային նպատակահարմարությանը և մյուսների իրավունքներին...»: Այսպիսով, աշխատանք ընտրելու իրավունքը պաշտոնապես ճանաչվել է:

Աշխատանք ընտրելու իրավունքը և ձեռնարկատիրության ազատությունը ազգաբնակչության հիմնարար ազատություններից են, այն իմաստով, որ ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ կարող է, առանց որևէ սահմանափակության, զբաղվել իր ցանկալի աշխատանքով ու ցանկացած տեսակի տնտեսական գործունեությամբ և ո՛չ կառավարությունը, ո՛չ էլ որևէ մեկը չեն կարող այդ առումով

մարդկանց համար ստեղծել սահմանափակումներ: Միջազգային իրավունքում մարդկանց հիմնարար իրավունքներից են համարվում աշխատելու, հարմար աշխատանք ընտրելու և հավասար աշխատանքի դիմաց հավասար աշխատավարձ ստանալու իրավունքը, ինչպես նաև աշխատանքի ապահովման ու ձեռքբերման հարցում էթնիկական, լեզվական ու կրոնական խտրականություններից զերծ մնալը, իսկ կառավարությունների պարտականությունն է համարվում անհրաժեշտ պայմանների ապահովումը այդ նպատակները կյանքի կոչելու համար[198]: Սակայն Իրանի ներքին իրավական համակարգում Սահմանադրության 28-րդ հոդվածի համաձայն, աշխատանքն ու զբաղվածությունը երկու առումով գտնվել են օրենսդիրի ուշադրության կենտրոնում. Նախ, Իրանում մարդիկ ազատ են իրենց աշխատանքի տեսակն ու ձևը ընտրելու հարցում, երկրորդը՝ մարդկանց ընդունակություններին, կարողություններին ու հնարավորություններին համապատասխան աշխատանք ունենալն սկզբնական իրավունքն է, որը արժանացել է ուշադրության: Սահմանադրության համաձայն, որևէ մեկը չպետք է խնդիրների բախվի իր անհատականության վիճակին համապատասխան աշխատանքի բացակայության պատճառով, իսկ կառավարությունը պետք է իր հանրային եկամուտների ու պետական բյուջեի միջոցներով աջակցություն ցուցաբերի աշխատանք չունեցող ու գործազուրկ մարդկանց: Թեև 1990 թ. ընդունված աշխատանքի մասին օրենքի 38-րդ հոդվածի համաձայն, կին և տղամարդ աշխատավորներին պետք է վճարվի հավասար աշխատավարձ և ալգլեված է տարիքի, սեռի, էթնոսի, ցեղատեսակի, քաղաքական ու կրոնական համոզմունքների հիման վրա խտրականությունը աշխատավարձի չափի որոշման հարցում, այնուամենայնիվ, Իրանի իրավական համակարգում որոշ աշխատանքներով զբաղվելը հատուկ է միայն տղամարդկանց և հաշվի է առնվում նաև նրանց կրոնական համոզմունքները: Օրինակ՝ իսլամական իրավաբանների գերակշռող մասի կարծիքով, դատավոր լինելը մի աշխատանք է, որը հատուկ է միայն տղամարդկանց և հենց այդ տեսակետից ելնելով, Իրանի օրենսդրության համաձայն[199], առայժմ կանանց արգելված է զբաղվել դատավորի աշխատանքով: Նաև որոշ

[198] Տե՛ս Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 23-րդ հոդվածը:
[199] Տե՛ս 1983 թ. ընդունված «Դատավորների նշանակման մասին» օրենքը:

աշխատանքներով զբաղվելը և պետական հիմնարկներում աշխատանքի ընդունվելը պայմանավորված է նրանով, որ անձը լինի մահմեդական կամ Սահմանադրության մեջ ընդունված կրոններից որևէ մեկի (քրիստոնեություն, հրեականություն և զրադաշտականություն) դավանողը[200], ինչը բխում է իսլամի գաղափարներից: Այս երկակիությունն ու աններդաշնակությունը, երբեմն էլ Սահմանադրության հետ սովորական օրենքների անհամապատասխանությունը, որը պայմանավորված է «Պահապանների խորհրդի» թերացումներից, սովորական օրենքներում առաջացրել են ժողովրդի և օրենքն իրագործողների համար անորոշ ու մոլորեցնող կետեր:

Բնակարանի և բնակարանի անձեռնմխելիության իրավունքները: Իրանի Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր իրանական ընտանքի ու անհատի իրավունքն է ունենալու իր կարիքին համապատասխան բնակարան, իսկ կառավարությունը պարտավորություն է ստանձնել՝ պահպանելով առաջնահերթությունն՝ առավել կարիքավորներին, հատկապես գյուղացիների ու աշխատավորների համար, ապահովել Սահմանադրության այս հոդվածի իրագործման պայմանները: Այս կապակցությամբ հարկավոր է հաշվի առնել մի շարք հանգամանքներ: **Առաջին**, ըստ Սահմանադրության, բնակարան ունենալն անհատի համար պարտականություն չէ, այսինքն՝ անձը կարող է ունենալ բնակարան կամ էլ բնակության ոչ մի վայր չունենալ, որի կապակցությամբ Իրանի Սահմանադրությունը, ցավոք սրտի, լռում է: Թեև գործնականում օրենքը ոչ մի բան չի ասում, այնուամենայնիվ Իրանի ազգաբնակչության պարտականություններից է համարվում հաստատուն (մշտական) բնակարան ունենալը, լինի դա սեփականության կամ վարձակալության հիմունքներով, քանի որ «Իսլամական պատժամիջոցների մասին» օրենսգրքի 712-րդ հոդվածի համաձայն, մուրացկանություն հանցագործության կատարման պայմաններից է աշխատանք և բնակարան չունենալը: **Երկրորդ**, յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատորենն ընտրելու բնակարան ցանկացած վայրում կամ վայրերում: Իհարկե, Իրանի սովորական օրենքների համաձայն, այս հանգամանքն ունի որոշակի սահմանափակումներ: Օրինակ՝ որոշ մարդիկ, ինչպիսիք

[200] Օրինակ՝ 1995 թ. ընդունված «Անասնաբուժական կազմակերպության« մասին օրենքի 10-րդ հոդվածի և դրա կատարողական կանոնակարգի 12-րդ հոդվածի համաձայն, անասնաբուժական աշխատանքով զբաղվելու պայմանն է Սահմանադրության մեջ պաշտոնապես ընդունված կրոններից մեկին դավանելը:

են՝ զինվորականներն ու պետական ծառայողները, պարտավոր են բնակվելու իրենց առաքելության իրականացման վայրում, նույնիսկ եթե նրանք դրանից գոհ չլինեն: Իրանի քաղաքացիական օրեսգրքի 1005-րդ հոդվածի համաձայն, ամուսնացած կանանց բնակության վայրը պետք է լինի նույնը, ինչ իրենց ամուսինների բնակության վայրը: **Երրորդ**, յուրաքանչյուր անձ, բնականաբար, իրավունք ունի ազատորեն փոխելու իր բնակարանը: Ամեն դեպքում, բնակարանի ու բնակվելու իրավունքը, ինչպես նաև մարդկանց բնակարանի հարցի նկատմամբ հարգանքն ու դրա պաշտպանվածությունը ավանդական ու հարգված ազատություններից մեկն է, որի համաձայն, ոչ ոք չի կարող առանց թույլտվության մուտք գործել ուրիշի բնակարան կամ անշարժ գույքի տարածք և նույնիսկ պետական ծառայողները այդ հարցում կրում են որոշակի սահմանափակումներ: Օրինակ՝ «Իսլամական պատժամիջոցների մասին» օրենսգրքի 580-րդ հոդվածի համաձայն, եթե դատական կամ ոչ դատական ծառայողները, առանց թույլտվության և առանց օրինական ընթացակարգերի պահպանմամբ, մուտք գործեն ուրիշի տարածք, կդատապարտվեն ազատազրկման մեկ ամսից մինչև մեկ տարի ժամկետով: Եթե այդ արարքը տեղի ունենա գիշերային ժամերին, ապա դրա կատարողը կդատապարտվի հոդվածում նշված պատժամիջոցի առավելագույն չափով:

Բնակարանի ազատության հարցում Իրանի օրենսդրության մեջ եղած գլխավոր սահմանափակումը պետք է փնտրել քրեական դատավարության օրենսգրքի 46-րդ և 96-րդ հոդվածներում, որոնց համաձայն, եթե տվյալ վայրում գոյություն ունեն մեղադրանքի բացահայտման ուժեղ փաստարկներ կամ հանցագործության գործիքներ ու փաստարկներ, ապա մարդկանց բնակարանի զննումն ու դրանցում որոնումներ կատարելը հնարավորության դեպքում պետք է տեղի ունենան ցերեկային ժամերին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ գիշերային ժամերին[201]: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 12-րդ հոդվածում նշվում է. «Որևէ մեկը իր անձնական կյանքում, ընտանեկան, բնակարանի և իր շփումների հարցերում չպետք է ենթարկվի կամայական ոտնձգության ու միջամտության և չպետք է հարձակման թիրախ դառնան նրա արժանապատվությունը, անունն ու հեղինակությունը»: Սակայն այս

[201] Տե՛ս Աբբասի Բ., նշվ. աշխ., էջ 112:

կապակցությամբ կա ուշադրության արժանի մի հանգամանք, որ չնայած Իրանի Սահմանադրության մեջ բնակարանի բարձր նշանակությանը, ցավոք սրտի, իրանական օրենսդիրն իր օրենքներից ոչ մեկում քայլեր չի ձեռնարկել սահմանելու բնակարանը, որը անշուշտ տարբերվում է ֆիզիկական անձի կացարանից: Անկասկած, ինչ-որ հյուրանոցում ցանկացած ճամփորդի վերցրած սենյակը, նույնիսկ մեկ գիշեր այնտեղ բնակվելու համար, համարվում է նրա բնակարանն ու տարածքը և չի կարելի այն պատճառաբանությամբ, որ դա հանրային վայրերի մաս է կազմում, հեշտությամբ ներս մտնել այնտեղ կամ ինչ-որ կերպ ոտնձգություն գործել դրա նկատմամբ:

Բնակության վայրի և քաղաքացիության ընտրության ազատություն: Այս երկու իրավունքները ևս Իրանի Սահմանադրության կողմից պաշտպանված անհատական ազատություններից են: Իրանի Սահմանադրությունը քաղաքացիությունը համարել է յուրաքանչյուր իրանցու իրավունքը և անթույլատրելի է համարել որևէ իրանցուն զրկել դրանից, բացառությամբ, եթե անձն ինքն է դիմել դրա համար կամ էլ դիմել է մեկ այլ պետության քաղաքացիություն ստանալու համար[202]: Իրանի քաղաքացիական օրենսգրքի 1002-րդ հոդվածի համաձայն, ցանկացած մարդու կեցավայրը «այն վայրն է, որտեղ տվյալ անձը բնակվում է և հենց այնտեղ է նրա կարևոր կենտրոնը»: Իսլամում ևս ընդգծվել է կեցության ու բնակության վայրի ընտրության և այնտեղ անցուդարձ անելու ազատությունը, և ինչպես Իսլամի մարգարեն է ասել. «Բոլոր երկրամասերը պատկանում են Աստծուն և մարդիկ բոլորը նրա աղախիններն են: Ուստի բնակություն և կեցություն հաստատեք այնտեղ, որտեղ կգտնեք ձեր երջանկությունն ու բարին»: Հետևաբար, Իրանի տարածքում, ինչպես նաև փողոցներում ու հանրային ճանապարհներում անցուդարձն ու երթևեկումն ազատ է և դա իրավունք է: Այդ իրավունքը պետք է լինի անվճար և կառավարությունը չի կարող այն սահմանափակել կամ պայմանավորել թույլտվությամբ: Իհարկե, Հանրապետության տարածքից դուրս գալը հեշտ չէ այնքան, որքան երկրի ներսում երթևեկելը: Դրա համար պահանջվում է քաղաքացուն պետության կողմից անձնագրի տրամադրում, ինչպես նաև մյուս արտաքին պետությունից մուտքի արտոնագրի ձեռքբերում: Իրանի քրեական օրենսգրքում, ղեկավարվելով իսլամական իրավաբանությամբ, բնակության վայրից հեռու գտնվելը երբեմն սահմանվել է որպես մի շարք հանցագործությունների

[202] Տե՛ս Իրանի քաղաքացիական օրենսգրքի 988-991-րդ հոդվածները:

պատժամիջոց: Դրանցից կարելի է մատնանշել «Իսլամական պատժամիջոցների մասին» օրենսգրքի 29-րդ հոդվածը, որում նշված է. «Հաշվի առնելով մեղադրյալի վիճակն ու կացությունը, ինչպես նաև գործի հանգամանքները, դատարանը կարող է դատապարտյալից պահանջել կատարելու հետևյալ կարգադրությունը կամ կարգադրությունները պատժի կասեցման ժամանակահատվածում, իսկ մեղադրյալը պարտավոր է կատարելու դատարանի կարգադրությունը...»[203]:

Կազմավորումների ու կուսակցությունների ազատությունը: Անկասկած սա հավաքական ազատությունների առաջին և անենակարևոր տեսակն է: Իսլամի տեսակետից, ազատ և թույլատրելի է համարվում կուսակցությունների, պոպուլացիաների և քաղաքական խմբերի կազմավորումը: Իհարկե, Սահմանադրության համաձայն, այս ազատությունն ունի որոշակի պայմաններ. նախ այդ ազատությունը ԻԻՀ-ի անկախության, ազատության և ազգային միաբանության սկզբունքներին, ինչպես նաև իսլամական նորմերին և ժողովրդի բարձր ձայնով ընդունված Իսլամական Հանրապետության հիմքերին չպետք է հակասի և վերացնի դրանք: Երկրորդ, ցույցերի կամ հանրահավաքների պես հավաքական ու խմբային ազատությունների իրագործման ժամանակ արգելված են վտանգավոր ու անօրինական գործողություններն ու արարքները, ինչպիսիք են՝ հրազեն կամ սառը զենք կրելը, կամ այն ինչը սարսափահար է անում ժողովրդին: Երրորդ, քանի որ Իրանի ազգաբնակչության գերկշռող մասը մահմեդականներ են, ուստի չեն թույլատրվում նաև Իսլամի հիմունքներին ու իսլամական համոզմունքներին դեմ արարքները:

Իսկ ինչ վերաբերում է համախոհ ու համակիր խմբերի ու կուսակցությունների կազմավորմանն ու դրանցում մասնակցությանը, պետք է նշել, որ դա ազատության, ժողովրդավարության և ժողովրդավար պետության կառավարման հարցում ժողովրդի ներգրավվածության առկայության վառ նշաններից է, իսկ դա նշանակում է, որ յուրաքանչյուր ոք կարող է ազատորեն միանալ քաղաքական խմբերին և ոչ ոք հարկադրված չէ անդամակցելու ինչ-որ հատուկ կուսակցությանը կամ քաղաքական թևին: Այս կապակցությամբ Իրանի Սահմանադրության 26-րդ հոդվածում նշված է. «Կուսակցությունները, պոպուլացիաները, քաղաքական միավորումներն ու

[203] Տե՛ս Աբբասի Բ., նշվ. աշխ., էջ 101:

արհմիությունները, իսլամական կամ ճանաչված կրոնական փոքրամասությունների միությունները ազատ են այն պայմանով, որ չխախտեն Իրանի Իսլամական Հանրապետության հիմքերը, անկախությունը, ազատությունը, ազգային միաբանությունն և իսլամական նորմերը: Որևէ մեկին չի կարելի արգելել մասնակցելու դրանց կամ էլ ստիպել մասնակցելու դրանցից որևէ մեկին»: Ցավոք սրտի, Իրանի Սահմանադրության այս հոդվածում հստակեցված չէ, թե ի՞նչ է նշանակում Իսլամական Հանրապետության վարչակարգի հիմքերը: Սովորական օրենքներում ևս այս հարցը սահմանված չէ և քրեական օրենքներում նմանատիպ հանցագործությունների հիմքերի չորոշելը հակասում է Սահմանադրության՝ «հացագործությունների ու պատժամիջոցների օրինականության մասին» հոդվածին[204]:

Համենայն դեպս, Իրանում քաղաքական կուսակցությունների ու միությունների սահմանման հարցում կարելի է ասել, որ կուսակցությունը «այն կազմավորումն է, որն ունի կանոնադրություն ու կանոնակարգ, հիմնադրվել է որոշակի քաղաքական ուղեգիծ ու գաղափարներ ունեցող մի խումբ ֆիզիկական անձանց կողմից և դրա նպատակները, ծրագրերն ու վարքագիծը ինչ-որ կերպ առնչվում են ԻԻՀ վարչակարգի ընդհանուր ուղեգծին ու երկրի կառավարման սկզբունքներին»[205]: Կուսակցություններ ու պոպուլացիաներ կազմավորելուց բացի, հնարավոր է, որ մի շարք մարդիկ ցանկանան հանրության առջև ներկայացնել իրենց տեսակետներն ու բողոքները հավաքական ու խմբային ձևաչափով: Իրանի Սահմանադրության 27-րդ հոդվածը թույլատրելի է համարել նմանատիպ երթերը, սակայն դրա համար սահմանել է մի շարք պայմաններ ու սահմանափակումներ, որոնք արդեն ներկայացվել են: Թեև Իրանի Սահմանադրության մեջ չի խոսվում ցույցերի ու երթերի կազմակերպման համար արտոնագրի ձեռքբերման մասին, այնուամենայնիվ գործնականում ցանկցած տիպի ցույցերի ու երթերի կազմակերպման համար պահանջվում է ձեռքբերել ՆԳՆ արտոնագիրը[206]: Եթե հավասարակշռված մոտենանք, ապա Իրանի իրավական

[204] Քաթուզյան Ն., Մտածողության և խոսքի ազատություն, 1-ին տպ., Թեհրանի համալսարանի հրատ., 2003, էջ 112:
[205] 1982 թ. ընդունված, «Կուսակցությունների, պոպուլացիաների, քաղաքական միավորումների ու արհմիությունների, իսլամական կամ կրոնական փոքրամասությունների ասոցիացիաների ակտիվության մասին« օրենքի 1-ին հոդվածը:
[206] Տե՛ս Կուսակցությունների մասին օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետը:

համակարգում մի կողմից ոստիկանությունը ունի իրավասություն կանխելու անկարգությունները ցույցերի ու հանրահավաքների ժամանակ, իսկ մույս կողմից էլ օրենսդիրը չի կարող ընդունել այնպիսի օրենք կամ ընթացակարգ, կամ դատական իշխանությունը չի կարող կայացնել այնպիսի վճիռներ ու որոշումներ, որոնք կհանգեցնեն ցուցարարների անտեղի կալանավորումներին, արդյունքում ցուցարարների կամ ժողովրդի փոքրամասության լռությանն ու ինքնամփոփությանը[207], թեև ցույցերն ու բողոքողները սահմանափակելու հարցում ոստիկանության իրավասությունների սահմաններն էլ, ցավոք սրտի, հստա-կեցված չեն: Մինչդեռ համեմատական հայացք նետելով ԱՄՆ-ի Սահմանադրության հավելվածին, դրա 2-րդ հոդվածում նկատվում է, որ սահամանափակման ենթակա չի համարվում անարդարության վերացման համար խաղաղ հանրահավաքներ կազմակերպելու և կառավարության նկատմամբ բողոքելու ժողովրդի իրավունքը:

Մամուլի ազատությունը: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածում ասվում է. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի և գաղափարի ազատության իրավունք և այդ իրավունքը ներառում է այն, որ անձը իր գաղափարների համար չունենա մտավախություն ու անհանգստություն և ազատ լինի տեղեկատվություն ստանալու, տեսակետներ հայտնելու և հնարավոր բոլոր միջոցներով այն հրապարակելու հարցերում առանց որևէ սահմանային նկատառումների»: Իրանի Սահմանադրության 24-րդ հոդվածում նշվում է. «Հրատարակություններն ու մամուլը ազատ են նյութեր հրապարակելու հարցում, բացառությամբ այն դեպքում, երբ այն խաթարի իսլամական հիմունքներն ու հանրային իրավունքը: Դրա մանրամասները որոշվում են օրենքով»: Նկատվում է, որ Իրանի Սահմանադրության սկզբունքն է մամլո ազատությունը և դրա համար կիրառել է միայն երկու սահմանափակում: Սակայն այդ հարցի նշանակությամբ հանդերձ, Սահմանադրության այդ հոդվածում խոսվում է միայն մամլո ազատության բնագավառի մի շարք ընդհանուր դրույթների մասին, իսկ մանրամասների և մնացած հանգամանքների որոշումը թողնվել է խորհրդարանի ընդունած օրենքների վրա, մինչդեռ այլ երկրներում, ինչպիսին Իտալիան է, գործելու

[207] Բուշեհրի Ջ., Հիմնարար իրավունքներ. սկզբունքեր և կանոնակարգեր, առաջին հատոր, 1-ին տպ, Էնթեշար ԲԸ հրատ., Թեհրան, 2005, էջ 181:

ավելի մեծ ազատություն է նախատեսվել մամլո և զանգվածային լրատվամիջոցների համար: Օրինակ՝ այդ պետության Սահմանադրության 21-րդ հոդվածի համաձայն, մամուլին հարկավոր չէ որևէ մարմնից ստանալ թույլտվություն, նյութերը չպետք է ենթարկվեն գրաքննության և չի կարելի դրանց կալանքի տակ առնել, բացառությամբ դատական իշխանությունների կողմից կայացված, հիմնավորված վճիռով, այն էլ ակնհայտ հանցագործությունների կատարման դեպքերում, որոնք հստակորեն նախատեսված են մամլո մասին օրենքում: Նման դեպքերում դատական ոստիկանությունը կարող է մամուլին կալանքի տակ առնել միայն մինչև 24 ժամ ժամկետով, այնուհետև հարցը պետք է զեկուցի դատական մարմնին և եթե 24 ժամվա ընթացքում դատավորը հավանություն չտա ոսիկանության գործողությանը, ապա կալանքը բեկանվում և դառնում է անհետևանք[208]: Սակայն Իրանի օրեսդրությամբ նման սահմանափակումներ նախատեսված չեն դատական և պետական իշխանավորների համար՝ մամուլը գրաքննության կամ կալանքի ենթարկելու հարցում: Բացի այդ, մամլո և ԶԼՄ-ների ազատության կապակցությամբ Իրանում նկատվող մեկ այլ թերություններից է այն, որ տեղեկատվության փոխանցման ու հանրության կարծիքի բացահայտման միջոցները հանդիսացող կինոթատրոնները, ռադիոհեռուստատեսությունը, մամուլը և տարածված մյուս լրատվամիջոցները քիչ են ուշադրություն դարձնում փոքրամասությունների շահերին և փոքրամասությունները զրկված են այդ լրատվամիջոցներից օգտվելու իրավունքից: Նրանք իրենց կարծիքը արտահայտելու և փոխանցելու համար հիմնականում ստիպված են դիմելու ցույցերի ու հանրահավաքների: Իրանում մամուլից ու զանգվածային լրատվամիջոցներից օգտվելը անսահմանափակ չէ նույնիսկ մահմեդականների համար և այդ ազատությունն էլ մյուս ազատությունների պես ունի որոշակի սահմանափակումներ: Օրինակ՝ եթե մուսուլման անձը մամլո միջոցով ժխտի իսլամի սկզբունքներն ու կրոնական սրբությունները, ապա կպատժվի դավանափոխ (Մորթադ) մարդու՝ իսլամ կրոնից հրաժարված անձի համար նախատեսված պատժամիջոցով[209]: Համենայն դեպս, մամլո և ցույցերի ազատությունը կարելի է համարել որպես ժամանակակից աշխարհի խոսքի ազատության իրավունքի

[208] Մեհրփուր Հ., Հակիրճ ակնարկ Իրանի հիմնարար ազատությունների մասին, 1-ին տպ., Դադգոսթար, Թեհրան, 2008, էջ 64:
[209] Տե՛ս Իրանի «մամլո մասին» օրենքի 26-րդ հոդվածը:

ամենաբարձր տեսակը, իսկ ինքը մամուլը՝ որպես ժողովրդավարության չորրորդ հիմնասյուն: Ամեն դեպքում, մասնավոր իմաստով մամուլ են կոչվում այն պարբերական-ները, որոնք հրատարակվում են պարբերաբար, ինչպիսիք օրաթերթերն ու ամսագրերն են, իսկ իր ընդհանուր իմաստով՝ պարբերականներից բացի, դրանում ընդգրկվում են նաև գրքերը, հայտարարությունները, ֆիլմերն ու կինոթատրոնները, հեռուստատեսությունը և այլն: Մամլո ազատությունը նշանակում է ճանաչված ազատություն յուրաքանչյուր անձի համար, որպեսզի նա կարողանա ազատորեն տպագրել ու տարածել իր կարծիքներն ու գաղափարները: Իհրակե, մամուլին մշտապես սպառնում են չորս տեսակ վտանգներ. ա) ոստիկանության ու անվտանգության մարմինների կողմից կանխարգելիչ գործողություններն ու գրաքննության իրականացումը, բ) երկրում իշխող ուժերի կողմից նրանց վախեցնելը քաղաքական ու գաղափարական հանցագործություններով դատապարտելու միջոցով, գ) մամուլին կառավարությանը ենթարկելն ու կախվածության մեջ դնելը, դ) մամուլի նկատմամբ ուժի կիրառումը փողի ու ֆինանսական ճնշումների միջոցով[210]: Իրանական մամուլը երբեմն ենթարկվել է այդ վտանգներին:

Մամլո մասին օրենսդրության նախապատմության վերաբերյալ պետք է ասել, որ այդ կապակցությամբ օրենսդրության անցած ուղու սկիզբը վերաբերում է Իրանի առաջին Սահմանադրությանը՝ մեկ դար առաջ տեղի ունեցած Իրանի Սահմանադրական Հեղափոխության ժամանակահատվածում, իսկ այդ ուղու վերջնամասը համարվում է մամլո մասին օրենքը, որն ընդունվել է 1986 թ. իրանաիրաքյան պատերազմի ժամանակ: Իրանի քաղաքագետներն ու իշխանավորները մեծ բծախնդրությամբ ու զգուշավորությամբ այնպես են կազմել այդ օրենքը, որ երկիրը վտանգի ու սպառնալիքի տակ չհայտնվի մամուլի միջոցով: Հետևաբար, այդ օրենքը նպատահարմար չէ երկրի ներկայիս պայմանների համար: Ցավոք սրտի, այս օրենքում ևս որևէ սահմանում տրված չէ մամուլային հանցագործության համար և այն բավարարվել է միայն մամուլային հանցագործությունների օրինակների ներկայացմամբ: Այդուհանդերձ, մամուլային հանցագործություն կարելի է համարել այն հանցագործությունը, որը կատարվել է մամուլի միջոցով և ամրագրված է նաև մամուլի

[210] Morange G., Liberte's publiques, Paris, PUF, 1985. p. 77.

մասին օրենքում[211]: Իրանի «Ընդհանուր իրավասության և Հեղափոխության դատարանների դատավարության մասին» օրենսգրքի բարեփոխված 4-րդ հոդ. ենթակետի համաձայն, Իրանում այդ հանցագործության քննումը գտնվում է նահանգային քրեական դատարանի իրավասության տակ: Այդ դատարանը կազմված է տվյալ նահանգի վերաքննիչ դատարանի հինգ դատավորներից: Այնուամենայնիվ, երբեմն համընկնում են այդ դատարանի իրավասությունները Հեղափոխության դատարանի իրավասությունների հետ, քանի որ «Ընդհանուր իրավասության և Հեղափոխության դատարանների դատավարության մասին» օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն, Հեղափոխության դատարանի իրավասություններից է քննել հանցագործություններ, ինչպիսիք են՝ «Մոհարեբեն» (Աստծո դեմ պայքարելը), «Էֆսադ-Ֆի-Ալարզը» (երկրի երեսին կոռուպցիա տարածելը), ներքին ու արտաքին անվտանգության դեմ հանցագործությունները: Այդ նույն հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն, Հեղափոխության դատարանի իրավասությունների մեջ են մտնում նաև ԻԻՀ-ի դեմ դավադրությունը, Իրանի վարչակարգի դեմ ուղղված գործողություններն ու լրտեսությունը: Չնայած այդ իրավասությունների համընկմանը, մեկ այլ վիճահարույց հարց է այն, որ եթե Հեղափոխության դատարանի իրավասությունների շրջանակում ամրագրված հանցագործություններից մեկը կատարվի մամուլի միջոցով, ապա անելիքը հստակեցված չէ, սակայն դատարանում գործնական մոտեցումն ու ցանկությունը այն է, որ նմանատիպ հարցերն էլ քննվեն տվյալ նահանգի Հեղափոխության դատարանում: Նման մոտեցումը քննադատելի է, որովհետև նախ, նահանգի քրեական դատարանի դատավորները վերաքննիչ դատարանի դատավորներ են և բնականաբար ունեն ավելի մեծ դատական աշխատանքի պատմություն (ստաժ) և փորձառություն, երկրորդ՝ թվաքանակի առումով նրանք նվազագույնը 3 հոգի, իսկ առավելագույնը 5 հոգի են, հետևաբար նրանց կողմից սխալի ու վրիպման հնարավորությունն ու հավանականությունը ավելի քիչ կլինի, երրորդ՝ նահանգի քրեական դատարանների վճիռների նկատմամբ բողոքարկման ատյանն է Հանրապետության Գերագույն դատարանը, ուստի այդ առումով ևս այդ

[211] Քաթուզյան Ն., Մտածողության և խոսքի ազատություն, 1-ին տպ., Թեհրանի համալսարանի հրատ., 2003, էջ 253:

ատյանի դատավորների ճշգրտությունն ու հմտությունը ավելի բարձր է վերաքննելու համար և այդ հանգամանքը մամուլային հանցագործություններում մեղադրվողների օգտին է: Հետևաբար, ավելի լավ կլինի, որ օրենսդիրը ձեռնարկի որոշակի միջոցներ, որպեսզի նմանատիպ հանցագործությունները ևս քննվեն նահանգային քրեական դատարանում:

Կրոնի ու դավանանքի ազատությունը: Ազատությունների մեկ այլ խումբ է կրոնի ու դավանանքի ազատությունը: Իհարկե, կրոնի ազատությունը համարվում է գաղափարի ազատության շարքից ու ենթախմբից, իսկ իր կրոնական համոզմունքների մասին արտահայտվելու անձի ազատությունն էլ խոսքի ազատությունների շարքից է, և պետք է ասել, որ կրոնի ազատության համար անհրաժեշտ է խոսքի ազատությունը[212]: Ցավոք սրտի, Իրանի Սահմանադրությունը հստակորեն չի արտահայտվել կրոնի կամ գաղափարի ազատության մասին, այլ իր 23-րդ հոդվածում միայն փաստում է. «Հավատաքննությունը արգելված է և որևէ մեկին չի կարելի նախատել կամ նրան նկատմամբ ոտնձգություն գործել ինչ-որ հավատամք ունենալու համար»: Ինչպես նկատվում է, նշված չէ, որ յուրաքանչյուր ոք ունի իրավունք ունենալու ցանկացած տեսակի քաղաքական կամ կրոնական կարծիք, գաղափար և այլն...[213] Բայց Ղուրանում նշված է, որ կրոնի ու դավանանքի ընդունման հարցում մարդկանց համար գոյություն չունի ոչ մի տեսակի պարտադրանք կամ արգելանք[214]: Իհարկե, Իրանի ներկայիս համապատասխան օրենսդրության համաձայն, աշխատանքի ընդունվելու և մի շարք սոցիալական իրավունքներից օգտվելու հարցում գոյություն ունեն որոշակի սահմանափակումներ և զրկանքներ այն մարդկանց համար, ովքեր դավանում են իսլամից բացի մեկ այլ կրոն կամ դավանում են հրեականության, քրիստոնեության կամ զրադաշտության կրոնները: Այս կապակցությամբ հարկավոր է, որ օրենսդիրը բարեփոխի Սահմանադրության այդ հոդվածները: Օրինակ՝ 1996 թ. ընդունված, «ուսուցիչների և կրթության ու դաստիարակության ոլորտի աշխատակիցների ընտրության և աշխատանքի ընդունման մասին» օրենքի համաձայն, դիմորդների

[212] Թաբաթաբայի Մոթմենի Մ., Մարդու իրավունքներն ու ընդհանուր ազատությունները, 5-րդ տպ., Թեհրանի համալսարանի հրատ., Թեհրան, 2012, էջ 67:
[213] Մեհրփուր Հ., Հակիրճ ակնարկ Իրանի հիմնարար ազատությունների մասին, 1-ին տպ., Դադգոսթար, Թեհրան, 2008, էջ 57-58:
[214] Տե՛ս Ղուրանի «Բաղարա» սուրայի 256-րդ այաթ:

համար պարտադիր է դավանել իսլամ կրոնը կամ Սահմանադրությամբ ընդունված պաշտոնական կրոններից որևէ մեկը և նույնիսկ այդ նույն օրենքի 15-րդ հոդվածի համաձայն, մարդկանց աշխատանքի ընդունման ժամանակ համապատասխան պետական ծառայողները պետք է վստահություն ձեռք բերեն այդ հարցի ու կրոնական հավատամքի մասին[215]: Մինչդեռ գիտենք, որ հնարավոր չէ միանշանակ համոզված լինել մարդկանց կրոնի մասին, բացառությամբ եթե դրա վերաբերյալ քննություն կամ ուսումնասիրություն իրականացվի, սակայն ինչպես նշվեց, ըստ Իրանի Սահմանադրության, արգելված է ուրիշների հավատամքի քննումը: Հետևաբար, պետք է գործել Սահմանադրությանը հակառակ և զբաղվել դիմորդների կրոնական հավատաքննությամբ: Բացի այդ, խորհելու արժանի է այն հանգամանքը, որ թեև Ս. Ղուրանում, իսլամի մարգարեի վարքագծում ու նրա ավանդության մեջ ընդունված են կրոնի ու դավանանքի ազատությունն ու մյուս կրոնների իրավունքների պահպանումը[216], այնուամենայնիվ մահմեդական հոգևորական իրավաբանների վճիռների, ինչպես նաև «Էրթեդադ» (դավանափոխություն՝ իսլամից հրաժարվելու տեսքով) կատեգորիայի համաձայն, մուսուլմանները չեն կարող հրաժարվել իրենց կրոնից և ընդունել մեկ այլ կրոն: Այդ արարքը մուսուլմանների կողմից համարվում է սրբապղծություն, որի կատարման համար, իսլամական իրավաբանության համաձայն, նշանակվում է մահապատիժ կամ աքսոր: «Էրթեդադ» տերմինը բառի բուն իմաստով նշանակում է դարձի գալ, իսկ իրավաբանական իմաստով նշանակում է այն, որ անձը փոխում է իր դավանանքը և դարձի է գալիս ոչ իսլամական կրոնի: Թեև Իրանի Սահմանադրությունում, «իսլամական պատժամիջոցների մասին» օրեսգրքում և այլ քրեական օրենքներում որևէ բան նշված չէ «Էրթեդադի» (մահմեդականի դավանափոխության) պատժամիջոցի մասին[217], այնուամենայնիվ Սահմանադրության 167-րդ հոդ. համաձայն, այդ հանցագործության կատարման դեպքում դատավորները պետք է իսլամական իրավաբանական աղբյուրներից վերհանեն մահապատժի կամ աքսորի պատժամիջոցները և կիրառեն դրա կատարողի նկատմամբ: «Էրթեդադի»

---

[215] Մեհրփուր Հ., Հակիրճ ակնարկ Իրանի հիմնարար ազատությունների մասին, 1-ին տպ., Դադգոսթար, Թեհրան, 2008, էջ 59:
[216] Տե՛ս Ղուրանի «Անքաբութ» սուրայի 18-րդ այաթ և «Յունես» սուրայի 99-րդ այաթ:
[217] Տե՛ս Իրանի Սահմանադրության 167-րդ հոդվածը:

դատավճռի իրականացումը հակասում է Սահմանադրության 36-րդ հոդվածին, որը փաստում է. «Պատժամիջոցի նշանակման դատավճիռն ու դրա կատարումը պետք իրականացվեն միայն օրենքով...», իսկ Իրանի քրեական օրենքներում որոշված չէ «Էրթեդադ» հանցագործության պատժամիջոցը: Ամեն դեպքում նման իսլամական պատժամիջոցները հակասում են Սահմանադրության «հանցագործության ու պատժամիջոցի օրինականության մասին» հոդվածին և «էրթեդադը» Իրանում և իսլամում կրոնի ու գաղափարի ազատության սահմանափակումներից մեկն է: Իհարկե, ոմանք գտնում են, որ մտքի ու հավատամքի ազատությունը և այն, որ անձը կարող իր հավատքի ու համոզմունքների մասին արտահայտվել, տարբերվում են նրանից, որ անձը թշնամական դրդապատճառներով, դավադրության ու սադրիչ մտադրություններով խոստովանում է իր կողմից իսլամ կրոնը թողնելու մասին և մյուսներին գայթակղելու մտադրությամբ տարածում է իր այլասերված մտքերը[218]: Սակայն այդ տեսակետը ևս համոզիչ չի թվում, քանի որ իսլամը թողած դավանափոխ անձի պատժամիջոցը ելնում է տվյալ ժամանակահատվածին բնորոշ տեղավայրի ու ժամանակի հետ կապված խնդիրներից և իսլամական իշխանության շահերի ու ժամանակային պայմանների ուսումնասիրմամբ կարելի է մեղմել և փոխել «էրթեդադի» պատժամիջոցը և սահմանել ավելի մեղմ պատժամիջոցներ:

Համենայն դեպս, ակնհայտ է, որ ԻԻՀ վարչակազմը պատշաճ կերպով աջակցություն չի ցուցաբերում կրոնական և ոչ կրոնական հավատամքների, ինչպես նաև Սահմանադրությամբ պաշտոնապես չճանաչված կրոնների նկատմամբ, բայց նրանց չի էլ ճնշում: Իրանում որոշ չափով պահպանվում են ոչ իսլամական հավատամքներին ու կրոններին առնչվող ազատությունները, որոնք դեմ չեն լինի երկրի և վարչակազմի շահերին ու հասարակական կարգին: Միջազգային փաստաթղթերում ևս ընդհանրապես ընդունվել է մտքի, կրոնի ու դավանանքի ազատությունը: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 18-րդ հոդ. համաձայն, յուրաքանչյուր ոք իրավունք ունի վայելելու մտքի, խղճի և կրոնի ազատությունը: Հետևաբար, մարդկանց թույլատրվում է փոխել իրենց կրոնը, սակայն ուշադրության արժանի է այն, որ իսլամական հայեցակարգում ու գաղափարներում,

[218] Այազի Մ., Ազատությունը Ղուրանում, Նաշր-ո-Թահղիղաթե Զեքր, Թեհրան, էջ 320:

ինչպես նշվեց, ընդունելի չէ «կրոնի ու դավանանքի փոփոխության ազատության սկզբունքը» և նույնիսկ ՄԱԿ-ում այդ հոդվածի ընդունման ժամանակ մի շարք իսլամական պետություններ, ինչպիսիք են՝ Սիրիան, Սաուդիան Արաբիան, Եգիպտոսն ու Իրաքը, հայտնեցին դրա նկատմամբ իրենց առարկությունը, որն, իհարկե, ապարդյուն էր[219]:

§ 4. Մարդուն իրավունքներից զրկելու և դրանց սահմանափակումների հիմնահարցերը

4.1. Մարդու իրավունքների ու ազատության սահմանները: Իրավունքներն ու ազատությունները բացարձակ ու անսահման չեն և անխուսափելիորեն պետք դրանց նկատմամբ սահմանել որոշակի սահմանափակումներ: Հազվադեպ կարելի է գտնել մի ազատություն առանց որևէ սահմանափակության: Հետևաբար ցանկացած տեսակի ազատության համար սովորաբար որոշակի սահմանափակումներ են նախատեսվում օրենսդիրների կողմից: Ինչպես նախկին բաժիններում արդեն պարզաբանվեց, Իրանի Սահմանադրությունում և մյուս քրեական ու քաղաքացիական օրենքներում ազատությունների տարբեր տեսակների համար օրենսդիրի կողմից սահմանվել են մի շարք սահմանափակումներ. Օրինակ՝ հասարակական կարգին, հասարակության նպատակահարմարությանը և իսլամ կրոնի սկզբունքներին ու կանոններին դեմ չլինելը: Իհարկե, ողջ հասարակության շահերն ու իրավունքները պահպանելու համար նման սահմանափակումների նախատեսումը անհրաժեշտ է, քանի որ անձի ազատությունը հարգելի է մինչև այն աստիճանի, որ մյուսներին անհանգստություն ու վնաս չպատճառի: Իսկ ինչ վերաբերում է մարդկանց քաղաքական ու քաղաքացիական իրավունքների վերաբերյալ գործող օրենքներին, Իրանի քաղաքացիական օրենսգրքի 6-7-րդ հոդվածների համաձայն, մարդիկ քաղաքացիական կացության հարցերի (ամուսնություն, ամուսնալուծություն, ժառանգություն, կտակ) առումով ենթարկվում են իրենց քաղաքացիության պետության օրենքներին և իրանցիները, նույնիսկ նրանք, ովքեր բնակվում են արտերկրում, իրենց քաղաքացիական կացության հարցերում

[219] Միրաբբասի Ս.Բ., Մարդու իրավունքների վերաբերյալ պայմանագրերի ընդունումն ու հաստատումն իսլամական երկրների կողմից, Իսլամական մարդու իրավունքների օրվա առիթով հոդվածների ժողովածու, Մարդու իրավունքների ուսումնասիրությունների կենտրոն, Գերայեշ, Թեհրան, 2010, 306 էջ 275-306:

ենթարկվում են Իրանի քաղաքացիական օրենսգրքին, և հետևաբար Իրանում բնակվող օտարերկրացիներն էլ իրենց քաղաքացիական կացության հարցերում նույնպես ենթարկվում են իրենց քաղաքացիության պետության օրենքներին:

Անհատական ու հիմնարար ազատություններից զրկելու և սահմանափակումների հարցում Իրանի քաղաքացիությունը չունեցող անձանց նկատմամբ բնականաբար վերաբերվում են իրենց երկրի օրենքին համապատասխան: Այժմ կարող է հարց ծագել, թե կառավարությունից ու արդարադատության մարմիններից բացի, Իրանի իրավական համակարգում արդյո՞ք մարդիկ կարող են իրենց իսկ համաձայնությամբ ինչ-որ կերպ իրենց զրկել հիմնարար ազատություններից կամ սահմանափակել դրանք: Ի պատասխան պետք է ասել, որ քաղաքացիական օրենսգրքի 958-959-րդ հոդվածների համաձայն, յուրաքանչյուր մարդ ունի նախնական քաղաքացիական իրավունքներ և չի կարելի նրան զրկել իր այդ իրավունքից և նույնիսկ ինքն էլ չի կարող իրենից խլել այդ իրավունքները (քաղաքացիական իրավունքներ ունենալու իրավունքը): Այդ կապակցությամբ Իրանի քաղաքացիական օրենսգրքի 960-րդ հոդվածում ասվում է, որ որևէ մեկը չի կարող ինքն իրենից խլել ազատությունը կամ վերացնել այն: Օրինակ՝ անձի ամբողջ կյանքի տևողության ժամկետով աշխատանքային պայմանագրի կնքումը կամ ընտրություններին մասնակցելու համար ինքն իրեն ազատությունից զրկելը, բացառությամբ որոշ դեպքերի, համարվում են իրավունքից ամբողջապես զրկում և դա արգելված է Իրանի քաղաքացիական օրենսգրքով[220]: Անձը նաև չի կարող իրեն կամ ուրիշին ամբողջովին զրկել ամուսության կամ ամուսնալուծության իրավունքից՝ նույնիսկ դիմացինի հետ համաձայնությամբ և այդ եղանակով վերացել տվյալ անձի իրավունքը: Թեև իրավունքից ամբողջապես զրկումը արգելված է Իրանի քաղաքացիական օրենսգրքով, այնուամենայնիվ մի շարք իրավաբաններ գտնում են, որ քաղաքական ու քաղաքացիական իրավունքների վերացումը կամ սահմանափակումը մասնակի կամ սահմանափակ կերպով (օրինակ՝ եթե դա սահմանափակվում է որոշակի ժամկետով կամ կիրառվում է մարդու իրավունքներից կոնկրետ մեկ իրավունքի նկատմամբ), ճիշտ և օրենսդիրի կողմից ընդունելի է՝ հաշվի առնելով այն, ինչը ստացվում է այս հոդվածի հակառակ իմաստից

[220] Քաթուզյան Ն., Քաղաքացիական օրենսդրությունը ներկա իրավական համակարգում, 37-րդ տպ., Միզան, Թեհրան, 2013, էջ 580:

ու նշանակությունից[221]: Ուստի գործատուն կարող է 5 տարի ժամկետով իր աշխատակցին զրկել ամուսնանալու իրավունքից, քանի որ ամուսանանալու իրավունքի սահմանափակումը տեղի է ունենում մասնակի և սահմանափակ ժամկետով:

Իհարկե, մի շարք պարագաներում, ինչպիսիք են՝ պատերազմը, պատերազմի կամ ռազմական հարձակման սպառնալիքը, արտակարգ իրավիճակները, համընդհանուր վտանգը, բացառիկ պայմանները և այլն, երբ վտանգվում է երկրի կամ ազգի գոյությունն ու կենսունակությունը, իշխանավորները, վկայակոչելով և հիմնվելով այն սկզբունքին, որ «Ժողովրդի անվտանգությունը ամենաբարձր օրենքն է», փորձում են դադարեցնել կամ կասեցնել որոշ քաղաքական ու քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները՝ երկրի տարածքային ամբողջականությունն ու անվտանգությունը պահպանելու և պաշտպանելու պատճառաբանությամբ: Քաղաքական իրավուքների և անհատական ազատությունների նման կասեցումը, նույնիսկ որպես մի ընդհանուր պայման, նախատեսված է մարդու իրավունքների վերաբերյալ համընդհանուր կոնվենցիաներում ու դաշնագրերում և պետությունների սահմանադրություններում[222] և պետություններին թույլատրվել է, որ ժամանակավոր և բացառիկ կերպով սահմանափակեն մարդկանց մի շարք ազատությունները բացառիկ պայմանների ու հանընդհանուր վտանգի առկայության պատճառով: Օրինակ՝ անկարգությունների ու ապստամբությունների ժամանակ արգելվում են երթևեկությունն ու անցուդարձը: Իհարկե, որոշ անհատական իրավունքներ և քաղաքական ու քաղաքացիական ազատություններ երբեք կասեցման կամ փոփոխման ենթակա չեն: Օրինակ՝ ապրելու իրավունքը, խոշտանգմումների, նվաստացուցիչ ու անմարդկային վերաբերմունքի և ստրկության արգելումը: Նույնիսկ խորհրդարանը չի կարող ընդունել այնպիսի օրենք, որը կանտեսի այդ անհատական իրավունքներն ու ազատությունները, քանի որ նման օրենքները դեմ են Սահմանադրությանը: Բազմաթիվ երկրների օրենքներում նախատեսված է նման մոտեցում անհատական ազատությունները հարգելու և կարևորելու, ինչպես նաև դրանք չսահմանափակելու համար: Օրինակ՝ ԱՄՆ-ի

[221] Էմամի Ս.Հ., նշվ. աշխ., էջ 158:

[222] Տե՛ս Քաղաքական ու քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագրի 4-րդ հոդվածը, Մարդու իրավունքների վերաբերյալ եվրոպական կոնվենցիայի 15-րդ հոդվածը և Մարդու իրավունքների վերաբերյալ ամերիկյան կոնվենցիայի 27-րդ հոդվածի 2-րդ կետը:

Սահմանադրության 1-ին հոդվածում նշված է. «Կոնգրեսին չի թույլատրվում ընդունել որևէ օրենք մարդկանց ազատությունները կրճատելու համար...»:

4.2. Մարդու իրավունքների սահմանափակման կամ իրավունքներից զրկելու սահմանադրական հիմքերը Իրանում: Իրանի իրավական համակարգում թեև մարդկանց անհատական ու քաղաքական իրավունքներից զրկելը ճանաչված չէ Սահմանադրությամբ, այնուամենայնիվ դրանում և քաղաքացիական օրենսգրքում նման իրավունքների սահմանափակումը ընդունված է: Իրանի Սահմանադրությունը պարզ և մեկտեղ չի հստակեցրել անհատական ու հավաքական ազատությունները սահմանա-փակող պարագաները: Այդուհանդերձ, հաշվի առնելով դրա տարբեր հոդվածները, կարելի է թվարկել մի շարք հանգամանքներ, որոնք սահմանափակում կամ զրկում են մարդկանց քաղաքական ու քաղաքացիական իրավունքներից ու ազատություններից:

1. Իսլամ կրոնի սկզբունքներին ու կանոններին դեմ չլինելը: Իրանի իրավական համակարգում Սահմանադրության հոդվածներից ու կատեգորիաներից այնպես է ստացվում, որ իսլամի կանոնները, նորմերն ու պատվիրանները անկասկած հասարակական կարգին վերաբերող հարցերի մաս են կազմում և դրանց նկատմամբ ոտնձգությունը փաստորեն համարվում է իսլամական պետության հասարակական կարգի խախտում: Հետևաբար, այն արգելված է, քանի որ դա հանդիսանում է Իրանի իրավական համակարգի հիմքը: Ուստի, ընդունելի չէ ցանկացած տեսակի ազատությունը, որը դեմ է իսլամի հիմունքներին: Դրա վառ օրինակն է կանանց հագուկապի կատեգորիան, ըստ որի, իսլամում թույլատրված չէ նրանց հագուկապի ազատությունը: Օրինակ՝ Իրանի Սահմանադրության 21-րդ հոդվածի համաձայն, կառավարությունը պարտավոր է բոլոր առումներով երաշխավորել ու ապահովել կանանց իրավունքները, սակայն կանանց առնչվող իրավունքների ու ազատությունների կիրառումն ու իրագործումը պայմանավորել է իսլամական նորմերի պահպանմամբ: Հետևաբար, եթե անհատական կամ հավաքական ազատությունների կիրառումն ու իրագործումը ինչ-որ կերպ խախտում և խաթարում է իսլամի հիմունքներն ու սկզբունքները, ապա դա կանդրադառնա մարդկանց ազատությունների վրա: Օրինակ՝ եթե երթևեկելու և անցուդարձի ազատությունը լինի

առանց իսլամական «հիջաբի»՝ գլխաշորի ու հագուկապի պահպանմամբ, ապա դա թույլատրելի չէ, քանի որ իսլամն է Իրանի իրավական համակարգի հիմքը, իսկ «հիջաբը» իսլամի սկզբունքներից ու հիմնասյուններից մեկն է և առանց դրա պահպանմամբ խախտվելու է հասարակական կարգը: Իհարկե, Սահմանադրության հոդվածներում իսլամի նշումը առաջացնում է խնդիր ու անորոշություն, որովհետև նախ, իսլամը չգրված, անսահմանափակ ու առանց հստակ շրջանակի աղբյուր է և բնականաբար դատարանում ստույգ քննելու և համեմատելու ենթակա չէ: Երկրորդ, յուրաքնչյուր ոք իզորու չէ վեր հանել և օգտվել դրա աղբյուրներից: Այդ հանգամանքը պահանջում է իսլամական իրավունքի իմացություն և դրանից օգտվելու հմտություն: Երրորդ, Սահմանադրության «հանցագործությունների ու պատժամիջոցների օրինականության մասին» հոդվածը պահանջում է, որպեսզի թվարկվեն և հաշվառվեն հանցագործությունը կազմող էլեմենտները (հանցակազմը) և եթե դատարանին տրվի ամբողջական լիազորություն և հարցը անսահմանափակ կերպով գտնվի դատավորների տրամադրության տակ, ապա թվում է, թե դատարանները կկիրառեն այն, ինչը կցանկանան և դա կբերի դատական իշխանությունում ուժերի կենտրոնացմանն ու կուտակմանը: Սակայն որպես առաջար-կություն կարելի է ասել, որ գործող օրենքներով և ներկայիս դրությամբ դատարանները պետք է բավարարվեն միայն համոզված կերպով «օրենքի տվյալ հոդվածի տեքստի սահմանափակ ու օրինական մեկնաբանությամբ» և հնարավորինս քիչ դիմեն անսահմանափակ իսլամական աղբյուրներին, որոնք բավականին ընդարձակ են:

2. Անվտանգության, հասարակական կարգի և բարոյականության պահպանումը: Իրանի Սահմանադրության 24-րդ հոդվածը փաստում է. «Մամուլն ու պարբերականները ազատ են հրապարակելու նյութեր, բացառությամբ եթե այն խախտում է իսլամի հիմունքները կամ համընդհանուր իրավունքները: Դրա մանրամասները որոշվում են օրենքով»: Կամ դրա 65-րդ հոդվածում նշվում է. «Դատավարություններն իրականացվում են դռնբաց և չի արգելվում մարդկանց ներկայությունը, բացառությամբ եթե դատարանի կարծիքով դրա դռնբաց լինելը դեմ է հասարակական կարգին կամ հասարակական բարոյականությանը կամ էլ մասնավոր հայցում դատավարության կողմերը խնդրում են, որպեսզի դատավարությունը դռնբաց

չլինի»: Հետևաբար, երկու տղամարդու կամ երկու կանանց միջև ամուսնության գրանցումը Իրանում իրականացման ենթակա չէ, նույնիսկ եթե դա ճանչվել կամ հաստատվել է ինչ-որ արտաքին պետության դատարանի կողմից կամ պաշտոնապես գրանցվել է այդ երկրի գրանցման կազմակերպությունում, որովհետև նման ամուսնությունն ու իրավական արարքը դեմ է Իրանում բարոյականությանն ու հասարակական կարգին:

3. Ազգային և տարածքային ամբողջականության սկզբունքներին դեմ լինելը: Եթե անհատի կամ ինչ-որ խմբի արարքը դեմ է պետության անկախությանն ու տարածքային ամբողջականությանը, ապա այդ դեպքում դրանից կազդվեն նաև մարդկանց ազատությունները: Այս կապակցությամբ Իրանի Սահմանադրության 26-րդ հոդվածում նշվում է. «Կուսակցությունները, պոպուլացիաները, քաղաքական միավորումներն ու արհմիությունները, իսլամական կամ ճանաչված կրոնական փոքրամասությունների միությունները ազատ են այն պայմանով, որ չխախտեն Իրանի Իսլամական Հանրապետության հիմքերը, անկախությունը, ազատությունը, ազգային միաբանությունն և իսլամական նորմերը: Որևէ մեկին չի կարելի արգելել մասնակցելու դրանց կամ էլ ստիպել մասնակցելու դրանցից որևէ մեկին»:

4. Օրենքով թույլատրելիությունը: Ազատության այս սահմանափակության կապակցությամբ Իրանի Սահմանադրության 22-րդ հոդվածում նշված է. «Անձանց հեղինակությունը, կյանքը, գույքը, իրավունքները, բնակարանն ու աշխատանքը պաշտպանված են ոտնձգությունից, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերում»: Նաև Սահմանադրության 25-րդ հոդվածի համաձայն, արգելվում է նամակների զննումը կամ տեղ չհասցնելը, հեռախոսային խոսակցությունների ձայնագրումն ու բացահայտումը, հեռագրերի ու տելեքսների բացահայտումը, գրաքննությունը, դրանց չուղարկումն ու տեղ չհասցնելը, գաղտնալսումը և ցանկացած տիպի լրտեսությունը, բացառությամբ օրենքի ցուցումով: Այս հոդվածը ևս դատավորներին տալիս է անսահմանափակ և լայն մեկնաբանությունների թույլտվություն: Սահմանադրության անբավարարությունն աչքի է ընկնում նաև այս դեպքում: Ցավոք սրտի, Իրանում լուրջ և գործնական քայլեր չեն արվում անհատական ազատությունների հարցում Սահմանադրության դրույթների լրիվ և պատշաճ

իրականացման նկատմամբ վերահսկողության համար: Սահմանադրության կատարման նկատմամբ վերահսկողությունը պետք է լինի գործադիր և օրենսդիր իշխանություններից անկախ մարմնի կողմից: Օրինակ՝ Եգիպտոսում Սահմանադրական Գերագույն դատարանն է հոգում այդ երկրի Սահմանադրության կատարման հարցում պահպանության ու պաշտպանության պարտականությունը, սակայն Իրանում Սահմանադրության կատարման պարտականությունը արարողակարգային ձևով դրված է գործադիր իշխանության ղեկավար՝ Հանրապետության նախագահի ուսերին: Մեկ այլ օրինակ է օրենսդրի թույլտվությունը. Իրանի «իսլամական պատժամիջոցների մասին» օրենսգրքի 500-րդ հոդ. նշված է, որ ամեն ոք, ով Իրանի վարչակազմի դեմ կամ վարչակազմի դեմ գործող կազմակերպությունների օգտին «ցանկացած եղանակով» քարոզչություն իրականացնի, կդատապարտվի ազատազրկման երեք ամսից մեկ տարի ժամկետով: Օրենքի նման կարգավորումը խոսքի ազատությունը սահմանափակելու համար, այն էլ անսահմանափակ կերպով ու «ցանկացած եղանակով» արտահայտություններով, անտեղի և անթույլատրելի է: Ցավոք սրտի, Իրանում շատ են հնչում խոսքի ազատության մասին հրապուրիչ կարգախոսներ, սակայն օրենքները մարդկանց բողոքելու հնարավորություն չեն տալիս: Ամեն դեպքում վատ և ոչ ճիշտ օրենքներով կարելի է որոշակի ժամկետով զսպել ժողովրդին ու հասարակությանը, բայց նմանատիպ պատժամիջոցների կիրառումը չի կարող լինել մշտական ու հավիտենական լուծում[223]:

[223] Ռասեխ Մ., Միջազգային իրավունքի և մարդու իրավունքների տեսություն // Իրավաբանական հետազոտություններ, հ.՝ 41, Շահիդ Բեհեշթի համալսարանի իրավաբանության ֆակուլտետ, Թեհրան, գարուն-ամառ, 2005, էջ 11-84:

ԳԼՈՒԽ 3. ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 1. Դատական համակարգի վերակառուցումը հեղափոխությունից հետո և դրանում «Վելայաթ Ֆաղիհ»-ի տեսության կիրառումը

Իրանի դատական համակարգը սկզբունքային, արդյունավետ և արևմտյան պետությունների դատական համակարգին համապատասխանեցված տեսքով առաջին անգամ ձևավորվել է Ռեզախան Փահլավիի օրոք, Աբդոլհոսեյն Թեյմուրթաջի կողմից: Այս դատական համակարգը գործեց նաև Ռեզախանի որդու՝ Մոհամմադռեզա Փահլավիի օրոք և պահպանեց ռոմանագերմանական իրավաբանությունից իր ընդօրինակման, փոփոխության ու զարգացման ընթացքը: Իրանում Իսլամական Հեղափոխությունից հետո արմատական փոփոխությունների ենթարկվեց դատական համակարգը և իսլամի կրոնական կանոնները դարձան բոլոր դատական ու դատավարական սկզբունքների հիմքը: Իսլամական դատավարության մեջ էական տարբերություն չկա քաղաքացիական և քրեական գործերի միջև: Դատավարություն է կոչվում դատավարության սկզբունքների, հրահանգների, մեթոդների ու արարողակարգերի համալիրը, որոնք պետք է պահպանվեն դատարանի և դատավարության մասնակիցների կողմից իրավական կամ քրեական հայցը քննելու համար[224]: Թեև քաղաքացիական դատավարության մեջ արգելված է ոտնահարել ուրիշների իրավունքները, այնուամենայնիվ ի հեճուկս քրեական դատավարության, որին հետևում է կատարողի նկատմամբ պատժամիջոցի կիրառումը, քաղաքացիական դատավարության մեջ մեղավորի նկատմամբ որևէ պատիժ սահմանված չէ:

Առաջին քաղաքացիական օրենսգրքի ու դատարանի պատմությունը վերաբերում է Ղաջարաների դինաստիայի Նասերէդին Շահ թագավորի ժամանակաշրջանին, երբ 1912 թ. հիմնադրվեց «առևտրային դատարանը»: Այնուհետև 1939 թ. դրան փոխարինեց քաղաքացիական դատավարության մասին օրենսգիրքը: 1994 թ. Իսլամական Հեղափոխությունից հետո՝ «ընդհանուր իրավասության» և

[224] Ամիդ Հ., Պարսկերեն բառարան, 33-րդ տպ., Ամիր-Քաբիր, Թեհրան, 2006, էջ 102:

«Հեղափոխության» դատարանների կազմավորմամբ բարեփոխվեց այդ դատավարության օրենսգիրքը և ներկայացվեց խորհրդարան վավերացման համար: Այդ օրենսգրքի հոդվածներից 529-ը վերաբերում էին քաղաքացիական դատավարությանը, իսկ մնացածը՝ քրեական դատավարությանը: Ի վերջո, 2000 թ. դատարաններին բաժանելով իրավական և քրեական տեսակների, օրենսդիրը ընդունեց և պարտադիր կատարման ենթակա դարձրեց քաղաքացիական դատավարության օրենսգիրքը՝ իրավական տեսակի դատարանների համար[225]:

Իրանի բոլոր դատարաններում աշխատող դատավորները նշանակվում են դատական իշխանության ղեկավարի կողմից: Իհարկե, մինչև Սահմանադրության վերանայումը, նախկին Սահմանադրության 58-րդ հոդվածի համաձայն, դատական իշխանության ղեկավարի պարտականությունները դրված էր «Դատական Գերագույն խորհուրդ» կոչվող մարմնի վրա: Այդ խորհուրդը համարվում էր ամենաբարձր ատյանը դատական իշխանության մեջ: 1989 թ. Սահմանադրության 157-րդ հոդվածի համաձայն, Իրանի դատական և իրավական համակարգից հանվեց «Դատական Գերագույն խորհուրդը» և այդ խորհրդի պարտականություններն ու լիազորությունները դրվեցին դատական իշխանության ղեկավարի վրա, ով նշանակվում է Գերագույն հոգևոր առաջնորդի կողմից՝ 5 տարի ժամկետով: Ներկայումս նշված պաշտոնյան է վերահսկում դատական ատյաններն ու բոլոր դատարանների հարցերը, ինչպես նաև նշանակում և ազատում է դատավորներին: Այդուհանդերձ մի շարք դատական մարմինների կառուցվածքը շարունակում է պահպանել իր նախկին տեսքն ու ինքնությունը: Օրինակ՝ Իրանում «Երկրի Գերագույն դատարանը», որը Սահմանադրության 161-րդ հոդվածի համաձայն, գլխավորում է երկրի բոլոր դատական ատյանները, կամ դատական և գործադիր իշխանությունների միջև հարաբերությունները կարգավորող արդարադատության նախարարը շարունակում են գործել նախկին ընթացքով[226]: Համենայն դեպս, Իրանի Իսլամական Հեղափոխության հետևանքով դատական և արդարադատության համակարգում, ինչպես նաև երկրի օրենսդրության մեջ տեղի ունեցավ արմատական փոփոխություն ու զարգացում, և

[225] Բորուջերդի Մ., Իրավական դատավարությունների սկզբունքները, 1-ին տպ., Սեմնանի, Թեհրան, 1929, էջ 31:
[226] Abrahamian E., A history of Modern Iran, 2nd Ed., Cambridge, 2008, p. 177.

դատական իշխանությունը ևս հայտնվեց «Վելայաթ Ֆաղիհ»-ի տեսության (մահմեդական Գերագույն հոգևոր իրավաբանի հոգաբարձության տեսություն) գերիշանության և Հանրապետության Գերագույն առաջնորդի ղեկավարության տակ[227]: Առաջին քայլով լուծարվեց նախկին օրենսդրությունը և խորհրդարանի կողմից հաստատվեց և ի կատար ածվեց «Ընդհանուր իրավասության» և «Հեղափոխության» դատարանների կազմավորման մասին օրենքը: Այնուհետև «Ընդհանուր իրավասության» և «Հեղափոխության» դատարանների կազմավորման մասին օրենքի համաձայն, Իրանի ամբողջ տարածքում աշխատանքի ընդունվեցին կրոնական իմաստուններ և հոգևորական դատավորներ և 1994 թ. հիմնադրվեցին «Ընդհանուր իրավասության» և «Հեղափոխության» դատարան-ները: Դատարանները կազմավորվեցին մեկ դատավորի ներկայությամբ սկզբունքով:

2004 թ. բարեփոխվեց նշված օրենքը և այդ նույն օրենքի 1-2-րդ հոդվածների համաձայն, «Ընդհանուր իրավասության» դատարանները բաժանվեցին իրավական (քաղաքացիական) ու քրեական դատարանների: Ինչպես երևում է այդ դատարանների անվանումից, յուրաքանչյուր դատարանում գործերը վարելու իրավասությունները տրվեցին հատուկ քրեական հարցերով դատավորներին և հատուկ իրավական հարցերով դատավորներին: Այդ ընթացքն Իրանի դատական համակարգում շարունակվում է մինչ այսօր: Նշված օրենքի 4-րդ հոդվածի համաձայն, անհրաժեշտության դեպքում, օրինակ՝ դատական գործերը մեծաքանակ լինելու կամ այլ պատճառներով, ցանկացած վայրում տվյալ համայնքի դատարանի նախագահը կարող է քրեական գործը ուղարկել դատարանի իրավական մասնաճյուղ կամ էլ հակառակը՝ իրավական գործը ուղարկել դատարանի քրեական մասնաճյուղ, որպեսզի համապատասխան դատավորը ընդունի գործի վարույթը: Թվում է, թե այս հոդվածի առկայությամբ կարելի է պնդել, որ Իրանի դատարանները օժտված են մի համընդհանուր իրավասությամբ գործերը վարելու համար: Յուրաքանչյուր նահանգում գոյություն ունեն երեք դատավորներից բաղկացած վերաքննիչ դատարաններ, որոնք վարույթ են ընդունում տվյալ նահանգի առաջին ատյանի դատարանների կայացրած վճիռների դեմ բողոքները: Հանրապետության բոլոր դատարաններին, դատական ու ոչ

[227] Ամիդ-Զանջանի Ա., Հիմնարար իրավունքների հիմունքներ, 4-րդ տպ., Մաջդ, Թեհրան, 2013, էջ 92:

դատական ատյաններին գլխավորում է «Երկրի Գերագույն դատարանը», որն ունի երեք պարտականություն՝ դատարաններում օրենքների ճիշտ իրագործման նկատմամբ վերահսկողությունը, դատական մոտեցումների միասնականության ապահովումը, օրենքով հանձնարարված պարտականությունների կատարումը՝ դատական իշխանության ղեկավարի կողմից սահմանված ընթացակարգերի հիման վրա: Իրանի քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն, քաղաքացիական իրավունքի վերաբերյալ հայցերի վճռաբեկ վարումը այս ատյանի պարտականությունն է:

§ 2. Քաղաքացիական գործեր քննող դատարանները և դրանց գործառույթային առանձնահատկությունները

Առաջին ատյանի քաղաքացիական և հաշտարար իրավասության դատարանները: Իրանի իրավական համակարգում քաղաքացիական բոլոր գործերի, այդ թվում՝ ֆինանսական ու քաղաքացիական հայցերի վարույթն իրականացվում է ընդհանուր իրավասության դատարաններում: Օրինակ՝ բնակարանի, կացության, քաղաքացիության, աշխատանքի և այլ հարցերի վերաբերյալ հայցերի վարույթն իրականացվում է 2000 թ. ընդունված քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն: Իհարկե այս օրենսգիրքը բեկանել է 1993 թ. ընդունված «Ընդհանուր իրավասության» և «Հեղափոխության» դատարանների կազմավորման մասին օրենսգիրքը, որը վերաբերում էր ոչ քրեական հարցերին, քաղաքացիական հայցերին ու իրավունքին: Ընդհանուր իրավասության դատարաններից մի մասնաճյուղ կոչվում է «ընտանեկան դատարան» և ունի հատուկ պայմաններով օժտված դատավոր, վարույթ է ընդունում միայն ընտանեկան հարցեր, այդ թվում՝ ամուսնության, ամուսնալուծության, «Մեհրիյեի» (փեսացուի կողմից հանձնառած հարսնացուին վճարելիք գումարը կամ գույքը), ալիմենտի և այլ հարցերի վերաբերյալ հայցերը, իսկ երբեմն դա ներառում է մարդկանց քաղաքացիական իրավունքներն ու հարցերը[228]:

Իրանում իրավական հարաբերությունների ու քաղաքացիական իրավունքի

[228] Ընտանեկան դատարանի գլխավոր իրավասությունն է վարույթ ընդունել ամուսնության, ամուսնալուծության, «Մեհրիյեի», օժիտի, երեխայի խնամակալության, ալիմենտի, վստահված խնամակալի, անձի հասունության և արյունակցության հարցերի վերաբերյալ հայցերը:

որոշման և տարաձայնությունների լուծման գլխավոր աղբյուրն է 1928 թ. ընդունված քաղաքացիական օրենսգիրքը, որի համաձայն, ընդհանուր իրավասության դատարաններում վարույթ են ընդունվում բոլոր իրավական հայցերը, այդ թվում՝ վայելելու իրավունքը (մարդկային իրավունքներ ունենալու իրավունքը) կամ հասարակության շրջանում քաղաքացիական իրավունքների իրագործման իրավունքը:

Դատարաններից բացի, դատախազությունները որպես նախնական փուլում բացահայտող, քննող և վարող մարմին, մոտ մեկ տասնամյակ է, ինչ կրկին կազմավորվել են Իրանի իրավական համակարգում: Սակայն այս մարմնին արգելված է վարույթ ընդունել քաղաքացիական իրավունքի և քաղաքական հանցագործությունների վերաբերյալ գործերը, բայց սակավաթիվ դեպքերում դատախազությունում քննիչի կողմից նախաքննություն է իրականացվում մի շարք քաղաքական հանցագործությունների գործերով, որոնք գտնվում են տվյալ նահանգի քրեական դատարանի իրավասության տակ[229]: Իհարկե, գործի վարույթը իրավական դատարան-ներում իրականացվում է այնքան ժամանակ, քանի դեռ որևէ հանցագործություն չի կատարվել, իսկ եթե մարդկանց քաղաքացիական իրավունքների ոտնահարման հարցում տեղի ունենան հանցագործություններ, ինչպիսիք են՝ մարդկանց տարբեր քաղաքացիական իրավունքների նկատմամբ ոտնձգությունը կամ դրանց վերացումը, ապա հարցը ստանում է քրեական բնույթ և օրինազանցների նկատմամբ կվերաբերվեն «Իսլամական պատժամիջոցների մասին» օրենսգրքով կամ այլ օրենքներով:

Իրանում դատական գործերի մեծաթիվ լինելու պատճառով, ինչը այսօր դարձել է Իրանի դատական համակարգի ամենամեծ հիմնախնդիրներից մեկը, և ի կատարումն «Երկրի զարգացման երրորդ ծրագրի մասին» օրենքի 189-րդ հոդվածի, 2000 թ. օրենսդիրը ձեռնամուխ եղավ հաշտարար խորհուրդների վերստին հիմնադրմանը, կրկին կազմավորեց դրանց: 2005 թ. նախարարների խորհրդի կողմից հաստատվեց հաշտարար խորհուրդների կազմավորման մասին կանոնակարգը: Այդ կանոնակարգի շնորհիվ, այսօր պարզաբանվել և ընդլայնվել են հաշտարար խորհուրդների

[229] Հոջաթի Ս.Մ., Ներկա կարգերում ընդհանուր և հեղափոխության դատարանների ձևավորման մասին օրենքը, 1-ին տպ., Ավա, Թեհրան, 2010, էջ 34:

գործունեությունն ու իրավասությունը[230]: Հաշտարար խորհուրդների մասին օրենքի 8-րդ հոդվածի համաձայն, հաշտարար խորհուրդների իրավասությունը սահմանափակվում է միայն ֆինանսական հայցերով՝ մինչև գումարի որոշակի սահման, իսկ խիստ սահմանափակ կերպով ներառում է նաև ոչ ֆինանսական հայցերը[231]: Քանի որ այդ խորհուրդների անդամները մասնագետներ չեն և կազմվել են հենց ժողովրդից, ապա նրանք իրավունք չունեն միջամտելու և վճիռներ կայացնելու կարևոր հարցերում և ոչ ֆինանսական վեճերում, ինչպիսիք են՝ մարդկանց քաղաքական ու քաղաքացիական իրավունքները[232]: Թվում է, թե դատարանների և հաշտարար խորհուրդների պես այլ մարմինների իրավասության որոշման հարցում տարաձայնությունների ժամանակ իրավասու ատյան պետք է համարել արդարադատության համակարգի դատարանները, որովհետև Սահմանադրության 159-րդ հոդվածի համաձայն, արդարության պահանջա-տիրության գլխավոր ատյաններն են արդարադատության դատարանները: Նույնիսկ որոշ դատավորներ, ապավինելով այս հոդվածին, իրենց իրավասու են համարում վարույթ ընդունելու բոլոր այն վեճերը, որոնք գտնվում են հաշտարար խորհրդի իրավասության տակ, ինչը ճիշտ պատճառաբանություն չի թվում՝ հաշվի առնելով օրենքների պարտադրական և հարկադրական լինելու հանգամանքը: Ամեն դեպքում Իրանում մարդկանց քաղաքացիական իրավունքների ու ֆինանսական վեճերի վարույթի ընդունման գլխավոր ատյաններն են յուրաքանչյուր նահանգի իրավական դատարանները, ապա տվյալ նահանգի վերաքննիչ դատարանը, այնուհետև հատուկ պայմանների պահպանմամբ այն վարույթ է ընդունվում «Երկրի Գերագույն դատարանի» կողմից:

Սահմանադրության 158-րդ հոդվածի համաձայն, Իրանի բոլոր դատական ատյանները գտնվում են դատական իշխանության ղեկավարի վերահսկողության ներքո: Դատական իշխանության բարձրաստիճան պաշտոնյաները, ինչպիսիք են՝

---

[230] Շամս Ա., Քաղաքացիական դատավարության կարգերը, առաջին հատոր, 14-րդ տպ., Դերաք, Թեհրան, 2006, էջ 77:

[231] Հաշտարար խորհուրդների մասին օրենքի 9-րդ և 11-րդ հոդ. համաձայն, այդ խորհուրդների իրավասության մեջ են մտնում թողության ոչ ենթակա հանցագործությունների մասնավոր հատվածը, թողության ենթակա բոլոր հանցագործությունները, իրավական ու քաղաքացիական հայցերը մինչև 5 մլն թուման սահմանագիծը, վարորդական խախտումները կանխարգելող հանցանքները, վարձատուի և վարձակալի միջև եղած վեճերը, ժառանգությունը, հանգուցյալի պարտք ու պահանջների որոշումը:

[232] Մաթին-Դաֆթարի Ա., Քաղաքացիական և առևտրային դատավարության կարգերը, առաջին հատոր, 2-րդ տպ., Մաջդ, Թեհրան, 2002, էջ 40 և 406:

երկրի գլխավոր դատախազը կամ «Երկրի Գերագույն դատարանի» նախագահը, ընտրվում են դատական իշխանության ղեկավարի կողմից՝ բարձրաստիճան հոգևորականների միջից: Օրենքի համաձայն, արդարադատության համակարգն ու դրա դատարանները հանդիսանում են պաշտոնական ատյաններ բողոքներ ներկայացնելու և արդարություն պահանջելու համար[233]: Սակայն այդ ատյաններից բացի, կան նաև ոչ դատական ատյաններ տարաձայնությունների վերացման և վեճերի քննման համար: Սրանք այն ատյաններն են, որոնց դատավորների նշանակումն ու ազատումը ընդհանրապես կամ մասնավորապես իրականացվում են գործադիր իշխանության կողմից և դուրս են դատական իշխանության իրավասությունների շրջանակից:

Քաղաքացիական դատական գործերի վերանայման ինստիտուտը և ատյանները: «Ընդհանուր իրավասության» և «Հեղափոխության դատարանների» կայացրած վճիռների վերաքննության ատյանն է տվյալ նահանգի կենտրոնում գտնվող վերաքննիչ դատարանը: Վերաքննություն պահանջելն առաջին ատյանների դատարանների կայացրած վճիռների նկատմամբ բողոքարկման սկզբնական ու սովորական եղանակներից մեկն է: Եթե կողմերից մեկը կամ երկուսը միասին գտնում են, որ իրենք տուժվում են դատարանի որոշումից, ապա կարող են վերաքննություն պահանջել ավելի բարձր ատյանում՝ տվյալ նահանգի Վերաքննիչ դատարանում: Առաջին ատյանի դատարանի կայացրած վճիռը իսլամ կրոնի սկզբունքներին ու ընթացակարգերին հակասելու դեպքում, Վերաքննիչ դատարանը կարող է բեկանել տվյալ վճիռը, հակառակ դեպքում հաստատել այն, ընդ որում այս փուլում կայացված վճիռը վերջնական և պարտադիր կատարման ենթակա է: Այլ խոսքով, Իրանի դատավարաության օրենսգրքում նախատեսված է երկփուլ և նույնիսկ եռափուլ դատավարության սկզբունքը, ընդ որում երբեմն առաջին ատյանի կամ Վերաքննիչ դատարանի որոշման դեմ բողոքարկողը կարող է իր բողոքը ներկայացնել և քննություն պահանջել «Երկրի Գերագույն դատարանում»[234]: Սակայն դա հակասում է իսլամի նկատի ունեցած դատավարության ձևինը, քանի որ իսլամական

[233] Տե՛ս Իրանի Սահմանադրության 159-րդ հոդվածը:
[234] Սադրզադե Աֆշար Մ., Քաղաքացիական ու առևտրային դատավարության կարգերը, 3-րդ տպ., Ջահադ-Դանեշգահի, Թեհրան, 1996, էջ 251:

դատավարության սկզբունքների և իսլամական իրավաբանական ու կրոնական աղբյուրների համաձայն, դատավարության միափուլ և միադատավոր լինելու սկզբունքը պարտադիր հանգամանք է[235], այն իմաստով, որ վեճերը պետք է քննվեն միայն մեկ փուլում մեկ դատավորի կողմից: Իսկ մյուս կողմում վարույթի երկփուլ կամ բազմափուլ լինելու տեսակետն է, այն իմաստով, որ իրավական (քաղաքացիական) կամ քրեական հայցերում անձն ունի բողոքարկելու հնարավորություն, և դա այսօր ընդունված է աշխարհում տարածված ու հեղինակավոր համակարգերում: Նույնիսկ «Common law» իրավական համակարգում, որտեղ նախկինում գտնում էին, որ բոլոր պնդումները, պաշտպանությունները, փաստարկներն ու ապացույցները պետք է ներկայացվեն առաջին ատյանի դատարանում, փոխվել է այդ մոտեցումը և վերաքննիչ ու բարձր ատյանի դատարաններին ևս թույլատրվում է քննել դատարանի մասնակիցների կողմից ներկայացված նոր ապացույցները:

1980 թ. Իրանի Իսլամական Հեղափոխությունից մեկ տարի անց ոտնձգություն կատարվեց իրավական համակարգում կողմերի բողոքարկման ու վերաքննման պահանջի սկզբունքի նկատմամբ, «Հեղափոխության խորհուրդը» վերացրեց Իրանի իրավական համակարգում քաղաքացիական հայցերը վարող նահանգային դատարաններին, և առաջին փուլում ընդհանուր իրավասության դատարանների կայացրած վճիռները վերջնական դառան: 1990 թ. օրենսդիրը հասկացավ իր սխալը ու թեև սկզբունքը դրեց դատարանների կայացրած վճիռների վերջնական լինելու վրա, այնուամենայնիվ բազմաթիվ դեպքերում այդ վճիռները համարեց վերաքննության ենթակա[236]: Իրանի դատավարական համակարգում, ինչպես ամրագրված ու ընդունված է նաև այլ իրավական համակարգերում, դատարանները պարտավոր են որոշում և վճիռ կայացնեն հայցվորի պահանջի ու հավակնության շրջանակում, և նույնիսկ Իրանի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 426-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, եթե դատավճիռը հակասում է հայցվորի պահանջին, ապա հարցը ոչ միայն կարելի է վերաքննել, այլև այն քննման ենթակա է նաև դատավարության

[235] Mottahedeh R., The Mantle of the Prophet: Religion and Politics in Iran, OneWorld, 2000, p. 225.
[236] Տե՛ս 1999 թ. ընդունված, «Դատարանների վճիռների վերաքննման դեպքերի որոշման և դրանց վարույթի իրականացման եղանակների մասին» օրենքը, էջ 617:

վերականգնման (դատական գործի վերանայման) առումով[237]: Ամեն դեպքում, քանի որ անգամ լավագույն դատավորներն էլ, ինչպես բոլոր մարդիկ, հնարավոր է սխալ թույլ տան, ուստի տրամաբանական ու անհրաժեշտ է ինչ-որ միջոցների նախատեսումը դատավորների կայացրած վճիռները բողոքարկելու և վերաքննելու համար, ինչպիսին դատավարության փուլային եղանակն է:

Այժմ անդրադառնանք Իրանի իրավական համակարգում իրավական դատարանների կայացրած վճիռները նկատմամբ բողոքարկելու և վերաքննություն պահանջելու տարբեր եղանակներին:

Բողոքարկում առաջին ատյանի դատարանում: Ընդհանրապես դատարանների ու դատավորների կայացրած վճիռների բողոքարկումը պետք է տեղի ունենա բարձր ատյաններում կամ գոնե մեկ այլ ատյանում: Բայց երբեմն բողոքարկումը տեղի է ունենում հենց վճիռը կայացնող առաջին ատյանի դատարանում: Դա դատապարտյալի բողոքարկումն է հեռակա կարգով կայացված դատավճռի նկատմամբ և տեղի է ունենում այն դեպքերում, երբ պատասխանողը անձամբ կամ նրա դատապաշտպանը ներկա չեն գտնվել դատարանի նիստերից ոչ մեկում, նա չի ներկայացրել պաշտպանության միջնորդություն, ծանուցագրերը նրան անձամբ չեն ծանուցվել և վերջում առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել: Նման բողոքարկումը քննության է առնվում հենց առաջին ատյանի դատարանի կողմից: Իրանի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 306-րդ հոդվածի համաձայն, դատավճիռը հրապարակվելու պահից առաջին ատյանում բողոքարկելու ժամկետը Իրանում կացություն կարգավիճակ ունեցող մարդկանց համար 20 օր է, իսկ արտերկրում կացության կարգավիճակ ունեցող մարդկանց համար՝ երկու ամիս: Իհարկե, հարգելի պատճառները, ինչպիսիք են՝ հիվանդությունը, բնական աղետները, ջրհեղեղներն ու երկրաշարժը, կարող են երկարացնել այդ ժամկետը:

Բողոքարկում նահանգի վերաքննիչ դատարանում: Քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն[238], դատավճիռը բեկանվում է այն ժամանակ,

---

[237] Անդրազգային դատավարության սկզբունքներ, Մասնավոր իրավունքների հավասարեցման միջազգային կազմակերպություն, ԱՄՆ Իրավունքի Կազմակերպություն, թարգմ.՝ Փուրօսթադ Մ., 1-ին տպ., Շահրե Դանեշ, Թեհրան, 2008, էջ 65:

[238] Տե՛ս 2002 թ. ընդունված «Քաղաքացիական դատավարության մասին« օրենսգրքի 326-րդ հոդվածը:

երբ վճիռը կայացնող դատավորը հենց ինքն է հասկանում իր սխալի մասին, կամ մեկ այլ դատավաոր է նկատում կայացված դատավճռի սխալ լինելու հանգամանքը, կամ էլ վճիռը կայացնող դատավորը կամ դատարանը վարույթն իրականացնելու իրավասություն չեն ունեցել: Ամեն դեպքում, Իրանի քաղաքացիական դատավարության մասին օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն, դատարանների վճիռները վերաքննման ենթակա են հետևյալ պարագաներում. ա) ֆինանսական վեճերը, որտեղ պահանջը կամ դրա արժեքը գերազանցում է 300 հազար իրանական թումանը, բ) ոչ ֆինանսական վեճերում կայացված բոլոր դատավճիռները, գ) վճիռը, որը վերաբերում է վեճի կողմնակի հանգամանքներին, մինչդեռ բուն վեճը ենթակա է վերաքննության:

Նշված հոդվածի առաջին մասում կա մի խնդիր, որը քիչ է արժանացել իրավաբանների ուշադրությանը, և դա այն է, որ այսօր հաշտարար խորհուրդների կազմավորմամբ մինչև 5 միլիոն իրանական թուման պահանջ ներկայացվող հայցադիմումների վարույթը փոխանցվում է այս խորհուրդներին, իսկ հաշտարար խորհուրդների կայացրած բոլոր վճիռների բողոքարկման ատյանն է ընդհանուր իրավասության իրավական դատարանը: Ուստի, խորհուրդների մասին օրենքի այս մասը հակասում է քաղաքացիական դատավարության մասին օրենսգրքին և անարդյունավետ է դարձել այդ օրենսգրքի 331-րդ հոդվածը: Դատավորների մոտեցումը ևս համապատասխանում է այս մեկնաբանությանը և իրավական դատարանները գտնում են, որ 300 հազար թումանից պակաս պահանջ ներկայացնող հայցադիմումների վարույթը պետք է իրականացվի հաշտարար խորհուրդներում: Սակայն հարկավոր է, որ դատավարության մասին օրենսգրքի վերանայմամբ օրենսդիրը վերացնի այդ հակասությունը:

Ինչևէ, առաջին ատյանի դատարանի կողմից ոչ հեռակա կարգով կայացված վճիռները կարող են բողոքարկվել տվյալ նահանգի վերաքննիչ դատարաններում, որոնք համարվում են բարձր ատյանի դատարաններ: Դատավարության մասին օրենսգրքի 331-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, քաղաքական ու քաղաքացիական իրավունքին վերաբերվող վեճերը համարվում են ոչ ֆինանսական վեճեր, հետևաբար դրանց վերաբերյալ դատավճիռները բողոքարկման ենթակա են տվյալ նահանգի

վերաքննիչ դատարանում: Հաշտարար խորհուրդների կողմից կայացված վճիռներն էլ ենթակա են բողոքարկման ընդհանուր իրավասության իրավական դատարաններում:

Վճռաբեկ բողոքարկում «Երկրի Գերագույն դատարանում»: Քանի որ բազմաթիվ պետություններում Գերագույն դատարանը համարվում է իրավական բարձրագույն ատյան, ուստի ցանկացած բողոքարկում չի կարող ներկայացվել այս ատյանում և «Երկրի Գերագույն դատարանում» վարույթ են ընդունվում միայն շատ սակավաթիվ գործեր: Դատավարության օրենսգրքի 367-րդ հոդվածի համաձայն, առաջին ատյանի կայացրած այն վճիռները, որոնք չեն բողոքարկվել վերաքննիչ դատարաններում, համարվում են վերջնական, սակայն եթե պահաջատիրությունը գերազանցում է 2 միլիոն թումանը կամ դատավճիռը վերաբերում է ամուսնության կամ դրա բեկանման, ամուսնալուծության, ազգակցության որոշման, քաղաքացիական կամ ունեցվածքի նկատմամբ իրավազրկման կամ գույքի կտակման հարցերին, ապա վերաքննիչ դատարանում բողոքարկման ժամկետը լրանալուց հետո 20 օրվա ընթացքում այդ վճիռները կարող են վճռաբեկ կարգով բողոքարկվել «Երկրի Գերագույն դատարանում»: Վերաքննիչ դատարանների վճիռները վերջնական ու վճռաբեկ բողոքարկման ենթակա չեն, բացառությամբ եթե դատավճիռը վերաբերվի ամուսնության կամ դրա բեկանման, ամուսնալուծության, ազգակցության որոշման, քաղաքացիական կամ ունեցվածքի նկատմամբ իրավազրկման կամ գույքի կտակման հարցերին: Նշված բոլոր դեպքերում ինչ-որ կերպ պահպանվել է դատավորի կայացրած վճռի վերջնական լինելու և բողոքարկման ենթակա չլինելու սկզբունքը, այլ խոսքով սկզբունքը հիմնված է դատավճիռների վերջնական լինելու կանխավարկածի վրա[239]: Վճռաբեկություն պահանջելը յուրահատուկ բողոքի ձև է՝ դատավորների վճիռների դեմ: Վճռաբեկ ատյանում բողոքարկման ժամանակ Երկրի Գերագույն դատարանում փոփոխության կամ բարեփոխման չի ենթարկվում առաջին ատյանի դատարանի վճիռը, չի կարելի այն համարել երրորդ փուլ դատարանների կայացրած վճիռների նկատմամբ դատողություն անելու համար և այն տարբերվում է նաև նահանգների վերաքննիչ դատարաններում բողոքարկումից: Վճռաբեկ ատյանում բողոքարկումը նշանակում է որոշել բողոքարկված դատավճռի

[239] Քաղաքացիական դատավարության մասին օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն, «դատարանների կայացրած վճիռները վերջնական են, բացառությամբ սույն օրենքում կամ այլ օրենքներում նշված բեկանման կամ վերաքննության ենթակա դեպքերում»:

համապատասխանությունը կամ անհամապատասխանությունն օրենսդրական ու իսլամական նորմերին: Երկրի Գերագույն դատարանը կա՛մ բավարարում է բողոքարկվող դատավճիռը, կա՛մ բեկանում այն, որևէ վճիռ չի կայացնում վեճը կարգավորելու համար և դատավճիռը բեկանման դեպքերում, այն ուղարկում է առաջին ատյանի դատարան մեկ այլ պատշաճ վճիռ կայացնելու համար[240]: Ցավոք սրտի, ի հեճուկս Երկրի Գերագույն դատարանի պարտականության, իրանական օրենսդիրը ընդունեց միահոդված մի օրենք որպես 2002թ. «Ընդհանուր իրավասության» և «Հեղափոխության» դատարանների մասին օրենքի 18-րդ հոդվածի բարեփոխում, որի համաձայն, կարելի է իսլամ կրոնին դեմ լինելու պնդումների պատճառաբանությամբ և դատական իշխանության ղեկավարի կարգադրությամբ պահանջել Երկրի Գերագույն դատարանում հինգ դատավորների մասնակցությամբ քննելու «Ընդհանուր իրավասության» և «Հեղափոխության» դատարանների կայացրած բոլոր վերջնական վճիռների էությունը: Սակայն բողոքարկման այս ձևը ճիշտ չի թվում, որովհետև նախ, Սահմանադրության և քաղաքացիական դատավարության մասին օրենսգրքի համաձայն, «Երկրի Գերագույն դատարանը» չի կարող և չպետք է քննի գործերի էությունը և Սահմանադրության 161-րդ հոդվածի համաձայն, այս ատյանը միայն վերահսկում է դատարանների և դատական ու ոչ դատական բոլոր իրավական ատյանների աշխատանքը: Երկրորդ, հաշվի առնելով դատավարության վերականգնման (դատական գործի վերանայման) հնարավորությունը, այդ մեթոդի անհրաժեշտությունը չկա, որովհետև եթե դատարանների վճիռները օրենքին դեմ լինեն, ապա քաղաքացիական կամ քրեական վարույթներում կարելի է օգտվել դատավարության վերականգնման հնարավորությունից և օրենսդիրի այդ որոշման անհրաժեշտությունը չկա: Երրորդ, դատական իշխանության ղեկավարի կարգադրության համար անհրաժեշտ է, որ նա իրականացնի դատական վարույթ, մինչդեռ նրան թույլատրված չէ դատական վարույթ իրականացնել: Չորրորդ, հստակեցված չէ, թե ո՞րն է «իսլամ կրոնին դեմ լինելը», քանի որ իսլամական կրոնական աղբյուրները տարբեր են և արդյունքում այս կապակցությամբ հոգևորական իրավաբանների տեսակետներն ու հրովարտակները (ֆեթվաները) տարբեր են: Այս

[240] Շամս Ա., Քաղաքացիական դատավարության կարգերը, երկրորդ հատոր, 14-րդ տպ., Դերաք, Թեհրան, 2006, էջ 383:

միահոդված օրենքում հստակեցված չեն նաև դատավարության մեթոդը, ծախսերն ու օգտագործվող դրոշմանիշների արժեքները և պարզ չէ, թե արդյո՞ք պետք է ղեկավարվել դատավարության վերականգնման ընթացակարգով, թե՞ ոչ: Թեև 2012 թ. սահմանափակվեց այս միահոդված օրենքը, այնուամենայնիվ 2006 թ. «Վարչական արդարադատության դատարանի» մասին օրենքի բարեփոխմամբ նախատեսվել են այդ ատյանում վերջնական վճիռների անկայունության ու ոտնձգության մոտեցման մասին, ինչը նշված հանգամանքները հաշվի առնելով, ճիշտ չէ[241]: Ինչևէ, եթե դատավարության մասնակիցների համար նախատեսված լինեն վերաքննության մեկ փուլ և դրանում վերաքննիչ դատարանը 2 դատավորի փոխարեն կազմված լինի, ասենք՝ 5 դատավորից և կառավարվի խորհրդի ձևով, ապա դա պարբերաբար բողոքարկման վերացման պատճառ կդառնա, քանի որ պարբերական բողոքարկումը ինչպես կարող է կանխել հայցվորի կամ պատասխանողի իրավունքների ոտնահարումը, այնպես էլ կարող է դատավարության ձգձգման, անարդյունավետության, դատական համակարգի նկատմամբ դատավարության մասնակիցների հիասթափման, դատական վարույթների քաղաքականացման և վարույթներում ազդեցություն գործելու պատճառ դառնալ, և դա հող կպատրաստի դատական իշխանության հիմնախնդրի, այսինքն գործերի թվաքանակի մեծացման և դատավարությունների ձգձգման համար:

Քաղաքացիական դատավարության սկզբունքները: Ի հեճուկս «Քաման Լոու» տեսակի համակարգով պետություններում երկարատև դատական նիստերի, Իրանում, ռոմանագերմանական համակարգով պետությունների նման քաղաքացիական դատավարությունն իրականացվում է մեկ ժամից պակաս տևողությամբ կարճատև դատական նիստերով: Ի հակառակ անգլոսաքսական իրավական համակարգի, այս համակարգում դատարանների վճիռների գերակշռող մասը բողոքարկվում կամ վերաքննվում են ավելի բարձր դատական ատյաններում: Ռոմանագերմանական համակարգում դատավորները դատավարությամբ են զբաղվում ողջ կյանքի ընթացքում, իսկ մյուսում դատավորներն ընտրվում են փաստաբանների միության

[241] Քազեմզադեհ Ա., Ակնարկ՝ 18-րդ հոդվածի բարեփոխման օրենքի առանձին հոդվածի մասին // Արդարադատության իրավաբանական ամսագիր, հ.՝ 60, Դատական իշխանություն, Թեհրան, 2007, էջ 79-88:

անդամ, տարբեր կարգերի փաստաբաններից: Ռոմանագերմանական իրավական համակարգով պետությունների դատավորներն ունեն ավելի պակաս փորձառություն՝ փաստաբանի մակարդակի: Այդ բոլոր տարբերություններով հանդերձ, իրավաբաններն ու իրավական համակարգերը հակված են նրան, որ բոլոր իրավական համակարգերում քաղաքացիական դատավարությունները լինեն միասնականացված: Այսօր տեսնում ենք քաղաքացիական դատավարության բազմաթիվ կանոններ, որոնք տարբեր պետություններում ու իրավական համակարգերում ընդունվել և կիրառվում են որպես պարտադիր կատարման ենթակա սկզբունքներ: Այս կապակցությամբ նույնիսկ կարելի է նշել «ԱՄՆ-ի իրավաբանության ինստիտուտի» կամ «Մասնավոր իրավունքի ունիֆիկաց-ման միջազգային ինստիտուտի» ձևավորումը, որոնք միաձուլվեցին 2001 թ.[242]: Այստեղ հիմնական նպատակն է ինտեգրել և միանման դարձնել տարբեր պետություններում քաղաքացիական դատավարության օրենսգիրքերն ու դրանց սկզբունքները: Քաղաքացիական դատավարության մասին օրենսգրքում կան սկզբունքներ, որոնք ամբողջովին համապատասխանում են այդ հաստատության օրենքների հետ:

Դատավարության դռնբաց լինելը: Ընդհանուր առմամբ, դատական նիստերին մասնակցելը ապացույցների քննման և վճռի հրապարակման ժամանակ պետք է ազատ լինի հանրության համար: Իհարկե, հասարակական կարգը կամ մարդկանց անձնական ու մասնավոր տիրույթը պահպանելու նպատակով դատարանները կարող են թույլ տալ, որպեսզի դատավարության բոլոր նիստերը կամ դրանց մի մասը լինեն դռնփակ[243]: Դռնբաց նիստերով դատավարությունն արդարության երաշխավորման ու ապահովման եղանակներից մեկն է: Թեև այս հարցը նախապատմություն չունի իսլամական իրավաբանության մեջ, այնուամենայնիվ բազմաթիվ են իսլամի մարգարեի կամ շիա իմամների կողմից իրականացված դատավարությունները, որոնք տեղի են ունեցել դռնբաց նիստերով՝ ժողովրդի ներկայությամբ: Իրանի իրավական համակարգում դատավարության նիստերը դռնբաց են, բացառությամբ քրեական կամ

[242] Ferrand F., La procedure civile international et la procedure civil transnationale: L'incidence de l'integration economique regional, in: Derecho PUC, No. 56, 2003, pp. 361-414.

[243] Անդրազգային դատավարության սկզբունքներ, Մասնավոր իրավունքների հավասարեցման միջազգային կազմակերպություն, ԱՄՆ Իրավունքի Կազմակերպություն, թարգմ.՝ Փուրօսթադ Մ., 1-ին տպ., Շահրե Դանեշ, Թեհրան, 2008, էջ 56:

քաղաքացիական դատավարության մասին օրենսգրքում կամ այլ օրենքներում նախատեսված դեպքերում: Քրեական դատավարության մասին օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին ենթակետի համաձայն, դատավարության դռնբաց լինելը նշանակում է արգելքի բացակայություն դատարանում մարդկանց ներկայության համար: Իհարկե, չի թույլատրվում ՀԼՄ-ներում այն հրապարակել դատավճիռը վերջնական դառնալուց առաջ և այդ ենթակետի խախտողը դատապարտվելու է «զրպարտության» հանցագործության համար նախատեսված պատժամիջոցով: Սահմանադրության 165-րդ հոդվածը ընդգծել և հստակեցրել է դատավարության նիստերի դռնբաց լինելու հանգամանքը: Այս հոդվածի համաձայն, դատական նիստերը լինելու են դռնբաց և մարդկանց ներկայությունն անարգելք է, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանի կարծիքով նիստերի դռնբաց լինելը դեմ է հասարակական կարգին կամ հասարակական բարոյականությանը, կամ եթե մասնավոր հայցում կողմերից մեկը խնդրում է, որպեսզի դատավարությունը դռնբաց չլինի: Այս հանգամանքը հստակորեն ամրագրված է քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետով[244]:

Ավարտված գործի վավերականությունը: Այն կոչվում է նաև դատը իրականացված գործ: Այս սկզբունքի համաձայն, երբ դատարանում վեճի ու հարցի էությունը քննելուց հետո շարադրվում ու կայացվում է դատավճիռը, դատավարության մասնակիցները պարտավոր են հարգել այն: Դատավճռից դժգոհ մնացած անձը միայն կարող է օրենքով նախատեսված եղանակներով նույն կամ ավելի բարձր ատյաններից պահանջել բեկանել վճիռը, բայց նա իրավունք չունի այդ նույն հարցը երկորդ անգամ որպես մեկ այլ վեճ ներկայացնել: Հետևաբար, եթե դատավճիռը վերջնական է դառնում, այլևս չի թույլատրվում այդ նույն հարցի նկատմամբ կրկին հայց ներկայացնել, որպեսզի բեկանվի կամ չեղյալ համարվի նախորդ դատավճիռը, և դատավարության ցանկացած փուլում էլ, որ դա հայտնաբերվի, այդ փուլից սկսած դադարեցվելու է այդ հայցով գործի վարույթը[245]: Այս սկզբունքը ստեղծվել է կրկնվող հայցերով գործերի վարույթի կանխման և դատավճիռների ամրացման նպատակով:

---

[244] Մեհրփուր Հ., Հանրապետության նախագահը և Սահմանադրություն իրագործման պարտականությունը, առաջին հատոր, 2-րդ տպ., Էթելաթ, Թեհրան, 2006, էջ 377:

[245] Հաերի Շահբաղ Ս.Ա., Քրեական դատավարության սկզբունքները, Մարեֆաթ, Թեհրան, 1955, էջ 69:

Փաստաբան ունենալու սկզբունքը: Թեև Ճիշտը սխալից տարբերակելը, արդարություն հաստատելը, դատարանում դատավարության կողմերի միջև վճռելը կատարվում են դատավորի կողմից՝ արդարադատության համակարգի հետ համագործակցությամբ, այնուամենայնիվ այն պահանջում է մի շարք մարդկանց հետ համագործակցություն, ովքեր իրենց մասնագիտությունից ելնելով այդ հարցերում համագործակցում են դատարանների հետ, որովհետև դատավարության օրենսգիրքը պարունակում է բավականին բարդ ու ճշգրիտ հարցեր, որոնց տիրապետումը հեշտ և արագ չի լինում ոչ իրավաբան մարդկանց համար: Այդ իսկ պատճառով դատավարության կողմերը պարտավորվում են՝ որոշ ատյաններում իրենց ուզած գործողությունները կատարել փաստաբանների միջոցով: Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն, դատարաններում դատապաշտպանի լիազորությունը ներառում է դատավարության հարցի հետ կապված բոլոր լիազորությունները, բացառությամբ այն, ինչը պաշտպանյալը ինքն է բացառել կամ դրա լիազորումը դեմ է իսլամ կրոնին: Օրինակ՝ այն հարցերը, որոնք հատուկ կամ բնորոշ են միայն տվյալ անձին, ինչպիսիք են՝ վկայությունը կամ երդվելը և այլն, որոնց դեպքում հնարավոր չէ լիազորել ուրիշին:

Դատավորի անկախության և անկողմնակալության սկզբունքը: Իսլամական դատավարության մեջ դատավորը պետք է լինի ամբողջովին անկողմնակալ ու անկախ, այսինքն՝ նա չպետք է գտնվի որևէ պաշտոնյայի, նույնիսկ կառավարության կամ պետության ղեկավարի ազդեցության տակ և չընդունի որևէ մեկի պատվերը կամ ցուցումը: Դատավորը նաև չի կարող կողմերին ինչ-որ բան պարտադրել, արգելել կամ ներշնչել: Քաղաքացիական դատավարություններում դատավորը հիմնականում մտածում է կողմերի միջև թշնամանքն ու տարաձայնությունը լուծելու մասին, իսկ քրեական դատավարություններում դատավորը ձգտում է բացահայտել ճշմարտությունը[246]: Իսլամական ուսմունքներում խիստ ընդգծվել է դատավարության կողմերի նկատմամբ դատավորի անկողմնակալության սկզբունքի պահպանումը: Նույնիսկ նշված է, որ դատավորը վեճի կողմերի հետ խոսելու ձևի ու նրանց նայելու հարցում ևս պետք է պահպանի հավասարության և անկողմնակալության սկզբունքը:

[246] Զարաաթ Ա., Քրեական դատավարության նիստերի վերանայում և դատավարությունը երկարաձգվելու կանխող միջոցներ // Փայամե Ամուզեշ, հ.՝ 24, Դատական իշխանության ուսումնական գծով վարչություն, Թեհրան, 2014, էջ 15-23:

Քաղաքացիական հարցերում ապացուցելը պնդողի պարտականությունն է[247]:

Օրենքի գերակայության և օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը: Իրավական գործերով դատավարությունների գործընթացի ժամանակ դատարանը պետք է երաշխավորի կողմերի հնարավորությունը հավասար վերաբերմունք ստանալու, ինչպես նաև հայց ներկայացնելու կամ պաշտպանվելու համար ընդունված չափով ժամանակ ունենալու հարցում: Իրանում օրենքն իրավունքի և դատելու գլխավոր աղբյուրն է, իսկ դրա թերության ու անորոշության դեպքում, պետք է դիմել իսլամական իրավաբանության հավաստի աղբյուրներին ու իսլամական ֆեթվաներին (հրովարտակ-ներին): Նման մոտեցումը ընդունված է նաև մի շարք այլ պետությունների օրենքներում: Օրինակ՝ Շվեյցարիայի քաղաքացիական օրեսգրքի 1-ին հոդվածի 3-րդ կետում նշված է. «Ամրագրված օրենքի, անվիճելի սովորույթի ու ավանդույթի բացակայության դեպքում, դատավորը ղեկավարվում է դատական նախադեպով ու հայեցակարգով»[248]: Լավ կլիներ, որ իրանական օրենսդիրը ևս օգտագործեր իրավաբանության մեջ հստակ ու ճանաչված աղբյուրներ հանդիսացող դատական նախադեպ կամ սովորույթ ու ավանդույթ արտհայատությունները՝ «իսլամական իրավաբանների ֆեթվաների ու հավաստի իսլամական իրավաբանական աղբյուրներ» բառակապակցություններից առաջ, որոնք չունեն հստակ սահման և ինչ-որ կերպ հայեցակարգերի մաս են կազմում:

Դատավճիռի փաստարկված ու հիմնավորված լինելը: Դատավճիռում պետք է պահպանվի այն է սկզբունքը, որ վճռի կայացումը հիմնավորված ու փաստարկված է օրենքի դրութներով: Իրանի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 296-րդ հոդվածի 4-րդ կետը տուրք է տվել այս սկզբունքին. դատավճիռում պետք է նշված լինեն այն ուղղությունները, ապացույցները, փաստարկները, սկզբունքներն ու օրենքի հոդվածները, որոնց հիման վրա կայացվել է դատավճիռը[249], հակառակ դեպքում այդ հանգամանքը դատավորի կողմից խախտման կատարման և դատավորների կարգապահական պատասխանատվության հիմք կդառնան: Իհարկե, խոստովանությունները,

[247] Շահիդ Ավվալ, Դամասկոսի փայլը, 1-ին հատոր, թարգմ.՝ Ղարավյան Մ. և Շիրվանի Ա., 44-րդ տպ., Դարոլֆեքր, Թեհրան, 2012, էջ 175:
[248] Մեհրփուր Հ., Մարդու իրավունքները միջազգային փաստաթղթերում և ԻԻՀ դիրքորոշումը, 2-րդ տպ., Էթելաաթ, Թեհրան, 2007, էջ 88:
[249] Տե՛ս Իրանի Սահմանադրության 166-րդ հոդվածը:

փաստաթղթերը, վկայությունները, երդումները և այլն դատավճիռի համար փաստարկ կլինեն այն դեպքում, երբ դա կբավարարի դատավորի խիղճն ու ուշադրությունը: Շիա իսլամական իրավաբանները դատավորի իմացության հարցում տարբերություն չեն դրել քրեական ու քաղաքացիական հարցերի միջև և շիա իրավաբանների մեծ մասը դատավորի իմացությունը համարել են բացարձակ, անհրաժեշտ և թույլատրելի, իսկ օրենսդիրն էլ ղեկավարվել է իրավաբանների մեծամասնության այդ տեսակետով[250]: Մյուս կողմից, սունի իրավաբաններն իսլամի մարգարեի ուղեգծին դեմ են համարում դատավորի կողմից իր իմացության վկայակոչումը: Իրավաբանները գտնում են, որ դատավորն իր իմացությունից կարող է օգտվել միայն դատարանին ներկայացված ապացույցները գնահատելու և դրանից հետևություն անելու համար, բայց չի կարող իր իմացությանը վկայակոչել հայցն ապացուցելու կամ հերքելու համար: Իրանի իրավունքում դատավորի իմացությունը քրեական գործերում ընդունված է և՛ որպես քրեական հայցի ապացույցներից մեկը, և՛ որպես մյուս ապացույցների վավերականություն ու հենարան: Իսկ քաղաքացիական գործերում դատավորի իմացությունը, որպես հայցի ապացույցներից մեկը, ընդունված չէ, քանի որ խստիվ արգելված է կողմերից որևէ մեկի համար ձեռք բերել ապացույց:

Դատավորների պատասխանատվության սկզբունքը: Թեև Իրանի Սահմանադրության 159-րդ հոդվածի համաձայն, արդարադատության համակարգը հանդիսանում է պաշտոնական ատյան բողոքարկելու համար, այնուամենայնիվ հանարավոր է, որ երբեմն դատավորներն իրենց լիազորությունների իրականացմամբ դիտավորյալ կամ ոչ դիտավորյալ կերպով մարդկանց վնաս պատճառեն: Այս կապակցությամբ, Սահմանադրության 171-րդ հոդվածի համաձայն, եթե դատավորն իր մեղքով վնաս պատճառի, ապա նա պատասխանատու և երաշխավոր է, այսինքն՝ եթե դատավորը դիտավորյալ կայացնի հակաօրինական վճիռ, ապա նա կրելու է և՛ քրեական պատասխանատվություն պետական ծառայողների դատարանում, և՛ կարգա-պահական պատասխանատվություն դատավորների կարգապահական դատարանում, և՛ փոխհատուցելու է պատճառած վնասները: Իսկ եթե դատավորի

[250] Իսլամական պատժամիջոցների մասին օրենսգրքի 105-րդ հոդվածի համաձայն, աստվածային իրավունքների ու մարդկային իրավունքների հետ առնչվող հանցագործություններում դատավորը կարող է գործել իր իմացության համաձայն:

սխալը լինի ոչ դիտավորյալ, ապա տուժողին պատճառած վնասների փոխհատուցումն իրականացվելու է պետական գանձարանից և նա որևէ պատախանատվություն չի կրելու[251]:

Այս օրինաչափությունները, որոնց կարելի է կոչել նաև «դատավարությանը իշխող ռազմավարական սկզբունքներ», կարելի է բաժանել երեք ընդհանուր անվանակարգերի. «Արդար դատավարությունը երաշխավորող սկզբունքներ՝ դատավարության կողմերի հավասարության պահպանմամբ», «Դատավորի և դատավարության կողմերի միջև փոխադարձ դերակատարությանը վերաբերող սկզբունքներ» և «պաշտպանվելու իրավունքի ու փոխադարձ վիճարկելու սկզբունքը»: Ամեն դեպքում, ապավինելով այս սկզբունքներին, յուրաքանչյուր ոք պետք է կարողանա, առանց որևէ խոչընդոտի, դիմել իրավասու, անկախ ու անկոմնակալ դատարան՝ իր իրավունքները վերականգնելու համար[252]:

§ 3. Քաղաքական գործեր քննող հատուկ դատարանները և հատուկ վարույթը դրանցում

Իրանի իրավական համակարգի վերաբեյալ ամբողջական պատկերացում ստանալու և այն ճանաչելու համար, քաղաքացիական դատավարությունն ուսումնասիրելուց բացի, պետք է դիտարկել նաև մարդկանց քաղաքական իրավունքների բնագավառում դատավարության սկզբունքներն ու եղանակները: Հնարավոր է, որ իշխանություններին, պետական այրերին ու նրանց ծրագրերին դեմ լինելու և ընդիմանալու պատաճառով հասարակության անադամները ձեռնարկեն որոշակի քայլեր: Օրինակ՝ հասարակական, անհատական ու քաղաքական ազատություններ ձեռք բերելու համար մարդիկ գործել են արարքներ իշխանության գալու համար: Քաղաքական իշխանություն ձեռք բերելու համար նրանք կատարում են այնպիսի գործողություններ, որոնք պետության կողմից համարվում են անօրինական և հանցագործություն:

Քաղաքական հանցագործություններ կատարողները հանդիսանում են այնպիսի

---

[251] Հոռ Ամելի Մ.Հ., Շիիզմի միջոցները, 10-րդ տպ., Քեթաբչի, Թեհրան, 2007, էջ 165:

[252] Անդրազգային դատավարության սկզբունքներ, Մասնավոր իրավունքների հավասարեցման միջազգային կազմակերպություն, ԱՄՆ Իրավունքի Կազմակերպություն, թարգմ.՝ Փուրօսթադ Մ., 1-ին տպ., Շահրե Դանեշ, Թեհրան, 2008, էջ 21 և 85:

վեճի կողմ, որի մյուս կողմ է հանդիսանում պետական իշխանավորներն ու պետությունը: Հետևաբար, մարդկանց քաղաքական հանցագործությունների վերաբերյալ գործերի վարույթում պետական իշխանավորների ուժն ու ազդեցությունը նվազեցնելու համար, հարկավոր է որոշակի լուծումներ նախատեսել: Դրանցից կարելի է նշել ատենակալների խորհրդի ներկայությունը նմանատիպ հանցագործությունների վարույթի ժամանակ, քանի որ պետական այրերն ու իշխանավորները փորձում են քաղաքական հանցագործություններ սահմանելու միջոցով հակադրվել քաղաքական ազատություններին և սահմանափակել դրանց տիրույթը:

Իրանում քաղաքական հանցագործությունների նախապատմությունը սկսվում է մեկ դար առաջ տեղի ունեցած «Սահմանադրական Հեղափոխությունից»: Թեև հետևելով Բելգիայի Սահմանադրության օրինակին, Իրանի տվյալ ժամանակաշրջանի Սահմանադրության 20-րդ հոդվածով պաշտոնապես ճանաչվում և հայտարարվում է մամլո ազատությունը, այդուհանդերձ այն պատժման ենթակա էր համարում մամլո օրենքի խախտողներին ու քաղաքական հանցագործություններ կատարողներին: Այդ օրենքի 18-րդ հոդվածում նշված էր. «Քաղաքական ու մամուլային մեղադրանքների դեպքում դատարանում ներկա է լինելու ատենակալների խորհուրդը»: Բացի այն, որ քաղաքական ու մամուլային հանցագործությունը նախատեսված է եղել Իրանի առաջին Սահմանադրության մեջ, դրա վարույթն էլ իրականացվում էր ատենակալների խորհրդի ներկայությամբ: Այդ գործընթացը շարունակվեց նույնիսկ Իսլամական Հեղափոխությունից հետո և ներկայումս ևս քաղաքական ու մամուլային հանցագործությունների վարույթն իրականացվում է երդվյալ ատենակալների ներկայությամբ: Սակայն, ցավոք սրտի, Իրանի Սահմանադրության և սովորական օրենքներից որևէ մեկում ոչ մի տեսակետ արտահայտված չէ քաղաքական հանցագործությունների վարույթում երդվյալ ատենակալների խորհրդի դերկատարության ձևի մասին և ներկայիս Սահմանադրության 168-րդ հոդվածում ընդամենը ասվում է, որ քաղաքական հանցագործությունների վարույթն իրականացվում է ատենակալների խորհրդի ներկայությամբ, իսկ հոդվածի շարունակության մեջ նշվում է, որ երդվյալ ատենակալների խորհուրդի պայմաններն ու ձևը և դրա ընտության եղանակը լինելու են իսլամական նորմերին ու օրենքին

համապատասխան: Մինչդեռ իսլամական նորմերի ու Իրանի ամրագրված օրենքների համաձայն, դատավճռի կայացումը պետք է իրականացվի միայն դատավորի կողմից, իսկ հայցադիմումների ներկայացման ու բողոքների վարույթի ընդունման պաշտոնական ու գլխավոր ատյանն էլ արդարադատության համակարգն է, ընդ որում որոշված չէ ատենակալների խորհրդի դերակատարությունը: Անկասկած Իրանի իրավական համակարգում ատենակալների խորհրդին չի կարելի տալ դատավորի պես դերակատարություն և ատենակալների խորհրդի կարծիքին հետևելը դատավորի կողմից դեմ է իսլամ կրոնի սկզբունքներին: Դա դեմ է իսլամական կանոններին, նույնիսկ եթե առկա լինի ատենակալների խորհրդի անդամների մեծամասնության կարծիքը: Մյուս կողմից, այս հոդվածում նշված «իսլամական նորմեր» արտահայտությունը չի կարող հաստատուն ու տարաձայնություններից զերծ չափորոշիչ լինել՝ հաշվի առնելով իսլամական շիա հոգևորականների ու իրավաբանների տարաձայնություններն ու տեսակետների լայն շրջանակը: Թեև դատավորները սովորաբար խիստ հակված են հետևել օրենքի հոդվածներին ու բառակապակցությունների զուտ իրենց երևացող տեսքին և չեն նկատում մարդկանց զգացմունքները, այնդուհանդերձ ատենակալների խորհրդի ներկայությունը կարող է օգտակար լինել և կրճատել դատական անճշտությունը: Չնայած Իրանի օրենքներում քաղաքական ու մամուլային հանցագործությունների նախատեսմանը, ցավոք սրտի, ներկայիս Սահմանադրության մեջ քաղաքական հանցագործության սահմանման բացակայության պատճառով սահմանափակումներ են ստեղծվել անհատական ազատությունների համար և նույնիսկ Իրանի «իսլամական պատժամիջոցների մասին» օրենսգրքի 500-րդ հոդվածում ԻԻՀ-ի դեմ քարոզչական գործունեությունը ճանաչվել է քաղաքական հանցագործություն և այդ հանցագործության կատարողների համար նախատեսվել է ազատազրկման պատժամիջոց՝ երեք ամսից մեկ տարի ժամկետով: Ինչպես նկատվում է, վկայակոչելով այս հոդվածին, ցանկացած տեսակ քարոզչական գործունեություն կարելի է համարել քաղաքական կամ մամուլային հանցագործություն և պատժել դրա կատարողներին, որովհետև այս հոդվածը կազմվել է ընդհանուր տեսքով և մշտապես կա հավանականություն, որ քաղաքական ու մամուլային գործունեություն-ները կհամարվեն մի տեսակ ակտիվություն վարչակարգի դեմ և դրա

կատարողը կդատապարտվի այս հոդվածով նախատեսված պատժամիջոցով: Սակայն քաղաքա-կան հանցագործները առաջամարտիկներն ու արտահայտողներն են այն մտքի կամ մտածողության, որը օգուտ կբերի բոլորին: Այդ իսկ պատճառով մի շարք մտավորա-կանների տեսակետներում ու աշխարհի մի շարք քրեական օրենքներում քաղաքական հանցագործությունը հիշատակվում է որպես «մաքուր» հանցագործություն[253]:

Քաղաքական հանցագործությունների կատեգորիայում ուշագրավ, խորհելու և քննարկման արժանի է այն հանգամանքը, որ զարգացած և ժողովրդավար երկրներից ոչ մեկի օրենքներում կոնկրետ և ամբողջական սահմանաում չկա քաղաքական հանցագործությունների համար և քաղաքական հանցագործության թեման ու դրա սահմանումը հիմնականում տարածված և ուշադրության կենտրոնում են ու կան հետամնաց կամ զարգացող երկրներում, քանի որ նրանք ինչ-որ կերպ համարվում են ոչ ժողովրդավարական հատկանիշներով պետություններ: Փոխարենը, ժողովրդավար պետություններում քաղաքական համակարգը օրինավոր է և ուշադրության են արժանում ազատության սկզբունքների նկատմամբ հարգանքն ու օրենքի ճիշտ կատարման նկատմամբ գործնական համոզմունքը: Հաշվի առնելով այն, ինչը ասվեց, ընդհանրապես քաղաքական հանցագործություն է համարվում այն հանցավոր արարքը, որի նպատակն է տապալել քաղաքական ու հասարակական վարչակարգն ու խաթարել երկրի կարգն ու անվտանգությունը: Ուստի, «քաղաքական հանցագործություն» են կոչվում այն անօրինական գործողությունները, որոնք իրականացվում են իշխանության միջոցով, ի օգուտ կամ ի վնաս իշխանության՝ գաղափարական նպատակներին հասնելու համար:

Ինչպես ասվեց, մոտ 95 տարի անցնում է այն ժամանակից, երբ Իրանում օրենսդրությամբ ճանաչվել է քաղաքական հանցագործությունը: Առաջին անգամ Սահմանադրական Հեղափոխության Սամանադրության 77-րդ և 79-րդ հոդվածում խոսվեց քաղաքական հանցագործության մասին, իսկ Իրանի Իսլամական Հեղափոխության հաղթանակից հետո՝ 1980 թ. նոր Սահմանադրության 168-րդ

[253] Փեյվանդի Ղ., Քաղաքական հանցագործություն, Իսլամական մշակույթի և մտածողության հետազոտական հաստատության հրատ., 2-րդ տպ., Թեհրան, 2009, էջ 35 և 38:

հոդվածում կրկին հիշատակվեց արդարադատության դատարաններում երդվյալ ատենակալների խորհրդի ներկայությամբ քաղաքական հանցագործներին դատելու մասին: Սակայն Սահմանադրության այս և մյուս հոդվածներում որևէ սահմանում չենք տեսնում քաղաքական հանցագործության համար: Իրանի Սահմանադրությունը դրա սահմանումը թողել է հետագայում ընդունվող օրենքներին ու օրենսգրքերին և ցավոք սրտի, Սահմանադրության հաստատումից 35 տարի անց դեռևս Իրանում չի ընդունվել նման օրենք կամ օրենսգիրք քաղաքական հանցագործության սահմանման և դրա պայմանների մասին: Իհարկե, պետք է նշել, որ Իրանում մարդկանց քաղաքացիական իրավունքներին վերաբերող գործերի վարույթի դատավարությունն ու գործընթացը տարբերվում է քաղաքական ազատությունների ու դրան վերաբերող հանցագործությունների գործերի վարույթից: Այնպես որ քաղաքացիական իրավունքին վերաբերող վեճերի վարույթը, ինչպես սովորական վեճերը, իրականացվում է իրավական (քաղաքացիական) դատարաններում:

Քաղաքացիական իրավունքների վերաբերյալ պետք է ասել, որ քաղաքացու իրավունքների մասին միակ հոդվածից բացի, քաղաքացիական օրենսգրքի 955-րդ հոդվածից սկսած հոդվածները, այսինքն՝ այդ օրենսգրքի երկրորդ մասի առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ գլուխները նվիրված են մարդկանց քաղաքացիական իրավունքներին: Քաղաքացիական օրենսգրքի այդ հոդվածներում օրենսդիրի ուշադրության կենտրում են եղել այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ քաղաքացիությունը կամ բնակաության վայրը փոխելու մարդկանց իրավունքը, քաղաքացիական իրավունքների ստեղծումը, սահմանափակումը կամ զրկումը և այլն… Ինչպես արդեն պարզաբանվեց, քաղաքացիական իրավունքի մասին գործերի վարույթի եղանակը տարբերվում է քաղաքական հարցերին վերաբերող գործերի վարույթից: Քաղաքական ու մամուլային հանցագործություններն ու հարցերը, ինչ աստիճանի էլ որ լինեն, վարույթ են ընդունվում տվյալ նահանգի վերաքննիչ դատարանի մասնաճյուղ հանդիսացող քրեական դատարանում վերաքննիչ դատարանի 5 դատավորների ներկայությամբ: Ընդհանրապես այդ դատարանի վճիռները ենթակա են բողոքարկման «Երկրի Գերագույն դատարանում»[254]: Նկատվում է, որ իրանական օրենսդիրը հատուկ

[254] Տե՛ս Նախադեպի միասնական վճիռ թիվ 698, 2007 թ., «Երկրի Գերագույն դատարանի» ընդհանուր խորհուրդ:

ընթացակարգերի նախատեսմամբ այդ տեսակ հանցագործությունների համար սահմանել է առավել բարձր զգայունությամբ դատավարություն[255]:

Ամեն դեպքում, քաղաքական հանցագործների նկատմամբ հասարակությունների ու պետությունների արձագանքը կախված է քաղաքական հանցագործությունների վերաբերյալ նրանց հայացքներից: Այդ իսկ պատճառով, պատմության ընթացքում նման հանցագործությունների պատժամիջոցները փոխվել են քաղաքական հանցագործության նկատմամբ մոտեցումների փոփոխմամբ: Քաղաքական հանցագործությունները վարույթ ընդունող դատարանների իրավասության մասին պետք է ասել, որ Իրանում դատախազությունների հիմնադրմամբ ու աշխատանքի վերսկսմամբ, ինչպես նաև 2002 թ. դրա մասին օրենքի ընդունմամբ, այդ ինստիտուտը որպես դատարանների վերահսկողության տակ գտնվող մարմին իր աշխատանքը սկսեց հանցագործությունների բացահայտմամբ, հանցագործության պատճառների ու ապացույցների հավաքմամբ, հանցագործության հանրային ասպեկտով մեղադրյալների հետապնդմամբ ու ձերբակալմամբ և պատիժների իրականացմամբ: Այդ օրենքի 4-րդ հոդվածի ենթակետում նշված է, որ քաղաքական ու մամուլային հանցագործությունների վարույթը իրականացվում է նահանգային քրեական դատարաններում: Սակայն մեկ այլ ուշագրավ հանգամանք է այն, որ այդ նույն օրենքի 5-րդ հոդվածի համաձայն, նախատեսված է «Հեղափոխության դատարան» անվամբ մեկ այլ դատարան, որի իրավասություններից է վարույթ ընդունել հանցագործություններ, ինչպիսիք են՝ լրտեսության կամ ներքին և արտաքին անվտանգության դեմ կատարվող հանցագործությունները: Թվում է, թե այստեղ այս երկու դատարանների իրավասությունների միջև կա համընկում, որովհետև երկու դատարաններն էլ ինչ-որ կերպ քաղաքական հանցագործությունների հարցերով վարույթ ընդունելու պարտականություն ունեն, և հաշվի առնելով, որ Իրանի օրենսդրության մեջ հստակ սահմանում չկա քաղաքական հանցագործության մասին, ուստի որոշակի խնդիրներ էլ առաջանում են այդ տեսակ հանցագործություններով վարույթ ընդունելու իրավասության հարցում, այսինքն՝ մեկ տեսակ հանցագործության

[255] Ալաիյան Ա., Մարզի քրեական դատարանի վերլուծական ուսումնասիրություն, 1-ին տպ., Ջավդանեհ, Թեհրան, 2008, էջ 64:

վարույթի համար գոյություն ունի երկու դատարան, ինչը կոչվում է «դրական կերպով իրավասությունների տարաձայնություն»[256]: Ցավոք սրտի, Իրանում շատ են հատուկ ատյանները, որոնք հիմնականում առաջնորդվում են անձնական իրավասություններով և վարույթ են ընդունում միայն մարդկանց հատուկ խմբի հանցագործությունները: Այդ հատուկ ատյանների մեծ քանակությունը հակասում է Սահմանադրության մեջ նշված հավասարության սկզբունքին, քանի որ եթե այդ դատարանները ցանկանան, ապա կարող են մեղմ գտնվել և օգնել այդ հատուկ մարդկանց, կամ էլ հակառակը՝ եթե ուզեն, ապա կարող են ավելի խիստ վերաբերվել այդ հատուկ մարդկանց նկատմամբ, ինչը երկու դեպքում էլ դեմ է արդարության և հավասարության սկզբունքին: Պետք է ձգտել հատուկ ատյանների ստեղծումն ու տարածումը հնարավորինս կրճատելու ուղղությամբ: Դրա ամենավառ օրինակն է «Հոգևորականության հատուկ դատարանում» հոգևորականների հանացագործությունների վարույթի իրականացումը:

Համենայն դեպս թվում է, թե պետք է բացառություն անել քաղաքական հանցագործությունները, քանի որ նման հանցագործություններ կատարողները իրականում հանցագործ չեն: Հետևաբար, քաղաքական հանցագործությունների կապակցությամբ անհրաժեշտ է ստեղծել հատուկ դատավարության օրենսգրքով հատուկ դատարան ու օրենք և Իրանի իրավական համակարգում դրան ավելի շատ հոդվածներ հատկացնել «քրեական դատավարության» կամ «իսլամական պատժամիջոցների» մասին օրենսգրքերում, որովհետև տարիներ է, ինչ տարբեր պետություններ փոփոխություններ են մտցրել քաղաքական հանցագործությունների նկատմամբ իրենց մոտեցումներում: Ընդհանուր առմամբ, քաղաքական հանցագործությունների նկատմամբ մոտեցման փոփոխությունը և դրանց համար ավելի մեղմ պատժամիջոցների սահմանումը սկսվել է 19-րդ դարից: Դա այն պատճառով էր, որ քաղաքական հանցագործները քաղաքական հանցագործություններ ու արարքներ կատարելիս ունեն վեհ և ոչ անձնական նպատակներ: Նրանք իրենց գործունեության մեջ չեն հետապնդում անձնական ու նյութական շահեր, այլ ձգտում են ստեղծել այնպիսի համակարգ ու շրջանակ, որի հովանու ներքո հասարակությունը

[256] Ախունդի Մ., Քրեական դատավարության կարգը, առաջին հատոր, 9-րդ տպ., Մշակույթի և իսլամական լուսավորության նախարարություն, Թեհրան, 2001, էջ 293:

կունենա ավելի շատ արդարություն, անդորր, առաջադիմություն և երջանկություն[257]: Հետևաբար, քանի որ քաղաքական հանցագործները քաղաքական հանցագործություն են գործում մարդկային գաղափարների, մարդասիրության և բարեփոխական մտքերի ազդեցության տակ, իսկ մյուս կողմից էլ պատժի գլխավոր նպատակներից է հանցագործի ուղղումը, և հաշվի առնելով նաև այն հանգամանքները, որ քաղաքական հանացագործություններում մեղավորի նպատակը, դրդապատճառն ու անհատականությունը տարբերվում են սովորական հանցագործներից և նրանց նկատմամբ հասարակության սովորական արձագանքն էլ չի կարող ունենալ դրական ազդեցություն, ուստի քրեական իրավունքի տեսաբանների կարծիքով, քաղաքական հանցագործների նկատմամբ պետք է կիրառել ավելի մեղմ պատիժ ու ավելի մարդկային վերաբերմունք և հնարավորության դեպքում նրանց նկատմամբ կիրառել հատուկ քրեական համակարգ[258]: Այլ խոսքով, քաղաքական հանցագործությունը բխում է բարեփոխական մտքերից: Մեր ժամանակների մտածողների կարծիքով, այլասերված հանցագործ չէ նա, ով ունի հատուկ քաղաքական կամ հասարակական կարծիք և դրանից ելնելով կատարում է որոշակի քայլեր և արարքներ: Նա հատուկ կարծիքի տեր մարդ է, որն իր կարծիքն իրագործելու համար սխալ մեթոդ է ընտրել: Այդ իսկ պատճառով, թեև նրա արարքը լինի հանցավոր, այնուամենայնիվ նա իսկական հանցագործ չէ, այլ միգուցե ավելի ճիշտ կլինի ասել, որ նրա արարքում տեղ չկա հանցավոր մտադրության համար: Այլ կերպ ասած, ոտնձգության մտադրություն չկա այն հանցագործություններում, որոնք բխում են մտածողությունից ու կարծիքից, թեկուզ և այլանդակ, և դրա նպատակն ինչ-որ մեկին նեղացնելը կամ անձնական շահը չէ, այլ դրա կատարման դրդապատճառը հասարակական է[259]: Հետևաբար, իրանական օրենսդիրը չպետք քաղաքական հանցագործների հետ վարվի այնպես, ինչպես սովորական հանցագործների հետ:

Ինչևէ, քաղաքական հանցագործությունը հարաբերական հանցագործություն է,

---

[257] Մոհամմադի Ռեյշահրի Մ., Ֆարզանեգան Հ., Միզանոլհեքմաթ (արաբ./պարսկ.), յոթերորդ հատոր, 12-րդ տպ., Դարոլհադիս գիտամշակութային կազմակերպություն, Ղոմ, 2012, էջ 241:

[258] Սանեի Փ., Ընդհանուր քրեական իրավունք, առաջին հատոր, 3-րդ տպ., Գանջե Դանեշ, Թեհրան, 1995, էջ 395:

[259] Աբու Զոհրեհ Մ., Տուգանքն ու պատիժը իսլամական ֆեղհի մեջ, 1-ին տպ., Դարոլֆեքր Ալ-Արաբի, 2008, էջ 133:

այսինքն յուրաքանչյուր հասարակությունում կամ իրավական համակարգում այն ունի տարբեր սահմանում ու էություն և ի հեճուկս այլ հանցագործությունների, դա հանցագործություն է մինչև այն ժամանակ, քանիդեռ առկա է գործող քաղաքական վարչակազմը, իսկ դրանից հետո լիովին փոխվելու է դրա էությունը, այսինքն այն արարքը, որը մինչև երեկ եղել է հանցագործություն, այսօր անհրաժեշտություն է հասարակության փրկության համար, ինչը հակասում է գողության, խարդախության և այլ սովորական հանցագործությունների պես հանցագործություններին, որոնք այնքան էլ կապ չունեն իշխող քաղաքական ռեժիմին: Այդ իսկ պատճառով, Լոմբրազոյի կարծիքով, քաղաքական հանցագործությունը համարվում է հանցագործություն միայն այն բանի համար, որ առաջ է անցել իր ժամանակից, և նա, ով կատարում է այն, շտապում է քաղաքական ու հասարակական կյանքի առաջադիմության հարցում[260]: Հետևաբար, պատշաճ չէ, որ սովորական հանցագործության պես վերաբերվել հանցավոր դրդապատճառներից զերծ հանցագործության հետ, որի հանցավոր լինելը կախված է միայն իշխող քաղաքական ռեժիմի գոյությունից, և քաղաքական հանցագործի (այսօրվա հանցագործը՝ թերևս վաղվա հերոսը) հետ վերաբերվել այնպես, ինչպես գողի կամ մարդասպանի հետ, այլ պետք է տարբերություն դնել հանցագործությունների այդ երկուխմբի միջև և տարբեր լինեն դրանց համար նախատեսված պատժամիջոցները:

Հայացք նետելով Իրանի դատավարական համակարգին, նկատվում է, որ «իսլամական պատժամիջոցների մասին» օրենսգրքում օրենսդիրը երբեմն հեռացել է այդ իրավաբանական մտածելակերպից և իսլամական պատժամիջոցների մասին օրենսգրքում թվարկված են քաղաքական բնույթի հանցագործություններ, սակայն ոչ մի բան նշված չէ դրանց քաղաքական լինելու մասին, իսկ դրանց համար նախատեսված է իսլամական կրոնական և ոչ կրոնական հանցագործությունների ծանր պատժամիջոցները, նույնիսկ որոշ դեպքերում դրանց կատարողների համար որպես «Մուհարեբ» (Աստծո դեմ պայքարող) և երբեմն էլ որպես «Մուհարեբին համարժեք» նախատեսված են «Մուհարեբե» հանցագործության ծանր պատժամիջոցները: Սա այն

[260] Ալ-Ֆազել Մ., Դասախոսություններ քաղաքական հանցագործությունների թեմայով, Դարոլջալիլ, Կահիրե, 2003, էջ 13:

դեպքում, երբ «Մուհարեբը» քաղաքական հանցագործ չէ: Իսլամական իրավաբանության մեջ «Մուհարեբ» է կոչվում այն անձը, ով զենքի է դիմում մարդկանց մեջ ահ ու սարսափ առաջացնելու համար[261]: Եթե հանցագործությունը քաղաքական է, ապա տրամաբանական չէ նրա նկատմամբ կիրառել «Մուհարեբի» պատիժը, քանի որ տարբերություն կա քաղաքական հանցագործության և «Մուհարեբեի» հանացագործության միջև: Նկատվում է, որ Իրանի Իսլամական Հեղափոխությունից հետո օրենսդիրը իսլամական նորմերի վրա հիմնված քրեական օրենքների ընդունմամբ որևէ սահմանագիծ չի նախատեսել քաղաքական հանցագործության և «Մոհարեբեի» (Աստծո դեմ պայքարել) ու «Էֆսադ-Ֆի-Ալարզ»-ի (երկրի երեսին կոռուպցիա տարածել) հանցագործությունների միջև: «Իսլամական պատժամիջոցների մասին» օրենսգրքում նշված որոշ քաղաքական արարքներ բովանդակության ու նշանակության առումով հանդիսանում են քաղաքական հանցագործություն, սակայն որոշ դեպքերում համարվել են «Մուհարեբ» ու «Մոֆսեդ-Ֆի-Ալարզ»՝ իրենց համար նախատեսված ծանր պատժամիջոցներով, ինչպիսին մահապատիժն է: Հանցագործությունների սահմանումների հարցում այդ թերությունը Իրանի դատական համակարգի հիմնախնդիրներից մեկն է: Դատական համակարգի այլ խնդիրներից են նաև դատարանների ոչ մասնագիտացված լինելը՝ քրեական ու իրավական (քաղաքացիական) ընդհանուր խմբերի բաժանման պատճառով, ինչպես նաև իրենց կրթության, փորձառության ու մասնագիտության համապատասխան դատավորներից չօգտվելը հաշվի առնելով միևնույն ժամանակահատվածում օրենքների լայն շրջանակը: Որովհետև տարբերություն կա քրեական և իրավական գործերում դատավճիռների կայացման միջև, հետևաբար հմտության ու համապատասխան մասնագիտության բացակայությունը նվազեցնում է վարույթների որակն ու արագությունը: Իրանի Սահմանադրության 58-րդ և 59-րդ հոդվածների համաձայն, խորհրդարանն ու հանրաքվեն համարվում են Իրանի միակ օրենսդիր ինստիտուտը, սակայն գործնականում, հատկապես Իսլամական Հեղափոխության հաղթանակից հետո առաջին տասնամյակում, օրենսդրության համար ստեղծվել են բազմազան

[261] Շահիդ Ավվալ, Դամասկոսի փայլը, 2-րդ հատոր, թարգմ.՝ Ղարավյան Մ. և Շիրվանի Ա., 44-րդ տպ., Դարոլֆեքր, Թեհրան, 2012, էջ 250:

ինստիտուտներ, որոնք աններդաշնակ կերպով սահմանել են օրենքներ, ինչը Իրանի իրավական համակարգում անորոշության ու երբեմն էլ խնդիրների առաջացման պատճառ է դարձել: Դատավճիռների չկատարման ու արգելափակման պատճառ են դարձել նաև բազմաթիվ անգամ վերաքննություն պահանջելու և բողոքարկելու հնարավորությունն ու եղանակները, այնպես որ, կարելի է ասել, որ Իրանում անհնարին է դարձել վերջնական դատավճռի առկայությունը, քանի որ օրենքներից օգտվելով, կարելի է տարիներ շարունակ կանխել մի դատավճռի իրականացումը: Իհարկե Իսլամական Հեղափոխությունից հետո Իրանում դատավճիռների նկատմամբ վերաքննություն պահանջելու հարցում հանդիպում ենք երկու՝ ամբողջովին տարբեր ժամանակաշրջանների հետ. Առաջին ժամանակաշրջանում դատավորի վճռի նկատմամբ վերաքննություն պահանջելը համարվում էր իսլամ կրոնին դեմ, նշանակում էր կառավարչի ու իմամի մերժում և արդյունքում համարվում էր նաև Աստծո վճռի մերժում և ինչ-որ կերպ անաստվածություն, և մի շարք բացառություններից բացի, վերաքննություն պահանջելը ընդունելի չէր: Առաջին ժամանակաշրջանի ճիշտ հակառակը գործեցին երկրորդ ժամանակաշրջանում, որի ընթացքում Իրանի իրավական համակարգում որևէ վերջնական դատավճռի ականատեսը չենք լինում և ճանապարհը մշտապես բաց է վերաքննություն պահանջելու համար: Ինչպես ասվեց, դատավճռի նկատմամբ վերաքննությունը դատական իշխանության ղեկավարի կողմից պայմանավորված ու սահմանափակված չէ որոշակի ժամանակահատվածով և սա գործնականում բազմաթիվ խնդիրներ է առաջացրել: Օրինակ՝ ենթադրենք կայացվել է ամուսնալուծության վճիռ: Անցնելով վերաքննիչ և վճռաբեկ դատարանները, այդ վճիռը իրագործվել է, սակայն եթե որոշ ժամանակ անց ամուսինը բողոքարկի այդ վճռի նկատմամբ և արդյունքում բեկանվի նախկին վճիռը, ապա նրա կինը, ով դատավճռի միջոցով արդեն իսկ ամուսնալուծվել և ամուսնացել է մեկ այլ տղամարդու հետ, վճռի բեկանմամբ նորից կդառնա նախկին ամուսնու կինը, այսինքն կինը կունենա երկու ամուսին: Նմանատիպ հիմնախնդիրները ստիպում են, որ իսլամական պետությունների օրենսդրություններին ու ռոմանագերմանական իրավունքներին համեմատական դիտարկում կատարելով օրենսդիրը ձեռնամուխ լինի Իրանի համապատասխան օրենք-ների ու կառուցվածքների փոփոխմանը, որպեսզի

դատավարությունները լինեն առավել արդար, իսկ իրավական գործերն ու հարցերը կարգավորվեն ավելի մեծ արագությամբ:

§ 4. Իրանի քրեական դատավարության բնութագիրը, փուլերը, գործառութային սկզբունքները

Իրանի քրեական դատավարությունը որպես իսլամական համակարգ: Քրեական դատավարությունը ընդհանուր իրավունքի մի մասն է կազմում: Քրեական դատավարության հիմնական խնդիրը հանցագործության ընդհանուր կողմերի՝ որպես հիմնական և հանցագործության մասնավոր ասպեկտների՝ որպես երկրորդական սկզբունքների քննումն է[262]: Իրանում առաջին անգամ քրեական դատավարության մասին օրենքը հաստատվել է 1909 թ., որին նախկինում անվանում էին «քրեական դատավարության սկզբունքներ»: Քաղաքացիական դատավարության շրջանակներում քննարկվում են այնպիսի խնդիրներ, որոնք կապ ունեն անհատների, մարդկանց շահերի հետ, որ ավելի շատ գույքային բնույթ են կրում: Քրեական դատավարության շրջանակներում քննարկվում են այնպիսի հարցեր, որոնք առնչվում են հասարակական կարգին, ազատություններին, մարդկանց կյանքին, բարոյականությանը և հեղինակությանը: Այլ կերպ ասած՝ քրեական դատավարության նպատակը մարդու իրավունքների, ինչպես նաև հասարակական համերաշխության պաշտպանությունն է:

Քրեական դատավարությունը և քրեական օրենսգրքով նախատեսված բոլոր նորմերը միտված են պաշտպանելու մարդկանց իրավունքները, նրանց հիմնական և անձնական ազատությունները[263]: Նաև պետք է նշել, որ օրենսգիրքը սկզբունքների ամբողջություն է, որը նախատեսված է հանցագործությունների բացահայտման, ուսումնասիրման, հանցագործներին հետապնդելու, օրենքների կիրառման, դատավորների իրավասության և պարտականությունների համար: Նախորդ գլուխներում նշել ենք, որ իսլամական հեղափոխության հաղթանակից հետո այս ոլորտում նունպես էական փոփոխություններ կատարվեցին: 2004 թ. հիմվեցին նոր կառուցվածքով և սկզբունքներով ընդհանուր և հեղափոխության դատարաններ[264]:

[262] Ախունդի Մ., նշվ. աշխ., էջ 39:
[263] Խալեղի Ա., Քրեական դատավարության կարգերը, 11-րդ տպ., Շահրե Դանեշ, Թեհրան, 2011, էջ 9:
[264] Նույն տեղում:

Իրանում դատական ոլորտի և համակարգի սկզբունքների և կանոնների անընդհատ փոփոխությունը վկայում է այն փաստը, որ իսլամական դատավարության համակարգը մենակ չի կարող երկրի և բնակչության կարիքները բավարարել, և կարիք կա օգտագործել աշխարհի մյուս երկրների դատական համակարգի որոշակի սկզբունքներ:

Իրանի դատական համակարգում քրեական դատավարությունը լավ հասկանալու համար անհրաժեշտ է նախևառաջ ծանոթ լինել աշխարհի մյուս երկրների դատական համակարգերին: Պատմության ընթացքում իրավական համակարգերի կողմից քրեական դատավարության վերաբերյալ բազմաթիվ մեթոդներ են կիրառվել: Դատավարության համակարգերը կարելի է ընդգրկել մեկ դասակարգման մեջ և քրեական գործերը բաժանել չորս խմբի՝ մեղադրական համակարգ[265], հետաքննական համակարգ[266], դատավարությունների խառը համակարգ[267]: Մահմեդական երկրներում գործում էր **իսլամական դատավարությունների համակարգը:** Այն համապատասխանեցված է իսլամի սկզբունքներին և նորմերին: Այս համակարգում հետաքննության և դատավարության միջև դասակարգում չի կատարվում: Դատավորը ինքն է և' հետաքննություն անցկացնողը, և' դատավճիռ կայացնողը: Դատավորի միասնական համակարգից զատ էական է նաև այն, թե հանցագործությունը թեթև,

---

[265] Մեղադրական համակարգը քրեական դատավարության ամենահին և ամենաառաջին համակարգն է: Այս համակարգի առանձնահատկություններից է դատավարությունների բաց լինելը և այն, որ յուրաքանչյուր ոք կարող է ներկա գտնել այդ ընթացքին: Բացի այդ, դատվարությունը ընթանում է բանավոր, մեղադրյալը չունի գրավոր կերպով ներկայացված գործերի փաթեթ: Այս համակարգում ամբողջությամբ պահպանվում են դատապարտյալի իրավունքները, սահմանափակվում՝ դատավորի իրավասությունը:

[266] Հետաքննական համակարգի առանձնահատկություններից է այն, որ դատական նիստերը տեղի են ունենում դռնփակ, սովորական մարդիկ այս նիստերին չեն կարող ներկա գտնվել: Կողմերը կարող են իրենց նյութերը ներկայացնել գրավոր: Մեղադրյալը չի կարող ազատ կերպով ներկայացնել իր փաստարկները: Այս համակարգի դեպքում դատավարությունը պատերազմ է դատավորի՝ իբրև հանրության ներկայացուցիչի և մեղադրյալի միջև:

[267] Խառը համակարգը ձևավորվեց Ֆրանսիայում Մեծ հեղափոխությունից հետո՝ վերը նշված երկու համակարգերի համակցման արդյունքում: Այս համակարգում փորձ է արվել օգտագործել վերը նշված համակարգերի սկզբունքները: Սկզբնական հետազոտությունների փուլում, որ կարիք ունի առավել ուշադրության և արագության, քանզի միշտ գոյություն ունի վտանգ, որ այս փուլում հանցագործության հետևանքները և պատճառները վերանան, ուստի անհրաժեշտ է, որ դատախազությունը որպես հասարակության ներկայացուցիչ կատարի դատապարտյալի հետապնդման գործը՝ չսպասելով հայցվորի իրականացրած քայլերին: Այնուհետև դատարանում սկսվում է ապացույցների հետաքննությունը: Իհարկե երկրորդ համաշխարհային պատերազմից հետո այս համակարգում հատկապես մեղադրյալների իրավունքների ավելացման տեսանկյունից տեղի են ունեցել փոփոխություններ: Բավական է նշել միայն 1948 թ. մարդու իրավունքների հռչակագիրը և 1966 թ. միջազգային պակտը քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին:

միջին թե ծանր արարք է գնահատվել: Չնայած որ հանցագործությունը մեկ անգամ է հետաքննվում, դատավորի վճիռը վերջնական է և փոփոխման ենթակա չէ: Շատ քիչ դեպքերում է, երբ, օրինակ դատավորի սխալ կամ իսլամկի սկզբունքներին հակասող վճռի կատարումը կանխելու նպատակով բացառություն է արվում և հնարավորություն կա վճիռը վերանայելու[268]: Պատիժների հետ կապված նունպես կարելի է նշել դրանց օրինական լինելու և իսլամական նորմերին և սկզբունքներին չհակասելու մասին[269]:

Իրանում քրեական արդարադատության համակարգը խառնուրդ է: Այն բաժանվում է երկու առանձին խմբերի. առաջին փուլում առկա են հետաքննական համակարգի, իսկ երկրորդ փուլում դատապարտող համակարգի տարրեր: Այս գործառույթն իսլամական նորմերի պահպանման տեսանկյունից էլ խնդիրներ չի առաջացնում: Բայց մի հայացք գցելով Իրանի քրեական արդարադատության համակարգի երեսունամյա գործունեու-թյանը կարելի է նշել, որ այն չի կարող լուծել համակարգում առկա բոլոր խնդիրները: Քանզի պարբերաբար տեղի ունեցող բոլոր փոփոխությունները, առանց փորձագետ-ների քննարկման և համամետական վերլուծության, պատճառ են դարձել անհամա-ձայնությունների և թյուրիմացությունների ի հայտ գալուն[270]: Բացի այդ պետք է նշել, որ Իրանի դատավարության մասին օրենքը բավականին հին է և չի համապատասխանում ներկայիս պահանջներին: Իրանի դատական համակարգում դատապարտյալը զրկված է փաստաբանի ներկայության հնարավորությունից, նույնիսկ հետաքննության նախնական փուլում դատապարտյալի վերաբերյալ տեղեկությունները հասանելի չեն, ինչը հակասում է միջազգային քրեական դատավարության դրույթներին[271]:

Քրեական դատավարության փուլերն Իրանում: Հանցագործության բացահայ-տումը և մեղադրյալի հետապնդումը դատավարության առաջին փուլն է: Չնայած որ

---

[268] Խալեղի Ա., Քրեական դատավարության կարգերը, 11-րդ տպ., Շահրե Դանեշ, Թեհրան, 2011, էջ 19 - 20:

[269] Սաքի Մ., Ընդհանուր քրեական իրավունք (ընդհանուր եզրույթներով և վերանայմամբ): Հանցագործությունն ու քրեական երևույթը, առաջին հատոր, Ջանգալ, Թեհրան, 2013,էջ 60:

[270] Խալեղի Ա., Քրեական դատավարության կարգերը, 11-րդ տպ., Շահրե Դանեշ, Թեհրան, 2011, էջ 19 - 20:

[271] Յազդանի Մ., Իրանի քրեական դատավարության օրենքներում և միջազգային քրեական դիվանի կանոնադրության մեջ բացակայության պայմաններում մեղադրանքը հասկացնելու տեղը (նշանակությունը) // Փայամե Ամուզեշ, հ.՝ 51, Դատական իշխանության ուսումնական գծով վարչություն, Թեհրան, 2011, էջ 9-16:

Իրանի իրավական իսլամական համակարգում դատավարության մի քանի փուլով լինելու սկզբունքը ուսումնասիրված չէ, սակայն պետք է նշել, որ Իրանում քրեական դատավարության առաջին փուլը Ֆրանսիայի իրավական համակարգից է վերցված[272]: Դատախազները հասարակության ներկայացուցիչներ են և հետապնդում են մեղադրյա-լին: Իրանի իրավական համակարգում գոյություն ունի «հետապնդման օրինական լինելու» սկզբունքը, որը վերցված է Գերմանիայի և Իտալիայի իրավական համակարգե-րից: Նրանք իրավունք չունեն մեղադրյալին հետապնդելու գործից հրաժարվել[273]:

Իսլամում դատախազների գործունեությունը այնքան էլ խորը արմատներ չունի: Պատմության մեջ առաջին անգամ դատախազների գործունեության մասին նշվում է 14-րդ դ. Ֆրանսիայում: Այն ժամանակ թագավորը դատարաններում ներկայացուցչություն ուներ, որի նպատակն էր պահպանել թագավորի շահերը և հսկել պատիժների կատարմանը[274]: Ֆրանսիական մեծ հեղափոխությունից հետո դատախազների կառույցը պահպանվեց, սակայն փոխվեց նրա նպատակները: Հասարակության իրավունքները պահպանելու նպատակով դատախազի պաշտոնը առաջին անգամ հաստատվեց 1911 թ.՝ «Քրեական դատավարության սկզբունքների մասին» օրենքով, որը կրկնում էր Ֆրանսիայի նույն օրենքին: Իսլամական հեղափոխության հաղթանակից հետո դատարանները պահպանվեցին, սակայն սկսվեցին քննադատություններ, որ այն հակասում է իսլամի սկզբունքներին[275]: 1994 թ. օրենսդիրը ընդհանուր և հեղափոխական դատարանների դատավարությունների մասին օրենք հաստատեց, որի արդյունքում հինգ տարի ժամկետով դատախազների կառույցը դադարեցրեց իր գործունեությունը և մեկ հարվածով նրանց մոտ ութսուն տարվա գործունեությունը ոչնչացվեց: Դատավորը սկսեց իրականացնել հետաքննության նախնական փուլը, սակայն 2002 թ. նորից նրանց վերաբերյալ

[272] Ախունդի Մ., նշվ. աշխ., էջ 51:
[273] Նույնը, էջ 167:
[274] Շահիդ Սանի, Իսլամի քրեական իրավունքը, թարգմ.՝ Մոհամմադի Ա., 1-ին տպ., Բուհական հրատ., Թեհրան, 1995,
[275] Նույն տեղում:

նախագիծ ներկայացվեց Մեջլիս, որն էլ և հավանության արժանացավ[276]: Բոլոր դեպքերում Իրանի իրավական համակարգում հանցագործությունների նախնական հետաքննությունը, որ դատախազների կողմից է իրականացվում, կազմված է քայլերի ամբողջությունից, որ իրականացվում է դատական հատուկ մարմինների կողմից հանցագործությունը բացահայտելու, ապացույցներ հավաքելու, մեղադրյալի թաքնվելու կամ փախչելու կանխելու համար[277]:

Ցավոք, դատախազների կառույցի հիմնումից անցել է տասնմեկ տարի, սակայն երկրում հատուկ օրենք այս ոլորտում չի ընդունվել, որը կարող են կիրառել քրեական ոլորտի ներկայացուցիչները ընդհանուր և հեղափոխության դատարաններում: Ֆրանսիայի օրենքի նման հատուկ և ծանր հանցագործությունների նախնական հետաքննությունը կիրականացնեին դատախազները[278] և ոչ թե երկրորդական խնդիրներում միջամտեն, իսկ նրանց միջամտող անվանեն: Իրանական օրենսդիրը պետք է առնվազն թեթև հանցագործությունների դեպքում «զաբեթին» իրավասության շրջանակն ավելացնեն[279]: Դատախազների օրենքի 3-րդ կետի 5-րդ կետի համաձայն դատախազների նշանակումը և նրանց գործից ազատումը դատական իշխանության ղեկավարի իրավասությունն է: Իրանում այս օրենքն ունի մի շարք առանձնահատկություններ. առանց հաշվի առնելու դատավորների ցանկությունը, նրանց պարտադրում են աշխատանքի անցնել տարբեր վայրերում, ինչը հակասում է աշխատանքի «մասունիյաթ» սկզբունքին:

Քրեական վարույթի երկրորդ փուլը դատական քննության փուլն է: Մեղադրյալի անմեղ կամ մեղավոր լինելու հանգամանքը, նրա պատասխանատվության չափը որոշելու, պատիժ սահմանելու, ինչպես նաև դաստիարակչական միջոցներ ձեռք առնելու իրավունքը մտնում է քրեական դատարանների իրավասության շրջանակում: Այսինքն, դատական քննության փուլում դատարանը քննություն է իրականացնում հայցվորի, հետապնդող մարմինների և մեղադրյալի միջև: Իսլամական դատական

[276] Խալեղի Ա., Քրեական դատավարության կարգերը, 11-րդ տպ., Շահրե Դանեշ, Թեհրան, 2011, էջ 73:
[277] Ախունդի Մ., նշվ. աշխ, էջ 73:
[278] Լավասուր Ժ., Գաստոն Ստ., Բուլուք Բ., Քրեական դատավարության կարգերը, երկրորդ հատոր, թարգմ.՝ Դադբան Հ., 1-ին տպ., Ալլամեհ Թաբաթաբայի համալսարան, Թեհրան, 1999, էջ 742:
[279] Ախունդի Մ., նշվ. աշխ., 293:

համակարգում և Իրանի դատական համակարգում դատախազների ինստիտուտների վերացման բացասական հետևանքը եղավ նաև այն, որ դատավորը իբրև քրեական դատարանի դատավոր քննիչի, դատախազի և դատավճիռ կայացնողի դեր էր կատարում, ինչը արդարացի և չեզոք դատավարություն ապահովելու համար շատ վտանգավոր էր[280]: Մարդու իրավունքների եվրոպական պակտի 6-րդ հոդվածի առաջին կետում հստակ կերպով նշվում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի, և այդ իրավունքն արդարացի է, տեղեկանալ այն դատարանի ազնիվ, չեզոք և արդար լինելու մասին, որը իր մասին պետք վճիռ կայացնի[281]:

Քրեական դատարանի տեսակներից է քրեական ընդհանուր դատարանը: Հեղափոխության և ընդհանուր դատարանների քրեական դատավարության մասին օրենքի 14-րդ հոդվածի համաձայն 2002 թ.-ից բոլոր քրեական դատարանների դատական նիստերը դատախազի ներկայությամբ կամ վերջինիս ներկայացուցիչի մասնակցությամբ է տեղի ունենում: Սակայն կադրերի պակասի պատճառով այս կանոնը քրեական շատ դատարաններում չի կիրառվում, որը կոպիտ սխալ է[282]: Քրեական դատարանի տեսակներից են նաև քրեական հատուկ դատարանները. առաջին-մարզի քրեական դատարանը: ԻԻՀ-ում մարզային քրեական դատարաններ հիմվել են տասնմեկ տարի առաջ՝ հեղափոխության և ընդհանուր դատարանների մասին փոփոխության ենթարկված օրենքի համաձայն[283]: Իհարկե այս ոլորտում դեռ անելիքներ կան:

Մարզային քրեական դատարաններում քաղաքական, զանգվածային լրատվամիջոցների անօրինական քայլի, դիտավորյալ սպանության վերաբերյալ

---

[280] Իսմայիլյան Շ., Ժամանակավոր ձերբակալություն և իրավունքի պաշտպանություն, Թեհրան, 2002, էջ 5:

[281] Քրեական գործերի ընթացքն Իրանում հետևյալն է. քրեական բոլոր դատարանները հանցագործությունների մեծ մասի դեպքում համապատասխան դատախազի նամակին և նախնական հետաքննության ավարտից հետո հետաքննվում է (Տե՛ս Ախունդի Մ., նշվ. աշխ.): Բոլոր դեպքերում երբեմն դատարանները առանց համապատասխան փաստաթղթի ունակ են քննելու քրեական գործեր: Իհարկե, դատարաններն իրավունք ունեն միայն համապատասխան փաստաթղթով հետաքննություն անցկացնել, քանզի դատախազություններն են ընդհանուր և հատուկի բաժանվում, այնպես էլ դատարաններն են բաժանվում ընդհանուրի և մասնավորի:

[282] Շաֆիի Խորշիդի Ա., Նահանգի քրեական դատարանն՝ Իրանի դատական վարույթում (քրեական գործերի մեջբերումներ՝ հղում, քննադատություն և քննարկում), Խաթե Սևոմ (Երրորդ գիծ) հրատ., Թեհրան, 2012, էջ 41:

[283] Տե՛ս Հեղափոխության և ընդհանուր իրավասության դատարանների մասին օրենքը հաստատված 2002 թ.:

գործեր են քննվում[284]: Որոշ հանցագործություններ, օրինակ՝ թմրանյութերի հետ կապված, որոնց համար մահապատիժ է նախատեսված, հեղափոխության և ընդհանուր դատարանների մասին օրենքի համաձայն վճիռը կայացվում և կատարվում է մարզային քրեական դատարանում: Այստեղ թյուրիմացություն է առաջանում, քանզի թմրանյութերի հետ կապված դատավճռի կայացման և այն կատաելու իրավունքը վերապահված է և՛ մարզային քրեական, և՛ հեղափոխության դատարանին: Իհարկե, այս հարցն իր լուծումն է գտել երկրի բարձրագույն դատական ատյանի կողմից 2003 թ.: Հարցը լուծվել է այսպես. այն հանցագործությունը, որը պատժվում է մահվամբ և գտնվում է հեղափոխության դատարանում, դրանք այն հանցագործություններն են, որոնք հրաժարվել են մարզային քրեական դատարաններից և դրանք քննվում են հեղափոխության դատարանների կողմից: Այս թյուրիմացության պատճառով դատական մի շարք վարույթներ են տեղի ունենում, որն էլ էական խնդիրներ է առաջացնում դատավորների քանակապես քիչ լինելու պատճառով:

Մարզային քրեական դատարանի կայացրած վճիռը բողոքարկելու համար պետք է դիմել երկրի Գերագույն դատական ատյան: Իհարկե Իրանի դատական համակարգում որոշ պաշտոնյաներ, ինչպես օրինակ երկրի գլխավոր դատախազը կամ դատական իշխանության ղեկավարը իրավունք ունեն դատարանների կայացրած վճիռները բողոքարկել: Եթե նրանք նկատեն, որ այդ դատավճիռները հակասում են մի շարք սկզբունքների և նորմերի, ապա քաղաքացիական օրենսգրքի 326 հոդվածի համաձայն կարող են դիմել այն նորից քննարկելու համար: Սակայն հեղափոխության և ընդհանուր դատարանների քրեական դատավարության մասին օրենքը այս մասին լռում է և դատավճռի նորից քննարկումը կարող է կատարվել վերաքննիչ դատարանի կամ դատական իշխանության նախագահի թույլտվության դեպքում:

Քրեական գործերի քննության առանձնահատկությունները Հեղափոխության դատարաններում: Հեղափոխության դատարանների հիմնման պատմությունը կապված է 1789 թ. Ֆրանսիայում տեղի ունեցած Մեծ հեղափոխության հետ: Այս դատարանը ուներ բոլոր իրավունքները քննելու այն բոլոր հանցագործությունները, որոնք ուղղված էին ընդդեմ երկրի և հեղափոխության: Իրանում նույնպես իսլամական

[284] Հոջաթի Ս.Մ., նշվ. աշխ., էջ 337:

հեղափոխության հաղթանակից հետո հեղափոխության խորհուրդը երկրի վարչական պատասխանատուն էր: Սկզբնական շրջանում այս դատարանները ծանր հանցագործությունների դատա-վճիռներն էին կայացնում: Այս դատարաններն Իրանի քաղաքական և հասարակական պայմանների ծնունդն էին՝ իսլամական հեղափոխության հաղթանակից հետո: Իսլամական հեղափոխության հաղթանակից մեկ տարի անց «Արտակարգ դատարանի հիմնում հակահեղափոխական հանցնանքների մասին» օրենքի հիման վրա ստեղծվեց առաջին հեղափոխական դատարանը՝ հեղափոխության ձեռքբերումները պահպանելու համար: Ի վերջո 1984 թ. Մեջլիսի որոշմամբ հեղափոխության դատարանները սկսեցին ենթարկվել դատական իշխանության ղեկավարին: Այս դատարաններում հատուկ մթնոլորտի առկայության պայմաններում փաստաբանի ներկայությունը և մեղադրյալի իրավունքների ճշտգրիտ կատարում չէր պահպանվում: Որոշ իրավաբանների կարծի-քով, այս դատարանները գործում են Սահմանադրության սկզբունքները խախտելու պայմաններում[285]: Հարկ է նշել, որ հեղափոխության դատարանների գործառույթներից է արտաքին և ներքին անվտանգությանն ուղղված հանցագործությունների, վիրավո-րանք իմամ Խոմեյնուն և ներկայիս հոգևոր առաջնորդին, զինված հարձակում ուղղված ԻԻՀ դեմ՝ կառույցների ոչնչացում իբրև վարչակարգի տապալման փորձ, լրտեսության փորձ, թմրանյութերի հետ կապված հանցագործություն, խաղաթղթերի, Սահմանադրու-թյան 49-րդ կետերին հակասող գործողությունների հետաքննում: Հեղափոխության դատարանների կողմից կայացրած դատավճիռները թմրանյութերի հետ կապված հանցագործությունների վերաբերյալ վերջնական է և բողոքարկման ենթակա չէ, ինչը հակասում՝ դատավարության երկու փուլով լինելու սկզբունքին: Հեղափոխության դատարաններն ունեն լայն իրավասություն կապված մահապտժի, երկարաժամկետ ազատազրկման վերաբերյալ վճիռներ կայացնելու գործում: Քրեական դատավճիռների կատարումը քրեական դատավարության վերջին փուլն է: Եթե արդարացման վերաբերյալ դատավճիռ կայացվի, պետք է դատապարտյալը ազատ արձակվի[286]:

---

[285] Քաշանի Ս.Մ., Արդարադատության համաշխարհային ստանդարտներ, 1-ին տպ., Միզան, Թեհրան, 2004, էջ 198:

[286] Մոհաջերի Ա., Դատարանում դատավարության կարգերը, 6-րդ տպ., Ֆեքրսազան, Թեհրան, 2008, էջ 297:

Քրեական դատավարության հիմնական սկզբունքներն Իրանում: Արդարացման սկզբունքը: Արդարացում բառը նշանակում է մաքրվել, ազատվել[287]: Եթե հետաքննությունից հետո բավարար չափով ապացույցներ չենք գտնում կասկածը փարատելու համար՝ օգտագործում են արդարացման սկզբունքը: Հարկ է նշել, որ այս մասին նշված է նաև Ղուրանում[288]: Իսլամում մեկ այլ հայտնի կանոն կա այս սկզբունքի մասին, որում նշվում է ապացույցներ ներկայացնելը մոդայիի պարտականությունն է և հակառակ դավիի դեմ միայն երդումով կարող է հայցը մերժել, այն էլ ապացույցների բացակայության պայմաններում[289]: Այս սկզբունքի մասին նշվում է նաև երկրի մայր օրենքում:

Հանցագործության և պատժի օրինական լինելու սկզբունքը: Առանց օրենքի ոչ մի հանցագործություն և պատիժ գոյություն չունի, ինչը աշխարհի մի շարք երկրների իրավական համակարգերում մեծ կիրառություն ունի[290]: Յուրաքանչյուր արարք, որքան էլ տգեղ և վտանգավոր լինի, դատավորը չի կարող միջամտել, եթե այդ արարքը անցյալում որպես հանցագործություն չի որակվել[291]: Այս սկզբունքը հիմված է տրամաբանության և բանականության վրա: Հանցագործությունների օրինականության սկզբունքը՝ մշակված և որպես օրենք, առաջին անգամ առաջադրվեց 18-րդ դ. Վերջերը Եվրոպայում և բռնապետ ղեկավարներին ու դատավորներին դիմակայելու նպատակով[292]: Մարդու իրավունքների հռչակագրի 7 և 10-րդ կետերում հստակորեն նշվում է, որ ոչ մի մարդու ձերբակալությունը թույլատրելի չէ, եթե դրա համար օրենք չկա սահմանված: Դատավորը չի կարող նոր օրենքը, որը արարքը հանցանք է համարում, սակայն անցյալում հանցանք չի եղել՝ կիրառել: Այդ սկզբունքի պատմությունը կապված է ֆրանիսկան հեղափոխության հետ, չնայած որ տարածում է ունեցել նաև միջին դարերում: Այսօր ևս աշխարհի մի շարք երկրներում այս սկզբունքը

---

[287] Մոին Մ., Պարսկերեն լեզվի բառարան, վեցհատորյակ, 27-րդ տպ., Ամիր-Քաբիր, Թեհրան, 2014, էջ 490:

[288] Տե՛ս Ղուրանի «Հաջարաթ» սուրայի 12-րդ և «Ասրա» սուրայի 15-րդ այաթները:

[289] Հոջաթի Ս.Մ., Դատավարության սկզբունքների իմաստը և դրանց մեկնաբանական դերը // Կենտրոն դատարանի Փաստաբանների պալատի ամսագիր, հ. 186-187, Թեհրան, աշուն-ձմեռ, 2004, էջ 28-45:

[290] Նուրբահա Ռ., Ընդհանուր քրեական իրավունքի ոլորտը, 14-րդ տպ., Գանջե Դանեշ, Թեհրան, 2005, էջ 166:

[291] Գոլդուզյան Ի., նշվ. աշխ., էջ 73:

[292] Միլանի Ա., Պատմության էջերում հանցանքի և պատժի օրինականության սկզբունքը // Արդարադատության իրավաբանական ամսագիր, հ.՝ 62 և 63, Դատական իշխանություն, Թեհրան, գարուն-ամառ, 2008, էջ 157-180:

ընդունված է (Ֆրանսիայի պատժամիջոցների մասին օրենքի 1-112-ից 4-112-րդ հոդվածները): Իսլամում նույնպես կանոն գոյություն ունի, ըստ որի առանց նախնական տեղեկացման պատժի կիրառումը ճիշտ չէ: Իհարկե այս սկզբունքը, եթե մեղադրյալի օգտին լինի բացառության կարգով չի կատարվի: Օրինակ, եթե որևէ հանցանքի պատիժը նոր օրենքով ի տարբերության հին օրենքի «խաի» է, կամ պատիժը վերացվել է, կամ վերածվել է դաստիարակչական միջոցների կատարման, ապա նոր օրենքը պետք է «աթ» լինի: Բոլոր դեպքում այս սկբունքը Իրանի դատական համակարգի կողմից ընդունված է և բազմաթիվ անգամներ այն կիրառվել է: Սակայն պետք է նշել, որ սովորաբար օրենսդիրները օրենքի կատարման համար որոշակի ժամկետներ են սահմանում: Այս մասին Իրանի քաղաքացիական օրենսգրքում ասվում է, որ օրենքները օրենքի սահմանումից տասնհինգ օր հետո այն երկրի ողջ տարածքում կատարելը պարտադիր է, բացառությամբ այն դեպքերի, եթե հենց օրենքի մեջ նշված լինի դրա կատարման ժամկետը: Սակայն որոշ դեպքերում նկատվում է, որ օրենքները հենց հաստատումից հետո սկսում են կիրառել, ինչի հետևանքով մարդկանց այդ օրենքի հետ ծանոթանալու հնարավորություն չի լինում: Այդպիսի դեպքերից է բանկերի ազգայանցման մասին օրենքի ընդունումը 1980 թ.:[293]

Խորհրդակցելու և փաստաբան ունենալու սկզբունքը: Յուրաքանչյուր ոք օրենքի շրջանակներում կարող է օգտվել փաստաբանի ծառայություններից: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային պակտի չորրոդ բաժնի 3-14-րդ կետերը, ինչպես նաև ՄԻԵԿ-ի 3-6-րդ կետերում, Ամերիկայի մարդու իրավունքների կոնվենցիայի 2-8-րդ կետերում խոսվում է մեղադրյալի իրավունքների մասին, որ նա կարող է փաստաբան ունենալ և այդ փաստաբանն իրավունք ունի մասնակցելու իր մեղադրյալի դատավարության բոլոր փուլերին:

Փաստաբանների դատավարության բոլոր փուլերին մասնակցելու վերաբերյալ կան բազմաթիվ կարծիքներ[294]: Իրավաբանների կողմից հնչեցված կարծիքների մի մասի համաձայն մեղադրյալը հետաքննության սկզբնական փուլից մինչև վերջ իրավունք

[293] Նուրբահա Ռ., նշվ. աշխ. էջ 170:
[294] Խալաթբարի Ա., Փաստաբանի մասնակցությունը քննչական աշխատանքներում // Փաստաբանների պալատի ամսագիր, 16(92), Թեհրան, 1964, էջ 1-11:

չունի օգտվելու փաստաբանի ծառայություններից: Իհարկե հնարավոր է, որ այս արգելքը վերաբերում է հատուկ հանցագործություններին, ինչպես օրինակ երկրի անվտանգությանն ուղղված հանցագործությունը: Իրավաբանների մյուս խումբն էլ կարծում է, որ մեղադրյալը միայն հետաքննության սկզբնական փուլում չի կարող օգտվել փաստաբանի ծառայությունից, այսինքն՝ նախաքննության ավարտից հետո մեղադրյալը կարող է վարձել փաստաբան: Մասնագետների մեկ այլ խումբ կարծում է, որ նման արգելքները դեմ են մարդու իրավունքներին և յուրաքանչյուր ոք ձերբակալությունից հետո պետք է իրավունք ունենա խորհրդակցելու փաստաբանի հետ[295]:

Մինչև հեղափոխությունը մեղադրյալն իրավունք ուներ երեք փաստաբան ունենալու, սակայն ներկայիս օրենքը որոշակի սահմանափակումներ է մտցրել. մեղադարյալը իրավունք ունի մեկ փաստաբան վարձել, իսկ փաստաբանը պարտավոր է հետաքննության ընթացքին չմիջամտել, իսկ հետաքննության ավարտից հետո իր մեղադրյալին պաշտպանելու համար դիմել դատավորին: Պետք է նշել, որ միայն «մոթադավել» դատարաններում է այդպես, սակայն հետաքննության սկզբնական փուլում դատախազություններում այլ կերպ է, ըստ որի փաստաբանը նույնիսկ գործը ուսումնասիրելու իրավունք չունի: Սակայն դատավարության բոլոր փուլերում փաստաբանի խորհուրդների անհրաժեշտությունը անժխտելի է, քանի որ այս դեպքում փաստաբանն իր իսկ ներկայությամբ կարող է փաստեր հավաքել իր պաշտպանյալի համար, ինչպես նաև կանխել դատական համակարգի կողմից անարդարացի վճիռ կայացնելը[296]: Բացի այդ փաստաբանի ներկայությունը նպաստում է այն հանգամանքին, որ քննիչը հետաքննություն իրականացնելիս ուշադիր լինի բոլոր օրենքների կատարմանը և անօրինական քայլ չկատարի[297]: Փաստաբանը երկրի դատական համակարգում համարվում է անկախ մարմին: Հաշվի առնելով այն փաստը, որ փաստաբանի առկայությունը յուրաքանչյուր անձի իրավունքն է, հետևաբար փաստաբանի ներկայության ընդունումը դատավարության բոլոր փուլերում համարվում է երկրի հեղինակության բարձրացմանն ուղղված քայլ: Բացի այդ պետք է նշել, որ բոլոր մարդիկ չեն կարող բոլոր օրենքների բովանդակությանը ծանոթ լինել, այսպիսով

[295] Անսարի Վ., Քրեական հետազոտությունների իրավունքը, 2-րդ տպ., Սամթ, Թեհրան, 2011, էջ 502:
[296] Անսարի Վ., նշվ. աշխ., էջ 112:
[297] Նույնը, էջ 134:

մարդիկ չեն կարող պաշտպանել իրենց իրավունքները: Այսպիսով, իրավաբանների տարաձայնությունները փաստաբանների իրավասության և քրեական դատավարության 128–րդ կետի հետ կապված ներկայացվում է հետևյալ կերպ. փաստաբան կարող են ունենալ սկզբնական նախաքննությունից հետո և միայն հետաքննության վերջին փուլում փաստաբանն իրավունք ունի իր պաշտպանյալի օգտին նյութեր ներկայացնել դատավորին: Հարկ է նշել, որ այս դեպքում ոտնահարվում է մեղադրյալ իրավունքները: Հետաքննության սկզբնական փուլում փաստաբանն իրավունք չունի գործին ծանոթա-նալ: Նա դա կարող է անել միայն դատավարության ընթացքում՝ դատարանում[298]: Մյուս տեսակետի համաձայն փաստաբանն իրավունք ունի հետաքննության յուրաքանչյուր փուլի ավարտից հետո քայլեր ձեռնարկել մեղադրյալին պաշտպանելու համար: Վերջին տեսակետի համաձայն փաստաբանին հնարավորություն է տրվում հետաքննության յուրաքանչյուր փուլի վերջում նախաձեռնել իր պաշտպանյալի շահերը պաշտպանելու գործը և քանի որ քրեական հետաքննությունը բաղկացած է մի քանի փուլից՝ բողոքի ստացում, վկաների լսում, տեղային հետաքննություն, ապա փաստաբան ունենալու համար սահմանափակումներ քիչ են առաջանում:

Չնայած որ ներկայումս երկրի դատախազություններում ավելի շատ առաջին տեսա-կետն է գերիշխում և փաստաբանը հետաքննության նյութերը նույնիսկ ուսումնասիրելու հնարավորություն չունի: Իրանի դատական իշանությունը նշում է, որ հետաքննության փուլում փաստաբանի նյութերի ուսումնասիրումը կնշանակի գործին միջամտություն: Փաստաբանը կարող է գործը ուսումնասիրել և դատավարության ընթացքում պաշտպանել մեղադրյալի շահերը: Այն անձինք, ովքեր համարվում են մեղադրյալներ, պետք է ունենան բավականաչափ ժամանակ իրենց պաշտպանելու համար: Իրանում օրենսդիրը 5 օր է տրամադրում նախապատրաստվելու համար[299]: Թվում է, թե բավականին ժամանակ է նախատասեված պատրաստվելու համար, սակայն յուրաքան-չյուր դատական գործ ունի իր առանձնահատկությունները, հեշտ և դժվար կողմերը:

[298] Տե՛ս Քրեական դատավարության մասին օրենքի 190-րդ հոդված:
[299] Տե՛ս Քաղաքացիական դատավարության 64-րդ հոդված և քրեական դատվարության մասին օրենքի 177-րդ հոդվածի 2-րդ կետը:

Մուսուլմանական իրավունքը չի ստեղծել քրեական իրավունքի խիստ ավարտուն համակարգ: Նրանում, քանի որ հիմնված է կրոնի սկզբունքների վրա, միախառնվում են քրեական հանցագործության և մեղքի հասկացությունները: Իսլամական քրեական համակարգը պահպանել է որոշ հնացած գծեր, ինչի պատճառով ֆիկղը խիստ հետամնաց է երևում՝ հռոմեագերմանական իրավունքի համեմատությամբ: Այսպես, համաձայն ֆիկղի, իրավունքի սուբյեկտ համարվում է ոչ թե առանձին անհատը, այլ ընտանիքը: Սպանությունը դիտվում է ոչ թե որպես հանցագործություն հասարակության դեմ, այլ որպես հանցագործություն սպանվածի նկատմամբ: Շարիաթով պահպանվել է արյան վրեժի օրենքը: Այս գծերը մինչմուսուլմանական, հեթանոսական Արաբիայի տոհմացեղային սովորույթների վերապրուկներ էին, որոնք մնացին նաև արաբական հասարակության ֆեոդալականացումից հետո: Սակայն, մյուս կողմից, շատ այլ գծերով իսլամի քրեական համակարգը առաջ անցավ արևմտաեվրոպական օրենդրությունից: Այսպես, ֆիկխի համաձայն, իրավախախտման համար պատասխանատու է միայն չափահաս, հոգեպես առողջ և ազատ մարդը, իսկ անչափահասը, հոգեկան հիվանդ-ները և ստրուկները պատասխանատու չեն կամ սահմանափակ չափով են պատաս-խանատու: Մուսուլմանական իրավունքը արգելում է կիրառել տանջանք, խոշտանգում, կտտանք (ինչը եվրոպական մի շարք երկրներում կիրառվել է մինչև 18-րդ դարը):

Մուլսումնական քրեական դատավարությունը տարբերվում էր արագությամբ և օպերատիվությամբ, անտեղյակ էր դատական քաշքշուկներին, ինչը բնորոշ էր արևմտաեվրոպական և ռուսական դատարաններին, անգամ 19-րդ դարում:

Արևմտյան մի շարք հեղինակներ կարծում են, որ Իրանի իրավական համակարգը զուտ իսլամական է: Սակայն իրականում Իրանի առևտրային, քաղաքացիական իրավունքը, դատական նախադեպերը նմանակում են Ֆրանսիայի իրավական համակարգին: Պետական իշխանությունը բաժանված է դատական, օրենսդիր, գործադիր թևերի, սկզբունք, որը չի համապատասխանում իսլամական իրավական դոկտրինին: Հետևաբար, ռոմանագերմանական իրավական համակարգի ազդեցությունն Իրանի իրավական համակարգի վրա ակնհայտ է:

Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակից հետո այս երկրի իրավական համակարգում որոշ փոփոխություններ

տեղի ունեցան. ա) քրեական իրավունքի մեջ իսլամական օրենքները դրվեցին նախկինում գոյություն ունեցած դատական պատիժների փոխարեն, բ) որոշ քաղաքացիական և իրավաբանական խնդիրներում, երբ օրենքի հետ կապված թերացում է նկատվում, պետք է դիմել իսլամական իրավունքի վստահելի աղբյուրին, որովհետև օրենքն իսլամի տեսանկյունից կրոնի հետ համընկնում է և կազմում է դրա մասնիկը:

Ուրեմն չի կարելի կրոնի և օրենքների իսկական հիմունքներց շեղվել կամ փոփոխել դրանք: Եթե Իրանի իրավական համակարգը պատկերացնենք իբրև բուրգ, որի գագաթին Իրանի Սահմանադրությունն է, վերցված իսլամական օրենքներց, ապա այլ օրենքներն ու կանոնակարգերը, դատարանի որոշումները ավելի ցածր մակարդակում են գտնվում: Քանի որ այս օրենքների ճշմարտությունը և ազդեցությունն այն ժամանակ առաջ կգան, երբ այդ օրենքները չհակասեն Իրանի Սահմանադրության և իսլամի օրենքների հետ: Տարբերություն չկա, թե այդ որոշումներն ում վրա են ազդում, մեկ անձի, թե՞ ողջ հասարակության: Ուրեմն Իրանի դատավորները իրավական և քաղաքացիական հարցերում կատարում են Սահմանադրության 167–րդ հոդվածը, հարգելով և հիմնվելով այն օրենքներին, որոնք հաստատվել են խորհրդարանի կողմից:

Պետք է ընդունել որ քրեական հանցանքների ժամանակ ուսմունքները, հրամաններն ու տեսությունները միայն այլընտրանքային ճանապարհ են: Դրանք հանդիսանում են լուսաբանման աղբյուր: Ամեն ինչ պետք է սահմանափակվի օրենքով: Այս դեպքում կարելի է ասել, որ դատավորներն ունենալով օրենքների լուսաբանման իրավունքն իրենց սահմանների մեջ են աշխատում: Միևնույն ժամանակ քաղաքակրթությանը հետևելուց չեն շեղվում:

Կարելի է այլ աղբյուրներ գտնել Իրանի իրավունքում: Սակայն դրանց քիչ ուշադրություն են դարձնում: Դրա վառ օրինակ է համարվում, իրավական ընդհանուր օրենքները և մտադրությունները: Հարկ է նշել, որ Իրանի իրավական այլ աղբյուներ էլ կան, որոնք կիրառելի չեն և դուրս են եկել գործածությունից, չնայա որ էական դեր են խաղում իրավական հարաբերություններում: Օրինակ, քաղաքացիական օրենքների 277-րդ կետի համաձայն, օրենսդիր մարմնի խղճին հետևելը տրվել է դատավորին, որը

պահանջատիրոջ ցանկությունը հաշվի չառնելով պարտապանին ժամանակ է հատկացնում պարտքը վճարելու համար[300]: Դատական ընդհանուր հիմունքները, որոնք քաղաքացիական դատավարության կարգի 3-րդ կետն են կազմում (ընդունված 2001 թ.-ին), ըստ որի դատարանները իրավական ընդհանուր հիմունքների կարիքը չեն զգում, չնայած Իրանի տարբեր օրենքներում դատական հիմունքները նշվել են որպես օրենքի կետ: Օրինակ՝ քաղաքացիական օրենսգրքի 4-րդ կետը և իսլամական դատապատիժների օրենքի 61-րդ կետը ցույց են տալիս, որ դատական ընդհանուր հիմունքները օգտագործվում են օրենքի մեջ:

[300] Տե՛ս Քաղաքացիական օրենսգրքի 277-րդ կետ, ըստ որի պարտատերը չի կարող պարտապանին պարտադրել, որ կատարի պարտականությունների մի մասը: Բայց դատավորը նկատի ունենալով պարտապանի վիճակը կարող է նրան ժամանակ տրամադրել:

ԵԶԱՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Մինչև 20-րդ դարն Իրանի դատական և իրավական համակարգը հիմնված էր ավանդական սովորույթային օրենքների և կրոնական նորմերի վրա: 20-րդ դարում տեղի ունեցած երկու խոշոր հեղափոխություններն իրենց կնիքը թողեցին Իրանի իրավական համակարգի վրա: Ներկայումս Իրանի Իսլամական Հանրապետության իրավական համակարգը հիմնված է երկու կարևորագույն սկզբունքների՝ հանրապետական վարչակարգի և իսլամի նորմերի վրա: Առաջին հեղափոխությունը, որ տեղի ունեցավ 1906 թվականին, հայտնի է սահմանադրական հեղափոխության անվամբ, նպատակ ուներ մոդեռնիզացնել Իրանի իրավական համակարգը: Հեղափոխությունից հետո Իրանի իրավական համակարգում կատարվեցին արմատական փոփոխություններ՝ ռոմանոգերմանական իրավունքի /Բելգիայի, Շվեյցարիայի, Ֆրանսիային իրավական համակարգերի/ նորմերին համապատասխան: Իրանի առաջին Սահմանադրությունը, իրավական, դատական կառույցները հենց այս ժամանակահատվածում են ձևավորվել: Երկրորդ հեղափոխության արդյունքում, որ տեղի ունեցավ 1979 թ. և հայտնի է իսլամական հեղափոխություն անվամբ, մեծ տարածում գտան իսլամական նորմերը և սկզբունքները, իսկ իրավական ողջ համակարգը հարմարեցվեց դրանց: Այդ գործընթացը մինչև օրս շարունակվում է:

2. Երկու հեղափոխության արդյունքում ի հայտ եկած փոփոխություններն Իրանի իրավական համակարգում մի շարք խնդիրներ են առաջացրել: Իսլամական իրավական տեսության մեջ կազմակեպությունները և պետական կառույցները, ինչպես նաև նախարարները, մեջլիսը և այլն նախադեպ չեն ունեցել և ստիպված առաջնորդվել են ռոմեագերմանական իրավունքի նորմերին համաձայն, բայց մյուս կողմից էլ երկրի օրենքները սահմանված են իսլամի կանոնների հիման վրա, ինչի հետևանքով էլ անհամաձայնություն է ի հայտ գալիս: Այսպիսով, Իրանի ղեկավարները իսլամական հեղափոխությունից հետո արտաքինից իրավական համակարգը կառուցեցին իսլամի նորմերի հիման վրա, իսկ ներսում սկսեցին կիրառել ռոմանագերմանական իրավունքի սկզբունքները:

3. Արևմտյան մի շարք հեղինակներ կարծում են, որ Իրանի իրավական համակարգը զուտ իսլամական է: Սակայն իրականում Իրանի առևտրային,

քաղաքացիական իրավունքը, դատական նախադեպերը նմանակում են Ֆրանսիայի իրավական համակարգին: Պետական իշխանությունը բաժանված է դատական, օրենսդիր, գործադիր թևերի, սկզբունք, որը չի համապատասխանում իսլամական իրավական դոկտրինին: Հետևաբար, ռոմանագերմանական իրավական համակարգի ազդեցությունն Իրանի իրավական համակարգի վրա ակնհայտ է:

4. Իսլամական հեղափոխության հաղթանակից հետո երկրի օրենսդիրներն իրավական համակարգի իսլամացման գործընթաց սկսեցին, սակայն իրավական և դատական կառույցների էությունը և բովանդակությունը նման են ռոմանոգերմանական իրավունքի սկզբունքներին: Իհարկե այս փաստն Իրանի իրավական համակարգում երկակիության և անհամաձայնության առաջացման պատճառ է դարձել, որի լավագույն օրինակն իրավունքի աղբյուրներն են: Ակադեմիական տեսանկյունից իրավունքի աղբյուրները Իրանում, ինչպես նաև ռոմանոգերմանական իրավունքը կիրառող մյուս երկրներում, օրենքներն են, որոնք հաստատվում են օրենսդիր մարմինների կողմից, իսկ սովորույթները, դատական նախադեպերը համարվում են Իրանի իրավունքի երկրոր-դական աղբյուրներ: Սակայն իսլամի տեսանկյունից Իրանի իրավունքի աղբյուրներն են Ղուրանը, հադիսները, սուննան: Ակադեմիական աղբյուրները պետք է համապատաս-խան լինեն իսլամի սկզբունքներին, այլպես դրանց կիրառումը Իրանում կարգելվի: Թվում է, որ Իրանում օրենսդիրները ջանացել են իսլամի սկզբունքները Սահմանադրու-թյան մեջ ներառելով, իրավական համակարգին իսլամական բնույթ հաղորդել:

5. Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակից հետո այս երկրի իրավական համակարգում որոշ փոփոխություններ տեղի ունեցան. ա) քրեական իրավունքում ներմուծվեցին իսլամական օրենքներ՝ նախկինում գոյություն ունեցած դատական պատիժների փոխարեն, բ) որոշ քաղաքացիկան և իրավաբանական խնդիրներում, երբ օրենքի հետ կապված թերացում է նկատվում, պետք է դիմել իսլամական իրավունքի վստահելի աղբյուրին, որովհետև օրենքն իսլամի տեսանկյունից կրոնի հետ համընկնում է և կազմում է դրա մասնիկը: Ուրեմն չի կարելի կրոնի և օրենքների իսկական հիմունքներց շեղվել կամ փոփոխել դրանք: Եթե Իրանի իրավական համակարգը պատկերացնենք իբրև բուրգ, որի գագաթին Իրանի Սահմանադրությունն

է, վերցված իսլամական օրենքներց, ապա այլ օրենքներն ու կանոնակարգերը, դատարանի որոշումները ավելի ցածր մակարդակում են գտնվում: Այս օրենքների ճշմարտությունը և ազդեցությունն այն ժամանակ առաջ կգան, երբ այդ օրենքները չհակասեն Իրանի Սահմանադրության և իսլամի օրենքների հետ: Տարբերություն չկա, թե այդ որոշումներն ում վրա են ազդում, մեկ անձի, թե՞ ողջ հասարակության: Ուրեմն Իրանի դատավորները իրավական և քաղաքացիական հարցերում կատարում են Սահմանադրության 167-րդ հոդվածը, հարգելով և հիմնվելով այն օրենքներին, որոնք հաստատվել են խորհրդարանի կողմից:

6. Իրանում օրենքն իրավունքի և արդարադատության գլխավոր աղբյուրն է, իսկ դրա թերության ու անորոշության դեպքում, պետք է դիմել իսլամական իրավաբանության հավաստի աղբյուրներին ու իսլամական ֆեթվաներին (հրովարտակներին): Նման մոտեցումը ընդունված է նաև մի շարք այլ պետությունների օրենքներում: Օրինակ՝ Շվեյցարիայի քաղաքացիական օրեսգրքի 1-ին հոդվածի 3-րդ կետում նշված է. «Ամրագրված օրենքի, անվիճելի սովորույթի ու ավանդույթի բացակայության դեպքում, դատավորը ղեկավարվում է դատական նախադեպով ու հայեցակարգով»: Լավ կլիներ, որ իրանական օրենսդիրը ևս օգտագործեր իրավաբանության մեջ հստակ ու ճանաչված աղբյուրներ հանդիսացող դատական նախադեպ կամ սովորույթ ու ավանդույթ արտհայատությունները՝ «իսլամական իրավաբանների ֆեթվաների ու հավաստի իսլամական իրավաբանական աղբյուրներ» բառակապակցություններից առաջ, որոնք չունեն հստակ սահման և, ինչ-որ կերպ, հայեցակարգերի մաս են կազմում:

7. Իրանական իրավունքում կան նաև այլ աղբյուրներ, սակայն դրանց քիչ ուշադրություն են դարձնում: Վառ օրինակ է համարվում իրավական ընդհանուր դրաույթները և դիրքորոշումները: Հարկ է նշել, որ Իրանում իրավական այլ աղբյուներ էլ կան, որոնք կիրառելի չեն և դուրս են եկել գործածությունից, չնայած որ էական դեր են խաղում իրավական հարաբերություններում: Օրինակ, քաղաքացիական օրենքների 277-րդ կետի համաձայն, դատավորին տրվել է իրավունք հետևել օրենսդիր մարմնի խղճին, որից ելնելով դատարանը պահանջատիրոջ ցանկությունը հաշվի չառնելով

պարտապանին ժամանակ է հատկացնում պարտքը վճարելու համար: Այլ աղբյուրներից են նաև դատական ընդհանուր հիմունքները /սկզբունքները/:

8. Իսլամական հեղափոխությունից հետո իրավական համակարգի կարևորագույն հիմքը դարձավ բոլոր օրենքների համապատասխան լինելը իսլամական սկզբունքներին: Իրանի Իսլամական Հանրապետությունը հիմնված է՝ միաստվածության և նրան հնազանդվելու, Աստվածային ներշնչանքի և օրենքների մեկնաբանման ժամանակ դրա հիմնարար դերի, աիեղ դատաստանի և դրա արդյունավետ դերի /այն ուղղված է մարդու կատարելագործմանն առ Աստված/, աստվածային արդարության, Շարիաթի օրենքների ճանաչման վրա: Իմամները հաջորդական են և խնամակալ հասարակության, մարդկային բարձրագույն արժեքի՝ ազատության նկատմամբ: Իսլամական հիմնարար սկզբունքներից է Աստծո առջև պատասխանատվությունը, որն ապահովում է հավասարություն, արդարություն և քաղաքական, տնտեսական, մշակութային, սոցիալական անկախություն, ինչպես նաև ազգային միասնականություն՝ համերաշխության ճանապարհով: Այդ համակարգը ենթադրում է Շարիաթի օրենքների շարունակական կատարում, որը համապատասխանում է ֆաղիհների պահանջներին և սրբակենցաղ տասնչորս իմամների գրությանն ու սուններին, մարդու շահագործման, ինչպես նաև մարդկանց միջև գերիշխանության մերժումը: Իրանի օրենսդիրը ցանակացել է իրավական համակարգում, ներմուծելով իսլամական սկզբունքները և նորմերը, դրան հաղորդել իսլամական շունչ, մյուս կողմից էլ հաշվի առնելով մարդու իրավունքները և ժողովրդավարական այլ սկզբունքներ ընտրվել է հանրապետական վարչակարգը: Արևմտյան երկրների նման Իրանն ունի նախագահ, նախարարներ, սակայն ունի նաև հոգևոր առաջնորդի ինստիտուտ, որի ուղղակի և անուղղակի վերահսկողության գործառույթներն իշխանության երեք թևերի նկատմամբ ապահովվում է վարչակարգի աստվածային օրինականությունը՝ Իրանի Իսլամական Հանրապետությունում:

9. ԻԻՀ աստվածապետական հանրապետություն է. այստեղ իշխանությունն իրականացվում է աստվածային օրենքների համաձայն՝ հոգևոր առաջնորդի ղեկավարությամբ: Սահմանադրությամբ ամրագրված բոլոր նորմերը իրականացվում են հոգևոր առաջնորդի վերահսկողության ներքո: Անդրադառնալով

Սահմանադրության մեջ ամրագրված կրոնական սկզբունքներին, պետք է նշել, որ ֆաղիհը միակն է, որ կարող է Վալի Ասրի բացակայության ընթացքում քննարկել Շարիաթին վերաբերող հարցեր: Վալիե Ասրի բացակայության ժամանակ Հանրապետության առաջնորդությունը և ժողովրդի հովվապետությունն իրականացնում է արդար և հավատացյալ, ժամանակի խնդրիներին քաջածանոթ, համարձակ, նախաձեռնող և կազմակերպիչ ֆաղիհը: Այսինքն՝ ցանկացած ժամանակ, երբ իշխանությունը անցնի ոչ ֆաղիհի ձեռքը, կնշանակի, որ իշխանությունը զուրկ է աստվածային օրինականությունից: Հարկ է նշել, որ իշխանության երեք ճյուղերի գործունեությունը գտնվում է հոգևոր առաջնորդի վերահսկողության ներքո: Փաստորեն, ԻԻՀ-ի կառավարման ձևում, բացի այն, որ ներսից իշխանության երեք ճյուղերը վերահսկվում են, կա կառուցակարգ, որն իշխանությունը վերահսկում է դրսից:

10. Ավելացնելով մարդու իրավունքների սկզբունքներ և նորմեր, փորձ է կատարվել Իրանի իրավական համակարգը ներկայացնել ժողովրդավարական, որ կատարում է մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային կոնվենցիաների բոլոր կետերը: Սակայն հաճախ բախվում ենք այն իրականությանը, որ իսլամի սկզբունքներն ու նորմերը և մարդու իրավունքների նորմերը միմյանց հետ խորը հակասություններ ունեն: Պետք է նշել, որ այս երկակիությունն առաջ է գալիս նաև օրենքների կիրառման ժամանակ: Եթե արևմտյան երկրներում, որոնք կիրառում են ռոմանոգերմանական իրավունքը, պառալամենտն ունի օրենք հրապարակելու իրավունք, ապա Իրանի դեպքում մեկ այլ պաշտոնյա կա, որ իրավունք ունի օրենքներ հրապարակելու: Խոսքը հոգևոր առաջնորդի մասին է: Համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհուրդը նույնիսկ, որպես հոգևոր առաջնորդի ներկայացուցիչ, օրենսդրությամբ զբաղվելու իրավունք չունի: Այս խորհուրդը կարող է միայն քայլեր ձեռնարկել Մեջլիսի և Պահապանների Խորհրդի միջև ծագած տարաձայնությունները հարթելու նպատակով:

11. Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրության մեջ յուրաքանչյուր կառույցի օրենսդրությամբ զբաղվելու շրջանակները հստակորեն նշված չէ, ինչը հաճախ իշխանության թևերի միջև տարաձայնությունների առաջացման պատճառ է

դառնում: Բայց մի բան հստակ կարող ենք նշել, որ Իրանում օրենսդրությամբ զբաղվող բոլոր կառույցները ուղղակի կամ անուղղակի կերպով գտնվում են հոգևոր առաջնորդի հսկողության ներքո:

12. Հակասական է նաև մարդու իրավունքների հիմնահարցը: Սահմանադրության մեջ խոսվում է մարդու իրավունքների, հիմնարար ազատությունների մասին՝ հիմնված ռոմանոգերմանական իրավունքի նորմերի վրա, մյուս կողմից էլ իսլամի սկզբունքների համաձայն մուսուլմանը ոչ մուսուլմանի, կինը տղամարդու հետ հավասար իրավունքներ չունի: Այսպիսով, Իրանի իրավական համակարգը հիմնվելով ժամանակակից իրավունքի և միջազգային ասպարեզում գործող իրավունքների՝ կյանքի, ապրելու, խոսքի, բնակավայրի ընտրության, կուսակցություն հիմնելու, կրոնական ազատությունների հիման վրա, սակայն մյուս կողմից էլ ընդունելով իսլամը որպես երկրի պետական կրոն նշված իրավունքների իրականացման համար մի շարք խնդիրներ են առաջանում: Իհարկե, Իրանի իրավական համակարգում կան նաև սկզբունքներ, որ էապես չեն տարբերվում մյուս երկներում առկա սկզբունքներից, օրինակ՝ օրենքի առջև բոլորի հավասար լինելը և այլն: Բոլոր դեպքերում կարելի է եզրակացնել, որ Իրանի իրավական համակարգը վերանայման կարիք ունի:

13. Իրանի Սահմանադրության 58-րդ և 59-րդ հոդվածների համաձայն, խորհրդարանն ու հանրաքվեն համարվում են Իրանի միակ օրենսդիր ինստիտուտը, սակայն գործնականում, հատկապես Իսլամական Հեղափոխության հաղթանակից հետո առաջին տասնամյակում, օրենսդրության համար ստեղծվել են բազմազան ինստիտուտներ, որոնք աններդաշնակ կերպով սահմանել են օրենքներ, ինչը Իրանի իրավական համակարգում անորոշության ու երբեմն էլ խնդիրների առաջացման պատճառ է դարձել: Դատավճիռների չկատարման ու արգելափակման պատճառ են դարձել նաև բազմաթիվ անգամ վերաքննություն պահանջելու և բողոքարկելու հնարավորությունն ու եղանակները, այնպես որ, կարելի է ասել, որ Իրանում անհնարին է դարձել վերջնական դատավճռի առկայությունը, քանի որ օրենքներից օգտվելով, կարելի է տարիներ շարունակ կանխել դատավճռի կատարումը: Իհարկե Իսլամական Հեղափոխությունից հետո Իրանում դատավճիռների նկատմամբ վերաքննություն պահանջելու հարցում հանդիպում ենք երկու՝ ամբողջովին տարբեր

ժամանակաշրջանների հետ. Առաջին ժամանակաշրջանում դատավորի վճռի նկատմամբ վերաքննություն պահանջելը համարվում էր իսլամ կրոնին դեմ, նշանակում էր կառավարչի ու իմամի մերժում և արդյունքում համարվում էր նաև Աստծո վճռի մերժում և ինչ-որ կերպ անաստվածություն, և մի շարք բացառություններից բացի, վերաքննություն պահանջելը ընդունելի չէր: Առաջին ժամանակաշրջանին ճիշտ հակառակ երկրորդ ժամանակաշրջանում, որի ընթացքում Իրանում որևէ վերջնական դատավճռի ականատեսը չենք լինում և ճանապարհը մշտապես բաց է վերաքննություն պահանջելու համար: Ինչպես ասվեց, դատավճռի նկատմամբ վերաքննությունը դատական իշխանության ղեկավարի կողմից պայմանավորված ու սահմանափակված չէ որոշակի ժամանակահատվածով և սա գործնականում բազմաթիվ խնդիրներ է առաջացրել: Օրինակ՝ ենթադրենք կայացվել է ամուսնալուծության վճիռ: Անցնելով վերաքննիչ և վճռաբեկ դատարանները, այդ վճիռը իրագործվել է, սակայն եթե որոշ ժամանակ անց ամուսինը բողոքարկի այդ վճռի նկատմամբ և արդյունքում բեկանվի նախկին վճիռը, ապա նրա կինը, ով դատավճռի միջոցով արդեն իսկ ամուսնալուծվել և ամուսնացել է մեկ այլ տղամարդու հետ, վճռի բեկանմամբ նորից կդառնա նախկին ամուսնու կինը, այսինքն՝ կինը կունենա երկու ամուսին: Նմանատիպ հիմնախնդիրները ստիպում են, որ իսլամական պետությունների օրենսդրություններին ու ռոմանագերմանական իրավունքներին համեմատական դիտարկում կատարելով օրենսդիրը ձեռնամուխ լինի Իրանի համապատասխան օրենքների փոփոխմանը, որպեսզի դատավարությունները լինեն առավել արդար, իսկ իրավական գործերն ու հարցերը կարգավորվեն ավելի մեծ արագությամբ:

14. Դատական համակարգի այլ խնդիրներից են նաև դատարանների ոչ մասնագիտացված լինելը՝ քրեական ու իրավական (քաղաքացիական) ընդհանուր խմբերի բաժանման պատճառով, ինչպես նաև իրենց կրթության, փորձառության ու մասնագիտության համապատասխան դատավորներից չօգտվելը հաշվի առնելով միևնույն ժամանակահատվածում օրենքների լայն շրջանակը: Որովհետև տարբերություն կա քրեական և իրավական գործերում դատավճիռների կայացման միջև, հետևաբար հմտության ու համապատասխան մասնագիտության բացակայությունը նվազեցնում է վարույթների որակն ու արագությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ա) Նորմատիվ ակտեր

1 «Իսլամական պատժամիջոցների» մասին օրենսգիրք

(آیین نامه مجازات های اسلامی)

2 1982 թ. ընդունված «Կուսակցությունների, պոպուլացիաների, քաղաքական միավորումների ու արհմիությունների, իսլամական կամ կրոնական փոքրամասությունների ասոցիացիաների ակտիվության մասին« օրենքը

(قانون فعالیت احزاب، تجمعات، واحدهای سیاسی و اصناف، اتحادیه های اسلامی یا اقلیت های مذهبی، مصوب 1982)

3 1983 թ. ընդունված «Դատավորների նշանակման մասին» օրենքը

(قانون انتصاب قضات، مصوب 1983)

4 1995 թ. ընդունված «Անասնաբուժական կազմակերպության« մասին օրենքը

(قانون سازمان های دامپزشکی، مصوب 1995)

5 1999 թ. ընդունված, «Դատարանների վճիռների վերաքննման դեպքերի որոշման և դրանց վարույթի իրականացման եղանակների մասին» օրենքը

(قانون شیوه های تعیین موارد تجدیدنظر احکام دادگاه ها و تحقق رسیدگی به آنها، مصوب 1999)

6 2002 թ. ընդունված «Քաղաքացիական դատավարության մասին« օրենսգիրք

(آیین نامه دادرسی مدنی جمهوری اسلامی ایران، مصوب 2002)

7 Ընդհանուր Իրավասության և Հեղափոխության դատարաններում քրեական դատավարության օրենսգրքի բարեփոխման օրենք

(قانون اصلاح آیین نامه دادرسی کیفری در دادگاه عمومی و دادگاه انقلاب)

8 ԻԻՀ «կուսակցությունների մասին» օրենքը

(قانون احزاب جمهوری اسلامی ایران)

9 ԻԻՀ «մամլո մասին» օրենքը

(قانون مطبوعات جمهوری اسلامی ایران)

10 ԻԻՀ Գերագույն դատարանի 1940 թ. թիվ 916-2969 դատական միասնական մոտեցման մասին դատավճիռը

(حکم پیرامون رویکرد قضایی واحد مورخ 1940 به شماره 916-2969 دادگاه عالی جمهوری اسلامی ایران)

11 ԻԻՀ Պահապան խորհրդի 1983 թ. ընդունված թիվ 1361/1/17 կարծիքը

(نظر شماره 1361/1/17 مصوب 1983 شورای نگهبان جمهوری اسلامی ایران)

12 ԻԻՀ Սահմանադրություն, 1994

(قانون اساسی جمهوری اسلامی ایران، 1994)

13 ԻԻՀ Քաղաքացիական դատավարության օրենսգիրք

(آیین نامه دادرسی مدنی جمهوری اسلامی ایران)

14 ԻԻՀ քաղաքացիական օրենսգիրք

(آیین نامه مدنی جمهوری اسلامی ایران)

15 ԻԻՀ Քրեական դատավարության օրենսգիրք

(آیین نامه دادرسی کیفری جمهوری اسلامی ایران)

16 Հաշտարար խորհուրդների մասին օրենքը

(قانون شوراهای برقراری صلح)

17 Հեղափոխության և ընդհանուր իրավասության դատարանների մասին օրենքը

(قانون دادگاه عمومی و دادگاه انقلاب)

18 Ղուրան (قرآن مجید)

19 Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր

(بیانیه مشترک حقوق بشر)

20 Մարդու իրավունքների վերաբերյալ ամերիկյան կոնվենցիա

(کنوانسیون آمریکایی حقوق بشر)

21 Մարդու իրավունքների վերաբերյալ եվրոպական կոնվենցիա

(کنوانسیون اروپایی حقوق بشر)

22 Սահմանադրության ընդունման համար ընթացող բանակցությունների արձանագրությունների ժողովածու, 4-րդ հատոր

(مجموعه صورتجلسات مذاکرات جاری بمنظور تصویب قانون اساسی، جلد چهارم)

23 Քաղաքական ու քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագիր

(عهدنامه بین المللی حقوق سیاسی و مدنی)

բ) Տեսական գրականություն

24 Abrahamian E., A history of Modern Iran, 2nd Ed., Cambridge, 2008, 228 p.

25 Barker D. and Padfield C., Law made simple, 10th edition, London. 1998, 416 p.

26 Bell J., Boyron S. and Whittaker S., Principles of French law, Oxford, 1998, 582 p.

27 Brabant G., Questiaux N., Wiener C., Le controˆle de l'administration et la protection des citoyens (etude comparative), Cujas, Paris, 1973, 250 p.

28 Bury J.B. et al, The Cambridge Ancient History, Cambridge University Press, 1926, 554 p.

29 Cadoux Ch., Droit constitutionnel et institutions politiques, Theorie generale des

institution politique, Edition Cujas, Paris, 1973, 408 p.

30 Chapus R., Droit Administratif, Tome 1, 15e Ed., Montchrestien, Septembre, 2001, 1427 p.

31 Cremona M., Legal method, 4th Edition, J.W. Arrowsmith Ltd, London, 2002, p. 42.

32 Debbasch Ch., Bourdon J., Pontier J.M., Ricci J.Cl., Droit constitutionnel et institutions politiques, 4e édition, Paris, 1031 p.

33 Dugit L., Traite de driot consitutionnel, T.IV Ancienne Librairie Fontemoing, 1e Edition, Paris, 1924, 782 p.

34 Fleischman J., Human Rights Watch/Africa, Human Rights Watch, 1994, 90 p.

35 G. Curzon, Persia and the Persian question, Paris, 1943, 416 p.

36 Jamal J. Nasir, The Islamic law of personal status, 2nd edn, Graham & Trotman, London, 1990, 358 p.

37 Larguier J., Droit penal general; Que sais-je?, 14e Edition, Paris, 2001, 128 p.

38 Le dogme et la loi de l'islam սեմինարների քննարկումները՝ օրենսդրության փիլիսոփայությունը իսլամում թեմայով, 2008, 178 էջ 60:

39 Morange G., Liberte's publiques, Paris, PUF, 1985. 384 p.

40 Mottahedeh R., The Mantle of the Prophet: Religion and Politics in Iran, OneWorld, 2000, 424 p.

41 Niboyet J.p., Cours de droit international prive francais, 2nd Ed., 10, Paris, 1949, 694 p.

42 Patterson E., Jurisprudence: Men and ideas of the law, The foundation press Inc., 1953, 662 p.

43 Rawls J., A Kantain conception of equality, Equality; reading in social and political philosophy, edit by Robert M. stewart, Oxford university press, 1996, 472 p.

44 Ripert G. et Boulanger J., Traite de droit civil d'apres de le traité de Planiol, Tome II, Librairie générale de droit et de jurisprudence, Paris, 1957, vi-1150 p.

45 Rivero J., Precis de dorit administrative, Réimpression de l'édition du Précis de 1960, Dalloz, 570 p.

46 Shapiro Ian, The state of Democratic Theory, London, Princeton University press, 2006, 200 p.

47 Tonekabone F., Be familiar with Islamic punishment, 1st Edn, Jahad, Tehran, 2000.

48 Wilman J., Brown: GCSE Law, 9th Edition, Sweet and Maxwell, London, 2005, 342 p.

49 Աբբասի Բ., Մարդու իրավունքներե և հիմնարար իրավունքները, 1-ին տպ., Դադգոսթար, Թեհրան, 2011, 496 էջ:

عباسی بیژن، حقوق بشر و آزادی های بنیادین، چاپ اول، نشر دادگستر،تهران، 1390، 496 ص.

50 Աբդոլհամիդ Ա., Իրանի վարչական իրավունքները, 8-րդ տպ., Թուս, Թեհրան,

2008, 960 էջ:

عبدالحمید ابوالحمد، حقوق اداری ایران، چاپ هشتم، انتشارات توس، تهران، 1388، 960 ص.

51 Աբու Զոհրեհ Մ., Տուգանքն ու պատիժը իսլամական ֆեղհի մեջ, 1-ին տպ., Դարոլֆեքր Ալ-Արաբի, 2008, 690 էջ (արաբերեն):

ابو زهره، محمد، الجریمة و العقوبة فی الفقه اسلامی، دار الفکر العربی، چاپ اول، 2008، 690 ص.

52 Ալաիյան Ա., Մարզի քրեական դատարանի վերլուծական ուսումնասիրություն, 1-ին տպ., Ջավդանեհ, Թեհրան, 2008, 168 էջ:

علائیان عباس، بررسی تحلیلی دادگاه کیفری استان، چاپ اول، نشرجاودانه، تهران، 1388، 168 ص.

53 Ալիաբադի Ա., Քրեական իրավունք, երկրորդ հատոր, Ֆիրդուսի, Թեհրան, 2013, 476 էջ:

علی آبادی عبدالحسین، حقوق جنایی، جلد دوم، نشر فردوسی، تهران، 1392، 476 ص.

54 Ալիդուսթ Ա., Ֆեղհին ու բանականությունը, 1-ին տպ., Արդի գիտության ու մտածողության մշակութային կազմակերպություն, Թեհրան, 2002, 236 էջ:

علیدوست ابوالقاسم، فقه و عقل، چاپ اول، نشر موسسه فرهنگی دانش و اندیشه معاصر، تهران، 1381، 236 ص.

55 Ալիզադե Ա., Իրավունքի նկատմամբ հասարակական մոտեցման հիմունքները, 1-ին տպ., Սամթ, Թեհրան, 2008, 414 էջ:

علیزاده عبدالرضا، مبانی رویکرد اجتماعی به حقوق، چاپ اول، نشر سمت، تهران، 1387، 414 ص.

56 Ալի-Փաշա Ս., Դատական և օրենսդիր իշխանությունները, երկրորդ հատոր, 1-ին տպ., Իրանշահր, 1964, 1025 էջ:

علی پاشا صالح، قوه مقننه و قوه قضائیه، جلد دوم، چاپ اول، ایرانشهر، 1343، 1025 ص.

57 Ալմադանի Ա., Իսլամական օրենսդրություն, Թեհրան, 2004, 680 էջ:

علمدانی احمد، آیین نامه اسلامی، تهران، 1383، 680 ص.

58 Ալվանի Ս.Մ., Պետական քաղաքական ուղենշի սահմանումը և որոշումների ընդունումը, 1-ին տպ., Սամթ, Թեհրան, 2010, 252 էջ:

الوانی سید مهدی، تصمیم گیری و تعیین خط مشی دولتی، چاپ اول، نشر سمت، تهران، 1389، 252 ص.

59 Ալ-Ֆազել Մ., Դասախոսություններ քաղաքական հանցագործությունների թեմայով, Դարոլջալիլ, Կահիրե, 2003, 221 էջ (արաբերեն):

الفاضل محمد، محاضرات فی الجرائم السیاسیة، دار الجلیل للطباعة، القاهرة، 1382، 221 ص.

60 Ախունդի Մ., Քրեական դատավարության կարգը, առաջին հատոր, 9-րդ տպ., Մշակույթի և իսլամական լուսավորության նախարարություն, Թեհրան, 2001, 344 էջ:

آخوندی محمود، آیین دادرسی کیفری، جلد اول، چاپ نهم، نشر وزارت فرهنگ و ارشاد اسلامی، 1380، 344 ص.

61 Ահմադի Ա., Համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհուրդ, 1-ին տպ., Իսլամական հեղափոխության փաստաթղթերի կենտրոն, Թեհրան, 2004, 236 էջ:

احمدی علی، مجمع تشخیص مصلحت نظام، چاپ اول، نشر مرکز اسناد انقلاب اسلامی، تهران، 1383، 236 ص.

62 Ամիդ Հ., Պարսկերեն բառարան, 33-րդ տպ., Ամիր-Քաբիր, Թեհրան, 2006, 1310

էջ:

عمید حسن، فرهنگ فارسي، چاپ سی و سوم، انتشارات امیر کبیر، تهران، 1385، 1310 ص.

63 Ամիդ-Զանջանի Ա., Համեմատական իսլամական իրավունքի մասին ներածական ակնարկ, առաջին տպ., Միզան, Թեհրան, 2003, 328 էջ:

عمید زنجانی عباسعلی، درآمدی بر حقوق اسلامی تطبیقی، چاپ اول، انتشارات میزان، تهران، 1382، 328 ص.

64 Ամիդ-Զանջանի Ա., Հիմնարար իրավունքների հիմունքներ, 4-րդ տպ., Մաջդ, Թեհրան, 2013, 368 էջ:

عمید زنجانی عباسعلی، کلیات حقوق اساسی، چاپ چهارم، انتشارات مجد، تهران، 1392، 368 ص.

65 Ամիդ-Զանջանի Ա., Քաղաքական ֆեղհ, առաջին հատոր, 2-րդ տպ., Ամիր-Քաբիր, Թեհրան, 2012, 600 էջ:

عمید زنجانی عباسعلی، فقه سیاسی، جلد اول، چاپ دوم، نشر امیرکبیر، 1391، 600 ص7

66 Ամին Ս.Հ., Իրանի իրավունքի պատմությունը, 2-րդ տպ., Իրանագիտության հանրագիտարան հրատ., Թեհրան, 2007, 888 էջ:

امین سیدحسن، تاریخ حقوق ایران، چاپ دوم، نشر دایره المعارف ایران شناسی، تهران، 1386، 888 ص.

67 Այազի Մ., Ազատությունը Ղուրանում, Նաշր-ո-Թահղիղաթե Զեքր, Թեհրան, 472 էջ:

ایازی محمدعلی، آزادی در قرآن، نشر و تحقیقات ذکر، تهران، ۱۳۷۹، 472 ص.

68 Անդրազգային դատավարության սկզբունքներ, Մասնավոր իրավունքների հավասարեցման միջազգային կազմակերպություն, ԱՄՆ Իրավունքի Կազմակերպություն, թարգմ.՝ Փուրօսթադ Մ., 1-ին տպ., Շահրե Դանեշ, Թեհրան, 2008, 184 էջ:

اصول و قواعد آیین دادرسی مدنی فراملی، موسسه بین‌المللی یکنواخت کردن حقوق خصوصی، موسسه حقوق آمریکا، ترجمه پوراستاد مجید، چاپ اول، نشر شهر دانش، تهران، 1387، 184 ص.

69 Անսարի Վ., Քրեական հետազոտությունների իրավունքը, 2-րդ տպ., Սամթ, Թեհրան, 2011, 512 էջ:

انصاری ولی الله، حقوق تحقیقات جنایی، جلد اول، نشر دانشگاه ملی، چاپ دوم، نشر سمت، تهران، 1390، 512 ص.

70 Բախթար Ա., Հանրապետության Գերագույն Ատյանի պարտադիր (իրավական-քրեական) վճիռների հավաքածու, 1-ին տպ., Ջանգալ, Թեհրան, 2007, 364 էջ:

باختر احمد، مجموعه آرا اصراری دیوانعالی کشور (حقوقی - جزائی)، تهران، انتشارات جنگل، چاپ اول، تهران، 1386، 364 ص.

71 Բահար Մ., Իրանի քաղաքական կուսակցությունների համառոտ պատմություն, առաջին հատոր, 9-րդ տպ., Ամիր-Քաբիր, Թեհրան, 2013, 512 էջ:

بهار محمدتقی، تاریخ مختصر احزاب سیاسی ایران، جلد اول، چاپ نهم، انتشارات امیر کبیر، تهران، 1392، 512 ص.

72 Բարիքլու Ա., Քաղաքացիական պատասխանատվություն, 2-րդ տպ., Միզան, Թեհրան, 2008, 256 էջ:

باریکلو علیرضا، مسئولیت مدنی، چاپ دوم، نشر میزان، تهران، 1387، 256 ص.

73 Բորուջերդի Մ., Իրավական դատավարությունների սկզբունքները, 1-ին տպ.,

Սեմնանի, Թեհրան, 1929, 442 էջ:
بروجردی میرزامحمد،اصول محاکمات حقوقی، چاپ اول، نشرسمنانی، تهران، 1308، 442 ص.

74 Բուշեհրի Ջ., Հիմնարար իրավունքներ. սկզբունքեր և կանոնակարգեր, առաջին հատոր, 1-ին տպ, Էնթեշար ԲԸ հրատ., Թեհրան, 2005, 344 էջ:
بوشهری جعفر، حقوق اساسی؛ اصول و قواعد، جلد اول، چاپ اول، نشر شرکت سهامی انتشار، تهران، 1384، 344 ص.

75 Գոլդուզյան Ի., Ընդհանուր քրեական իրավունք, 6-րդ տպ., Միզան, Թեհրան, 2011, 526 էջ:
گلدوزیان ایرج، حقوق جزای عمومی، چاپ ششم، نشر میزان، تهران، 1390، 526 ص.

76 Գոլեսթանի Է., Օրենսդրության փիլիսոփայությունն իսլամում, 1-ին տպ., Անդիշեհ, Թեհրան, 2007, 442 էջ:
گلستانی اسماعیل، فلسفه قانونگذاری در اسلام، چاپ اول، نشر اندیشه، تهران، 1386، 442 ص.

77 Դավիդ Ռ., Ժամանակակից իրավական խոշոր համակարգերը, թարգմ.՝ Սաֆայի Հ., 4-րդ տպ., Բուհական հրատարակության կենտրոն, Թեհրան, 2000, 584 էջ:
رنه داوید، نظام های بزرگ حقوقی معاصر، ترجمه سیدحسین صفایی، چاپ چهارم، مرکز نشر دانشگاهی، تهران، 1379، 584 ص.

78 Դավիդ Ռ., Սպիսոզի Ք.Ժ., Համեմատական իրավունքի և արդի իրավական երկու մեծ համակարգերի մասին ներածական ակնարկ, թարգմ.՝ Սաֆայի Ս.Հ., 2-րդ տպ., Դադգոսթար, Թեհրան, 1999, 304 էջ:
رنه داوید، کامی ژوفره اسپیسوزی، درآمدی برحقوق تطبیقی ودونظام بزرگ حقوقی معاصر، ترجمه سیدحسین صفایی، چاپ دوم، نشر دادگستر، تهران، 1378، 304 ص.

79 Զհայի Բիգդելի Մ., Իսլամն ու միջազգային իրավունքը, 9-րդ տպ., Գանջե Դանեշ, Թեհրան, 2010, 208 էջ:
ضیایی بیگدلی محمدرضا، کتاب اسلام و حقوق بین الملل، چاپ نهم، نشر گنج دانش، تهران، 1389، 208 ص.

80 Էլիոթ Ք. և Վերնոն Ք., Ֆրանսիայի իրավական համակարգը, թարգմ.՝ Բեյգզադեհ Ս., 1-ին տպ., Սամթ, Թեհրան, 2009, 260 էջ:
کاترین الیوت و کاترین ورنون، نظام حقوقی فرانسه، ترجمه صفربیگ زاده، چاپ اول، نشر سمت، تهران، 1388، 260 ص.

81 Էմամի Ս.Հ., Քաղաքացիական իրավունք, 4-րդ հատոր, 19-րդ տպ., Էսլամիեհ, Թեհրան, 2007, 584 էջ:
امامی سیدحسن، حقوق مدنی، جلد4، چاپ 19، نشر اسلامیه، تهران، 1386، 584 ص.

82 Թաբաթաբայի Մոթմենի Մ., Հիմնարար իրավունքներ, 12-րդ տպ., Միզան Թեհրան, 2007, 320 էջ:
طباطبایی موتمنی منوچهر، حقوق اساسی، چاپ دوازدهم، نشر میزان، تهران، 1386، 320 ص.

83 Թաբաթաբայի Մոթմենի Մ., Վարչական իրավունք, 13-րդ տպ., Սամթ, Թեհրան, 2007, 500 էջ:
طباطبایی موتمنی منوچهر، حقوق اداری، چاپ سیزدهم، نشر سمت، تهران، 1386، 500 ص.

84 Թաբաթաբայի Մոթմենի Մ., Մարդու իրավունքներն ու ընդհանուր

ազատությունները, 5-րդ տպ., Թեհրանի համալսարանի հրատ., Թեհրան, 2012, 352 էջ:

طباطبایی موتمنی منوچهر، آزادی های عمومی و حقوق بشر، چاپ پنجم، نشر دانشگاه تهران، 1391، 352 ص.

85 Թաբաթաբայի Ս.Մ., Թաֆսիրոլմիզան (Կշեռքի մեկնաբանությունը), առաջին հատոր, Ռեջա, Ղոմ, 1984, 650 էջ:

طباطبایی سیدمحمد حسین، تفسیر المیزان، جلد اول، نشر رجا، قم، 1363، 650 ص.

86 Թէյմուրի Ք., Ակնարկ Իսլամական Խորհուրդների մասին, 5-րդ տպ., Նոավարանե Էլմ, Թեհրան, 2005, 300 էջ:

تیموری کاوه، آشنایی با شوراهای اسلامی، چاپ پنجم، نشر نوآوران علم، تهران، 1384، 300 ص.

87 Թիլա Փ., Օրենքի և կանոնակարգի սահմանազատման և օրինաչափությունների սահմանման համեմատական սկզբունքները, Խորսանդի, Թեհրան, 2008, 272 էջ:

تیلا پروانه،اصول تطبیقی قاعده سازی ومرز شناسی قانون و آیین نامه، نشرخرسندی، تهران، 1387، 272 ص.

88 Թոնեքաբոնի Ֆ., Ծանոթանանք իսլամական պատժամիջոցներին, 1-ին տպ., Ջիհադ, Թեհրան, 1979, 107 էջ:

تنکابنی فروغ، با مجازاتهای اسلامی آشنا شویم، چاپ اول، نشر جهاد، تهران، 1358، 107 ص.

89 Իմամ Խոմեյնի Ռ., Սահիֆեյե Նուր (Լույս օրաթերթ), 5-րդ հատոր, 5-րդ տպ., Իմամ Խոմեյնիի աշխատությունների մշակման ու հրատարակման կենտրոն, Թեհրան, 2010, 565 էջ:

امام خمینی روح الله، صحیفه نور، جلد پنجم، چاپ پنجم، نشر تنظیم و نشر آثار امام خمینی، تهران، 1389، 565 ص.

90 Իմամ Խոմեյնի Ռ., Վելայաթե ֆաղիհ, 22-րդ տպ., Իմամ Խոմեյնիի աշխատությունների մշակման ու հրատարակման կենտրոն, Թեհրան, 2010, 212 էջ:

امام خمینی روح الله، ولایت فقیه، چاپ بیست و دوم، نشر تنظیم و نشر آثار امام خمینی، تهران، 1389، 212 ص.

91 Իմամի Մ. և Օսթովարսանգարի Ք., Վարչական իրավունք, առաջին հատոր, 18-րդ տպ., Միզան, Թեհրան, 2015, 400 էջ:

امامی محمد و استوارسنگری کورش، حقوق اداری، جلد اول، چاپ هجدهم، نشرمیزان، تهران، 1394، 400 ص.

92 Իսմայիլյան Շ., Ժամանակավոր ձերբակալություն և իրավունքի պաշտպանություն, Թեհրան, 2002, 260 էջ:

اسماعیلیان شاپور، قرار بازداشت موقت، تهران، 1381، 260 ص.

93 Լավասուր Ժ., Գաստոն Ստ., Բուլուք Բ., Քրեական դատավարության կարգերը, երկրորդ հատոր, թարգմ.՝ Դադբան Հ., 1-ին տպ., Ալլամեհ Թաբաթաբայի համալսարան, Թեհրան, 1999, 748 էջ:

لواسور ژرژ، استفانی گاستون، بولوک برنار، آیین دادرسی کیفری، جلد دوم، ترجمه حسن دادبان، چاپ اول، دانشگاه علامه طباطبایی، تهران، 1378، 748 ص.

94 Խալեղի Ա., Քրեական դատավարության կարգերը, 11-րդ տպ., Շահրե Դանեշ, Թեհրան, 2011, 460 էջ:

خالقی علی، آیین دادرسی کیفری، چاپ یازدهم، شهر دانش، تهران، 1390، 460 ص.

95 Խոսրավի Հ., Ժողովրդավարական ընտրությունների իրավունք, Մաջդ, Թեհրան, 2016, 428 էջ:

خسروی حسن، حقوق انتخابات دموکراتیک، نشر مجد، تهران، 1395، 428 ص.

96 Հաերի Ա., Շիիզմն ու սահմանադրական կարգերն Իրանում և Իրաքաբնակ իրանցիների դերը, 5-րդ տպ., Ամիր-Քաբիր, Թեհրան, 2013, 400 էջ:

حائری عبدالهادی، تشیع و مشروطیت در ایران و نقش ایرانیان مقیم عراق، چاپ پنجم، انتشارات امیرکبیر، تهران، 1392، 400 ص.

97 Հաերի Շահբաղ Ս.Ա., Քրեական դատավարության սկզբունքները, Մարեֆաթ, Թեհրան, 1955, 276 էջ:

حائری شاه باغ سید علی، اصول آیین دادرسی کیفری، انتشارات معرفت، تهران، 1334، 276 ص.

98 Հալման Ժ., Պաշտպանություն՝ իրավապաշտպանին, թարգմ.՝ Թաֆազոլի Ա., 1-ին տպ., Թեհրան, 1989, 95 էջ:

ژاک هالمن، دفاع از وکیل مدافع، مترجم ابوالقاسم تفضلی، چاپ اول، تهران، 1368، 95 ص.

99 Համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհրդի մասին օրենքներն ու կանոնակարգերը, 2-րդ տպ., Խորհրդի քարտուղարության հրատ., Թեհրան, 2010, 89 էջ:

مجموعه قوانین و مقررات مربوط به مجمع تشخیص مصلحت نظام، چاپ دوم، نشر دبیرخانه مجمع، تهران، 1389، 89 ص.

100 Հաշեմի Ս.Մ., Հիմնարար իրավունքներ, առաջին և երկրորդ հատոր, 2-րդ տպ., Ղոմի բարձրագույն համալիր, Ղոմ, 1996, 310 էջ:

هاشمی سید محمد، حقوق اساسی، جلد اول و دوم، چاپ دوم، مجتمع عالی قم، قم، 1375، 310 ص.

101 Հաքիմ Մ., իսլամական օրենսդրության ընդհանուր հիմունքներ, Ղոմ, 1970, 356 էջ:

حکیم محمد تقی، مبانی کلی قوانین اسلامی، قم، 1346، 356 ص.

102 Հոջաթի Ս.Մ., Ներկա կարգերում ընդհանուր և հեղափոխության դատարանների ձևավորման մասին օրենքը, 1-ին տպ., Ավա, Թեհրան, 2010, 658 էջ:

حجتی سیدمهدی، قانون تشکیل دادگاههای عمومی و انقلاب در نظم کنونی، چاپ اول، نشر آوا، تهران، 1389، 658 ص.

103 Հոռ Ամելի Մ.Հ., Շիիզմի միջոցները, 10-րդ տպ., Քեթաբչի, Թեհրան, 2007, 412 էջ (արաբերեն):

حرعاملی محمد بن حسن، وسایل شیعه، چاپ دهم، کتابچی، تهران، 1386، 412 ص.

104 Ղազի Շարիաթ Փանահի Ա., Հիմնարար իրավունքների անհրաժեշտությունները, Միզան, Թեհրան, 2013, 336 էջ:

قاضی شریعت پناهی ابوالفضل، بایسته های حقوق اساسی، نشر میزان، تهران، 1392، 336 ص.

105 Ղազի Շարիաթ Փանահի Ա., Հիմնարար իրավունքներն ու քաղաքական մարմինները, 14-րդ տպ., Միզան, Թեհրան, 2016, 672 էջ:

قاضی شریعت پناهی ابوالفضل، کتاب حقوق اساسی و نهادهای سیاسی، چاپ چهاردم، میزان، تهران، 1395، 672 ص.

106 Ղարավի Ս.Մ., Իրավունքի հիմունքներն իսլամում, 1-ին տպ., Ջահադ-Դանեշգահի, Թեհրան, 1993, 452 էջ:

غروی سید محمدجواد، مبانی حقوق در اسلام، چاپ اول، نشر جهاد دانشگاهی، تهران، 1372، 452 ص.

107 Ղիասի Ջ., Դեհղան Հ., Խոսրոշահի Ղ., Ընդհանուր քրեական իրավունքի համեմատական ուսումնասիրություն (Իսլամը և խնդրո առարկա իրավունքը), առաջին հատոր, 2-րդ տպ., Հոգևոր ճեմարանի և համալսարանի հետազոտական կենտրոնի հրատ., Ղոմ, 2006, 394 էջ:

جلال الدین قیاسی، حمید دهقان، قدرت الله خسروشاهی، مطالعه تطبیقی حقوق جزای عمومی (اسلام و حقوق موضوعه)، جلد اول، چاپ دوم، نشر پژوهشگاه حوزه ودانشگاه، قم، 1385، 394 ص.

108 Մադանի Ս.Ջ., Դատական ընթացակարգ, 10-րդ տպ., Փայդար, Թեհրան, 2008, 164 էջ:

مدنی سید جلال الدین، رویه قضایی، چاپ دهم، نشر پایدار، تهران، 1387، 164 ص.

109 Մադանի Ս.Ջ., Իրանի հիմնարար իրավունքները և քաղաքական կառույցները, 15-րդ տպ., Թաբաթաբայի, Թեհրան, 2010, 528 էջ:

مدنی سید جلال الدین، حقوق اساسی و نهادهای سیاسی ایران، چاپ پانزدهم، نشر طباطبایی، تهران، 1389، 528 ص.

110 Մադանի Ս.Ջ., Իրանի ժամանակակից քաղաքական պատմություն, Իսլամական հրատարակությունների գրասենյակ, Թեհրան, 2015, 704 էջ:

مدنی سید جلال الدین، تاریخ سیاسی معاصر ایران، دفتر انتشارات اسلامی، تهران، 1394، 704 ص.

111 Մաթին-Դաֆթարի Ա., Քաղաքացիական և առևտրային դատավարության կարգերը, առաջին հատոր, 2-րդ տպ., Մաջդ, Թեհրան, 2002, 464 էջ:

متین دفتری احمد، آیین دادرسی مدنی و بازرگانی، جلد اول، چاپ دوم، انتشارات مجد، تهران، 1381، 464 ص.

112 Մալեքմոհամմադի Հ., Երեք վարչակարգը մեկ հայացքով, 1-ին տպ., Իսլամական Հեղափոխության փաստաթղթերի կենտրոն, Թեհրան, 2005, 240 էջ:

ملک محمدی حمیدرضا، سه نظام در یک نگاه، چاپ اول، مرکز اسناد انقلاب اسلامی، تهران، 1384، 240 ص.

113 Մաջլեսի Մ., Լույսի օվկիանոս (հադիսների հավաքածու), 74-րդ հատոր, 10-րդ տպ., Ալվաֆա, Բեյրութ, 1983, 404 էջ:

مجلسی محمّدباقر، بحارالانوار (مجموعه احادیث)، جلد ۷۴، موسسه الوفاء، چاپ دهم، بیروت، 1983، 404 ص.

114 Մասաբեհի-Յազդի Մ., Իսլամակի իրավական տեսությունը, 1-ին տպ., Իմամ Խոմեյնիի աշխատությունների մշակման և հրատարակման կենտրոն, Ղոմ, 2001, 400 էջ:

مصباح یزدی محمدتقی، نظریه حقوقی اسلام، چاپ اول، انتشارات مؤسسه تنظیم و نشر آثار امام خمینی، قم، 1380، 400 ص.

115 Մաք Այվեր Ռ.Մ., Հասարակությունն ու պետությունը, թարգմ.՝ Ալիքանի Է., Գրքի թարգմանության ու հրատարակման ինստիտուտ, Թեհրան, 1970, 224 էջ:

مک آیور ر.م.، جامعه و حکومت، ترجمه ابراهیم علی کنی، بنگاه ترجمه و نشر کتاب، تهران، 1349، 224 ص.

116 Մաքի Հ., Իրանի քսանամյա պատմությունը, երկրորդ հատոր, 6-րդ տպ., Նաշեր, Թեհրան, 2001, 640 էջ:

مکی حسین، تاریخ بیست ساله ایران، جلد دوم، چاپ ششم، نشر ناشر، تهران، 1380، 640 ص.

117 Մեհրփուր Հ., Հակիրճ ակնարկ Իրանի հիմնարար ազատությունների մասին, 1-ին տպ., Դադգոսթար, Թեհրան, 2008, 516 էջ:

مهرپور حسین، مختصر حقوق اساسی ایران، چاپ اول، نشر دادگستر، تهران، 1387، 516 ص.

118 Մեհրփուր Հ., Հանրապետության նախագահը և Սահմանադրություն իրագործման պարտականությունը, առաջին հատոր, 2-րդ տպ., Էթելաաթ, Թեհրան, 2006, 384 էջ:
مهرپور حسین، رئیس جمهور و مسئولیت اجرای قانون اساسی (جلد اول)، چاپ دوم، اطلاعات، تهران، 1385، 394 ص.

119 Մեհրփուր Հ., Մարդու իրավունքները միջազգային փաստաթղթերում և ԻԻՀ դիրքորոշումը, 2-րդ տպ., Էթելաաթ, Թեհրան, 2007, 420 էջ:
مهرپور حسین، حقوق بشر در اسناد بین المللی و موضع جمهوری اسلامی ایران، چاپ دوم، نشر اطلاعات، تهران، 1386، 420 ص.

120 Մեհրփուր Հ., Նորագույն մոտեցումներ իրավական հարցերի շուրջ, 3-րդ տպ., Էթելաաթ, Թեհրան, 2009, 288 էջ:
مهرپور حسین، دیدگاههای نوین در مسائل حقوقی، چاپ سوم، انتشارات اطلاعات، 1388، 288 ص.

121 Միրմոեզի Ս.Հ., Իսլամի տնտեսական համակարգը: Հիմունքներ, նպատակներ, ռազմավարական սկզբունքներ և բարոյականություն, 2-րդ տպ., Իսլամական մշակույթի և մտածողության հետազոտական կենտրոնի հրատ., Թեհրան, 2012, 608 էջ:
میرمعزی سید حسین، نظام اقتصادی اسلام: مبانی، اهداف، اصول راهبردی و اخلاق، چاپ دوم، سازمان انتشارات پژوهشگاه فرهنگ و اندیشه اسلامی، تهران، 1391، 608 ص.

122 Մոզաֆար Մ., Ֆեղհի սկզբունքները, 2-րդ տպ., Ղոմի ճեմարանի հրատ., Ղոմ, 2016, 690 էջ:
مظفر محمدرضا، اصول الفقه، چاپ دوم، نشر حوزه علمیه قم، قم، 1395، 690 ص.

123 Մոթահարի Մ., Աստվածային արդարություն, 34-րդ տպ., Սադրա, Ղոմ, 2010, 320 էջ:
مطهری مرتضی، عدل الهی، چاپ سی و چهارم، نشرصدرا، قم، 1389، 320 ص.

124 Մոթահարի Մ., Իսլամական աշխարհայացքի մասին ներածական ակնարկ, 22-րդ տպ., Սադրա, Ղոմ, 2003, 80 էջ:
مطهری مرتضی، مقدمه ای بر جهانبینی اسلامی، چاپ بیست و دوم، نشر صدرا، قم، 1382، 80 ص.

125 Մոթահարի Մ., Իսլամն ու ժամանակի պահանջները, առաջին հատոր, 16-րդ տպ., Սադրա, Ղոմ, 2000, 325 էջ:
مطهری مرتضی، اسلام و نیازهای زمان، جلد اول، چاپ شانزدهم، نشر صدرا، قم، 1379، 325 ص.

126 Մոթահարի Մ., Քսան զրույց, 38-րդ տպ., Սադրա, Ղոմ, 2010, 80 էջ:
مطهری مرتضی، بیست گفتار، چاپ سی و هشتم، نشر صدرا، قم، 1389، 80 ص.

127 Մոին Մ., Պարսկերեն լեզվի բառարան, վեցհատորյակ, 27-րդ տպ., Ամիր-Քաբիր, Թեհրան, 2014, 7200 էջ:
معین محمد، فرهنگ لغت، دوره 6 جلدی، چاپ 27، نشر امیرکبیر، تهران، 1393، 7200 ص.

128 Մոհաղեղ-Դամադ Մ., Ֆեղհի կանոնները- Դատական բաժին, երրորդ հատոր, Իսլամական գիտությունների հրատ. կենտրոն, Թեհրան, 2004, 270 էջ:
محقق داماد مصطفی، قواعد فقه، بخش قضایی، جلد سوم، مرکز نشر علوم اسلامی، تهران، 1383، 270 ص.

129 Մոհամմադի Ա., Իսլամական իրավունքի եզրահանգումների հիմունքները, 32-րդ տպ., Թեհրանի համալսարանի հրատ., Թեհրան, 2009, 406 էջ:
محمدی ابوالحسن، مبانی استنباط حقوق اسلامی، چاپ سی و دوم، نشر دانشگاه تهران، تهران، 1388، 406 ص.

130 Մոհամմադի Ռեյշահրի Մ., Ֆարզանեգան Հ., Միզանոլհեքմաթ (արաբ./պարսկ.), յոթերորդ հատոր, 12-րդ տպ., Դարոլհադիս գիտամշակութային կազմակերպություն, Ղոմ, 2012, 576 էջ (արաբերեն):
محمدی ری شهری محمد، فرزانگان حسن، میزان الحکمة، (عربی/فارسی) جلد هفتم، چاپ دوازدهم، موسسه علمی‌فرهنگی دارالحدیث، قم، 1391، 576 ص.

131 Մոհաջերի Ա., Դատարանում դատավարության կարգերը, 6-րդ տպ., Ֆեքրսազան, Թեհրան, 2008, 424 էջ:
مهاجری علی، آیین دادرسی دردادسرا، چاپ ششم، نشر فکرسازان، تهران، 1387، 424 ص.

132 Մուսազադեհ Ռ., Միջազգային պայմանագրերի իրավունք, 4-րդ տպ., Միզան, Թեհրան, 2010, էջ:
موسی زاده رضا، حقوق معاهدات بین المللی، چاپ چهارم، نشر میزان، تهران، 1389، 320 ص.

133 Մուսազադեհ Ռ., Վարչական իրավունք (1, 2): Ընդհանուր հիմունքներ և Իրան, 13-րդ տպ., Միզան, Թեհրան, 2010, 336 էջ:
موسی زاده رضا، حقوق اداری (1-2) کلیات و ایران، چاپ سیزدهم، نشرمیزان، تهران، 1389، 336 ص.

134 Նուրբահա Ռ., Ընդհանուր քրեական իրավունքի ոլորտը, 14-րդ տպ., Գանջե Դանեշ, Թեհրան, 2005, 564 էջ:
نوربها رضا، زمینه حقوق جزای عمومی، چاپ چهاردهم، نشر گنج دانش، تهران، 1384، 564 ص.

135 Նուրուզի-Ֆիրուզ Ռ., Ընդհանուր քրեական իրավունք, 1-ին տպ., Միզան, Թեհրան, 2011, 512 էջ:
نوروزی فیروز رحمت الله، حقوق جزای عمومی، چاپ اول، نشر میزان، تهران، 1390، 512 ص.

136 Շաաբանի Ղ., Իրանի Իսլամական Հանրապետության հիմնարար իրավունքներն ու պետության կառուցվածքը, 34-րդ տպ., Էթելաաթ, Թեհրան, 2009, 268 էջ:
شعبانی قاسم، حقوق اساسی و ساختار حکومت جمهوری اسلامی ایران، چاپ سی و چهارم، نشر اطلاعات، تهران، 1388، 268 ص.

137 Շախթ Ժ., Իսլամական իրավունքի ներածություն, թարգմ.՝ Մորադի Բանի Մ. և Խաջեֆարդ Ա., 1-ին տպ., Դադգոսթար, Թեհրան, 2009, 352 էջ:
شاخت ژوزف، مقدمه ای بر حقوق اسلامی، ترجمه محمد علی مرادی بنی و احمدرضا خواجه فرد، چاپ اول، نشردادگستر، تهران، 1388، 352 ص.

138 Շահիդ Ավվալ, Դամասկոսի փայլը, 2-րդ հատոր, թարգմ.՝ Ղարավյան Մ. և Շիրվանի Ա., 44-րդ տպ., Դարոլֆեքր, Թեհրան, 2012, 336 էջ:
شهید اول، لمعه الدمشقیه، ترجمه محسن غرویان و علی شیروانی، جلد دوم، نشر دارالفکر، چاپ چهل و چهارم، تهران، 1391، 336 ص.

139 Շահիդ Սանի, Իսլամի քրեական իրավունքը, թարգմ.՝ Մոհամմադի Ա., 1-ին տպ., Բուհական հրատ., Թեհրան, 1995, 624 էջ:
شهید ثانی، حقوق کیفری اسلام، ترجمه ابوالحسن محمدی، چاپ اول، نشر دانشگاهی، تهران، 1374، 624 ص.

140 Շամբիաթի Հ., Ընդհանուր քրեական իրավունք, 9-րդ տպ., Ժուբին, Թեհրան, 1996, 468 էջ:

شامبیاتی هوشنگ، حقوق جزای عمومی، جلد دوم، چاپ نهم، نشر ژوبین، تهران، 1375، 468 ص.

141 Շամս Ա., Քաղաքացիական դատավարության կարգերը, առաջին հատոր, 14-րդ տպ., Դերաք, Թեհրան, 2006, 548 էջ:

شمس عبدالله، آیین دادرسی مدنی، جلد اول، چاپ چهاردهم، نشر دراک، 1385، 548 ص.

142 Շամս Ա., Քաղաքացիական դատավարության կարգերը, երկրորդ հատոր, 14-րդ տպ., Դերաք, Թեհրան, 2006, 532 էջ:

شمس عبدالله، آیین دادرسی مدنی، جلد دوم، چاپ چهاردهم، نشر دراک، 1385، 532 ص.

143 Շամս Ա., Քաղաքացիական դատավարության կարգերը, երրորդ հատոր, 14-րդ տպ., Դերաք, Թեհրան, 2006, 628 էջ:

شمس عبدالله، آیین دادرسی مدنی، جلد سوم، چاپ چهاردهم، نشر دراک، 1385، 628 ص.

144 Շայգան Ա., Քաղաքացիական իրավունք, 1-ին տպ., Թահ, Թեհրան, 1996, 288 էջ:

شایگان علی، حقوق مدنی، چاپ اول، نشر طه، تهران، 1375، 288 ص.

145 Շարիաթի Մ., Համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհրդի վերաբերյալ ֆեղհական ու իրավաբանական ուսումնասիրություն, 1-ին տպ., Բուսթանե Քեթաբե Ղոմ, Ղոմ, 2001, 232 էջ:

شریعتی محمدصادق، بررسی فقهی و حقوقی مجمع تشخیص مصلحت نظام، چاپ اول، نشر بوستان کتاب قم، تهران، 1380، 232 ص.

146 Շաֆիի Խորշիդի Ա., Նահանգի քրեական դատարանն՝ Իրանի դատական վարույթում (քրեական զրույցների մեջբերումներ՝ հղում, քննադատություն և քննարկում), Խաթե Սևոմ (Երրորդ գիծ) հրատ., Թեհրան, 2012, 368 էջ:

شفیعی خورشیدی علی اصغر، دادگاه کیفری استان در رویه قضایی ایران (نقل اقوال کیفری: نقل، نقد و بررسی)، خط سوم، تهران، 1391، 368 ص.

147 Շեյխ ալ-Իսլամի Ա., Կրիմինոլոգիական բացահայտումների տեղն Իրանի քրեական համակարգի զարգացումներում, կրիմինոլոգիական գիրք (Վարպետ Աշուրիի մեծարմանը նվիրված հոդվածների ժողովածու), 4-րդ տպ., Սամթ, Թեհրան, 2011, 846 էջ:

شیخ الاسلامی عباس، جایگاه یافته‌های جرم اشناسی در تحولات نظام ات کیفری ایران، کتاب علوم جنایی (مجموعه مقالات در تجلیل از استاد آشوری)، چاپ چهارم، نشر سمت، تهران، 1390، 846 ص.

148 Պլատոնի ստեղծագործությունների շրջանը, թարգմ.՝ Լոթֆի Հ., երկրորդ հատոր, 2-րդ տպ., Խառազմի, Թեհրան, 2011, 467 էջ:

دوره آثار افلاطون، ترجمه لطفی حسن، جلد دوم، چاپ دوم، انتشارات خوارزمی، تهران، 1390، 476 ص.

149 Ջաաֆարի Լանգարուդի Ջ., Իսլամական իրավունքի իրավագիտական դպրոցները, Գանջե Դանեշ, Թեհրան, 2001, 380 էջ:

جعفری لنگرودی جعفر، مکتب های حقوقی در حقوق اسلام، نشر گنج دانش، تهران، 1370، 380 ص.

150 Ջաաֆարի Լանգարուդի Ջ., Իրավաբանական տերմինաբանություն, 12-րդ տպ., Գանջե Դանեշ, Թեհրան, 2002, 836 էջ:

جعفری لنگرودی جعفر، ترمینولوژی حقوقی، چاپ دوازدهم، نشر گنج دانش، تهران، 1381، 836 ص.

151 Ջահեզ Ա., Թագն՝ արքաների բարոյագիտության մեջ, թարգմ.՝ Նոբախտ Հ., 1-ին տպ., Աշիանե Քեթաբ, Թեհրան, 2007, 337 էջ:

ابوعثمان عمروبن بحر جاحظ، التاج فی اخلاق الملوک، ترجمه حبیب الله نوبخت، چاپ اول، نشر آشیانه کتاب، تهران، 1386، 337 ص.

152 Ջավադի Ամոլի Ա., Վելայաթե Ֆաղիհ: Վելայաթ, Ֆեղահաթ, Արդարություն, 10-րդ տպ., Ասրա, Ղոմ, 2010, 592 էջ:

جوادی آملی عبدالله، ولایت فقیه: ولایت، فقاهت و عدالت، چاپ دهم، نشراسراء، قم، 1389، 592 ص.

153 Ռասեխ Մ., Իրանի հիմնարար իրավունքների համակարգում վերահսկումն ու ներդաշնակությունը, առաջին տպ., Դերաք, Թեհրան, 2009, 175 էջ:

راسخ محمد، نظارت و تعادل در نظام حقوق اساسی ایران، چاپ اول، نشردراک، تهران، 1388، 175 ص.

154 Սադր Մ., Մեր տնտեսությունը, երկրորդ հատոր, թարգմ.՝ Էսփահբոդի, Ղոմի հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի հրատ., Ղոմ, 2001, 319 էջ:

صدر محمد باقر، اقتصاد ما، جلد 2، ترجمه اسپهبدی، انتشارات جامعه مدرسین حوزه علمیه قم، قم، 1380، 319 ص.

155 Սադր Մ., Սադրոլաշրաֆի հուշերը, 1-ին տպ., Վահիդ, Թեհրան, 1985, 584 էջ:

صدر محسن، خاطرات صدرالاشراف، چاپ اول، نشر وحید، تهران، 1364، 584 ص.

156 Սադրզադե Աֆշար Մ., Քաղաքացիական ու առևտրային դատավարության կարգերը, 3-րդ տպ., Ջահադ-Դանեշգահի, Թեհրան, 1996, 500 էջ:

صدرزاده افشار محسن، آیین دادرسی مدنی و بازرگانی، چاپ سوم، نشرجهاد دانشگاهی، تهران، 1375، 500 ص.

157 Սաեդ Վաքիլ Ա. և Ասքարի Փ., Սահմանադրությունը ներկայիս իրավունքի համակարգում, 5-րդ տպ., Մաջդ, Թեհրան, 2014, 658 էջ:

امیر ساعد وکیل و پوریا عسکری، قانون اساسی در نظم حقوق کنونی، چاپ پنجم، نشر مجد، تهران، 1393، 658 ص.

158 Սալջուղի Մ., Օրֆի (Սովորույթի) դերը, 1-ին տպ., Միզան, Թեհրան, 2010, 176 էջ:

سلجوقی محمود، نقش عرف در حقوق مدنی ایران و مطالعه اجمالی آن در نظامهای بزرگ حقوقی، چاپ اول، نشر میزان، تهران، 1389 176 ص.

159 Սամավաթի Հ., Միջազգային պայմանագրերի իրավունքները (տեսական և կիրառական), 4-րդ տպ., Ղողնուս, Թեհրան, 2010, 312 էջ:

سماواتی حشمت الله، حقوق معاملات بین المللی (نظری و کاربردی) ، چاپ چهارم، نشر ققنوس، تهران، 1389، 312 ص.

160 Սանեի Փ., Ընդհանուր քրեական իրավունք, առաջին հատոր, 3-րդ տպ., Գանջե Դանեշ, Թեհրան, 1995, 452 էջ:

صانعی پرویز، حقوق جزای عمومی، جلد اول، چاپ سوم، انتشارات گنج دانش، تهران، 1374، 452 ص.

161 Սանջաբի Ք., Իրանի վարչական իրավունքները, 1-ին տպ., Խորսանդի, Թեհրան, 2017, 494 էջ:

سنجابی کریم، حقوق اداری ایران، چاپ اول، نشر خرسندی، تهران، 1396، 494 ص.

162 Սաքի Մ., Ընդհանուր քրեական իրավունք (ընդհանուր եզրույթներով և վերանայմամբ): Հանցագործությունն ու քրեական երևույթը, առաջին հատոր, Ջանգալ, Թեհրան, 2013, 248 էջ:

ساکی محمدرضا، حقوق جزای عمومی (بااصلاحات و تجدید نظرکلی): جرم و پدیده جنایی، جلد اول، نشر جنگل، تهران، 1392، 248 ص.

163 Վազիրնիա Մ., Իրանի վարչական կազմակերպությունները, երկրորդ տպ., Կառավարման ֆակուլտետի հրատ., Թեհրան, 1975, 503 էջ:

وزیرنیا مهدی، سازمان های اداری ایران، چاپ دوم، نشر دانشکده مدیریت، تهران، 1354، 503 ص.

164 Վահեդի Ղ., Իրավագիտության ներածություն, 12-րդ տպ., Միզան, Թեհրան, 2008, 240 էջ:

واحدی قدرت الله، مقدمه علم حقوق، چاپ چهاردهم، میزان، تهران، 1391، 240 ص.

165 Փեյվանդի Ղ., Քաղաքական հանցագործություն, Իսլամական մշակույթի և մտածողության հետազոտական հաստատության հրատ., 2-րդ տպ., Թեհրան, 2009, 332 էջ:

پیوندی غلامرضا، جرم سیاسی، چاپ دوم، انتشارات پژوهشگاه فرهنگ و اندیشهٔ اسلامی، تهران، 1388، ۳۳۲ ص.

166 Քադիվար Մ., Ստրկության հարցը ժամանակակից իսլամում, 1-ին տպ., Թեհրան Քավիր, Թեհրան, 2008, 389 էջ:

کدیور محسن، مساله برده‌داری در اسلام معاصر، چاپ اول، نشر تهران کویر، تهران، 1387، 389 ص.

167 Քաթուզյան Ն., Իրավագիտության փիլիսոփայություն, եռահատորյակի առաջին հատոր, 5-րդ տպ., Էնթեշար ԲԸ հրատ., Թեհրան, 2006, 710 էջ:

کاتوزیان ناصر، فلسفه حقوق، جلد اول از مجموعه سه جلدی، چاپ پنجم، نشر شرکت سهامی انتشار، تهران، 1385، 710 ص.

168 Քաթուզյան Ն., Իրավունքի ընդհանուր դրույթները: Ընդհանուր տեսություն, 1-ին տպ., Էնթեշար ԲԸ հրատ., Թեհրան, 2008, 626 էջ:

کاتوزیان ناصر، کلیات حقوق: نظریه عمومی، چاپ اول، نشر سهامی انتشار، تهران، 1387، 626 ص.

169 Քաթուզյան Ն., Մտածողության և խոսքի ազատություն, 1-ին տպ., Թեհրանի համալսարանի հրատ., 2003, 290 էջ:

کاتوزیان ناصر، آزادی اندیشه و بیان، چاپ اول، انتشارت دانشگاه تهران، 1382، 290 ص.

170 Քաթուզյան Ն., Ներածություն իրավագիտության մասին և Իրանի իրավական համակարգի ուսումնասիրումը, 66-րդ տպ., Էնթեշար ԲԸ հրատ., Թեհրան, 2008, 386 էջ:

کاتوزیان ناصر، مقدمه علم حقوق و مطالعه در نظام حقوقی ایران، چاپ 66، نشر انتشار، تهران، 1387، 386 ص.

171 Քաթուզյան Ն., Պայմանագրերի ընդհանուր կանոնները, երրորդ հատոր, 5-րդ տպ., Էնթեշար ԲԸ հրատ., Թեհրան, 2008, 406 էջ:

کاتوزیان ناصر، قواعد عمومی قراردادها، جلد سوم، چاپ پنجم، نشر شرکت سهامی انتشار، تهران، 1387، 406 ص.

172 Քաթուզյան Ն., Քաղաքացիական օրենսդրությունը ներկա իրավական համակարգում, 37-րդ տպ., Միզան, Թեհրան, 2013, 848 էջ:

کاتوزیان ناصر، قانون مدنی در نظام حقوقی کنونی، چاپ سی و هفتم، نشر میزان، تهران، 1392، 848 ص.

173 Քաթուզյան Ն., Քայլ դեպի արդարություն, առաջին հատոր, 1-ին տպ., Միզան, Թեհրան, 2008, 882 էջ:

کاتوزیان ناصر، گامی به سوی عدالت، جلد اول، چاپ اول، نشر میزان، تهران، 1387، 882 ص.

174 Քաշանի Ս.Մ., Արդարադատության համաշխարհային ստանդարտներ, 1-ին տպ., Միզան, Թեհրան, 2004, 286 էջ:
کاشانی سیدمحمود، استانداردهای جهانی دادگستری، چاپ اول، نشر میزان، تهران، 1383، 286 ص.
175 Քասրավի Ա., Իրանի Սահմանադրական պատմությունը, Նեգահ, Թեհրան, 2015, 954 էջ:
کسروی احمد، تاریخ مشروطه ایران، چاپ هشتم، نشر نگاه، تهران، 1394، 954 ص.
176 Ֆեյզ Ա., Իսլամի ընդհանուր քրեական իրավունքում սիմեթրիկացումն ու համեմատությունը, 4-րդ տպ., Իսլամական մշակույթի և առաջնորդության նախարարության հրատ., Թեհրան, 2000, 613 էջ:
فیض علیرضا، مقارنه و تطبیق در حقوق جزای عمومی اسلام، چاپ چهارم، نشر وزارت فرهنگ و ارشاد اسلامی، تهران، 1379، 613 ص.

գ) Գիտական հանդեսների հոդվածներ

177 Bouzat P. et Pinatel J., Traité de droit pénal et de criminologie, t. I, II et III. In: Revue internationale de droit comparé. Vol. 15, N° 4, Octobre-Décembre, 1963, pp. 772-774.
178 Ferrand F., La procedure civile international et la procedure civil transnationale: L'incidence de l'integration economique regional, in: Derecho PUC, No. 56, 2003, pp. 361-414.
179 Morange J., La protection constitutionnelle et civile de la liberte d'expression, Revue internationale de droit comparé, 42(2), Paris, 1990, pp. 771-787.
180 Timasheff N.S., The soviet concept of Democracy, Review of politics, 12(4), Los Angeles, 1950, pp. 506-518.
181 Զարաաթ Ա., Քրեական դատավարության նիստերի վերանայում և դատավարությունը երկարաձգվելու կանխող միջոցներ // Փայամե Ամուզեշ, հ.՝ 24, Դատական իշխանության ուսումնական գծով վարչություն, Թեհրան, 2014, էջ 15-23:
زراعت عباس، تجدید جلسات دادرسی کیفری و راهکارهای جلوگیری از اطاله دادرسی، مجله پیام آموزش، معاونت آموزش قوه قضائیه، شماره24، تهران، 1393، صص23-15.
182 Խալաթբարի Ա., Փաստաբանի մասնակցությունը քննչական աշխատանքներում // Փաստաբանների պալատի ամսագիր, 16(92), Թեհրան, 1964, էջ 1-11:
خلعتبری ارسلان، شرکت وکیل در تحقیقات بازپرسی، مجله کانون وکلا، سال 16، شماره 92، تهران، مهر و آبان 1343، صص 11-1.
183 Հոջաթի Ս.Մ., Դատավարության սկզբունքների իմաստը և դրանց մեկնաբանական դերը // Կենտրոն դատարանի Փաստաբանների պալատի ամսագիր, հ. 186-187, Թեհրան, աշուն-ձմեռ, 2004, էջ 28-45:
حجتی سیدمهدی، مفهوم اصول دادرسی و نقش تفسیری آن‌ها، مجله کانون وکلای دادگستری مرکز، شماره 186-187، پاییز و زمستان 1383، صص 45-28.
184 Մասայելի Մ., Մարդու իրավունքների նոր սերունդ // Արտաքին

քաղաքականություն, 6(10), Թեհրան, 1992, էջ 11-25:
مسائلي محمود، نسل جديد حقوق بشر، مجله سياست خارجی، سال ششم، شماره 10، تهران، 1371، صص 25-11.

185 Միլանի Ա., Պատմության էջերում հանցանքի և պատժի օրինականության սկզբունքը // Արդարադատության իրավաբանական ամսագիր, հ.՝ 62 և 63, Դատական իշխանություն, Թեհրան, գարուն-ամառ, 2008, էջ 157-180:
میلانی علیرضا، اصل قانونی بودن جرم و مجازات در بستر تاریخ، مجله حقوقی دادگستری، شماره62 و 63، نشر قوه قضائیه، تهران، بهار و تابستان 1387، صص 180-157.

186 Միրաբբասի Ս.Բ., Մարդու իրավունքների վերաբերյալ պայմանագրերի ընդունումն ու հաստատումն իսլամական երկրների կողմից, Իսլամական մարդու իրավունքների օրվա առիթով հոդվածների ժողովածու, Մարդու իրավունքների ուսումնասիրությունների կենտրոն, Գերայեշ, Թեհրան, 2010, 306 էջ 275-306:
میرعباسی سید باقر، چگونگی تصویب و پذیرش معاهدات حقوق بشری توسط کشورهای اسلامی، مجموعه مقالات به مناسبت روز حقوق بشر اسلامی، مرکز مطالعات حقوق بشر، گرایش، تهران، 1389، 306 ص. صص 306-275.

187 Մոհսենի Հ., Դատավարության սկզբունքների իմաստը և դրանց մեկնաբանական դերը և դատավարական արարողակարվից այդ սկզբունքները տարբերելու ձևը // Կենտրոն դատարանի Փաստաբանների պալատի ամսագիր, հ.՝ 23 և 24, Թեհրան, գարուն-ամառ, 2006, էջ 99-131:
محسنی حسن، مفهوم اصول دادرسی و نقش تفسیری آنها و چگونگی تمیز این اصول از تشریفات دادرسی، مجله کانون وکلای دادگستری مرکز، شمارهٔ ۲۳ و ۲۴، تهران، بهار و تابستان ۱۳۸۵، صص 131-99.

188 Յազդանի Մ., Իրանի քրեական դատավարության օրենքներում և միջազգային քրեական դիվանի կանոնադրության մեջ բացակայության պայմաններում մեղադրանքը հասկացնելու տեղը (նշանակությունը) // Փայամե Ամուզեշ, հ.՝ 51, Դատական իշխանության ուսումնական գծով վարչություն, Թեհրան, 2011, էջ 9-16:
یزدانی مرتضی، جایگاه تفهیم اتهام غیابی در قوانین دادرسی کیفری ایران و اساسنامه دیوان کیفری بین المللی (ICC)، مجله پیام آموزش، سال نهم، شماره 51، معاونت آموزش و تحقیقات قوه قضائیه، تهران، مرداد و شهریور 1390، صص 16-9.

189 Ռասեխ Մ., Միջազգային իրավունքի և մարդու իրավունքների տեսություն // Իրավաբանական հետազոտություններ, հ.՝ 41, Շահիդ Բեհեշթի համալսարանի իրավաբանության ֆակուլտետ, Թեհրան, գարուն-ամառ, 2005, էջ 11-84:
دکتر محمد راسخ، تئوری حق و حقوق بشر بین الملل، مجله تحقیقات حقوقی، شماره41، دانشکده حقوق شهید بهشتی، تهران، بهار و تابستان 1384، صص 84-11.

190 Քազեմզադեհ Ա., Ակնարկ՝ 18-րդ հոդվածի բարեփոխման օրենքի առանձին հոդվածի մասին // Արդարադատության իրավաբանական ամսագիր, հ.՝ 60, Դատական իշխանություն, Թեհրան, 2007, էջ 79-88:
کاظم زاده علی، نگاهی به ماده واحده قانون اصلاح ماده 18، مجله حقوقی دادگستری، شماره 60، قوه قضائیه، تهران، 1386، صص 88-79.

դ) Կայքէջեր

191 http://rc.majlis.ir/fa/law/show/132280